# ԷՋՄԻԱԾԻՆ



Ժ
2002

ԾԸ ՏԱՐԻ

# ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ
ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ

Նոյեմբեր
2002

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՎԱԶԳԵՆ ՄՐԿ. ՔԵՄԱՔՅԱՆ - Անտիոքի և Համայն Արևելքի Ասորի Ուղղափառ Եկեղեցու պետ Նորին Սրբություն Իգնատիոս Զաքքա Ա Իվաս Պատրիարքի այցը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին . . . . . . . . . . 3
Գարեգին Բ Վեհափառը ընդունեց Ռուսաստանի Դաշնության առաջին նախագահ Բորիս Ելցինին . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 14
Վեհափառ Հայրապետը հանդիպեց Ուկրաինայի նախագահ Լեոնիդ Կուչմայի հետ . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 15

## ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ ԵՎ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳՐԵՐ

Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Օրհնության գիրը Գերաշնորհ Տ. Արսեն արքեպիսկոպոս Բերբերյանին՝ ծննդյան վաթսունհինգ և քահանայական ծառայության քառասունամյակի առիթով . . . . . . . 16
ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ Կոնդակը Մաքսիմ Հակոբյանին «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգևատրելու մասին . . . . . . . . . . . . . . . 18
ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ Կոնդակը Նվեր Մխիթարյանին «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգևատրելու մասին . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 20
ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ Կոնդակը գերմանացի հայագետ Հերման Գոլցին «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշանով պարգևատրելու մասին . . . . . . . . . . . . . . . . 22
Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Օրհնության և գնահատանքի գիրը բանգկոկաբնակ բարերար Բոբ Գևորգյանին . . . . . . . . . . 24
Հայրապետական գնահատություն . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 26
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորական ուղերձը Ուսուցչի օրվա առիթով . . . . . . . . . . 27
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի սգակցության գիրը Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսի Բ-ին . . . . . . . . . . 28
Հայրապետական փնօրինություն. Տ. Բագրատ վարդապետ Գալստանյանը՝ Արագածոտնի թեմի առաջնորդական տեղապահ . . . . . . . . . . . . 29
Վեհափառ Հայրապետը Հայ Եկեղեցու շքանշաններ հանձնեց գերմանացի հայագետ Հերման Գոլցին, Սյունիքի մարզպետ Էդիկ Բարսեղյանին և Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատի փնօրեն Մաքսիմ Հակոբյանին . . . . . . . . . . . 30
Մայր Աթոռ Ս. Էջմիածնում կատարվեց հոգեհանգստյան արարողություն . . 31
Հայկական ցեղասպանության ճանաչման բանաձև Ռեյսի Ազգային ժողովում . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 32

## ՔԱՐՈԶԽՕՍԱԿԱՆ


Տ. Պսակ աբեղա Մուրադյանի անդրանիկ քարոզը՝ խոսված
Ս. Էջմիածնի Մայր Տաճարում . . . . . . . . . . . . . . . . . . . 33
Տ. Գաբրիել աբեղա Սարգսյանի քարոզը՝ խոսված
Ս. Էջմիածնի Մայր Տաճարում Գյուտ Խաչի տոնին . . . . . . . . . 35
Արժանապատիվ Տ. Ասողիկ քահանա Կարապետյանի անդրանիկ քարոզը՝
խոսված Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում . . . . . . . . 37
Արժանապատիվ Տ. Ադամ քահանա Մակարյանի անդրանիկ քարոզը՝
խոսված Ս. Հռիփսիմե Տաճարում . . . . . . . . . . . . . . . . . 43
Արժանապատիվ Տ. Տրդատ քահանա Բոզիկյանի անդրանիկ քարոզը՝
խոսված Գավառի Ս. Աստվածածին եկեղեցում . . . . . . . . . . . 46
Տ. Պետրոս քահանա Եզեկյանի անդրանիկ քարոզը՝ խոսված
Երևանի Ս. Զորավոր եկեղեցում . . . . . . . . . . . . . . . . . 50


## ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ


**ԺՈՐԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ** - Արտաշատը Հայոց դարձի նախօրեին և հետո. . . 54
**ԳԱՌՆԻԿ ԱՆԱՆՅԱՆ** - Աղանդավորության խնդիրը V դարում . . . . . . . 68
**ՍԱՌԱ ՂԱԶԱՐՅԱՆ** - Ոսկեբերանը և 5-րդ դարի հայ
բարոյաբանական միտքը . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 75
**ԱՐՄԵՆ ԲԱՅԱԴՅԱՆ** - Մեսրոպ Մաշտոցը Պահոց կամ
Ապաշխարության կանոնի հեղինակ . . . . . . . . . . . . . . . . 81
**ՎԱՐԴԱՆ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ** - Սյունիքի եպիսկոպոսությունը VI դարի կեսին . 92
**ԽԱՉԻԿ ՍԱՄՎԵԼՅԱՆ** - Րաֆֆու հետազոտական ուղևորությունը
Արցախ և «Խամսայի մելիքությունները» աշխատության ծնունդը . . . . . 101
**ԱՐԹՈՒՐ ԱՆԴՐԱՆԻԿՅԱՆ** - Գրողի, մտածողի հանճնառությունը . . . . . 107
**ՇԱՎԱՐՇ ՆԱՐԴՈՒՆԻ** - Փորձ համեմատության հայ գողթան երգերու
և եբրայական բանաստեղծության միջև . . . . . . . . . . . . . 109


## ԳՐԱԽՈՍԱԿԱՆ


**ՎԱՐԴԱՆ ԳԵՎՐԻԿՅԱՆ** -«Վավերագրերի»՝ Երկաթյա Պատրիարքին
նվիրված հատորը . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 119


## ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ ԵՎ ԹԵՄԵՐՈՒՄ


Սուրբ Թարգմանչաց տոնը Օշականում . . . . . . . . . . . . . . . 122
Հայոց Հայրապետի ձեռամբ օծվեցին
Արտաշատի առաջին եկեղեցու հիմքերը . . . . . . . . . . . . . . 124

**ԾԵՐՈՒՆ ՍԱՐԿԱՎԱԳ ՄԿՐՏՉՅԱՆ** - Ավարտաճառերի պաշտպանություն Գևորգյան Հոգևոր Ճեմարանում . . . . . . . . . . . . . 125
**ՄԱՐԻԱՄ ՎԱՐԴԱՆՅԱՆ** - Խաչգյուղում (Ծալկայի շրջան) վերաբացվեց Ս. Գևորգ եկեղեցին . . . . . . . . . . . . . . . . . . . . 126
Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության 82-րդ ընդհանուր ժողովին մասնակցող պատգամավորներ Ս. Վարդան (Նյու Յորք) Մայր Տաճարին մեջ . . . . . . . . . . . . . . . . 129
Լուրեր Գերմանիայի հայոց թեմից . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 131
Հայերը Շավիլում . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 134

## ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Գարեգին Բ Վեհափառը ընդունեց Մոսկվայի հայկական դպրոցների երեխաներին . . . . . . . . . . . . . . . . 136
Գարեգին Բ Վեհափառ Հայրապետն ընդունեց Ռուսաստանի Պետդումայի փոխխոսնակ Իրինա Խակամադային . . . . 137
Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի հանդիպումը Նիկոլայ Ռիժկովի գլխավորած պատվիրակության հետ . . . . . . . . . 137
Գարեգին Բ Վեհափառ Հայրապետն ընդունեց Սիրիայի Արաբական Հանրապետության գործերի ժամանակավոր հավատարմատար Ֆայեզ Աբսիին . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 138
Գարեգին Բ Վեհափառ Հայրապետն ընդունեց «Միջազգային և միջպետական իրավունքի համագործակցության հիմնահարցերը» սեմինարի մասնակիցներին . . . . . . . . . . . . . . . . . . . 138
Գարեգին Բ Վեհափառ Հայրապետն ընդունեց Հարավսլավիայի դեսպանին . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 139
Գարեգին Բ Վեհափառ Հայրապետն ընդունեց ՀՌԱԿ պատգամավորական ժողովի ներկայացուցիչներին . . . . . . . 139
Գարեգին Բ Վեհափառ Հայրապետն ընդունեց Կլամարի քաղաքապետին . 140
Գարեգին Բ Վեհափառ Հայրապետն ընդունեց Հնդկաստանի դեսպանին . . 140
Գարեգին Բ Վեհափառ Հայրապետն ընդունեց Լեհաստանի Սենատի նախագահին . . . . . . . . . . . . . . . . . . . . . 141
Եկեղեցական բեմ. լուրեր . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 142

"Эчмиадзин" официальный журнал Эчмиадзинского Католикосата . . . 143
"Etchmiadzin" official monthly of Holy Etchmiadzin . . . . . . . . . . . . . . . 146
"Etchmiadzine" organe officiel du Saint-siège d'Etchmiadzine . . . . . . . . . . 149

ՀՐԱՄԱՆԱւ

# Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

# ԱՆՏԻՈՔԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ԱՐԵՎԵԼՔԻ ԱՍՈՐԻ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԵՏ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԻԳՆԱՏԻՈՍ ԶԱՔՔԱ Ա ԻՎԱՍ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԱՅՑԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

Սույն թվականի նոյեմբերի 18-23-ին Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Երկրորդի հրավերով Հայաստան և Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց Ասորի Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք Նորին Սրբություն Իգնատիոս Զաքքա Ա Իվասը:

*Անտիոքի Եկեղեցին քրիստոնեական հնագույն այն Եկեղեցին է ուր Քրիստոսի հետևորդներն առաջին անգամ կոչվեցին քրիստոնյա (Գործք ԺԱ 19-26): Քրիստոնեության վաղ շրջանում Անտիոքն Ասորիքի մայրաքաղաքն էր և Արևելքի կարևորագույն կենտրոններից մեկը: Պետրոս առաքյալը համարվում է Անտիոքի Եկեղեցու առաջին գահակալը: Հետագայում Քրիստոսի 70 աշակերտներից մեկի՝ Ադդիի (հիշատակված Ղուկ. Ժ 1) և Մարիի կողմից Անտիոքից քրիստոնեությունը տարածվում է Եդեսիայի (այժմ՝ Ուռֆա) շուրջն ընկած տարածքներում: 4-րդ դարից սկսած Եկեղեցում սկսում է տարածվել վանականությունը:*

*Անտիոքի պատրիարքությունը մեծ դեր է խաղում 4-րդ և 5-րդ դարերի դավանաբանական վեճերի ընթացքում: 451 թ. հետո պատրիարքության մի մասը հարում է ոչ քաղկեդոնական ուղղությանը և միաբնակ Եկեղեցու խոշորագույն գործիչներից մեկի՝ Հակոբ Բարադեոսի (6-րդ դար) անունով հայտնի դառնում նաև որպես Ասորի Հակոբիկյան Եկեղեցի: Եկեղեցին կոչվում է նաև Արևմտյան Ասորի Եկեղեցի, որպեսզի զանազանվի Պարսկաստանի Արևելյան Ասորի Եկեղեցուց, որը կոչվում է նաև Արևելքի Ասորական Եկեղեցի կամ Նեստորական Եկեղեցի:*

*Ասորի Ուղղափառ Եկեղեցին հոգևոր-մշակութային ծաղկում է ապրում հատկապես 12 և 13-րդ դարերում, երբ գործում էին Միքայել Մեծը (†1199 թ.), Դիոնիսիոս Բար Սալիբին (†1171 թ.) և Բար Հեբրայոսը (1264-1286 թթ.):*

*Մար Սեբերիոս Անտիոքացին (538 թ.) վերջին ասորի պատրիարքն էր, որ գահակալում էր Անտիոքում: Նրանից հետո Ասորի պատրիարքարանը տեղափոխվում է Հալեպ, ապա՝ տարբեր վայրեր, ինչպես՝ Դեյլ ար-Զաֆարա (Մարդինի մոտ՝ Թուրքիա), 1933 թ.՝ Հոմս, և 1959 թվականից՝ Դամասկոս՝ Սիրիայի մայրաքաղաք:*

*Ասորի Եկեղեցին բազում հալածանքների է ենթարկվել պատմության ընթացքում: Դրանց մեջ խոշորագույնը տեղի է ունեցել 1915 թ.՝ Հայոց ցեղասպանության ժամանակ, երբ 100 հազար ասորի զոհ գնաց թուրքական յաթաղանին: Ասորի քրիստոնեության օրրանում՝ Ուռֆայի (Եդեսիա) տարածքում, այսօր բնակվում է ընդամենը 400 ասորի քրիստոնյա ընտանիք:*

*Ներկայումս Ասորի Եկեղեցու հավատացյալները բնակվում են Մերձավոր Արևելքում, Եվրոպայում և ԱՄՆ-ում: Եկեղեցին ունի 35 միտրոպոլիտ և եպիսկոպոս, հարուստ է վանքերով, բարեգործական հաստատություններով, ուսումնակրթական օջախներով և հրատարակչական հաստատություններով, որոնք գործում են թե՛ Սիրիայում և թե՛ ասորական սփյուռքում: Պատմական ասորական նշանավոր վանքերից այսօր կանգուն են Մար Մատթեոսի վանքը Մոսուլի մոտ, Ս. Մարկոսի վանքը՝ Երուսաղեմում: Իգնատիոս Զաքքա Ա Իվաս Պատրիարքի օրոք Դամասկոսից ոչ շատ հեռու բացվել է Ասորի Եկեղեցու նոր ճեմարանը՝ Մաարաթ Սայդնայա անունով:*

*Մար Իգնատիոս Զաքքա Ա Իվաս Պատրիարքը ծնվել է 1933 թ. ապրիլի 21-ին Մոսուլում (Իրաք):*

*1946 թ. ընդունվել է Մոսուլի հոգևոր ճեմարան և անվանակոչվել Զաքքա:*

*1948 թ. ձեռնադրվել է դպիր:*

*1953 թ. ստացել է կիսասարկավագի աստիճան:*

*1955 թ. ձեռնադրվել է սարկավագ:*

*1957 թ. նոյեմբերի 27-ին, ձեռամբ Նորին Սրբություն Իգնատիոս Յակուբ Գ-ի, ձեռնադրվել է քահանա, իսկ 1959 թ. պարգևատրվել է Սուրբ Խաչով:*

*Իր ծառայության սկզբում Նորին Սրբություն Մորան Մոր Իգնատիոս Ափրամ Բարսում Ա Պատրիարքի (1933-1957) կողմից նշանակվել է պատրիարքության քարտուղար, ապա՝ պատրիարքի անձնական քարտուղար:*

*1960 թ. ընդունվել է Նյու Յորքի ընդհանուր Աստվածաբանական քոլեջ և Նյու Յորքի համալսարան, որտեղ երկու տարի ուսումնասիրել է արևելյան լեզուներ, անգլերեն և հովվական աստվածաբանություն:*

*1963 թ. բարձրացել է արքեպիսկոպոսական աստիճանի և ծառայության նշանակվել Մոսուլում (Իրաք):*

*1969 թ. փոխադրվել է Բաղդադի թեմ:*

*1978 թ. նշանակվել է Ավստրալիայի արքեպիսկոպոս:*

*1980 թ. Անտիոքի Ասորի Ուղղափառ Եկեղեցու Սինոդի կողմից ընտրվել է և սեպտեմբերի 14-ին օծվել որպես Անտիոքի և Համայն Արևելքի Ասորի Ուղղափառ Եկեղեցու 122-րդ գահակալ:*

*Նորին Սրբությունը ներկայացրել է Ասորի Ուղղափառ Եկեղեցին մի քանի միջազգային ժողովների ժամանակ, մի շարք Արևելյան և Արևմտյան ակադեմիաների անդամ է: Հեղինակ է ասորերեն, արաբերեն և անգլերեն լեզուներով քրիստոնեական կրթության, աստվածաբանության, պատմության և մշակույթի վերաբերյալ բազմաթիվ գրքերի:*

Ասորի Ուղղափառ Եկեղեցու գահակալը Հայաստան ժամանեց նոյեմբերի 18-ին: Նորին Սրբության պատվիրակության կազմում ընդգրկված էին Բաղդադի և Բասրայի Միտրոպոլիտ Նորին Սրբազնություն Սևերիոս Ջամիլ Հավան, Գերմանիայի Միտրոպոլիտ Նորին Սրբազնություն Դիոնիսիոս Իսա Գուրբուզը, Պատրիարքի առաջին քարտուղար Նո-

րին Սրբազնություն Ցուլիոս Կուրիակոզեն և Պատրիարքի երկրորդ քարտուղար Հայր Ե-գիա Բահին:

Սա Նորին Սրբության երկրորդ այցելությունն էր համայն հայոց հոգևոր կենտրոն Մայր Աթոռ Ս. Էջմիածին: Առաջին անգամ Մար Իգնատիոս Զաքքա Պատրիարքը Մայր Աթոռ էր ժամանել 1982 թ.՝ Ամենայն Հայոց Վազգեն Ա Կաթողիկոսի հրավերով՝ մասնակցելու Լեհափառ Հայրապետի գահակալության 27-րդ տարեդարձին նվիրված հանդիսություն-ներին:

Վաղ առավոտյան «Զվարթնոց» օդանավակայանում ավանդական աղ ու հացով Ասո-րի Եկեղեցու գահակալին և նրա շքախմբին, Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսի գլխավորությամբ, դիմավորեցին Տ. Ներսես արքեպս. Պողապալյանը, Տ. Ոսկան արքեպս. Գալփաքյանը, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի պատասխանատու Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանը, Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ եպս. Կճոյանը, ՀՀ կառավարության ներկա-յացուցիչներ, ինչպես նաև Հայաստանում Սիրիայի Արաբական Հանրապետության գործե-րի ժամանակավոր հավատարմատար Ֆայեզ Աբսին:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնում բարձրաստիճան հյուրերին դիմավորելու էին հավաքվել բազմաթիվ հայ հավատացյալներ և Մայր Աթոռի պաշտոնեությունը: Եկեղեցական թա-փորն այստեղ բուրվառների խնկարկումով և եկեղեցու զանգերի ղողանջների ներքո առաջ-նորդվեց Մայր Տաճար, ուր, Իջման Ս. Սեղանի առջև խոնարհվելուց և առ Աստված աղոթք բարձրացնելուց հետո, երկու Եկեղեցապետերը բարիգալստյան ողջույնի խոսքեր փոխա-նակեցին:

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
## ՈՂՋՈՒՅՆԻ ԵՎ ԲԱՐԻԳԱԼՍՏՅԱՆ ԽՈՍՔԸ

*Ձերդ Սրբություն, ուրախ ենք ողջունելու Ձեզ հայոց հոգևոր կենտրոն Մայր Ա-թոռ Ս. Էջմիածնում և մեկ անգամ ևս վկայելու մեր Եկեղեցիների եղբայրությունը:*

*Մեր ժողովուրդների եղբայրությունը հազարամյակների պատմություն ունի: Այն ավիրացործվեց, երբ մեր երկու ժողովուրդները ընդունեցին Քրիստոսի Ավե-տարանի լույսը: Այդ դարավոր եղբայրությունը օգնեց, որպեսզի պատմության ընթացքին՝ ի Քրիստոս պահենք ու պահպանենք նույն հավատքը, նույն դավա-նանքը: Պատմության մեջ բազում փորձությունների միջով ենք անցել միասին: Հալածվել, հաճախ նաև նահատակվել մեր հավատքի համար, սակայն Աստծո զո-րավոր Աջը պահել ու պահպանել է մեզ:*

*Սիրեցյալ եղբայր ի Քրիստոս, Մենք հավատում ենք, որ նոր հազարամյակում մեր եղբայրությունը պիտի բարի արդյունավորում ունենա: Միասնաբար Ասորի Ուղղափառ Եկեղեցին և Հայ Առաքելական Եկեղեցին, որպես Քրիստոսի հնա-գույն Եկեղեցիներ, պիտի կարողանան իրենց խոսքը հնչեցնել և քրիստոնյա աշ-խարհի մեջ իրենց դերակատարությունը ստանձնել՝ հանուն մարդկության խա-ղաղ ու բարօր կյանքի մի նոր ժամանակաշրջանի:*

# ՄԱՐ ԻԳՆԱՏԻՈՍ ԶԱՔՔԱ Ա ԻՎԱՍ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

*Իմ անունից և ինձ ընկերակցող եպիսկոպոսների՝ Սևերիոս արքեպիսկոպոսի՝ Բաղդադի և Բասրայի առաջնորդի, Իսա Սրբազանի՝ Գերմանիայի առաջնորդի, Յուլիոս եպիսկոպոսի՝ պատրիարքական քարտուղարի, Հոլանդիայի Ասորի Եկեղեցու քարտուղարության և մեր անձնական քարտուղարի և Ասորի Եկեղեցու սյունհոդոսի ու ժողովրդի անունից իմ գոհությունն եմ հայտնում նախ և առաջ Աստծուն, որ ես երկրորդ անգամ եմ լինում այս սուրբ վայրում և շնորհակալություն եմ հայտնում Նորին Սրբություն Գարեգին Բ Կաթողիկոսին՝ իր ցուցաբերած սիրո և ազնվության համար, որով մեզ դիմավորեց այս վայրի մեջ և մեզ ընդունեց ամենայն սրտաբացությամբ, վայր, ուր իջավ Աստծո Միածին Որդին, ինչպես մեզ ավանդում է Ս. Գրիգոր Լուսավորիչը:*

*Սա մեզ համար նվիրական մի ուխտ է, որ կատարում ենք այս օրերին: Ես շնորհակալություն եմ հայտնում նաև բոլոր եպիսկոպոսներին, որոնք այստեղ են ապրում, ինչպես նաև Նորին Սրբության հոգևորդիներին, որոնք այստեղ են գտնվում իբրև ուսանողներ: Մենք փափագեցինք այստեղ գալ՝ շնորհավորելու Նորին Սրբությանը իր նոր հոգևոր պաշտոնի համար և բոլոր հայերին շնորհավորելու իր ընտրության առթիվ և նաև շնորհավորելու բոլորին որպես կենդանի ժողովուրդ: Հպարտ ենք հայ ժողովրդով և ասորի ժողովրդով, որոնք ընդունեցին Քրիստոսին և Նրա համար իրենց արյունը հեղեցին:*

*Գոհունակություն ենք հայտնում Աստծուն, որ մեր փոքրաթիվ ժողովուրդները ամենուր պահեցին և պահպանեցին մեզ փոխանցված սրբազան ավանդություններն ու Եկեղեցու սովորությունները: Գոհաբանություն ենք հայտնում Աստծուն այս օրհնյալ հողի գոյության համար և հպարտ ենք ձեր ժողովրդով:*

*Մեր երկու Եկեղեցիների համագործակցությունը լավ և բարի օրինակ եղավ այլ Եկեղեցիների համար: Ես ուրախ եմ, որ այստեղ եմ գտնվում՝ շնորհավորելու Նորին Սրբությանը և հայ ժողովրդին 1700-ամյակի առիթով, երբ 17 դարեր առաջ քրիստոնեությունն այստեղ ընդունվեց որպես պետական կրոն:*

*Աղոթում ենք Աստծուն, որպեսզի հայ և ասորի ժողովուրդները պահպանեն իրենց հավատքը և հետևեն իրենց հայրերին, որովհետև մենք պահպանում ենք մեր դավանանքը՝ հիմնված երեք Տիեզերական ժողովների վրա: Եվ երբ, այսպես կոչված, չորրորդ ժողովի մեջ զգացինք, որ ինչ-որ թերի բանաձևեր են առաջ բերում՝ մերժեցինք: Հետայնու մենք շարունակեցինք պահպանել մեզ փոխանցված մեր Ս. Հայրերի անաղարտ դավանանքը: Եվ ինչպե՞ս պետք է պահել, պահպանել մեր հավատքը: Մեր երկու Եկեղեցիների մարտիրոսները՝ հայեր և ասորիներ, դարերի ընթացքին, ինչպես նաև Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքին իրենց արյունը իրար հետ խառնեցին և այդ արյունով միասնաբար ուխտ կնքեցին՝ ամուր մնալու իրենց հավատքի վեմի վրա:*

*Մ. Հայրերը մեր Եկեղեցիները նկատեցին իբրև մեկ Եկեղեցի՝ հաստատված մեր Տիրոջ սիրո վրա: Այո՛, մեր ժողովուրդները մեծ ու հինավուրց են ոչ միայն կրոնով, այլև մշակույթով: Մենք բոլորս նկանք շնորհավորելու Նորին Սրբությանը և Հայոց Եկեղեցուն և խնդրում ենք Աստծուն, որ մեզ, որպես մեր Սուրբ Եկեղեցիների երկու Պետերի, բարի օրինակ ցույց տա: Մենք կոչված ենք ծառայելու այս ժողովրդին, և մեր ցուցաբերած հավատքի ընդմեջեն ժողովուրդը շարունակում է պահել ու պահպանել իր դավանանքը:*

*Ես ուրախ եմ՝ լսելով Գարեգին Կաթողիկոսի խոսքերը՝ այս օրերին Հայ Եկեղեցու արձանագրած հաջողության մասին, Եկեղեցու արձանագրած հոգևոր հառաջդիմության համար, և մենք հաստատում ենք, որ Ասորի Եկեղեցին նույնպես հառաջդիմություն է արձանագրում, ինչպես նաև մեր հոգևոր ուսանողները և մայրապետները իրենց նվիրյալ ապաստավորությունն են բերում Եկեղեցու բազմազան կարիքներին ի խնդիր:*

*Ցանկանում ենք, որ հարաբերությունները մեր երկու Եկեղեցիների միջև սերտանան նաև ուսուցիչների և ուսանողների փոխանակումով, որպեսզի մեր երկու ժողովուրդները ճանաչեն միմյանց: Եվ մենք ուրախ ենք մի անգամ ևս, որ ձեզ հետ մեր ուրախությունն ենք կիսում՝ գալով ձեր երկիր 1700-ամյակի տոնակատարին շարունակվող հանդիսության առթիվ:*

*Թող Քրիստոսի հավատքով ցույնպիսի՝ շարունակվեն մեր երկու Եկեղեցիների ու ժողովուրդների բարեկամությունը, որպեսզի միմյանցով զորացած միշտ-պես պահեն իրենց քրիստոնեական հավատքը նույնիսկ նահատակության գնով: Եթե կարիքը զգացվի նահատակվելու, ապա մենք էլ կնահատակվենք, ինչպես մեր հայրերը նահատակվեցին: Իմ անունից և ինձ ընկերակցող եպիսկոպոսների անունից շնորհակալություն եմ հայտնում Ձերդ Սրբությանը և բոլոր այն հոգևորականներին, ովքեր մեզ դիմավորեցին օրհնյալ Հայաստանի հողի վրա և Սուրբ Էջմիածնի մեջ:*

*Թող Բարին Աստված Ձեզ և Մեզ հետ լինի այժմ և միշտ և հավիտյանս. ամեն»:*

Բարիգալստյան արարողությունից հետո երկու Հայրապետները եկեղեցական թափորի ուղեկցությամբ շարժվեցին դեպի Վեհարան:

Նույն օրը, հետմիջօրեին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը և Անտիոքի և Համայն Արևելքի Ասորի ուղղափառ քույր Եկեղեցու գահակալ Մար Իգնատիոս Զաքքա Ա Իվաս Պատրիարքը եպիսկոպոսաց դասի ուղեկցությամբ այցելեցին Ծիծեռնակաբերդ՝ խոնարհվելու Հայոց Մեծ եղեռնի զոհերի հիշատակին:

Երկու Հայրապետները ծաղկեպսակներ դրեցին եղեռնի զոհերի հուշարձանին և հոգեհանգստյան աղոթք վերառաքեցին առ Աստված:

Երկու Եկեղեցիների հոգևոր պետերն այցելեցին նաև Ցեղասպանության թանգարան, ուր թանգարանի տնօրեն փիար Լավրենտի Բարսեղյանը հյուրերին հանգամանալից ներկայացրեց անցյալ դարասկզբին հայ ժողովրդի դեմ կատարված ոճրագործությունը:

Նոյեմբերի 19-ին Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ու Զաքքա Ա Պատրիարքը. իրենց ուղեկցող բարձրաստիճան հոգևորականների հետ. այցելեցին Խոր Վիրապի վանք. ուր նրանց դիմավորեց վանահայր Հոգեշնորհ Տ. Զարեհ վարդապետ Կաբաղյանը: Վանքի երգչախմբի «Հրաշափառ»-ի երգեցողության ներքո Հայրապետներն առաջնորդվեցին վեհաշուք Արարատի դիմաց խոյացած Հայոց հավատքի օրրան:

Ապա Իգնատիոս Պատրիարքը Գարեգին Բ Վեհափառի հրավերով այցելեց Արարատի մարզի Դիմիտրով գյուղ. որի բնակչությունը մեծավ մասամբ ասորիներ են. իր օրհնության խոսքը հղելու տեղի ասորական համայնքին:

Օրվա երկրորդ կեսին երկու Հովվապետերը մեկնեցին Ս. Գեղարդի վանք. որտեղ շքախմբին դիմավորեց և ողջունեց վանահայր Հոգեշնորհ Տ. Ներսեհ աբղ. Խալաթյանը: Վեհափառ Հայրապետը. հավատացյալներին ներկայացնելով Իգնատիոս Պատրիարքին. ասաց. որ մեզ դավանակից Եկեղեցու պետի հետ *«եկել ենք եղբայրական մեր ուխտը նորոգելու և գոհություն տալ Աստված բարձրացնելու. որ պահում և պահպանում է մեր երկու ժողովուրդներին՝ բոլոր փորձությունների միջով առաջնորդելով դեպի իրենց նոր կյանքի գեղեցիկ հորիզոնները»*: Իր պատասխան խոսքում Զաքքա Ա Պատրիարքն ի մասնավորի նշեց. *«1982 թվականից ի վեր այս սրբավայրն այցելելու երկրորդ անգամը լինելով՝ ուրախ եմ տեսնել. որ Հայ Առաքելական Եկեղեցին. առաջնորդ ունենալով Գարեգին Բ Վեհափառին. ոչ միայն պատմական Եկեղեցի է. այլ նաև ապրող. կենդանի Եկեղեցի. և այստեղ ներկա ժողովուրդը ներկայացնում է այդ Եկեղեցին»:*

Համատեղ աղոթքի արարողությունից հետո երկու Հայրապետները ունկնդրեցին Ս. Գեղարդավանքի երգչախմբի պատրաստած գեղարվեստական հայտագիրը:

Նույն օրը. երեկոյան. երկու Հայրապետներն այցելեցին Երևանի Արաբկիրի Հայորդյաց Տուն: Պատվիրակությանն ընդունեց Հայորդյաց Տների հոգևոր տեսուչ Արժանապատիվ Տ. Խաչ քահանա Ղազարյանը և հակիրճ ներկայացրեց Հայորդյաց Տների պատմությունը: Ապա բարձրաստիճան հյուրերի համար Հայորդյաց Տան շնորհաշատ սաները հանդես եկան գեղարվեստական կատարմամբ: Վերջում Հայորդյաց Տան սաները Նորին Սրբություն Զաքքա Պատրիարքին նվիրեցին իրենց իսկ ձեռքերով պատրաստած մի գորգ՝ նվիրված քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակման 1700-ամյակին:

Նոյեմբերի 20-ին Հայ Առաքելական և Ասորի Ուղղափառ Եկեղեցիների գահակալների մասնակցությամբ Ս. Էջմիածնի Մայր Տաճարում հանդիսավոր Ս. Պատարագ մատուցվեց Իրաքի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Ավագ արքեպս. Ասատրյանի կողմից:

Հընթացս Ս. Պատարագի երկու Եկեղեցապետերի միջև տեղի ունեցավ պաշտոնական խոսքերի և նվերների փոխանակում՝ ի հիշատակ այս այցելության: Վեհափառ Հայրապետը Ասորի Ուղղափառ Եկեղեցու գահակալ Իգնատիոս Զաքքա Պատրիարքին նվիրեց երկու պանակե և մեկ լանջախաչ. իսկ Մար Իգնատիոս Զաքքա Պատրիարքը Հայ Եկեղեցու գահակալին նվիրեց Աստվածաշունչ մատյան:



ԵՐԿՈՒ ՀԱՅՐԱՊԵՏՆԵՐԸ Ս. ԳԵՂԱՐԴԱ ՎԱՆՔՈՒՄ



ԱՂՈՒՀԱՑՈՎ ԴԻՄԱՎՈՐՈՒՄ ԽՈՐ ՎԻՐԱՊՈՒՄ

# Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

*Ձերդ Սրբություն,*

*Անհուն գոհունակությամբ փառք ենք տալիս Աստծուն՝ մեր Երկնավոր Հորը, որ պարգևեց մեզ՝ երկու եղբայրներիս միշտ ցանկալի մեր հանդիպումը Քրիստոսաէջ այս Սուրբ Տաճարում:*

*Հայոց երկրորդ լուսավորիչ, հավատո մեր հայր Ս. Գրիգորն այստեղ է ծնրադիր աղոթելիս տեսել իր հրաշալի տեսիլքը. մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոս երևաց նրան լույսերի մեջ և իջնելով Հայոց հողին՝ իրեղեն մուրճով հարվածեց գետնին՝ պատվիրելով կառուցել Տաճար Աստծո և տուն աղոթից:*

*301 թ. այստեղ քրիստոնեությունը հռչակվեց Հայոց թագավորության պետական կրոն, և երկու տարի անց Տրդատ Գ արքան, իր ուսերին քարեր բերելով Մասյաց լանջերից, ժողովրդի հետ կառուցեց Մայր Տաճարը Սուրբ Էջմիածնի, որը հոգևոր և վարչական նվիրական կենտրոնն է ամենայն հայոց, և որին, ինչպես պատմիչն է ասում՝ «կապեալ կայ ամենայն ազգս հայոց»:*

*Ձերդ Սրբություն,*

*Սա Ձեր երկրորդ այցելությունն է Հայոց հավատքի կենտրոն Մայր Աթոռ Ս. Էջմիածին: Առաջին անգամ Դուք այցելեցիք մեր երջանկահիշատակ նախորդ Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրավերով, 20 տարի առաջ, 1982 թ.:*

*Այսօր, ընդունելով Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակվելու 1700-ամյակի առթիվ Ձերդ Սրբությանն ուղղված Մեր հրավերը, կրկին ժամանել եք Հայոց երկիր՝ այս անգամ արդեն ազատ և անկախ Հայաստանի Հանրապետություն:*

*Սիրեցյալ եղբայր ի Քրիստոս, դարերի փորձություններին հակառակ Ասորի և Հայ Եկեղեցիները պահպանել են ի Քրիստոս հավատի միությունը, փոխադարձ բարի հարաբերություններն ու համագործակցությունը: Հայաստանի առաջին կաթողիկոս Ս. Գրիգոր Լուսավորչի և նրա հաջորդների անմիջական գործակիցների թվում էին նշանավոր ասորի հայրեր՝ Մար Ավգինը, Զենոբ Գլակը՝ առաջին եպիսկոպոսն ու կառուցողը Մշո Սուրբ Հովհաննես վանքի, Դանիել Ասորին՝ Աշտիշատի երկրորդ եպիսկոպոսը, Բասենի եպիսկոպոս Արտիթը, Շաղիտան՝ Կորդվաց աշխարհում, Եպիփանը՝ Աղձնյաց և Ծոփաց աշխարհներում, անապատականության նշանավոր ներկայացուցիչ Գինդը՝ Տարոնում:*

*Հայոց աշխարհի հետ բազմաթիվ և անքակտելի թելերով է կապված Ս. Հակոբ Մծբնա Հայրապետը, որին՝ հրեշտակի միջոցով տրված Նոյան տապանի մասունքը մինչև այսօր պահպանվում է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի 1700-ամյա կամարների ներքո:*

*Մեր երկու Եկեղեցիների և ազգերի առջև պատմության ընթացքում ծառացած խնդիրները մեր նախնիները վճռել են եղբայրական սիրո և փոխըմբռնման ճանապարհով, ինչպես որ եղավ 726 թ. Մանազկերտի ժողովում Հայոց Հովհան Օձ-*

*նեցի Կաթողիկոսի և Ասորվոց Աթանաս Պատրիարքի նախագահությամբ, 12-րդ դարում՝ Ասորվոց Միքայել Պատրիարքի և Հայոց Կաթողիկոս Ներսես Շնորհալու ջանքերով:*

*Մեր ժողովուրդների պատմության ընդհանուր էջերից է նաև Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին կրած եղեռնի ողբերգությունը, երբ թուրքական յաթաղանին զոհ դարձան մեկ և կես միլիոն հայություն և մոտ հարյուր հազար ասորիներ:*

*Եկեղեցու Գլուխը՝ մեր Տերը և Փրկիչը, Հիսուս Քրիստոս, սակայն զորացրեց նահատակ մեր Եկեղեցիները: Ավանդական, ազգային մեր Եկեղեցիները նորից ոտքի կանգնեցին և, թեև ցրված աշխարհով մեկ, շարունակում են հովվել իրենց հավատացյալներին և իրենց ներկայությունը հաստատում միջեկեղեցական կյանքում:*

*Սիրեցյալ եղբայր ի Քրիստոս, մեր ժամանակներում, երբ կյանքի ընթացող ճանապարհները հաճախ մարդկանց հեռացնում են Աստծուց, երբ անսքող են հոգևոր և բարոյական արժեքների ոտնահարումը, ազգամիջյան անհանդուրժողականությունը, ահաբեկչությունն ու պատերազմը, կարիքն ու աղքատությունը, գլոբալիզացիայի համահարթեցնող, բացասական արտահայտությունները, քրիստոնեական Եկեղեցիներս առավել սերտորեն պիտի համագործակցենք մեր առաքելության ճանապարհին: Քրիստոնեական Եկեղեցիների եղբայրական միությունը պիտի օգնի մեզ՝ հավատի մեր վկայությունը բերելու մարդկանց, հաստատելու հույսի ու սիրո մեջ, որպեսզի Աստվածճանաչողությունը լուսավորի կյանքի իմաստը և պայծառավորի ու առաջնորդի նրա ընթացքները:*

*Փառք Տիրոջը, որ Քրիստոսակից այս Սուրբ Տաճարում միասին աղոթում ենք վասն աշխարհի խաղաղության և մեր ժողովուրդների բարօրության ու հավատավոր անսասանության կյանքի:*

*Կրկին անգամ, սիրո և եղբայրության ողջույնով, բարի գալուստ ենք մաղթում Ձերդ Սրբությանը և Ձեր շքախմբի անդամներին՝ Մար Ցուլիոս, Մար Դիոնիսիոս և Մար Սևերիոս Սրբազաններին և Հայր Եղիային:*

*Թող Տերը օրհնի մեր երկու Եկեղեցիների միությունը, զորացնի հավատով ու եղբայրական սիրով այսօր և միշտ և հավիտյանս. Ամեն:*

## ԱՆՏԻՈՔԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ԱՐԵՎԵԼՔԻ ԱՍՈՐԻ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՐԻԱՐՔ ԻԳՆԱՏԻՈՍ ԶԱՔՔԱ Ա ԻՎԱՍԻ ԽՈՍՔԸ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

*Նորին Սրբություն Գարեգին Բ Կաթողիկոս Ամենայն Հայոց, եպիսկոպոսներ, վարդապետներ, քահանաներ, սարկավագներ և հավատացյալ ժողովուրդ.*

*Իմ անունով և ինձ ընկերակցող եպիսկոպոսների անունով՝ Բաղդադի և Բասրայի առաջնորդ Սևերիոս արքեպիսկոպոսի, Գերմանիայի առաջնորդ Իսա Սրբազանի, իմ առաջին քարտուղարի և Հնդկաստանի Ասորական Եկեղեցու Պատրիարքությունում ներկայացուցչի՝ Կիրակոս արքեպիսկոպոսի, ինչպես նաև հայր Իլիայի՝ Մեր երկրորդ քարտուղարի և Սնպիոցի մեր Եկեղեցու այունհոդոսի*

*և ասորական ժողովրդի անունից, շնորհակալություն եմ հայտնում Ձերդ Սրբությանը Ձեր հրավերի համար, որով եկանք և մասնակից եղանք Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակման 1700-ամյակի առիթով տակավին շարունակվող հանդիսություններին:*

*Ժամանակը թույլ չի տալիս ինձ կրկնելու, ինչ որ Նորին Սրբությունն ասաց մեր երկու Եկեղեցիների հարաբերությունների մասին: Գոհություն եմ հայտնում Աստծուն, որ երկրորդ անգամ լինելով այստեղ, ստանում եմ օրհնությունը Սուրբ Էջմիածնի, այն վայրի, որտեղ Հիսուս Քրիստոս իջավ, ինչպես մեզ ավանդում է Ս. Գրիգոր Լուսավորիչը:*

*Ներկա լինելով Ս. Պատարագին, զգում եմ, որ մեր Տեր Հիսուս Քրիստոս արդեն մեր մեջ է, որովհետև այստեղ եկանք Իր անունով և Իր սիրով տոգորված: Ձերդ Սրբություն, Դուք արդեն ամեն ինչ արեցիք մեզ համար, և մենք այստեղ շնորհակալություն ենք հայտնում Ձեր ցուցաբերած բոլոր հյուրընկալությունների համար: Դուք բարի հովիվն եք այս ժողովրդի: Միասնաբար մենք այցելեցինք շատ վանքեր, եկեղեցիներ և հաստատություններ, և մեր ուրախությունն ավելացավ՝ տեսնելով ձեր ժողովրդի սերը Ձեր անձի նկատմամբ:*

*Եղանք 1915 թ. եղեռնի հուշարձանում, տեսանք Եկեղեցու մատուցած նահատակությունը պահպանելու համար մեր հավատքը, հայ ժողովրդի սերը մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի անձին, որն Իր արյունով մեզ սրբեց: Ուրեմն օրհնյալ հայ ժողովուրդը և ասորական ժողովուրդը Տիրոջ զոհասեղանի վրա մատուցեցին իրենց մաքուր արյունը, որպեսզի պահպանեն այս սուրբ հավատքը:*

*Սիրելի ժողովուրդ, գոհություն ենք հայտնում Աստծուն, որ ձեզ պարգևեց մի մեծ կաթողիկոս, որը սիրում է իր ժողովրդին և սիրված է իր ժողովրդից: Հայրերն իրենց արյունը մատուցեցին և նահատակվեցին, որպեսզի զավակներին փոխանցեն հավատքը: Տեսանք, ինչպես այս մեծ կաթողիկոսը փոքրիկներին սովորեցնում է Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի սիրով: Տեսանք 1700 տարիների ընթացքում ժողովրդի ապրած հավատքը, և ինչպես զավակները ամուր և պինդ են պահում այդ հավատքն ու Եկեղեցին:*

*Ձեզ շնորհավորում ենք, սիրելի ժողովուրդ, որ ունեք Գարեգին Կաթողիկոսին հայր: Մաղթում ենք, որ այս ժողովուրդն ամուր պահի իր հավատքը, որ Հայաստանը մնա ազատ և անկախ, որպեսզի այս ժողովուրդը երջանիկ լինի: Ողջունում ենք այս երկրի վսեմաշուք նախագահին՝ Տիար Ռոբերտ Քոչարյանին: Ողջունում ենք նաև Սիրիան, ուր է մեր Աթոռը, ինչպես նաև իր նախագահին՝ Բշառ Հաֆեզ Ասադին, որը պաշտպանում է ազատությունը՝ մեր եկեղեցական արարողություններն ու պաշտամունքը կատարելու:*

*Հայ ժողովրդն այն օրից, երբ Հիսուս Քրիստոսի երկու առաքյալների՝ Թադեոսի և Բարդուղիմեոսի, ինչպես նաև Ս. Գրիգոր Լուսավորչի ճանապարհով ստացավ ուղղափառ հավատքը, մինչև այսօր մեր երկու ժողովուրդները միասնաբար պահպանում են հավատքը, ինչպես նաև դավանանքը մեր երկու Եկեղեցիների և ժողովուրդների: Եվ երբ հայ ժողովուրդը 1700 տարիներ առաջ հավատաց մեր Տեր Հիսուս Քրիստոսին, Սուրբ Գիրքը՝ Հին և Նոր Կտակարանները, ա-*

*ասորերենից հայերենի թարգմանվեցին, մինչև որ 5-րդ դարում Մեսրոպ մեծ վարդապետը և Դանիել եկեղեցականը ստեղծեցին հայոց այբուբենը, որով թարգմանվեց Սուրբ Գիրքը հայերեն լեզվի, ինչպես նաև Ս. Հայրերի գրքերը թարգմանվեցին ասորերենից հայերենի: Եվ այսպիսով, հայերեն բառեր ներմուծվեցին ասորերենում, ինչպես նաև ասորերեն բառեր՝ հայերենի մեջ:*

*Այս պահին ես նվիրում եմ Կաթողիկոսին Սուրբ Գիրքը ասորերեն լեզվով, արամերեն լեզվով, որ գրված են նաև մեր շնորհակալության խոսքերը՝ ուղղված Նորին Սրբությանը իր հրավերի համար, որով այստեղ, այս սուրբ վայրից մենք օրհնություն ստացանք: Աղոթում ենք Աստծուն, որ զորավիգ լինի Նորին Սրբությանը Հայ Եկեղեցու բարգավաճման համար: Աստված Նորին Սրբությանը քաջառողջությամբ թող երկար կյանք շնորհի, և Հայոց Եկեղեցին բարգավաճի և հայ պետականությունը խաղաղությամբ հառաջդիմություն արձանագրի, ինչպես նաև աղոթում ենք աշխարհի խաղաղության համար: Թող Աստծո օրհնությունը ձեզ հետ լինի այժմ և միշտ. ամեն:*

Հավարտ Ս. Պատարագի, ի պատիվ Ասորի Ուղղափառ Եկեղեցու պատվիրակության, կազմակերպվեց ճաշկերույթ Մայր Աթոռի միաբանական սեղանատանը՝ Մայր Աթոռի ողջ միաբանության և թեմակալ առաջնորդների մասնակցությամբ:

Երեկոյան Անտիոքի և Համայն Արևելքի Ասորի Ուղղափառ Եկեղեցու գահակալ Մար Իգնատիոս Զաքքա Ա Իվաս Պատրիարքը և պատվիրակության անդամները երջանկահիշատակ Վազգեն Ա Հայրապետի շիրիմի մոտ աղոթեցին լուսահոգի Հայրապետի հոգու հանգստյան համար:

Այնուհետև Վեհարանում տեղի ունեցավ առանձնազրույց երկու Հայրապետների, ինչպես նաև՝ հանդիպում Հայաստանի թեմակալ առաջնորդների, Մայրավանքի եպիսկոպոսաց դասի և Ասորի Ուղղափառ Եկեղեցու պատվիրակության միջև:

Նոյեմբերի 21-ին Վեհափառ Հայրապետն ու Մար Իգնատիոս Զաքքա Ա Իվաս Պատրիարքը բարձրաստիճան հոգևոր դասի ուղեկցությամբ հյուրընկալվեցին նախագահ Ռոբերտ Քոչարյանի և Ազգային ժողովի նախագահ Արմեն Խաչատրյանի կողմից:

Այնուհետև երկու Հայրապետները այցելեցին Երևանի Նորակառույց Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցի և «Հրաշափառ»-ի երգեցողության ներքո մուտք գործեցին եկեղեցի՝ իրենց օրհնությունը տալու ներկա հավատացյալներին:

*«Սիրիայի Ասորական Ուղղափառ Եկեղեցու հետ 2000 տարիներ պաշտպանել ենք նույն հավատքը՝ հաճախ մարտիրոսանալով, հաճախ նահատակվելով մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի սիրույն համար: Այսօր առանձնակի բերկրանք ենք ապրում, որ 2000-ամյակ հետո մեր Եկեղեցիները կրկին կապված են եղբայրական ջերմ սիրով, որ դրսևորվում է ոչ միայն եկեղեցականաց, այլ նաև մեր ժողովուրդների հավատավոր զավակաց հարաբերություններում»*,- իր խոսքում նշեց Վեհափառ Հայրապետը:

Ասորի Պատրիարքը, փեսնելով նորակառույց եկեղեցին, արտահայտեց իր գոհունակությունը՝ ասելով. *«Գոհություն ենք հայտնում Աստծուն, Որն աջակից է մեր սիրեց-*



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՌՈԲԵՐՏ ՔՈՉԱՐՅԱՆԻ ՀԵՏ
ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ՆՍՏԱՎԱՅՐԻ ԱՌՋԵՎ

[library stamp]



ԵՐԵՎԱՆԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՌՋԵՎ

*յալ եղբորը: Հպարտ ենք Հայաստանյայց Առաքելական քույր Եկեղեցիով՝ գլխավորությամբ Գարեգին Բ Կաթողիկոսի»:*

Հոկտեմբերի 22-ին երկու Հայրապետները բարձրաստիճան եկեղեցականաց դասի ուղեկցությամբ այցելեցին Սևանա կղզի՝ հանդիպելու Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցի սաներին: Ճեմարանի մուտքի առջև Դպրանոցի տեսուչ Հոգեշնորհ Տ. Բագրատ վրդ. Գալստանյանը, տեսչական կազմի անդամները, ճեմարանի դասախոսներն ու ուսանողությունը դիմավորեցին երկու հովվապետերին և նրանց ուղեկիցներին: Հյուրերին բարի գալուստ մաղթեց տեսուչ Հայր Սուրբը:

Զաքքա Պատրիարքը, Հայոց Հայրապետի ուղեկցությամբ, շրջեց վանական համալիրի փարածքում, ապա Վեհափառ Հայրապետը ներկայացրեց հոգևորականներին, դասախոսական կազմին և ճեմարանի ուսանողությանը: Հոգեշնորհ Հայր Սուրբը հակիրճ ներկայացրեց Սևանի հնամենի վանքի, ինչպես նաև Դպրանոցի հիմնադրման պատմությունը:

Հյուրերը հիացմունքով ունկնդրեցին ճեմարանականների պատրաստած հոգևոր համերգը, հավարտ որի Զաքքա Պատրիարքն իր հայրական օրհնությունը բերեց ուսանողությանը. *«Այս ճեմարանը ոչ միայն ձեր Եկեղեցու ապագան է, այլ նաև՝ հույսը: Երբ Նորին Սրբություն Գարեգին Երկրորդը դեռևս Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդն էր, ունեցավ տեսիլքն ու իմաստնությունը՝ Վազգեն Ա Կաթողիկոսի օրհնությամբ, ում անվամբ էլ այսօր կոչվում է Դպրանոցը, հիմնել այս հաստատությունն այս գեղեցիկ ու խաղաղ լճի ափին: Լավ սովորեցեք, որպեսզի օրերից մի օր մենք հպարտությամբ նայենք ձեզ՝ որպես առաջնորդների Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու»:*

Սևանում, ի պատիվ Զաքքա Պատրիարքի, տրվեց ճաշկերույթ: Ավարտելով իր այցը Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոց, պատվիրակությունը վերադարձավ Մայր Աթոռ Ս. Էջմիածին: Նույն օրը, երեկոյան, Վեհարանում, ի պատիվ Ասորի Ուղղափառ Եկեղեցու գահակալ Մար Իգնատիոս Զաքքա Ա Իվաս Պատրիարքի, տրվեց հրաժեշտի ճաշկերույթ, որին իրենց մասնակցությունը բերեցին նաև Հայ Եկեղեցու բարձրաստիճան հոգևորականներ, Գերագույն Հոգևոր խորհրդի անդամներ, աշխարհիկան մտավորականներ:

Հոկտեմբերի 23-ի վաղ առավոտյան Նորին Սրբությունը հայրապետական շքախմբի անդամների հետ Երևանի «Զվարթնոց» օդանավակայանում բարի ճանապարհ մաղթեց Մար Իգնատիոս Զաքքա Ա Պատրիարքին և նրա գլխավորած պատվիրակությանը:

Մար Իգնատիոս Զաքքա Ա Պատրիարքի Մայր Աթոռում գտնվելու օրերին, նրա պաշտոնական այցելությունների ժամանակ, Նորին Սրբությանը, Վեհափառ Հայրապետի գլխավորությամբ, մշտապես ուղեկցում էին Հունաստանի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Ոսկան արքեպս. Գալփաքյանը, Իրաքի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Ավագ արքեպս. Ասատուրյանը և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի պատասխանատու Գերաշնորհ Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանը:

*ՎԱԶԳԵՆ ՄՐԿ. ՔԵՍԱԲԼՅԱՆ*
*Միջեկեղեցական հարաբերությունների բաժին*

# ԳԱՐԵԳԻՆ Բ ՎԵՀԱՓԱՌԸ ԸՆԴՈՒՆԵՑ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՆԱԽԱԳԱՀ ԲՈՐԻՍ ԵԼՑԻՆԻՆ

Հոկտեմբերի 15-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Ս.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հյուրընկալեց Ռուսաստանի առաջին նախագահ Բորիս Ելցինին՝ փիկնոջ հետ:

«Մեր ժողովուրդն առանձնակի ջերմ զգացումներ է տածում հանդեպ ռուս ժողովուրդը և Ձեր անձը և գիտակցում այն կարևոր դերը, որ ունեցել եք նորօրյա այս ժամանակների կերտման գործում»,- ողջունելով Ռուսաստանի առաջին նախագահին, ասաց Նորին Սրբությունը:

«Ցավոք, այնպես է ստացվել, կարելի է ասել, իմ մեղքն է, որ առաջին անգամ եմ Հայաստանում և համայն հայության սրբավայրում: Իմ կարծիքով, Հայաստանում Եկեղեցին մեծ ուժ է»,- շնորհակալություն հայտնելով ընդունելության համար, ասաց պրն Ելցինը:

Հանդիպման ընթացքում Հայոց Հայրապետն ու պրն Ելցինը զրուցեցին խորհրդային կարգերի փլուզումից հետո Հայ Առաքելական և Ռուս Ուղղափառ Եկեղեցիների առջև ծառացած խնդիրների շուրջ, անդրադարձան Եկեղեցի-պետություն զարգացող հարաբերություններին:

Պրն Ելցինին հետաքրքրում էին նաև փարաբնույթ հարցեր՝ կապված հայ ժողովրդի հավատքի, հոգևոր սպասավորների պատրաստման, Հայ Եկեղեցու և քրիստոնեական այլ հարանվանությունների փոխհարաբերությունների, աղանդավորության և այլ խնդիրների հետ: Ի պատասխան այս հարցումների, Վեհափառ Հայրապետն ի մասնավորի նշեց Հայ և Ռուս Եկեղեցիների և նրանց զահակալների միջև եղբայրական փոխհարաբերությունները, անդրադարձավ Մոսկվայի և Համայն Ռուսիո Ալեքսի Բ Պատրիարքի միջնորդությամբ Կովկասի մուսուլմանների հոգևոր առաջնորդ Շեյխ Ուլ-իսլամ Փաշա-Զադեի հետ Մոսկվայում կայացած եռակողմ հանդիպումներին՝ ի շահ դարաբաղյան խնդրի խաղաղ կարգավորման:

Հանդիպման ավարտին Նորին Սրբությունը պրն Ելցինին նվիրեց 1700-ամյակին նվիրված եռբեյանական հուշամեդալ և Հայ Եկեղեցու մասին նկարազարդ գեղեցիկ ալբոմ: Պրն Ելցինն ու տիկին Ելցինան եղան նաև Վեհարանի թանգարանում:



ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԲՈՐԻՍ ԵԼՑԻՆԸ ՏԻԿՆՈՋ ՀԵՏ ՎԵՀԱՐԱՆԻ ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ



ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՀՈԳԵՎՈՐ ԱՐԺԵՔՆԵՐԻՆ ՈՒ ԱՐՎԵՍՏԻ ԳՈՐԾԵՐԻՆ Է ԾԱՆՈԹԱՆՈՒՄ
ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ԼԵՈՆԻԴ ԿՈՒՉՄԱՆ

# ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՀԱՆԴԻՊԵՑ ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ՆԱԽԱԳԱՀ ԼԵՈՆԻԴ ԿՈՒՉՄԱՅԻ ՀԵՏ

Հոկտեմբերի 11-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիպում ունեցավ Ուկրաինայի նախագահ Լեոնիդ Կուչմայի հետ:

Նորին Սրբությունը ողջունելով նախագահի այցը հայոց հոգևոր կենտրոն՝ ուրախություն հայտնեց երկու երկրների միջև բարեկամական կապերի ամրապնդման համար. «Մեզ համար մեծ ուրախություն ու մխիթարություն է փեսնել ջերմ, եղբայրական հարաբերությունները մեր երկրների միջև, որ զարգանում են նախագահների մակարդակով»,- ասաց Վեհափառ Հայրապետը:

Հայոց Հայրապետը միաժամանակ երախտագիտություն հայտնեց Ուկրաինայի պետության ու նախագահին այն ազնիվ ուշադրության համար, որ ցուցաբերվում է հանդեպ Ուկրաինայի հայազգի քաղաքացիները, և որի վկայությունն է Ուկրաինայի խորհրդարանում հայազգի պատգամավոր Նվեր Մխիթարյանի ներկայությունը:

Վեհափառ Հայրապետը շնորհակալություն հայտնեց նաև անցած տարի Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակի առիթով նախագահի կողմից իրեն տրված բարձր պարգևի՝ Ուկրաինայի պետության «Իշխան Յարոսլավ Իմաստուն» շքանշանի համար:

Պատասխան խոսքում պրն Կուչման նշեց, որ իր համար մեծ պատիվ է գտնվել հայոց սրբավայրում. «Մենք հասկանում ենք, թե ինչ նշանակություն ունի Եկեղեցին երկրի հոգևոր կյանքի զարգացման համար: Ես բարի նախանձ եմ տածում Հայաստանի հանդեպ, որի Եկեղեցին աջակից է պետությանը՝ ի շահ իր երկրի և ժողովրդի բարգավաճման»,- ասաց Ուկրաինայի նախագահը:

Անդրադառնալով Ուկրաինայի կրոնական կյանքին՝ պրն Կուչման նշեց, որ դրական լուծում են գտնում հայկական եկեղեցիների և եկեղեցաշինության հետ կապված բոլոր խնդիրները, մասնավորապես Լվովի հայկական եկեղեցու ամբողջական վերադարձը հայոց թեմին, ինչպես նաև Կիևում հայկական նոր եկեղեցու կառուցման նպատակով հողահատկացման հարցը:

Հանդիպման ավարտին Հայոց Հայրապետն իր օրհնությունը տվեց Ուկրաինայի ժողովրդին ու նախագահին՝ մաղթելով բեղմնավոր գործունեություն՝ ի բարգավաճում Ուկրաինայի պետության և ժողովրդի:

Հանդիպմանը ներկա էին Ուկրաինայի հայոց թեմի առաջնորդ Տ. Գրիգորիս արքեպս. Բունիաթյանը, եպիսկոպոսաց դասի ներկայացուցիչներ, պետական պաշտոնյաներ, երկու երկրների դեսպանները:

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ

ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳՐԵՐ

# ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԱՐՍԵՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԵՐԲԵՐՅԱՆԻՆ՝ ԾՆՆԴՅԱՆ ՎԱԹՍՈՒՆՀԻՆԳ ԵՎ ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՔԱՌԱՍՈՒՆԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ

## ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՎԱՍՏԱԿԵԱԼ ՍՊԱՍԱՒՈՐՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԵՐ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՒՈՅ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԱՐՍԷՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԷՐՊԷՐԵԱՆ

Սիրելի Սրբազան,

Ձեր ծննդեան վաթսունհինգ եւ քահանայական ծառայութեան քառասուներորդ փարեդարձերի ուրախ առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից բերում ենք Ձեզ Հայրապետական Մեր ողջոյնն ու օրհնութիւնը:

Ահաւասիկ, քառասուն տարիներ շարունակ Դուք սպասաւորում էք Առաքելական մեր Մայր Եկեղեցուն եւ աստուածասէր մեր ժողովրդին, եւ Մենք ուրախ ենք նշելու, որ Ձեր կեանքի յոբելեանական այս հանգրուանը Դուք դիմաւորում էք եկեղեցաշէն արդիւնաշատ ձեռքբերումներով:

Ամենուր Ձեր գործունէութեան մէջ՝ որպէս Սուրբ Էջմիածնի դիւանապետ, Արարատեան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ, Գուգարաց թեմի առաջնորդ, Գերագոյն Հոգեւոր Խորհրդի անդամ, Դուք առաջնորդուել էք աստուածպարգեւ Ձեր շնորհները Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն եւ համազգային մեր սրբավայր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին անկեղծ ու անմնացորդ ընծայելու պատրաստակամութեամբ՝ երջանկայիշատակ

Վազգէն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից արժանանալով Արքութեան բարձր պատուին:

Բարձր ենք գնահատում երաժշտութեան հանդէպ Ձեր հակումն ու սէրը եւ յատկապէս՝ եկեղեցական ծէսի ուսումնասիրութեան մէջ խորամուխ լինելու Ձեր ջանքերը: Գովելի է, որ Դուք մեր ժողովրդի զաւակներին ներկայացնում էք հայ հոգեւոր երգը՝ նրանց հոգիներում զօրացնելով հաւատն առ Աստուած եւ սէրը առ Եկեղեցին Սուրբ ու նարազատ ժողովուրդը մեր:

Սիրելի Սրբազան, յիշարժան Ձեր յոբելեանների ուրախ առիթով ի խորոց սրտի մաղթում ենք, որ Բարին Աստուած օգնական ու աջակից լինի Ձեզ հոգեւոր կոչման մէջ եւ հանապազ զօրացնի՝ շարունակելու Ձեր ծառայութիւնը մեր ժողովրդի բարեպաշտ զաւակներին՝ ի շինութիւն եւ ի պայծառութիւն Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու:

Թող Ամենակարող Տէրն Իր նայրական սիրոյ մէջ պահի ու պահպանի Ձեզ, պարգեւի քաջառողջ արեւշատութիւն, հանապազ օրհնի Ձեր կեանքը գործոց յաջողութիւններով ու երկնատուր պարգեւներով:

*Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ ձեզ եւ ամենեսեան. ամէն:*

Օրհնութեամբ՝

**ԳԱՐԵԳԻՆ Բ**
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Գիրս Օրհնութեան ի 21-ն Հոկտեմբերի
յամի Տեառն 2002 եւ ի թուին հայոց ՌՆԾԱ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 310

# ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՄԱՔՍԻՄ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ԶԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ՄԱՔՍԻՄ ՅԱԿՈԲԵԱՆ

Համազգային մեր նուիրական սրբավայր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր ողջոյնն ու օրհնութիւնն ենք բերում Ձեզ մեր ժողովրդին մատուցած Ձեր ծառայութիւնների եւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու հանդէպ Ձեր անկեղծ սիրոյ ու նուիրումի համար:

Մեծարգոյ պրն Յակոբեան,

Այսօր Դուք ճանաչուած էք որպէս գործարար ու բարեգործ հայորդի, ով իր ջանքերն ու միջոցները ծառայեցնում է հայրենի երկրին, հարազատ ժողովրդին ու Մայր Եկեղեցուն, ազգային մեր կեանքի շինութեանն ու անկախ մեր երկրի առաջընթացին:

Մենք մեծապէս ուրախ ենք նաեւ Ձեր եկեղեցանուէր գործունէութեան համար՝ ի խնդիր Սիւնեաց Տիրախնամ թեմի պայծառութեան: Առանձնակի գնահատանքի է արժան Ձեր մասնակցութիւնը Կապանի Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցու կառուցման սրբազան գործում, որի օծման արարողութիւնը կատարեցինք Ազգային մեր կեանքում 1700-ամեակի խորհրդով յոբելեանազարդ 2001 թուականին՝ Ձեր եւ հաւատաւոր հայորդեաց աղօթական ներկայութեամբ: Շքեղակառոյց եկեղեցին այսօր իր դռներն է բացել Կապան քաղաքի բարեպաշտ մեր զաւակների առջեւ՝ մխիթարութիւն բերելով նրանց հաւատաւոր հոգիներին եւ Աստուածային օրհնութիւն սփռելով Սիւնեաց աշխարհի նուիրական մեր հողին:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ու խորին գնահատանքն ենք յղում Ձեզ եւ, սիրով ընդառաջելով բարեջան Ձեր առաջնորդի ազնիւ խնդրանքին, Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

**Ս Ո Ւ Ր Բ   Գ Ր Ի Գ Ո Ր   Լ Ո Ւ Ս Ա Ւ Ո Ր Ի Չ**

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Ի խորոց սրտի աղօթքով հայցում ենք Ամենակալ Աստծուց, որ Իր հանապազ օրհնութեան ներքոյ պահի ու պահպանի Ձեզ ու Ձեր ընտանեաց անդամներին՝ յաջողութիւններ պարգեւելով բարի ու հայրենանուէր Ձեր բոլոր իրագործումներին:

Թող ընտանեկան Ձեր հարկը շնորհընկալը լինի երկնատուր բիւր բարիքների եւ Աստծոյ առատ ողորմութեան:

*Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:*

Օրհնութեամբ՝

**ԳԱՐԵԳԻՆ Բ**
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 9-ն Օգոստոսի
Ցամի Տեառն 2002 եւ ի թուին հայոց ՌՆԾԱ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 102

# ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՆՎԵՐ ՄԽԻԹԱՐՅԱՆԻՆ «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ԶԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ՆՈՒԷՐ ՄԽԻԹԱՐԵԱՆ, ՈՐ Ի ԿԻԵՒ, ՈՒԿՐԱԻՆԱ

Ուկրաինայի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Գրիգորիս արքեպիսկոպոս Բունիաթեանից գոհունակութեամբ տեղեկացանք Տիրախնամ թեմին եւ հաւատաւոր մեր ժողովրդին մատուցած Ձեր ծառայութեանց մասին, որոնք բարի անուն եւ ճանաչում են բերում Ձեզ՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու արժանաւոր զաւակիդ:

Ցարգարժան պրն Մխիթարեան, արդարեւ, մեծ աւանդ ունէք ուկրաինահայ կեանքում՝ ինչպէս Ուկրաինայի Բարձրագոյն Ռադայի պատգամաւոր, այնպէս եւ անուանի գործարար ու բարեգործ հայորդի:

Բարձր ենք գնահատում, որ Դուք յամենայնի օգնական ու աջակից էք Ուկրաինայի հայոց թեմի բարեջան առաջնորդին եւ հոգեւոր դասին՝ ի խնդիր Մայր Եկեղեցու փրաւանդ առաքելութեան արդիւնաւոր իրականացման: Ձեր հետեւողական ջանքերի ու ներդրած նիւթական միջոցների շնորհիւ Տիրախնամ թեմի Սուրբ Աստուածածնի Վերափոխման եկեղեցին այսուհետ ամբողջական ու բարեզարդ իր տեսքով պիտի ծառայի աստուածասէր մեր ժողովրդին՝ շարունակելով համախմբել եւ հաւատի ճանապարհով առաջնորդել Եւրոպայի ամենահին հայկական գաղթօջախներից մէկի՝ Լւովի հայ համայնքը: Աղօթավան սրբազան յարկի ներքոյ բարեպաշտ հայորդիները մշտապէս երախտագէտ հոգով պիտի յիշեն Ձեզ եւ աղօթքով Ամենախնամ Բարձրեալի օրհնութիւնը հայցեն պատուարժան հայորդուդ բոլոր բարի գործերին ու նախաձեռնութիւններին:

Ամենայն Հայոց Սրբութիւն Սրբոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից յղում ենք Ձեզ Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքները եւ, սիրով ընդառաջելով առաջնորդ Սրբազանի ազնիւ խնդրանքին, Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Մայր Եկեղեցու

**ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ**

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Ի խորոց սրտի Մեր աղօթքն ու բարի մաղթանքն է, որ Տիրոջ հանապազ օրհնութեամբ միշտ եռանդուն ու կորովաշատ, շարունակէք Ձեր ծառայութիւնը բերել Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն ու հաւատացեալ ժողովրդին:

Թող Բարին Աստուած Իր Հայրական խնամնու ներքոյ քաջառողջ ու երջանիկ պահի Ձեզ եւ Ձեր ընտանեաց անդամներին՝ արժանացնելով երկնային բիւր պարգեւների: «Որ նիւթէ զբարիս, խնդրէ շնորհս բարութեան»:

*Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնք. ամէն:*

Օրհնութեամբ՝

**ԳԱՐԵԳԻՆ Բ**
**ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

Տուաւ Կոնդակս ի 23-ն Հոկտեմբերի
յամի Տեառն 2002 եւ ի թուին հայոց ՌՆԾԱ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 118

# ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ԳԵՐՄԱՆԱՑԻ ՀԱՅԱԳԵՏ ՀԵՐՄԱՆ ԳՈՑԻՆ «Ս. ՍԱՀԱԿ - Ս. ՄԵՍՐՈՊ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՒԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՄԻՐԵՑԵԱԼ ԲԱՐԵԿԱՄՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑՒՈՅՍ ԵՒ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԵԱՆՍ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ՀԵՐՄԱՆ ԳՈՑ, ՈՐ Ի ՀԱԼԼԷ, ԳԵՐՄԱՆԻԱ

Համայն հայութեան հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Մեր ջերմ ողջոյնն ու սրտաբուխ բարեմաղթանքներն ենք բերում Ձեզ՝ հայ ժողովրդի ու Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու սիրելի բարեկամին:

Մեծարգոյ Տիար Հերման Գոյց, գոհունակութեամբ ենք անդրադառնում, որ Դուք երկար տարիներ Ձեր աստուածահաճոյ գործունէութեամբ, հեղինակած բազմաթիւ գրքերով ու հրապարակումներով, կազմակերպած միջոցառումներով համաշխարհային գիտական եւ հասարակական լայն շրջանակներին ներկայացնում էք հայ ժողովրդի ազգային արժէքները եւ ամենայն սիրով ու նախանձախնդրութեամբ ծառայում հայագիտութեան զարգացմանը:

Ձեր նուիրեալ ջանքերի արդիւնքն է Հալլէի համալսարանի Սուրբ Մեսրոպ Մաշտոց Գիտական-Աստուածաբանական Կենտրոնի հիմնադրումը, որի շնորհակալ գործունէութեամբ համբաւաշատ կրթօջախի բազմաթիւ ուսանողներ այսօր հաղորդ են դառնում հայոց լեզուին, պատմութեանն ու մշակոյթին:

Որպէս անուանի հայագէտ ու մտաւորական, Դուք Ձեր արդիւնաշատ ներդրումը բերեցիք նաեւ Հայաստանում Քրիստոնէութիւնը պետական կրօն հռչակման 1700-ամեակի դաբակազմիկ յոբելեանը փոնախմբելու գործում՝ Գերմանիոյ Հալլէ քաղաքում կազմակերպելով «Հայաստան -2000» խորագրով գիտաժողովը եւ Կիլիկիոյ հայ արուեստի ցուցահանդէսը՝ նուիրուած մեր ժողովրդի քրիստոնէական անցեալին ու ստեղծած հոգեւոր հարուստ ժառանգութեանը: Բազմաթիւ մտաւորականներ մասնակցեցին յոբելեանական այս միջոցառումներին՝ առաւել հանգամանալից ծանօթանալով հայ ժողովրդի մշակոյթի ու արուեստի բարձրարժէք գործերին, որոնք ծնունդ առած առ Աստուած հաւատով եւ առ մարդը սիրով, եղել եւ շարունակում են լինել բարութեան եւ հոգեւոր ներշնչումի անսպառ աղբիւր:

Բարձր ենք գնահատում նաեւ անուանի մտաւորական եւ մեծ մարդասէր, Վերապատուելի Յոհաննէս Լեփսիուսի յիշատակը վառ պահելու, ինչպէս նաեւ 20-րդ դարասկզբին հայ ժողովրդի նկատմամբ իրականացուած ցեղասպանութեան վերաբերեալ նրա բազմահազար փաստաթղթերից կազմուած արխիւը առաւել մատչելիօրէն հանրութեանը ներկայաց-

նելու Ձեր նախաձեռնութիւնը: Ի սփիւռս աշխարհի բնակուող հայորդիների համար անչափ թանկ ու հարազատ է Յոհաննէս Լեփսիուսի անունը, ով մարդկային ազնուութիւնն ու արդարութեան սէրը իր հոգում, իր կարելին ներդրեց յանուն հայ ժողովրդի պաշտպանութեան եւ Մեծ եղեռնի դատապարտութեան:

Մեծարգոյ Տիար Հերման Գոլց, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից առանձնակի ուրախութեամբ բերում ենք Ձեզ Մեր օրհնութիւնը եւ Հայրապետական այսու Կոնդակով շնորհում Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

## ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ - ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ

պատուոյ բարձր շքանշանը:

Ի խորոց սրտի աղօթում ենք առ Ամենախնամն Աստուած, որ պարգեւի Ձեզ քաջառողջ արեւշատութիւն, ստեղծագործական նոր ներշնչանքներ, աւիւն ու կորով, որպէսզի Դուք շարունակէք գիտական եւ մանկավարժական Ձեր աստուածահաճոյ արդիւնաշատ գործունէութիւնը:

*Ողջ լերուք ի Տէր, զօրացեալք շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:*

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 2-ն Հոկտեմբերի
յամի Տեառն 2002 եւ ի թուին հայոց ՌՆԾԱ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 115

# ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ ԳԻՐԸ ԲԱՆԳԿՈԿԱԲՆԱԿ ԲԱՐԵՐԱՐ ԲՈԲ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ

## ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ԶԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ԲՈԲ ԳԵՒՈՐԳԵԱՆ, ՈՐ Ի ԲԱՆԳԿՈԿ, ԹԱՒԼԱՆԴ

Սիրելի պրն Գեւորգեան,

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր ողջոյնը, սէրն ու օրհնութիւնն ենք յղում Ձեզ եւ հոգու առանձնակի բերկրանքով անդրադառնում մեր ժողովրդին եւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն մատուցած Ձեր ծառայութիւններին:

Տիրոջ կամքով ուրախ առիթ ենք ունեցել անձնապէս ճանաչելու Ձեզ եւ հաղորդ դառնալու բազում տարիների Ձեր եկեղեցանպաստ արգասաւոր գործունէութեանը, որի բարձր գնահատանքով երջանկայիշատակ Մեր նախորդ Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը հայրենասէր ու եկեղեցասէր բարեգործ հայորդուդ կուրծքը զարդարեց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու պատուոյ բարձրագոյն՝ «Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ» շքանշանով:

Արդարեւ, ատրուածահաճոյ Ձեր գործերը բարի անուն ու ճանաչում են բերում Ձեզ ինչպէս Սփիւռքում, այնպէս եւ Մայր Հայրենիքում: Մեր հոգին ուրախ է, որ Դուք տարիներ շարունակ հետամուտ էք Մայր Եկեղեցու Տիրաւանդ առաքելութեան արդիւնաւոր իրականացմանը, ինչպէս նաեւ ամենայն սիրով ներդնում էք Ձեր ջանքերը ի խնդիր անկախ մեր Հայրենիքի զօրացման ու առաջընթացի՝ որպէս Թայլանդում մեր երկրի պատուոյ հիւպատոս:

Ձեր նախաձեռնութեան շնորհիւ Սինգապուրում նոր կեանք ստացաւ ու բարեզարդուեց հնագոյն մեր հայոց Սուրբ Գրիգոր Լուսաւորչի անունը կրող եկեղեցին, որի լուսաւոր ու խնկաբոյր յարկի ներքոյ բարեպաշտ հայորդիները պիտի շարունակեն փառաբանել Բարձրեալն Աստծուն եւ արժանանալ Նրա օրհնութեանը՝ բարեմաղթանքով եւ երախտագէտ հոգով յիշելով նաեւ պատուարժան հայորդուդ:

Որդիական սիրով ու նուիրումով Դուք Ձեր մասնակցութիւնը բերեցիք նաեւ Քրիստոնէութիւնը Հայաստանում պետական կրօն հռչակման 1700-ամեակի տօնակատարութիւնների պսակը հանդիսացող Երեւանի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Մայր եկեղեցու կառուցման օրհնեալ գործին՝ յանձն առնելով շքեղակառոյց աղօթատան Սուրբ Աշխէն մատուռի բարեքարութիւնը: Գոհութիւն Աստուծոյ, որ քրիստոսասէր մեր ժողովրդին պարգեւել է Ձեզ պէս նուիրեալ արժանի զաւակ, ում անսակարկ ծառայութիւնը եւ աննուազ սէրը հանդէպ Մայր Եկեղեցին ու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը արդիւնաւորուած է բազում բարի պտուղներով:

Սիրելի պրն Գեւորգեան, համազգային նուիրական մեր սրբավայր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից յղում ենք Ձեզ Մեր բարեմաղթանքները եւ Ձեր ծառայութեանց ու վաստակի ամենաբարձր գնահատանքով Հայրապետական Օրհնութեան այսու Գրով շնորհում Ձեզ

**1700-ԱՄԵԱԿԻ**

պատուոյ շքանշան:

Ի խորոց սրտի աղօթքով հայցում ենք Ամենակալ Աստծուց, որ Իր հանապազ օրհնութեան ներքոյ միշտ քաջառողջ ու երջանիկ պահի եւ պահպանի Ձեզ ու Ձեր ընտանեաց անդամներին՝ առաջնորդելով բարի ու հայրենանուէր նորանոր իրագործումների:

Թող Ձեր յարկը շնորհընկալը լինի երկնապարգեւ բիւր բարիքների եւ առատ ողորմութեան:

***Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ ձեզ եւ ամենեսեան. ամէն:***

Օրհնութեամբ՝

**ԳԱՐԵԳԻՆ Բ**
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Գիրս Օրհնութեան ի 14-ն Հոկտեմբերի
յամի Տեառն 2002 եւ ի թուին հայոց ՌՆԾԱ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 308

# ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ

2002 թվականի հոկտեմբեր ամսվա ընթացքում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի Կոնդակով

**«Ս. Ներսես Շնորհալի»** շքանշանով պարգևատրվել են.
Պեն Գրիգորյան (ԱՄՆ Արևմտյան թեմ)
Սարո Խոդավարդյան (Արևմտյան Եվրոպայի Պապվիրակություն, Իտալիա)

**Օրհնության գիր** է տրվել.
Լևոն Գալոյճյան (ԱՄՆ Արևմտյան թեմ)
Հովհաննես ավագ քահանա Դանիելյան (Արարատյան Հայրապետական թեմ)
Ս. Հովհաննես Կարապետ եկեղեցու ծխական համայնքին (ԱՄՆ Արևմտյան թեմ)
Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցու ծխական համայնքին (Արևմտյան Եվրոպայի Պապվիրակություն, Փարիզ)

**Ավագության պատիվ** է տրվել.
Եզնիկ քահանա Կյուզելյան (Բրազիլիայի հայոց թեմ)

# Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ՈՒՍՈՒՑՉԻ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ

Հոկտեմբեր ամսվա առաջին կիրակին լուսավորված է Ուսուցչի օրվա խորհրդով: Մայր Աթոռ Ս. Էջմիածնից ուրախ սրտով Հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում ու շնորհավորում բոլոր ուսուցիչներին:

Սիրելի ուսուցիչներ, Ձեզ է վիճակված առաջնորդելու կյանքի անդրանիկ քայլերը մեր մանուկների ու պատանիների, բանալու նրանց առջև իմացության դռները, նրանց կրծքի տակ կրթելով նաև ծնողասեր ու մարդասեր սիրտ, հայրենապաշտ ու առաքինազարդ հոգի: Ձեր նվիրումով ու հավատավոր ընթացքով, Ձեր հոգածու ձեռքով սերմանված հունդերը բարի պտուղներ պիտի բերեն ազգային մեր կյանքի անդաստաններում:

Արդարև մեծ է Ուսուցչի առաքելությունը, և երանի նրան, ով մեծ կլինի այդ առաքելության մեջ:

Իջման Ս. Սեղանի առջև Հայրապետիս հայցն է, որ, բարեխոսությամբ հայոց մեծ Ուսուցչապետիր Ս. Սահակ Հայրապետի և Ս. Մաշտոց Վարդապետի, Բարձրյալն Աստված քաջառողջ ու քաջամիտ, եռանդով ու սիրով լեցուն պահպանի Ձեզ բոլորիդ՝ վասն հավատո զորացյալ, շինությամբ լեցուն հայոց գալիքի:

**ԳԱՐԵԳԻՆ Բ**
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
5 հոկտեմբերի 2002 թ.

# Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՍՐՏԱԿՑՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ ՊԱՏՐԻԱՐՔ ԱԼԵՔՍԻ Բ-ԻՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը սրտակցության գիր է առաքել Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսի Բ-ին՝ Ռուսաստանի Դաշնության մայրաքաղաքում ահաբեկիչների խմբի կողմից Մոսկվայի Մշակույթի Տան գրավման և հարյուրավոր անձերի պատանդ վերցնելու առնչությամբ: Նամակում Նորին Սրբությունը, խանուն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, իր ցավն ու վրդովմունքն է հայտնել ահաբեկիչների իրականացրած բռնարարքի վերաբերյալ:

Հայոց Հայրապետի ուղերձում ի մասնավորի նշվում է. *«Ահաբեկչություններն ու բռնարարքները չեն մարդկության ապագան: Խաղաղ ու ստեղծագործ համակեցությամբ միայն ժողովուրդները պիտի կառուցեն իրենց կյանքը՝ նպաստելով աշխարհում համերաշխության ամրապնդմանն ու զորացմանը և սիրո ու բարու հաղթանակին:*

*Խաղաղասեր ողջ մարդկության հետ մեր Եկեղեցին դատապարտում է ահաբեկչության նմանատիպ ցանկացած դրսևորում՝ուղղված մարդկության դեմ»:*

Վեհափառ Հայրապետը նաև աղոթք է մատուցում Բարձրյալին, որպեսզի Երկնավոր Տերը համբերություն և հոգու ամրություն պարգևի Նորին Սրբություն Ալեքսի Բ Պատրիարքին, պատանդներին ու նրանց հարազատներին և ռուս հավատավոր ողջ ժողովրդին՝ հաղթահարելու բռնարարքի ծանր փորձությունը:

***ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ***
***ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ***

*ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ*

# Տ. ԲԱԳՐԱՏ ՎԱՐԴԱՊԵՏ ԳԱԼՍՏԱՆՅԱՆԸ՝ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ հոկտեմբերի 14-ի Հայրապետական տնօրինությամբ Տ. Բագրատ վարդապետ Գալստանյանը նշանակվել է Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Արագածոտնի թեմի առաջնորդական տեղապահ:



Տ. Բագրատ վարդապետ Գալստանյանը (ավազանի անունը՝ Վազգեն) ծնվել է 1971 թ. մայիսի 20-ին Գյումրիում: 1978-1988 թթ. սովորել է Երևանի համար 156 դպրոցում:

1988 թ. ընդունվել է Սուրբ Էջմիածնի Հոգևոր Ճեմարան:

1993 թ. դեկտեմբերի 25-ին ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Տ. Անանիա եպս. Արաբաջյանի:

1994 թ. գերազանց առաջադիմությամբ ավարտել է Հոգևոր Ճեմարանը՝ պաշտպանելով ավարտաճառ «Խոսրով եպիսկոպոս Անձևացի. կենսագրական գծեր. Բացայայտութիւն Կարգաց Եկեղեցւոյ. բնագիրն ու աստվածաբանությունը» թեմայով:

1995 թ. հունիսի 23-ին, ձեռամբ երջանկահիշատակ Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա: Գևորգյան Հոգևոր Ճեմարանում դասավանդել է եկեղեցական երաժշտություն և Ս. Պատարագի մեկնության առարկաները: Աշխատակցել է Մայր Աթոռի «Էջմիածին» պաշտոնական ամսագրի խմբագրությանը:

1996 թ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ նշանակվել է «Էջմիածին» ամսագրի գլխավոր խմբագիր, միաժամանակ դասավանդել Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում:

1998 թ. մեկնել է Անգլիա՝ ուսումը կատարելագործելու Մըրֆիլդի «Ս. Հարություն» աստվածաբանական քոլեջում և Լիդսի համալսարանում:

2000 թ. հուլիսին, ավարտելով ուսումնառությունը, Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ վերադարձել է Մայր Աթոռ և օգոստոսի 1-ից նշանակվել Վազգենյան Հոգևոր Դպրանոցի տեսուչ:

2002 թ. փետրվարին պաշտպանել է վարդապետական թեզ՝ «Հիվանդաց օծման խորհրդի խնդիրը Հայ Եկեղեցում» թեմայով, և ստացել վարդապետական աստիճան:

2002 թ. հոկտեմբերի 14-ից Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր տնօրինությամբ նշանակվել է Արագածոտնի թեմի առաջնորդական տեղապահ:

# ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՇՔԱՆՇԱՆՆԵՐ ՀԱՆՁՆԵՑ ԳԵՐՄԱՆԱՑԻ ՀԱՅԱԳԵՏ ՀԵՐՄԱՆ ԳՈՒԼՑԻՆ, ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ԷԴԻԿ ԲԱՐՍԵՂՅԱՆԻՆ ԵՎ ՔԱՋԱՐԱՆԻ ՊՂՆՁԱՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏԻ ՏՆՕՐԵՆ ՄԱՔՍԻՄ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ

Հոկտեմբերի 3-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Հայ Եկեղեցու շքանշաններ հանձնեց Սյունիքի մարզպետ Էդիկ Բարսեղյանին, Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատի տնօրեն Մաքսիմ Հակոբյանին և գերմանացի անվանի հայագետ, Հալլեի համալսարանի պրոֆեսոր Հերման Գոլցին (տե՛ս էջ 22): Տիարք Էդիկ Բարսեղյանն ու Մաքսիմ Հակոբյանն արժանացան «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանի՝ իրենց եկեղեցանվեր գործունեության և Կապանի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցու կառուցմանը բերած կարևոր ավանդի համար (տե՛ս «Էջմիածին», Թ, էջ 3, Ժ, էջ 18):

«Ս. Սահակ-Ս. Մեսրոպ» շքանշան հանձնվեց գերմանացի գիտնականին: Պրոֆեսոր Հերման Գոլցը հայ ժողովրդի ու Հայ Եկեղեցու ջերմ բարեկամն է: Նրա ջանքերի շնորհիվ է, որ այսօր Հալլեի համալսարանում գործում է Ս. Մեսրոպ Մաշտոց գիտական-աստվածաբանական կենտրոնը: Պրն Գոլցի ջանքերի արդյունք էր նաև երկու տարի առաջ Հալլեում կայացած «Հայաստան - 2000» միջազգային գիտաժողովը և Կիլիկիայի հայ արվեստի ցուցահանդեսը՝ նվիրված Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակին: Անվանի հայագետը նաև կարևոր ու արժեքավոր աշխատանք է կատարել՝ ի մի բերելով Հովհաննես Լեփսիուսի արխիվը՝ հանրությանը առավել մատչելի դարձնելով Հայոց ցեղասպանության վերաբերյալ բազմաթիվ փաստաթղթեր:

Հանդիսության ընթացքում շքանշանակիրների եկեղեցանվեր ու հայանվեր գործունեության անդրադարձան Սյունյաց թեմի առաջնորդ Տ. Աբրահամ եպս. Մկրտչյանն ու Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ ակադեմիկոս Վլադիմիր Բարխուդարյանը:

Ապա «Էջ Միածինն ի Հորէ» շարականի երգեցողության ներքո հանդիսավորությամբ ներս բերվեցին Հայրապետական սրբատառ կոնդակները, որոնք ընթերցեց Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ եպս. Կճոյանը:

Գերմանացի հայագետը Վեհափառ Հայրապետին շնորհակալություն հայտնեց նման պատվի արժանանալու համար՝ հավաստիացնելով, որ այսուհետ ևս ամեն ինչ կանի՝ հայ-գերմանական մշակութային կապերի առավել սերտացման համար: Երախտագիտության խոսքեր ասացին նաև Է. Բարսեղյանն ու Մաքսիմ Հակոբյանը:

Վերջում ներկաներին իր հայրապետական խոսքն ուղղեց Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Հանդիսությունն ավարտվեց Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով:

***ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ***
***ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ***



ՁԵՌԱՄԲ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՇՔԱՆՇԱՆՆԵՐԻ ՀԱՆՁՆՈՒՄԻՑ ՀԵՏՈ.
ՁԱԽԻՑ ԱՋ՝ ՀԵՐՄԱՆ ԳՈՒՑ, ՄԱՔՍԻՄ ՀԱԿՈԲՅԱՆ ԵՎ ԷԴԻԿ ԲԱՐՍԵՂՅԱՆ

# ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԵՑ ՀՈԳԵՀԱՆԳՍՏՅԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ

Հոկտեմբերի 27-ին, Ս. Խաչի գյուտի տոնին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում մատուցված Ս. Պատարագից հետո Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ և Մայր Աթոռի միաբանության մասնակցությամբ տեղի ունեցավ հոգեհանգստյան արարողություն՝ ի հիշատակ 1999 թ. հոկտեմբեր 27-ին ՀՀ Ազգային ժողովում կատարված ոճրագործության զոհերի՝ ԱԺ Նախագահ Կարեն Դեմիրճյանի, Վարչապետ Վազգեն Սարգսյանի, ԱԺ պատգամավորներ Յուրի Բախշյանի, Ռուբեն Միրոյանի, Հենրիկ Աբրահամյանի, Արմենակ Արմենակյանի, Միքայել Քոթանյանի և նախարար Լեոնարդ Պետրոսյանի, ինչպես նաև օրեր առաջ Ռուսաստանի Դաշնության մայրաքաղաք Մոսկվայի Մշակույթի Տանը կատարված սոսկալի ահաբեկչության զոհերի:

Հոգեհանգստյան ...

Հոգևորականաց դասն աղոթք բարձրացրեց առ Աստված, որպեսզի Տերը խաղաղության և լույսի ներքո պահի զոհերի հոգիները՝ երկնային օրհնություն շնորհելով նրանց շիրիմներին:

# ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՄԱՆ ԲԱՆԱՁԵՎ ՈՒԵԼՍԻ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ

2002 թ. հոկտեմբերի 30-ին Ուելսի Ազգային ժողովը ձայների մեծամասնությամբ ընդունեց «Տեսակետի հայտարարություն», որով կոչ է արվում Թուրքիային՝ ճանաչելու Հայոց ցեղասպանությունը: Ուելսի Ազգային ժողովն այսպիսով Միացյալ Թագավորության մեջ դարձավ առաջին օրենսդիր մարմինը, որն արտահայտեց իր վերաբերմունքը Հայոց ցեղասպանության հանդեպ:

Դոկտոր Ռիչարդ Էդվարդսը (Աշխատավորական կուսակցություն), պրն Սիմոն Դեյվիսը (Փլադ Սիմրու) և տիկին Կիրսթի Ուիլյամսը (Լիբերալ դեմոկրատական կուսակցություն) ժողովի այն երեք անդամներն են, ովքեր բարձրացրին այս հարցը, տարան կազմակերպչական ու տեղեկատվական մեծ աշխատանք՝ լուսաբանելով 20-րդ դարասկզբին Օսմանյան կայսրությունում կատարված հայ ժողովրդի զանգվածային ոչնչացման անհերքելի փաստերը:

Նույն օրը Քարդիֆում, Ուելսի Ազգային ժողովում, տեղի ունեցավ պառլամենտականների ու հայկական կազմակերպությունների ներկայացուցիչների հանդիպում: Այս միջոցառմանը, որպես Ամենայն Հայոց Կաթողիկոսի ներկայացուցիչ, մասնակցեց նաև Անգլիայի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Նաթան եպս. Հովհաննիսյանը: Սրբազան Հայրն Ուելսի Ազգային ժողովին փոխանցեց Վեհափառ Հայրապետի երախտագիտության խոսքը:

**ԸՍՏ ԱՆԳԼԻԱՅԻ ՀԱՅՈՑ**
**ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ**

# ՔԱՐՈԶԽՕՍԱԿԱՆ

## Տ. ՊՍԱԿ ԱԲԵՂԱ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՔԱՐՈԶԸ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

(13 հոկտեմբերի 2002 թ.)

*«Մարմին Քո անապական լիցի ինձ ի կեանս,*
*եւ սուրբ արիւն Քո ի քաւութիւն եւ ի թողութիւն մեղաց»:*
(Պատարագամատույց)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

Ս. Պատարագի երկնառաք այս աղոթքը որպես անուշահոտ խունկ և հոգևոր բուրմունք ենք առաքում Ամենազոր Փրկչին՝ հայցելով Տիրոջից Իր խաղաղությամբ, «որ ի վեր է քան զամենայն միտս եւ զբանս», ամրացնելու մեզ մեր կարգի ու կոչման մեջ և աներկյուղ ու անխռով պահելու չարի ամեն որոգայթներից ու փորձություններից:

Գոհություն և փառք Ամենափրկիչ Միածնին, «որ արժանի արարեր զանարժանս հաղորդիլ սուրբ մարմնոյ եւ արեան Իւրոյ». քանզի ոչ ոք, մարմնավոր ախտերով ու ցանկություններով բռնավորված, արժան իսկ չէ համարձակապես մոտենալու սուրբ, մեծ ու ահավոր, երկնային ու անմահ Իր խորհրդին, այլ միայն Սուրբ Երրորդության անչափ բարերարության ու անբավ մարդասիրության շնորհիվ ավանդվեց մեզ քահանայության ու անարյուն զենման սպասավորությունը:

Տակավին քառասնօրյա հոգեհորոգության մի շրջան է բաժանում մեզ ձեռնադրման և օծման այն սուրբ պահից, երբ Միածնաէջ Սուրբ Տաճարում կամոքն Աստծո, Հայոց առաքելաշնորհ Հայրապետի օրհնությամբ ու ձեռամբ Արմավիրի թեմի բարեխնամ առաջնորդ Տ. Սիոն եպս. Ադամյանի, այս Սուրբ Խորանի առաջ ծնրադրեցինք և ուխտադրեցինք՝ կոչվելով կուսակրոն քահանայության, լծակից ու աղոթակից դառնալով Սուրբ Ուխտի միաբանությանը:

«Ընծայեցէ անձն իմ ի Տէր», քանզի փրկության հանդերձներով և ուրախության պատմուճանով իբրև փեսայի պսակեց մեզ՝ մատուցելու անդրանիկ Պատարագը Լուսավորչյան ասվածաէջ Սուրբ Աթոռում:

**«Փառք Քեզ, Տէր, փառք Քեզ, յաղագս ամենայնի, փառք Քեզ»:**

Աղոթք և գոհաբանություն Ամենաբարձրյալին, որդիական խոնարհագույն և հոգեբուխ երախտագիտություն Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետին, Որի հայրական հոգատար խնամածության ներքո կրթվել ու հասակ ենք առել, խորին շնորհակալություն իմ հոգևոր ծնող խորհրդակատար Սրբազան Հորը՝ Արմավիրի թեմի առաջնորդ Տ. Սիոն եպս. Ադամյանին, ձեռամբ որի հոգևորական դառնալու մեր իղձն ի կատար ածվեց:

Անշուշտ, անդրանիկ այս Ս. Պատարագի ընթացքին մեր աղոթքներում չպիտի մոռանանք գոհունակությամբ և արժանիորեն հիշատակել եաև Վազգենյան ու Գևորգյան հոգևոր կրթարանների տեսչություններին, դասախոսական կազմին, միաբանակից ու ճեմարա-

նակից եղբայրներին, ծնողաց և ողջ հավատացյալ ժողովրդին, որոնցից յուրաքանչյուրն իմ որպես մարդու, որպես անհատի և կարևորագույնը՝ որպես հոգևորականի ձևավորման ու հասունացման մեջ իր բաժին լուման ունի ներդրած, նման այն այրի կնոջ երկու լումային, որ Աստծո հանդեպ անմնացորդ սիրուց և արդար վաստակից է մատուցվում՝ ըստ տվողի կարողության չափի, անտրտունջ, առանց հապաղման ու ծածուկ:

Այսօրվա ավետարանական ընթերցվածն է այրի կնոջ երկու լումայի մասին այս պատմությունը, որը Քրիստոսի անմիջական ներկայությամբ է տեղի ունեցել: Սակայն այս նատվածի մեկնությանը չէ, որ այժմ պիտի անդրադառնանք, քանզի բազմիցս խոսվել է նրա պարունակած խորհրդի և իմաստի մասին, այլ կցանկանայինք շեշտել Աստծո հանդեպ հոգևոր նվիրատվության, զոհաբերության գաղափարի կարևորությունը մեր իսկ կյանքում, ներկա օրերին, որ լի է խառնաշփոթություններով, երբ կենցաղավարում է մի սերունդ, որն Ավետարանի ոգուց, բառ ու բանից շատ հեռու է:

Մի ժամանակաշրջան, երբ մարդկության մեծագույն մասն ապրում է առանց Աստծո, երբ մեծարվում և փառաբանվում են մարդը և գիտությունը, տեխնիկան և համակարգչային առաջընթացը և ժխտվում ու օտարվում է Աստծո գոյությունն առհասարակ և տեղ չի մնում հավատքի և աղոթքի, մինչդեռ եթե իրականում Աստծո հանդեպ հավատքը կենդանի է, շարժուն և գործուն, այն կերպարանափոխում և դեպ ճշմարիտ զարգացում է ուղղորդում մարդկային միտքն ու հասարակական հարաբերությունները և առաջընթացը:

Կործնեցյալ զարգացումից սերված պարապուրդը, դատարկությունը մեր ժամանակի մեծագույն հակառակորդն է, որը հոգևոր տեռորի է ենթարկում մեր կենցաղը, միտքն ու հոգին, նույնիսկ՝ մարմինը, կազմալուծելով մեր հոգևոր կազմվածքը, ավանդական դիմագիծն ու կերտվածքը:

Իրապես, մեծ խորհուրդ ունեն «Մարդ է որ գործէ զերկիր» խոսքերը: Առանց գիտակցված ու նվիրված, զոհաբերված աշխատանքի չկա՛ հոգեկան խաղաղություն և կայուն վարքագիծ, չկա՛ առողջ պտղաբերություն, կասկածի տակ է առնվում հարատևության ու շարունակականության՝ սերունդներին հուսալի և հաստատուն արժեքներ ու կայացած ապագա փոխանցելու իրողությունը:

Արդ, հոգևորականի հավատի և գործի, նվիրումի բարձրագույն և սրբագույն միախառն արդյունքը նախ և առաջ Սուրբ և կենարար Պատարագի մատուցումն է, Տիրոջ Սուրբ մարմնին ու արյանը հաղորդակցվելն ու հաղորդություն փոխանցելը, բաշխելը: Այս խորհրդի կատարման ընթացքում անցնում ենք խաչի և հարության, հաղորդության և փրկության մի պարզ և անձկալի ուղի, և խորհրդի մի քանի վասնյակ րոպեներով կարող է բնութագրվել ամեն մի քրիստոնյայի կենսակերպի ամբողջական համապատկերը:

Սիրելիներ, օրինակ եղեք, ինչպես Տիմոթեոսին ուղղված թղթում է ասվում, ձեր խոսքով, պահվածքով, սիրով և հավատով (տե՛ս Ա Տիմ. Ա 12), սնվեք հավատի խոսքերով և բարի վարդապետությամբ, արդար և ազնիվ եղեք ձեր գործերի և վարմունքի մեջ, աղոթեցեք իմ մեղավորիս համար, որպեսզի Տերը զորավիգ լինի և ընդունելի անի այս Պատարագը Իր իսկ անվան և փառքի համար:

Հայցեցեք Սուրբ Աստվածածնի և բոլոր սրբերի բարեխոսությունը, և թող Հոր, Որդու և Սուրբ Հոգու՝ անբաժանելի Սուրբ Երրորդության շնորհը, սերը և աստվածային սրբարար զորությունը լինի բոլորիս հետ, ամեն:

# Տ. ԳԱԲՐԻԵԼ ԱԲԵՂԱ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ԳՅՈՒՏ ԽԱՉԻ ՏՈՆԻՆ

(27 հոկտեմբերի 2002 թ.)

*«Այլ ինձ քաւ լիցի պարծել, բայց միայն ի խաչն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որով ինձ աշխարհ ի խաչ ելեալ է, եւ ես աշխարհի»*

*«Սակայն քա՛վ լիցի, որ ես պարծենամ այլ բանով, քան միայն մեր Տեր Հիսուս Քրիստոսի խաչով, որով աշխարհը խաչված է ինձ համար, ես էլ՝ աշխարհի համար»*
*(Գաղ. Զ 14):*

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

Սիրելի՛ հավատացյալ քույրեր և եղբայրներ ի Քրիստոս.

Խորին խուզմունքի մի պահ եմ ապրում անդրանիկ Պատարագս մատուցելով Ամենայն Հայոց Աղոթավայրում:

Հոգու մեծ ուրախությամբ և ցնծությամբ գոհություն և փառք եմ մատուցում Ամենաբարձրյալ Աստծուն, որպեսզի Տերը պարգևի ինձ ուղիղ վարդապետություն և անխոտոր վարք՝ ընթանալ Տիրոջ խաչի ճանապարհով:

«Շնորհ ունիմ այնմիկ՝ որ զօրացոյցն զիս ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, զի հաւատարիմ համարեցաւ կարգել ի սպասաւորութիւն» (Ա Տիմ. Ա 12):

Թող Տիրոջ անկորուստ ոգին չլքի ինձ, այլ պահապան լինի իմ կյանքի ողջ ընթացքին:

Այսօր մեր Եկեղեցին տոնախմբում է Խաչին նվիրված չորս տոներից՝ Խաչի գյուտի հիշատակման օրը, որի պատմությունը գալիս է քրիստոնեության առաջին դարերից: Հայտնի է, որ քրիստոնեությունը սկզբնական շրջանում գաղտնի է քարոզվել մարդկանց, մինչև որ 313 թ. Միլանի հրովարտակով ողջ Հռոմեական կայսրության տարածքում թույլատրվում է պաշտել քրիստոնեությունը: Եվ տարբեր վայրերից մարդիկ ուխտի են գալիս Երուսաղեմ:

Այստեղ է գալիս նաև կայսեր մայրը՝ Հեղինե թագուհին, հետամուտ լինելով Քրիստոսի խաչափայտը գտնելուն և հասնում է Գողգոթա, այն վայրը, ուր խաչվել է մարդկության փրկության համար աշխարհ առաքված Աստվածորդին: Այդ ժամանակ Գողգոթան դարձել էր մարդկանց կողմից լքված և արհամարհված մի վայր և գործածվում էր որպես աղբատեղի: Բարեպաշտ թագուհին իր օգնականներով մաքրում է տարածքը և Աստծո օժանդակությամբ գտնում է Տիրոջ կենարար խաչափայտը:

**«Զի ճառ խաչին կորուսելոցն յիմարութիւն է, այլ փրկելոցս մեզ զօրութիւն Աստուծոյ» (Ա Կորնթ. Ա 18):**

Հռոմեական կայսրությունում խաչը մահաբեր գործիք էր համարվում և երբ ցանկանում էին մարդուն ամենադաժան և անարգ մահով պատժել՝ խաչ էին բարձրացնում. և միայն Քրիստոսի հարությամբ է, որ խաչը դարձավ փրկության ճանապարհ ու միջոց և հարության կենարար ավետիս, քանի որ խաչի քարոզությունը Աստծո զորություն է:

Ինչպես որ բժշկության մեջ մի խորհրդանշական սովորություն կա, որ հիվանդի սրտի վրա են դնում դեղը, և երակներով մարմնի բոլոր անդամներին առողջություն է սփռվում, այնպես էլ Քրիստոս մարդկանց կյանքի դեղը կազմեց՝ խաչը շնորհելով, որը տարածվեց ամբողջ աշխարհում:

Խաչի ողեկցությամբ և զորակցությամբ է, որ կայսրը պատերազմ էր գնում, և Տիրոջ երկնածայն խոսքն է գոտեպնդում նրան՝ «Սովաւ յաղթեսցես»:

Քրիստոսի խաչը ձգվեց մինչև երկինք և «ի խորս երկրի» ու քանդելով դժոխքի դռները՝ բացեց արքայության ճանապարհը: Քրիստոս մարդկային մարմին հագնելով՝ մեզ ցույց տվեց երկնքի ճշմարիտ ճանապարհը:

Այսօրվա Ավետարանը մեզ ուսուցանում է. «Եւ ապա երեւեսցի նշան Որդւոյ մարդոյ յերկինս» (Մատթ. ԻԴ 30), այսինքն՝ մարդու Որդու գալուստը լինելու է խաչի նշանով: Խաչը պետք է երևա, ապա գա Քրիստոս՝ դատելու ողջերին և մեռածներին:

Մեր ժողովուրդը դարեր ի վեր հավատացել և հավատում է Տիրոջ խաչի կենարար զորությանը, այն ի զորու է անգամ մեռածին հարություն տալու, անշնչացածին կենդանություն պարգևելու: Անտարակույս Տերը հավատարիմ է Իր ուխտին: Նա կենդանություն է շնորհում մեղքի և խավարի մեջ խարխափող մարդուն:

Խաչն է, որ մեզ ապավեն է լինում մեր կյանքի բոլոր օրերում, և մենք ցնծում ենք որպես լույսի որդիներ: Տիրոջ խաչը մեր փրկության անխախտ սյունն է. Տիրոջ խաչն է, որ մեզ շնորհում է իմաստություն՝ ճանաչելու ճշմարտությունը, Նրա կենդանարար Մարմնի և Արյան ճաշակումով նաև հաղորդ դառնալու համբերատար հարությանը: Մենք բոլորս ունենք մեր կյանքի անհատական խաչը կրելու իրավերը:

Խաչակնքել՝ նշանակում է հաղորդ դառնալ, հաղորդակցվել Քրիստոսի չարչարանքներին և հարությանը: Մարդ երբ երեսին խաչ է հանում, պարտավորվում է անելու և կատարելու այն ամենը, ինչ կատարեց Քրիստոս Իր երկրային կյանքում:

Քրիստոսի խաչը չորս բարերարության խորհուրդն ունի.

1. Վերին մասը ցույց է տալիս երկնքի արքայության բացվելը.
2. Ստորին մասը՝ դժոխքի ավերումը.
3. Ձախ կողմը՝ մեղքերի թողությունը.
4. Աջ կողմը՝ շնորհների բաշխումը:

Ուրեմն, մոտենանք մեր գործերով Քրիստոսին և նմանվենք Իր իսկ կամեցած մարդուն, հավատանք Կենդանի Վեմին, որ թեպետ մարդկանցից անարգված, բայց Աստծո առաջ ընտրյալ և պատվական է (հմմտ. Ա Պետ. Բ 4), և լինենք կենդանի Նրա միջոցով:

Թող Քրիստոսի խաչի խաղաղությունը ճառագայթի աշխարհում և լույս սփռի մարդկանց հոգիներում այժմ և հավիտյանս հավիտենից. ամեն:

# ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ Տ. ԱՍՈՂԻԿ ՔԱՀԱՆԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ ԵՐԵՎԱՆԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑՈՒՄ

(13 հոկտեմբերի 2002 թ.)

*«Օրհնեցից զՏէր որ իմաստուն արար զիս, ...*
*Ցուցեր ինձ զճանապարհս Քո կենաց, լցուցեր զիս ուրախութեամբ երեսաց*
*Քոց ի քաղցրութենէ վայելչութեան Աջոյ Քո մինչեւ ի սպառ»*
(Սաղմ. ԺԵ 7. 10)

Ամենակալ Աստծո փառքով լեցուն այս տաճարում, որտեղ, ըստ Տիրոջ անստուտ վկայության, հանապազ բաց են Նրա աչքերը և Նրա ականջները՝ սուրբ, որ լսեն այս սուրբ տեղում կատարվող աղոթքները, հոգուս տաճարի խորանից գոհաբանական աղոթք ու փառք եմ խնկարկում դեպի Երկինք. փա՛ռք Քեզ, Հայր Սուրբ, Աստված ճշմարիտ, փա՛ռք Քեզ, Որդիդ Սուրբ, Աստված ճշմարիտ, փա՛ռք Քեզ, Հոգիդ Սուրբ, Աստված ճշմարիտ: Նաբեկյան օրհնաբանությո՛ւն, գովությո՛ւն, զորավորությո՛ւն և բարեբանությո՛ւն Քեզ՝ միասնական Սուրբ Երրորդությանդ, հավասարափառ Տերությանդ հզոր, Ինքնությանդ անքակ համագոյակից, որ անբավ գթությամբ, անհուն ողորմությամբ ու անսահման մարդասիրությամբ՝ համակ ապականության անդ ու անդաստան եղող անձիս շնորհեցիր դարձ ու ապաշխարություն, և աստվածային կանչովդ առաջնորդեցիր Սուրբ Եկեղեցուդ գիրկը:

Խոտելի անձիս Եկեղեցուդ կաճառում ուսուցանեցիր խորհրդավոր, թաքուն իմաստությունդ, և ի լրումն այդ ուսուցման՝ շնորհ արեցիր և քառասուն օրեր առաջ Սրբալույս Մյուռոնով սրբագործելով ու օծելով՝ դարձրեցիր Քեզ ծառա, սպասավոր ու պաշտոնյա: Շնորհ արեցիր ու դարձրեցիր հրեշտակ, որպեսզի անձանձիր Քո խոսքը քարոզեմ ու պատգամդ բերեմ Քեզ ապավինած Քե՛զ պաշտողներին:

Եվ արդ, մեր համբուրելի Տեր Աստված, մեր հավատքի հայր և պատրվական Հայրապետ Սուրբ Գրիգոր Լուսավորչի բարեխոսությամբ, կարկառի՛ր վրաս Աջդ ամենամերձ և զորացրո՛ւ ինձ բազմածիր, առատապարգև ու ամենալիր շնորհներով Մեծիդ գթության: Ցրի՛ր անհետ մեղքերիս հոգեսպան խավարը, և թող ճառագի վերստին իմ մեջ ծագումն անստվեր Քո աստվածային հրաշք-գիտության, որպեսզի, որպես բարի օրինակ, արժանի լինեմ ուսուցանելու այս աստվածանվեր ունկնդիրներին:

Շնո՛րհի արա, արդ, մեղավորիս, որ այժմ խոսեմ համարձակությամբ՝ Աստվածությանդ փառքի, գովեստի և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու կատարելության, շենության համար.

*«Երկիւղիւ եւ հաւատով յառաջ մատիք եւ սրբութեամբ հաղորդեցարուք»:*
*«Երկյուղո՛վ և հավատքո՛վ առաջ եկեք և սրբությա՛մբ հաղորդվեցեք»:*
(Պատարագամատույց)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

Եղբայրներ և քույրեր, սիրելիներ ի Քրիստոս.

Դարձյալ ու վերստին, ինչպես ամեն կիրակի, այսօր ևս, աստվածային անհուն ողորմությամբ, բացվել է Երկինքը, և Աստծո Միածին Որդին՝ մարդասեր մեր Տեր Հիսուս Քրիստոս, իջնելով եկել-բազմել է քարեղեն այս Սուրբ Սեղանին, որպեսզի պատարագվելով՝ Իր սուրբ և կենդանարար Մարմինն ու Արյունը բաշխի մեզ: «յԵրկնից յերկիր» են ծավալվել երկնային զորքերը՝ զվարթուն հրեշտակները, ովքեր բոլորվելով այս Սուրբ Սեղանի շուրջը՝ քաղցր ձայնով օրհնում, գովում, բարեբանում և փառավորում են քառաթև Սուրբ Խաչը կրող քառանկյուն այս Սուրբ Սեղանի վրա պատարագվող Քրիստոս Աստծուն:

Երկնքից երկիր են փոխադրվել քիչ առաջ հիշատակված աստվածահաճո սրբերը, ովքեր ուղիղ վարդապետությամբ ուսուցանեցին մեզ աստվածգիտություն և երկրավոր կյանքում մեզ համար տքնեցին՝ պահք պահելով, աղոթելով, զանազան նեղություններ ու տարատեսակ չարչարանքներ կրելով, մինչև իսկ իրենց արյունը հեղելով: Ահա և այժմ, երանելի սրբերը դասակից հրեշտակներին՝ սրբասաց ձայնով ոչ միայն օրհներգում, գովաբանում, բարեբանում և փառաբանում են Տեր Հիսուս Քրիստոսին, այլև մշտանվեր ու անդադրելի աղոթքներով բարեխոսում են առ Աստված մեզ համար՝ մեր բազմատեսակ ու անթիվ մեղքերին և անհամար անօրենություններին թողություն ու քավություն հայցելով:

Ահավասիկ, ո՛վ քրիստոնյաներ, երկիրը Երկինք է դարձել, որովհետև հոյակերտ այս սուրբ տաճարն առլեցուն է տիեզերանորոգ և ամենակեցույց աստվածային ահավոր և մեծ խորհրդի՝ Սուրբ Պատարագի իմանալի զորությամբ ու ներգործությամբ, քանզի քահանայական և հավատացելոց դասերով ի մի ժողոված կյանքի ենք կոչում Տերունական պատգամը, որ է՝ «կատարեցե՛ք այս Իմ հիշատակի համար» (Ղուկ. ԻԲ 19), այսինքն՝ ճաշակում ենք հացն ու ըմպում գինին և պատմում Տիրոջ մահը, և այսպես շարունակ երկու հազար տարի և մինչև Նրա երկրորդ գալուստը (հմմտ. Ա Կորնթ. ԺԱ 26):

Նմանապես, պատմելով ու հիշատակելով Տիրոջ մահը՝ այս սուրբ և սրբազան եկեղեցին վերածվում է Երուսաղեմի, այս սուրբ և սրբազան խորանը՝ Գողգոթայի, այս քառանկյուն օծյալ սեղանը՝ քառաթև սուրբ Խաչի, որի վրա էլ՝ այս սկիհի մեջ դրված հացի ու գինու ներքո պատարագվում է Ինքը՝ Կենդանի Աստված՝ մարմնացյալ Բանը՝ Տեր Հիսուս Քրիստոս: Պատարագվում է Տերը, որպեսզի Իր կենդանացնող, ճշմարիտ և սուրբ Մարմինն ու Արյունը բաշխի մեզ ամենքիս:

Ո՛վ Քրիստոսի արյամբ գնված ադամորդիներ,

Սուրբ և անմահ Պատարագի խորհուրդը հույժ մեծ է, սքանչելի և սոսկալի: Այն անմատչելի է մարմնավոր աչքերին և մարմնի զգայարաններին: Հետևաբար, հարկ է բանալ հոգու աչքերը և աստվածային առաքինություն եղող հավատքի զորությամբ հաղորդակցվել աստվածային Խորհուրդ խորհրդի զորությանը և ահով ու երկյուղով նախապատրաստվել անմահարար Պատարագի վախճանական ներգործությանը:

Ուրեմն, հավատակիցնե՛ր, մինչ Սուրբ Հաղորդությանը մոտենալը, մինչ Տիրոջ Մարմնին ու Արյանը հաղորդվելը, եկե՛ք, մեկ անգամ ևս քննենք մեր սիրտը: Եկե՛ք, քաջաբար

մուտք գործենք մեր հոգու տաճար և ամենայն ուշադրությամբ ստուգենք, թե՝ արդյո՞ք պատրաստ ենք ընդունելու Երկնքի ու երկրի արարիչ Տեր Աստծուն: Քննե՛նք մեր անձը, քանի որ աստվածային այս խորհուրդը թեպետև ինքնին սեր է, թեպետ կենդանարար է, թեև կյանք, հույս, հարություն ու անմահություն է պարգևում, սակայն, միևնույն ժամանակ, Տիրոջ Մարմինը և Արյունը կիզիչ հուր է, երկնավոր կրակ ու դատապարտություն բոլոր նրանց համար, ովքեր համարձակվում են անարժանաբար մոտենալ և ընդունել Սուրբ Հաղորդությունը:

Այլևս բա՛վ է մարդահաճությամբ ու կեղծավորությամբ անարգենք Տերունական խորհուրդը: Թող մեր հոգու, սրտի ու մտքի պախպակներին անջնջելի կերպով դրոշմվի, որ մեր անարժանաբար հաղորդությամբ ոչ միայն ինքներս մեզ ենք դատապարտում, այլև պատճառ ենք դառնում բազմաթիվ պատուհասների, արհավիրքների, աղետների, որոնք վնասում են մեր հավատակիցների ամբողջությանը՝ Եկեղեցուն, ինչպես և մեր հայրենի բնօրրանին: Ահա, թե ինչ է գրում Սուրբ Պողոս առաքյալը. «Դրա համար իսկ ձեր մեջ բազում հիվանդներ և ցավագարներ կան, և շատերն էլ մեռած են, որովհետև եթե մենք մեզ քննեինք, ապա չէինք դատապարտվի» (Ա Կորնթ. ԺԱ 30-31):

Լսեցե՛ք իմ խոսքը, սիրելիներ ի Քրիստոս, լսեցեք ամենայն ուշադրությամբ և համբերությամբ, ունկնդիր եղեք սիրով և խաղաղությամբ: Թող չխռովվի ձեր հոգին և չալեկոծվի ձեր սիրտը: Թարկությունը թող բնավ տեղ չգտնի՛ ձեր մեջ: Եվ ձեր երեսը մի՛ դարձրեք ինձանից, քանզի որպես Բարձրյալ Աստծո պաշտոնյա և Ամենակալ Տիրոջ հրեշտակ, այլ կերպ չենք կարող խոսել, բայց միայն ու միայն ազդարարել ու զգուշացնել, ազդարարում ենք այն մասին, որ Քրիստոս՝ Աստծո Գառը, պատարագ է մատուցվում մեր մեջ, որ այս ահավոր խորհրդով, սուրբ և սքանչելի այս տաճարում, հաշտություն է հաստատվում մեղավոր ադամորդու և Ամենասեր Աստծո միջև: Եվ զգուշացնում ենք, որ մենք ամենքս երկյուղով ու հավատքով մոտենանք Սուրբ Հաղորդությանը: Անկեղծ զղջմամբ, արտասուքներով, խոստովանությամբ, բարի գործերով ու ողորմությամբ, աղոթքով ու պահքով մերձենանք Աստծո Միածին Որդու կենդանի ու կենդանարար Մարմնին ու Արյանը: Սրբությամբ ու պարկեշտությամբ մոտենանք Տիրոջը, որպեսզի Նրա Մարմնին ու Արյանը հաղորդվելով՝ արժանի լինենք միանալու Քրիստոս Հիսուսին:

«Բայց,- հավանաբար պիտի մտածեն այժմ մեզանից շատերը,- չէ՞ որ Քրիստոս Աստված պատարագվում է մեղավորների համար, ուստի մի՞թե չենք կարող համարձակությամբ մոտենալ Սուրբ Խորանին և հաղորդվել»:

Ահա, թե ինչպես պիտի պատասխանենք այսպես խորհողներին. այո՛, Տեր Հիսուս Քրիստոս, ինչպես քառաթև խաչի, նույնպես և այս քառանկյուն սեղանի վրա պատարագվում է մեղավորների համար, այսինքն՝ բովանդակ մարդկության, հայոց կյանքում՝ հայկազուններիս համար: Եվ ինչո՞ւ. քանի որ, ինչպես վկայում և ուսուցանում է Աստվածաշունչ մատյանը, համայն աշխարհում անմեղ մարդ չկա՛. «Իսկ այն ո՞վ է, որ մաքուր է աղտից. ո՛չ ոք. թեկուզև կյանքը երկրի վրա մեկօրյա լինի»,- կարդում ենք Հոբի գրքում (ԺԴ 4):

Ահավասիկ, բոլորս, անխտիր, մեղավոր ենք Ամենասուրբ Տեր Աստծո առջև, և մեր մեղքերն են, որ պատնեշ են դարձել մեր և Տիրոջ միջև: Ահա այդ պատնեշը վերացնելու համար է, որ երկնքից երկիր խոնարհվեց Աստծո Միածին Որդին ու մարմնացավ և Իր փրկագործական փնօրինությամբ խորտակեց մեղքի պատնեշն ու վերացրեց անջրպետը, որը մարդուն բաժանում էր իր Արարչից, իր կենդանության Աղբյուրից: Արդ, մենք՝ քրիստոնյաներս, որ Քրիստոս Աստծո արյամբ փրկագնվել ենք մեղքից, մահվանից ու սատանայից և դարձել

ենք Երկնավոր Հոր որդեգիրը, զերծ չենք մեղքից ու մեղանչականությունից: Թեպետ մկրտության Սուրբ Ավազանում սրբացել ենք ու առաքացել, սակայն տակավին աղտեղանում ենք մեր կյանքի ներգործական մեղքերով: Մեր ակամա ու կամա մեղսագործություններով տակավին գործակցում ենք Քրիստոս Հիսուսին խաչին գամող կույր հրեաներին: Վերջապես, թեև Քրիստոսին ենք մոտեցել, սակայն դարձյալ ու վերստին կամովին սատանային ենք հարում:

Հետևապես, ըստ էության, համայն աշխարհում անմեղ որևէ մեկը չկա. արդ, հապա ի՞նչ անենք. ինչպե՞ս պարզենք, կարո՞ղ ենք հաղորդվել Տիրոջ Մարմնին ու Արյանը, թե՞ ոչ:

Այո՛, կարո՛ղ ենք, քանի որ Տեր Աստված մեղավորի մահը չի ուզում, այլ՝ նրա դարձն իր չար ճանապարհից ու ապրելը: Այո՛, թեպետ մեղավոր ենք, բայց կարող ենք հաղորդվել, և ահա՛ թե ինչպես. *երբ մեր միտքը վկայում է մեր պատրաստ լինելու մասին*, ահա այդ ժամանակ է, որ Սուրբ Հաղորդություն ընդունելն Աստծո կամքի համաձայն է, քանի որ, ինչպես վկայում և ուսուցանում է Պողոս առաքյալը՝ *ընդունելին և Բարձրյալի կամքին համաձայնը՝ մտքի վկայությունն է՝ «վկայութիւն մտաց»* (Բ Կորնթ. Ա 12):

Իսկ որո՞նք են մտքի վկայություններն արժանապես պատրաստվածության. նախ և առաջ հարկ է քննել անձը, անկեղծորեն զղջալ գործած մեղքերի համար և ապա Տիրոջ պաշտոնյայի՝ ձեռնադրված ու օծված քահանայի առջև կատարված խոստովանությամբ սրբվել մեղքերից. երկրորդ՝ պետք է աներկբա հավատալ, ունենալ հավատքի խոստովանություն առ այն, որ Սուրբ Պատարագի ընթացքում քրիստոնյաներին բաշխվում է ոչ թե սովորական հաց ու գինի, այլ մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի ճշմարիտ Մարմինն ու Արյունը: Երրորդ՝ ով որ պատրաստվում է ճաշակել հոգևոր սեղանից, պետք է քաղցած լինի ոչ միայն մարմնով, այլև, ու մանավանդ, ինչպես վկայում է Սուրբ Գրիգոր Տաթևացին, հոգով. երբ որևէ մեկը քաղցում է հոգեպես, այն ժամանակ այդպիսին, աստվածային ողորմությամբ, հորդորվում է կատարել մտքի քննություն, որպեսզի գիտակցի՝ ամենայն բարություններից, երկնավոր շնորհներից ու բարի գործերից իր թափուր լինելը, և քաղցած հոգով փափագի դալար վայրերն ու հանդարտ ջրերը, այսինքն՝ հոգու քաղցը հագեցնող ամենայն քաղցրություններով լի Տերունի Մարմինն ու Արյունը:

Չորրորդ՝ ով փափագում է մոտենալ Սուրբ Հաղորդությանը, նաև հանձնառություն պետք է ունենա այլևս նախահաղորդական մեղավոր ընթացքով չընթանալու համար, այլ հարկ է, որ Սուրբ Հաղորդությունից հետո, այդ անձը նոր կյանքով ապրելու վճռականությամբ համակվի, որպեսզի չնմանվի այն օձին, որը, ինչպես գրում է Սուրբ Գրիգոր Տաթևացին, երբ գնում է ջուր խմելու, հեղում է իր թույնը քարի վրա և երբ խմում է ջուրը, դարձյալ ընդունում է թույնը:

Այսպես են վարվում նաև նրանք, ովքեր կամենում են ըմպել կենդանի աղբյուրից, այսինքն Տիրոջ Մարմինն ու Արյունը ճաշակել, քանի որ նախքան հաղորդությունը թոթափում են իրենցից մեղաց թույնը, իսկ հաղորդությունից հետո դարձյալ իրենց թունավորում են նույն մեղքերով:

Աիավասիկ, Քրիստոսին փափագող մարդիկ, երբ անձի քննությունից հետո մեր միտքը՝ հիմնվելով վերոհիշյալ պարագաների վրա, կվկայի մեր արժանապես պատրաստվածության մասին, ահա այն ժամանակ է, որ մենք արժանի կլինենք փեսնելու Աստծո Գառանը, համբուրելու Նրան, վերցնելու և ճաշակելու Նրա սուրբ, կենդանի ու կենդանարար Մարմինն ու Արյունը, որով և կլուսավորվենք Սուրբ Հոգով և աստվածային շնորհներով պայծա-

ռանալով ու զորանալով՝ առաքինական գործերով օրեցօր առաջ կընթանանք սրբության ու կատարելության ճանապարհով, որի վերջավորությունը գտնվում է Երկնքի Արքայությունում:

Ո՛վ զավակներ Առաքելական մեր Մայր Եկեղեցու, թող հայտնի լինի ձեզ, որ արժանավորապես հաղորդությամբ ոչ միայն քավություն ու թողություն է տրվում մեր մեղքերին, ոչ միայն զորանում ենք աստվածային ու երկնային շնորհներով, այլև խորհրդաբար միանում ենք Տեր Աստծուն, ինչպես նաև միմյանց, և այդպես է, որ կայանում է Քրիստոսի խորհրդական Մարմին՝ Սուրբ Եկեղեցու միությունը: Ինչպես տեսնում եք, արժանավորապես պատրաստվածությունը Սուրբ Հաղորդությանը կենսական անհրաժեշտություն է, էական ու կարևոր է: Ուրեմն, նորից ու նորից քննենք մեր անձերն ամենայն արդարությամբ ու անաչառությամբ, որպեսզի ճանաչելով ինքներս մեզ՝ ի զորու լինենք վճռելու՝ կարող ե՞նք հաղորդվել, թե ոչ:

Մեր խանդուտն ու անարժան հաղորդությամբ պատճառ չդառնանք ո՛չ մեր անձերի դատապարտության, ո՛չ էլ մեր Եկեղեցու մասնատվածության: Եվ այսպես, եթե այժմ մեր մեջ կան այնպիսիները, ովքեր երկմտում են, ովքեր համձնառու չեն Սուրբ Հաղորդությունից հետո նոր կյանքով ապրելու, թող որ այդպիսիները չմոտենան ահավոր Խորհրդին, այլ թող խոնարհությամբ աղոթք անեն, անկեղծորեն զղջան, արտասուք հեղեն և խոստովանությամբ սրբվեն իրենց մեղքերից, որպեսզի առաջիկայում, Աստծո կամոք, հոգևոր ուրախությամբ և հոգու սովալլուկ քաղցով, երկյուղով ու հավատքով մոտենան և սրբությամբ ու արժանավորապես ճաշակեն Տիրոջ Մարմինն ու Արյունը:

Աղոթեցեք նաև ինձ համար, սիրելիներ ի Քրիստոս, որպեսզի Տերն Իր ամենահաղթ Սուրբ Խաչի զորությամբ մարմինս, հոգիս, միտքս ու սիրտս զերծ պահի ամենայն աղտեղությունից, քանի որ եղկելի անձս ոչ միայն հաղորդվում է, այլև մեղսագործ ձեռքերով շոշափում Տիրոջ Մարմինն ու Արյունը: Աղոթեցեք և խնդրեցեք Երկնավոր Թագավորին, որպեսզի զորացնի ինձ և սուրբ պահի համենայն ժամ:

Աստվածասեր քրիստոնյաներ,

Քաջալերված երանելի Վարդան վարդապետ Այգեկցու վկայությունից, այն է՝ «Պատարագի Սուրբ Խորհրդի առջև ով հոգևոր որևէ խնդրանքով դիմի, առավել շատ կստանա Աստծուց և Նրա խաչելության շնորհներից, քան բազում ժամանակ աղոթելով», արդ, հոգու պարտք եմ համարում ի խորոց սրտի աղոթք վերառաքել դեպի Երկինք նախ և առաջ աստվածակառույց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի անսասանության ու պայծառության համար, իմ սիրասուն Մայր Աթոռի, որտեղ յոթ տարի ապրեցի և որի հացով յոթ տարի սնվեցի:

Տեր Աստված, աղաչում եմ Քեզ, մինչև աշխարհի վախճանը, ի մխիթարություն և ի ցնծություն մեզ ու Հայաստանյայց բոլոր եկեղեցիների, Մայր Աթոռից անպակաս արա միշտ զեղ ու հոգեպարար շնորհներդ: Զորացրո՛ւ Սուրբ Էջմիածինը և օրըստօրե պայծառացրու: Այն միշտ զարդարուն ու պերճ պահիր Քո կողմից ընտրված հայրապետներով, շնորհափայլ եպիսկոպոսներով, վարդապետներով ու բոլո՛ր մանուկներով:

Հոգու պարտք եմ համարում ի խորոց սրտի աղոթք մատուցել Բարձրյալին «վասն Հայրապետին մերոյ Տեառն Տեառն Գարեգնի Սրբազնագոյն Կաթողիկոսի Ամենայն Հայոց» և խնդրել՝ Տեր մեր, օգնական ու զորավիգ եղիր մեր Հայրապետին ամեն ժամանակ, Քեզ հաճելի նրա բոլոր ձեռնարկներում ու ընթացքներում: Պահի՛ր Վեհափառ Հորը խաղաղության

մեջ և պարգևիր երկար տարիների արևշատ կյանք՝ ի պայծառություն Քո Սուրբ Եկեղեցու և ի մխիթարություն մեզ՝ Քո ծառաներիդ:

Հոգու պարտք եմ համարում ի խորոց սրտի աղոթք խնկարկել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանության համար և խնդրել՝ Ամենախնամ Տեր. Մայրավանքի միաբաններին զինի՛ր զորությամբ ու հոգևոր արիությամբ, տո՛ւր նրանց հեզություն ու խոնարհություն, որպեսզի Քեզ արժանավորապես ծառայեն և Քեզանի՛ց ընդունեն փառքի պսակը:

Հոգու պարտք եմ համարում ի խորոց սրտի աղոթել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանի և Վազգենյան Հոգևոր Դպրանոցի առավել լուսավորության համար՝ Ամենաբարի Տեր, ուսումնատենչություն, նվիրում ու նախանձախնդրություն պարգևիր Եկեղեցու հոգևորականաց դարբնոցների սաներին, որպեսզի յուրաքանչյուր ճեմարանական, հաստատուն մնալով իր կոչման մեջ, արժևորի այն ու պտղաբեր դարձնի մեծավորներին սիրով հնազանդությամբ, հավատքով ուսումնառությամբ և հույսով աղոթասացությամբ:

Հոգու պարտք եմ համարում ի խորոց սրտի աղոթել իմ և ի Քրիստոս օծակից եղբայրների հոգևոր ծնող Գերաշնորհ Տ. Սիոն եպիսկոպոս Ադամյանի համար. Ամենակալ Տեր, պարգևի՛ր Սրբազան Հորը կենաց արևշատություն և հարանորոգ հաջողություններով պտղաբեր դարձրու նրա առաջնորդական առաքելությունն ի փառս Քո և ի բարեկարգություն Արմավիրի վիճակի:

Արդ, Սուրբ Ավազանով լուսավորված եղբայրներ և քույրեր, ջանանք, որքան հնարավոր է, առօրյա մեր կյանքում կենցաղավարել այնպես, որ մեր հոգին, մեր միտքը, մեր սիրտը և մեր մարմինը չպղծենք մեղքով: Սուրբ Հաղորդությունից հետո՝ աշխատենք հոգով ընթանալ, որպեսզի պտղաբերենք հոգու պտուղներով, քանի որ հոգով ընթանալու և սուրբ կյանքով ապրելու համար Տիրոջ սուրբ և կենարար Մարմինն ու Արյունը մեզ անհրաժեշտ շնորհներ է տալիս, այսինքն՝ զորություն և կարողություն, հարկավոր է միայն ու միայն մեր անձի կամեցողությունը և ձգտումը դեպի սրբություն ու կատարելություն:

Անհրաժեշտ է, որ մենք հրաժարվենք մեր կամքից և ամենայն անկեղծությամբ ու հաստատակամությամբ Տիրոջն ասենք՝ Եղիցի կամք Քո: Թող Քո կամքը լինի, Տեր, քանի որ Դու ես մեր կենդանությունը, Դու ես մեր հույսը, Դու ես մեր բարերարությունը, Դու ես մեր ուրախությունն ու երջանկությունը, «եւ Քեզ միայնոյ վայել է փառք, պատիւ եւ իշխանութիւն այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն»:

***Շնորհք, սէր եւ աստուածային արքաարար զօրութիւնն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ եղիցի ընդ ձեզ եւ ընդ ամենեսեան. ամէն:***

# ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ Տ. ԱԴԱՄ ՔԱՀԱՆԱ ՄԱԿԱՐՅԱՆԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ՀՌԻՓՍԻՄԵ ՏԱՃԱՐՈՒՄ

(13 հոկտեմբերի 2002 թ.)

*«Ահա մենք թողեցինք ամեն ինչ և*
*եկանք Քո ետևից. արդ մենք ի՞նչ կունենանք»:*
(Մտթ. ԺԹ 27):

Սիրելի՛ հավատացյալներ,

Այսօր Աստծո կամոք այս եկեղեցում մատուցում ենք մեր անդրանիկ Ս. Պատարագը՝ շուրջ քառասուն օրեր առաջ քահանա ձեռնադրվելուց և քառասնօրյա պատրաստության շրջանն անցնելուց հետո: Քահանաները բոլոր մարդկանց նման ենթակա են մեղքերի և թեթևությունների, ինչպես Ս. Գրքում է ասվում Եղիա մարգարեի մասին, որը բոլորիս պես մեղքերի և կրքերի ենթակա մարդ էր, բայց իր հավատքի մեծությամբ բազում հրաշքներ գործեց: Այսպիսի հավատք և կատարելության ձգտում անհրաժեշտ է հատկապես քահանաներին, հանուն որի էլ քահանաներն իրենց գործունեության հենց սկզբից փորձում են նմանվել մեր Տեր Հիսուս Քրիստոսին, Ով նույնպես փորձությունների և մտորումների քառասնօրյա շրջան անցնելուց հետո՝ եկավ մարդկության մեջ տարածելու Իր աստվածային լույսը:

Այսօր, ինձ համար նվիրական այս օրը, ցանկանում եմ բոլորիդ առջև, հրապարակավ, հայտնել իմ խորին շնորհակալությունն ու երախտագիտությունը Գևորգյան Հոգևոր Ճեմարանի տեսչությանը և բոլոր դասախոսներին մեր կրթության համար, իմ հոգևոր ծնողին՝ Արմավիրի թեմի առաջնորդ Տ. Միոն եպիսկոպոս Ադամյանին՝ իր ծնողական հոգածության, խրատների և հորդորների համար, ինչպես նաև իմ մարմնավոր ծնողներին, հարազատներին, ազգականներին, բարեկամներին՝ իմ հանդեպ իրենց հոգածության և իմ դաստիարակության գործում իրենց մեծ աշխատանքի համար: Խորին շնորհակալություն նաև մեր կողմից մեծապես հարգված, Մայր Աթոռի միաբան և Ս. Հռիփսիմե վանքի վանահայր Տ. Մատթեոս աբեղա Պողոսյանին, որն իր արտոնությունը տվեց այստեղ պատարագելու, ինչպես նաև Մայր Տաճարի լուսարարապետի պաշտոնակատար Տ. Արտակ վարդապետ Տիգրանյանին՝ մեր հանդեպ իր հոգատարության համար:

Եվ մեծագույն շնորհակալությունը մեր բոլորի հոգևոր հայր, Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ին՝ մեր և մեր ողջ ժողովրդի նկատմամբ իր հայրական հոգածության համար:

Ահա այսպիսի մի մեծ, անսահման սիրով լի, համամարդկային հոգածության նախատիպն է Հիսուս Քրիստոս: Սակայն Քրիստոսի աշակերտներին հետաքրքրում էր մի հարց, որն այժմ հետաքրքրում է նաև ինձ, ինչպես նաև ձեզ, սիրելի հավատացյալներ: Այդ հարցը գուցե չի հնչում մեր մտքերում, սակայն այն մի անհանգիստ զգացում է արթնացնում մեր

սրտերում, և այդ անհանգստության մեջ էլ կարծես ծրարված է հետևյալ հարցը. «Ահա մենք թողեցինք ամեն ինչ և եկանք Քո ետևից, մենք ի՞նչ կունենանք»:

Կան հարցեր, որոնք մարդկանց հետաքրքրում են ներկա պահի, միևնույն ժամանակ՝ ապագայի համար: Եվ ներկա պահի համար այս հարցը ձեզ կարող է հետաքրքրել հետևյալ տեսանկյունից. «Ահա այժմ մենք եկել ենք եկեղեցի, թողել ենք մեր բոլոր գործերը, հոգսերն ու մեր բոլոր հետաքրքրությունները, մենք ի՞նչ կունենանք»: Բայց մեզ համար մի պատասխան հարց է հնչում: Ի՞նչ հարց է այն:

Գիտե՞ք, թե ինչպես է դարձի եկել քրիստոնյա սրբերից մեկը: Նա տեսել է խաչեցյալ Քրիստոսի պատկերը, որի վրա գրված էր. «Ահա թե ես ինչ եմ արել քեզ համար, իսկ դու ի՞նչ ես անում Ինձ համար»: Մենք Աստծուն ուղղված բազում հարցեր, խնդրանքներ, Նրանից ակնկալիքներ ունենք, բայց ամեն անգամ, երբ մենք տեսնում ենք խաչված Քրիստոսի պատկերը, այդ պատկերը պարուրող թվացյալ լռության միջից Աստված Ինքն է տխուր թախիծով մեզ հարցնում. «Ահա թե ես ինչ եմ արել քեզ համար, իսկ դու ի՞նչ ես անում Ինձ համար»:

Իրոք, ի՞նչ ենք անում մենք: Երբեմն գալիս ենք եկեղեցի, որին շատ անգամներ մատների արանքով ենք նայում, և դժկամում ենք մի փոքր երկար կանգնել արարողությանը՝ նախընտրելով վերադառնալ մեր հոգսերին, փախչելով եկեղեցուց՝ կարծես մի ահավոր վայրից: Երկար կանգնելուց մեր մեջքերը ցավում են, մեր ոտքերը հոգնում են, մեր մտքերը սկսում են ցրվել: Բայց մի՞թե մի փոքր երկար արարողությունն է այս ամենի պատճառը: Այդ ինչպե՞ս է, որ գրեթե միշտ համերգասրահները լեփ-լեցուն են լինում մարդկանցով, որոնցից շատերը ազատ տեղեր չլինելու պատճառով ժամեր ու ժամեր տևող համերգների ընթացքում ոտքի վրա են կանգնում և ոչ միայն չեն հոգնում, այլև պարելու ցանկություն էլ են ունենում:

Այդ ինչպե՞ս է, որ մեր շատ երիտասարդներ ու երիտասարդուհիներ հատկապես մայրաքաղաքում ամբողջ գիշեր անցկացնում են զվարճանքի վայրերում անընդհատ շարժման մեջ և... չեն հոգնում: Այդ ինչպե՞ս է, որ մենք ինքներս էլ հարսանիքների ժամանակ առավոտից մինչև ուշ գիշեր պարում ենք ու թռչկոտում և... չենք հոգնում: Ուրեմն, սիրելիներ, եկեղեցում մեր դժգոհության, դժկամության, ձանձրույթի պատճառը ոչ թե երկար կանգնելուց մեր ցավեցող մեջքն է կամ հոգնած ոտքերը, այլ մեր սրտերում Աստծո հանդեպ սիրո և ջերմության պակասը:

Իսկ ի՞նչ կա մեր սրտերում: Մեր սրտերը կարծես սառել են ու մնռել, ոչ մի ջերմություն, վեհ սիրո կամ վեհ հույզերի ոչ մի թրթիռներ, միայն հոգսեր, վշտեր, մտահոգություններ, ավելի շատ տխրություն, քան ուրախություն, ավելի շատ թախիծ, քան հրանություն: Լինում են պահեր, երբ մեր սիրտը դառնում է տխրության բաժակ, և այդ պահերին, ինքներս էլ չգիտենք, թե ինչու, մեր աչքերից արցունքներ են ուզում հոսել ցած, և մեր սիրտը կարծես արթնանալով գոչում է. «Ազատեցե՛ք ինձ, ազատեցե՛ք ինձ հոգսերի և վշտերի այս ճնշող բեռից, ի՞նչ եք խնդրում ինձ, ինչո՞ւ եք ինքներդ փորձում սպանել ձեր սիրտը»: Այս աշխարհում իրական հանգստություն և ուրախություն չկա, իրական հանգստությունն ու ուրախությունը միայն Աստծո մոտ են:

Սակայն ո՞ւմ եմ ես ասում սա: Չէ՞ որ դուք ինքներդ էլ ձեր կյանքի փորձով համոզվել եք, որ այդպես է: Ահա երեկ վշտերն էին կրծոտում մեր սրտերը, այսօր մտահոգություններն են

պանջահար անում, իսկ վաղը ծանրաբեռնված ենք լինելու ապագայի հոգսերով: Բայց խաչված Քրիստոս պարածել է Իր ձեռքերը, և Քրիստոսի ձեռքերն այսպես պարածված էին ոչ միայն խաչի վրա, երբ նա մեռած էր, այլև Նրա ձեռքերն այսպես պարածված են նաև հիմա՝ Նրա հարության առնելուց հետո: Քրիստոս կարոտած հոր պես, արցունքի՛ հասնող կարոտով Իր ձեռքերը պարածել է՝ մեզ Իր գիրկն առնելու համար:

Տեսե՞լ եք, թե ինչպես է հայրը երեխայի հետ խաղալիս բացում ձեռքերը, երեխան վազում է, ընկնում հոր գիրկը, փարվում նրա պարանոցին: Իսկ դուք ի՞նչ եք կանգնել, ի՞նչ եք սառել ու մնացել, չէ՞ որ Աստված Իր ձեռքերը բացել է՝ մեզ Իր գիրկն առնելու համար: Ավետարանում կարդում ենք Հիսուս Քրիստոսի խոսքերը, Տերը կարծես գոչելով է ասում մեզ բոլորիս, յուրաքանչյուրիս առանձին-առանձին. «Եկեք ինձ մոտ, բոլոր հոգնածներդ ու բեռնավորվածներդ, և Ես ձեզ կհանգստացնեմ» (Մատթ. ԺԱ 28):

Երբ մեր գլուխը ցավում է, փորձում ենք որևէ դեղ խմել, երբ ավելի լուրջ ցավեր ենք ունենում, շտապում ենք բժշկի մոտ, բայց մի՞թե սրանցից ավելի լրջորեն չպետք է մտածենք մեր սրտի և հոգու խաղաղության մասին: Իսկ մեր հոգին հիվանդ է, հիվանդ է, և ինքներս չենք գիտակցում դա: Ինքներս մեզ արդար ենք համարում, մինչդեռ մեղքերի մեջ կորած ենք: «Ի՞նչ եմ արել, ո՛չ մարդ եմ սպանել, ո՛չ էլ շնություն եմ գործել»,- հաճախ ասում են շատերը: Բայց Աստծո տված յուրաքանչյուր պատվիրան աստիճաններ ունի: Լավ է, որ չես սպանում, բայց ավելի լավ է, երբ խոսքով չես սպանում, և սրանից է՛լ ավելի լավ է, երբ մտքով չես սպանում:

Լավ է, որ չես շնանում, բայց ավելի լավ է, երբ մտքով չես շնանում: Լավ է, որ սիրում ես եղբորդ, ավելի լավ է, երբ սիրում ես հարևանիդ, բայց սրանից է՛լ ավելի լավ է, երբ սիրում ես... թշնամուդ: Ո՞վ կարող է մեզ սրտի և հոգու խաղաղություն տալ, եթե ոչ՝ միայն Աստված: Բայց մենք Աստծուն գցել ենք ամենավերջին տեղը և Նրանից վերև բազմեցրել մեր սեփական հոգսերն ու ցանկությունները: Մեր ողջ գործունեությունն ուղղված է կա՛մ մարդկանց, կա՛մ ինքներս մեզ հաճոյանալուն:

Կեղծավորությունը ծնվում է մարդկանց հաճոյանալուց, իսկ գժտությունները, վիրավորանքներն ու նեղացկոտությունը՝ ինքներս մեզ հաճոյանալուց: Սակայն այսուհետև փոխենք իրերի հերթականությունը, մեզ համար մեր սրտերում առաջին տեղում բազմեցնենք Աստծուն և Նրան հանձնենք մեր բոլոր հոգսերն ու մտահոգությունները՝ հավատալով, որ Աստված ըստ Իր խոսքի օգնելու է մեզ ամեն ինչում և յուրաքանչյուր խնդրի համար ի՛ր ժամանակին ելք է ցույց տալու, և մեր բոլոր գործերն անենք առաջին հերթին ո՛չ թե մարդկանց, այլ Աստծուն հաճոյանալու համար:

Ահա սա է քայլը դեպի Աստված, ահա այս է մեր՝ երեխաներիս վազելը դեպի Իր մխիթարող գիրկը մեզ համար բացած մեր սիրող Հայրը: Թող որ Աստված մեզ բոլորիս ուժ տա, որպեսզի կարողանանք այս դժվար թվացող, բայց միևնույն ժամանակ իրականության մեջ այնքան հեշտ քայլերը դեպի Աստված կատարել, որպեսզի մի օր էլ արդեն խաղաղված սրտով և խաղաղված հոգով Աստծուն փառք տանք և ասենք. «Փա՛ռք Քեզ Աստված, փա՛ռք Քեզ, ամե՛ն ինչի համար փառք Քեզ հավիտյանս հավիտենից. ամեն»:

# ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ Տ. ՏՐԴԱՏ ՔԱՀԱՆԱ ԲՈԶԻԿՅԱՆԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ ԳԱՎԱՌԻ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ

(13 հոկտեմբերի 2002 թ.)

Սիրելի հավատացյալ քույրեր և եղբայրներ,

Հոգևոր անհուն բերկրանքով է լցված հոգիս այս նվիրական պահին:

Միաժամանակ, ավարտին հասավ իմ և օծակից յոթ եղբայրներիս հոգևոր կյանքի նոր ընթացքի պատրաստության քառասնօրյա աղոթքի և պահեցողության շրջանը, և այսօրվա Պատարագով սկսվելու է Քրիստոսին և Նրա նվիրյալ ժողովրդին ծառայելու մեր քահանայական ուղին:

«Տէր, ուղղեա զգնացս մեր ի ճանապարհս խաղաղութեան, Տէր ուղղեա և առաջնորդեա հոգւոց մերոց եւ ամենայն հաւատացելոց գնալ յարդարութեան ճանապարհին եւ ի կեանսն յաւիտենից»:

Առաջին բառերը, որ ուզում եմ արտահայտել, գոհաբանական աղոթք է՝ ուղղված մեր Տեր Հիսուս Քրիստոսին, Ով, իբրև գթառատ հովիվ, իր խրատող գավազանով փրկեց ինձ ու դարձրեց մեղքի ու անգիտության խավարից, ձեռքիցս բռնած առաջնորդեց խոչընդոտներով լի Իր ճանապարհով և իմ քայլերն ուղղեց դեպի այս Սրբազան Խորանը:

«Փառք քեզ, Աստուած, փառք Քեզ, յաղագս ամենայնի, Տէր, փառք Քեզ»:

Աղոթախառն երախտագիտությամբ եմ լցված ազգիս Վեհափառ Հայրապետի հանդեպ, ում հայրական գթառատ ու հոգածու հայացքի ներքո գիտակցական կյանքս կրթվեց ու շաղախվեց Ավետարանական ուսուցումների ճշմարիտ ոգով. Արմավիրի թեմի առաջնորդ Միոն եպիսկոպոս Ադամյանի, որի առաջնեկ հոգևոր ծնունդները դարձանք՝ նրա քրիստոսադրոշմ Աջի տակ խոնարհվելով և Սրբալույս Մյուռոնի օծմամբ զարդարվելով Սուրբ Հոգու առատահոս շնորհներով՝ որպես քահանայք Աստուծո և ծառայք Տիրոջ ժողովրդի:

Աղոթում եմ Մեսրոպ Վազգենյան Հոգևոր Դպրանոցի և Գևորգյան Հոգևոր Ճեմարանի նախկին և ներկայիս տեսչական, դասախոսական կազմի ու ողջ պաշտոնեության համար, որոնց ջանադիր աշխատանքի առատ հասկերը դարձանք՝ ճոխացած գիտելիքներով ու իմաստությամբ՝ Աստծո ցորեն դառնալու համար: Ինչպես նաև՝ հոգևոր ու մարմնավոր ծնողներիս, ճեմարանական ու միաբանական եղբայրներիս համար, որոնցից առաջիններն ինձ կյանք պարգևեցին, իսկ երկրորդները՝ իմաստավորեցին այն ու համեմեցին գեղեցիկ և քաղցր տպավորություններով, որոնք գորովով են հիշվում:

Շնորհակալ եմ նաև Գեղարքունյաց թեմի առաջնորդական փոխանորդ Դերենիկ վարդապետ Դավթյանից, որ ընդառաջեց խնդրանքիս և ինձ արտոնեց անդրանիկ Պատարագս մատուցելու ինձ համար նվիրական այս եկեղեցում, որտեղից սկսվեցին հոգևոր կյանքիս առաջին քայլերը:

Սիրելի եղբայրներ և քույրեր, այսօր, Պատարագի այս պահին, երկինքը երկրին է միացած, և ես առավել քան երբևէ կարիք եմ զգում լսելի լինելու Տիրոջ առաջ և այս աղոթքն եմ շշնջում Սուրբ Նարեկացու բառերով խամարձակություն ստացած.

*Սուրբ Հոգի՛ Աստված, ի բարին կատարիր*
*Աստվածության հայացքի առջև խմբված*
*Փոքրիկ հոտիդ աղաչանքները,*
*Եվ ինձ՝ մեղավորիս էլ շնորհիր խոսել համարձակությամբ*
*Քո կենդանարար Ավետարանի ավետիսների խորհրդի մասին,*
*Քո շնչով լցված Կտակարանաց անծայր վարածքին*
*Հետևել մտքի արագ ընթացքով:*
*Իսկ երբ մոտենամ սկսելու կարգը խոսքի մեկնության,*
*Նախ թող հասնի ինձ Քո գթությունը՝*
*Իր ժամանակին ինձ ծանուցելու՝*
*Ինչն է արժանի, ինչը պիտանի և քեզ դուրեկան՝*
*Քո աստվածության փառքի, գովեստի*
*Եվ կաթողիկե եկեղեցու շինության համար:*

*(Գրիգոր Նարեկացի, ԲԱՆ ԼԴ)*

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ»:

Սիրելիներ, այսօրվա Ավետարանական ընթերցվածը, որը Պատարագի սկզբում կարդացվեց, ճշմարիտ ուսուցում է տալիս մի երևույթի մասին, որին յուրաքանչյուրս հանդիպում ենք գրեթե ամեն օր՝ թե՛ դրսում մարդկային առօրյա հարաբերություններում, և թե՛ եկեղեցում: Առանց որի մարդիկս կնմանվեինք սեփական շահամոլությամբ սեփական կյանքը անիմաստ դարձնող արարածների, մեր քաղաքներն ու գյուղերը կնմանվեին միայն վայրի կենդանիներով լեցուն անտառների, որտեղ գործում է լոկ գոյության պայքարի մի դաժան օրենք:

Ողորմածության մասին է խոսքը:

Բայց ո՞րն է մաքուր, կատարյալ ու աստվածահաճո ողորմածությունը:

Մենք ողորմած ենք անվանում այն մարդկանց, ովքեր թե՛ նյութապես և թե՛ բարոյապես օգնում կամ որևէ նվիրատվություն են անում կարիք զգացող իրենց նմաններին՝ իրենց ինչ-որ բանից զրկելով:

Տարբեր են մարդիկ, տարբեր են նաև ողորմածության ձևերն ու տեսակները: Օրինակ՝ կան մարդիկ, ովքեր երբևէ չեն էլ մտածում ողորմություն կատարելու մասին, չնայած ուրախությամբ ընդունում են իրենց նկատմամբ կատարված ողորմածության ցանկացած դրսևորում: Ոմանք ողորմություն են անում սնափառությունից՝ ցուցադրաբար մարդկանց աչքի առջև, ոմանք՝ շահի ակնկալիքով, ոմանք՝ ամոթից ստիպված, ուրիշներ՝ խղճահարությունից, և շատ քչերը, շատ քչերը միայն՝ Աստծո նկատմամբ ունեցած մաքուր և անկեղծավոր սիրուց:

Բայց անա տեսնենք, թե այս մասին ինչ է մեզ ուսուցանում ավետարանական հետևյալ դրվագը. «Հիսուս կանգնած էր գանձանակի դիմաց. դիտում էր, թե ինչպես ժողովուրդը պղինձ դրամ է գցում գանձանակի մեջ: Եվ շատ մեծահարուստներ շատ բան գցեցին: Մի

այրի կին եկավ և երկու լումա գցեց, որ մի գրոշ է: Եվ Հիսուս, իր մոտ կանչելով իր աշակերտներին, նրանց ասաց. «Ճշմարիտ եմ ասում ձեզ, որ այդ չքավոր այրին ավելի շատ գցեց, քան գանձանակի մեջ մյուս բոլոր դրամ գցողները. քանի որ ամենքը իրենց ավելորդից գցեցին, իսկ նա՝ իր չքավորությունից, գցեց ամեն ինչ, որ ուներ՝ իր ամբողջ ապրուստը» ( Մարկ. ԺԲ 41-44):

Ողորմածության համար ամենակարևորը սիրո և զոհողության հոգին է և ոչ թե տվածի չափը: Աստված գիտե մեր սրտերը, հետևաբար նաև՝ մեր նվիրումի չափը յուրաքանչյուր արարքի մեջ:

Արդյոք մեր մեջ կա՞ այրի կնոջ նման մեկը, որ նույն սերն ու զոհողության հոգին կրսեվորի հանուն Աստծո այս Սուրբ Եկեղեցու կամ իր մերձավորի. չէ՞ որ ինչպես երկու հազար տարիներ առաջ էր, այնպես էլ հիմա մեր Փրկիչը՝ Քրիստոս, Իր լուռ ու մտախոհ հայացքով նայում է երկնքից՝ բազմությունների մեջ մի սուրբ ու նվիրյալ հոգի գտնելու:

Ողորմած, գթած և երկայնամիտ է Տերը և այնքան է ցանկանում, որ Իր ստեղծած մարդիկ կատարյալ դառնան իրենց ողորմածության մեջ, ինչպես որ Ինքն է կատարյալ:

Ճշմարիտ ողորմածությունը սիրուց է ծնվում՝ մեզ նմանեցնելով մեր Արարչին: Սուրբ Գիրքը բազմաթիվ անգամներ Աստծուն «ողորմած» է անվանում, իսկ ըստ Եկեղեցու հայրերի՝ ոչ մի առաքինություն մեզ այնքան աստվածանման չի դարձնում, որքան ողորմությունը:

Ողորմությունը միայն մարմնավոր զոհողությունը չէ, այլ նաև՝ հոգևոր, երբ մեր հոգսերն ու գործերը թողած՝ մեր ժամանակը նվիրաբերում ենք խրատելու, ուսուցանելու, կարեկցելու և մխիթարելու:

Եթե կարողանայինք քննել մարդու սիրտը, մի բան կա, որով կարող էինք իմանալ, թե մարդ ո՛ւր է հասել իր հոգևոր կյանքում, որքա՛ն է սիրում մարդկանց և որքանո՛վ է պատրաստ ինքնազոհողության հանուն Քրիստոսի:

Դարձյալ ողորմածությունն է այդ:

Տեսնեք այս չքավոր այրիին, նրա արարքը հոգի է շարժում, բայց իրականում մենք, որովհետև մարդկայնորեն ենք խորհում և դատում աչքի տեսածով, առանց որևէ կասկածի ավելի մեծ պատվի ու մեծարանքի կարժանացնեինք փաճարի գանձանակը առատորեն լցնող մարդկանց:

Իսկ այս այրին... տաճարում եղողներից ոչ ոք չիմացավ նրա մասին, և նրա ինչի՞ն էր պետք, չէ՞ որ նա շահել էր արդեն ամենից թանկագինը՝ Աստծո Միածին Որդու բարեհաճությունը, Որի մեկ խոսքով առաջացել է համայն տիեզերքն՝ իր ողջ հարստություններով, Ով այդ պահին իր կողքին էր տեսանելի կերպով:

Եվ այսօր էլ, ահա, Նա մեր մեջ է, մեր կողքին, այս տաճարում՝ մեզ համար անտեսանելի կերպով, և այս Սուրբ Սեղանի վրա Իր կենդանարար մարմինն ու արյունն է ընծայում մեզ, այն, ինչը ամենաթանկ զոհողությունն է համարվում երկրիս երեսին:

Ուրեմն, սիրելի հավատացյալներ, եթե գեթ չնչին չափով ցանկանում ենք նմանվել մեր Տիրոջը, բավական է, որ ողորմած լինենք սրտով, որովհետև Նա ասաց. «Ողորմություն եմ կամենում և ոչ զոհ» (Մտթ. Թ 13 ):

Եթե գեթ չնչին չափով ուզում ենք բարիք գործել մեր Տիրոջը, բավական է, որ ողորմած լինենք հոգով մարդկանց հանդեպ, որպեսզի հատուցման օրն արժանանանք Նրա խոսքին, թե՝ «Եկե՛ք, Իմ Հոր օրհնյալներ, ժառանգեցե՛ք աշխարհի սկզբից ձեզ համար պատ-

բաստված արքայությունը, որովհետև քաղցած էի, և Ինձ հաց տվիք, ծարավ էի, և Ինձ ջուր տվիք՝ խմելու, օտար էի, և Ինձ ձեր մեջ առաք, մերկ էի, և Ինձ հագցրիք, հիվանդ էի, և Ինձ տեսնելու եկաք, բանտում էի, և Ինձ այցի եկաք... քանի որ Իմ այս փոքր եղբայրներից մեկին արեցիք այդ, Ինձ համար արեցիք» (Մտթ. ԻԵ 34-36, 40):

Եվ դարձյալ, եթե ցանկանում ենք ներում գտնել Տիրոջից մեր չար գործերի համար, բավական է, որ ճշմարիտ գղջումով ողորմած լինենք սրտով՝ մեր նմանների հանդեպ, որովհետև՝ «Ողորմածությունը բարձրացյուխ պարծենում է դատաստանի դիմաց» (Հակ. Բ 13):

Ուրեմն մեզ ի՞նչ է մնում անելու, եթե մենք մեզ քրիստոնյաներ ենք անվանում: Ավելորդ է այս հարցին նորից պատասխան փնտրել. չէ՞ որ նույնիսկ անհավատ ու միայն շահի գաղափարով կուրացած աշխարհն է հորդորում մարդկանց բարեգործ և ողորմած լինելու, չէ՞ որ նույնիսկ ամենադաժան ու սարսափելի մարդիկ են մեղմանում ողորմության ի տես, ուրեմն և որքան առավել Ամենաբարին Աստված:

Իսկ եթե մի պահ անդրադառնանք, թե ինչքա՜ն կարճ է մեր այս երկրավոր կյանքը տիեզերական անսահմանության մեջ և թե ինչքա՜ն անզոր ենք մենք բազմաթիվ անակնկալներով, անխուսափելի արհավիրքներով ու դժբախտ պատահարներով լի անորոշ ապագայի առջև, ապա վայրկյան իսկ չկորցրած կշտապենք փոխել չարությամբ ու բազմապիսի մեղքերով լցուն մեր ներքին մարդը ապաշխարությամբ ու աղոթքով, կփութանք ողորմածության գործերով «սիրաշահել» Բարձրյալն Աստծուն, քանզի փրկության էլ ինչպիսի՜ երաշխիք ունենք, եթե ոչ՝ Ձիթենյաց լեռան վրա ասված Քրիստոսի հավիտենական այս խոսքը, թե՝ «Երանի ողորմածներին, որովհետև նրանք ողորմություն պիտի գտնեն» ( Մտթ. Ե 7):

Բոլորս էլ, վստահաբար, նույնիսկ առանց պերճախոս ճառերի, առանց տեղյակ լինելու Ավետարանի հորդորներին, առանց իմաստասիրական մտավարժանքների, ինչ խոսք, զգացել ենք ողորմածության բարերար ազդեցությունը՝ այն քաղցր ու գորովալի զգացումը, որով լցվում ենք որևէ թշվառի կամ կարիքավորի փոքր-ինչ օգնություն ցուցաբերելու դեպքում: Ուրեմն այս ամենն իմանալով, որքա՜ն առավել պետք է համոզված լինենք ողորմածության բարերար հետևանքների մասին մեր կյանքում և որքա՜ն առավել պետք է պատրաստ գտնվենք մեր կյանքի ճանապարհը զարդարելու ողորմածության պտուղներով:

Ուրեմն, իբրև եզրահանգում ասենք, որ այն տուրքն է վայել ողորմություն կոչել, որ Աստծո հանդեպ սիրո համար կարոտյալներին մատուցվում է արդար վաստակից՝ ըստ տվողի կարողության չափի, զվարթագին, անտրտունջ, առանց հապաղման ու ծածուկ:

Սիրելիներ, եկեք ողորմած լինենք, իսկ երբ ողորմածություն ենք արել՝ մեկին փրկել ենք չար մարդկանցից, մեկին ազատել ենք վտանգից բարի խորհրդով կամ գործով, քաղցածի ենք կերակրել, մերկերի հագցրել, օտարների հյուրընկալել, կարոտյալների կարիքը հոգացել, վշտացածների մխիթարել, հիշենք այն այրիին՝ ասելով.

«Այն այրին ավելի շատ գցեց, քան բոլորս...» (հմմտ. Մարկ. ԺԲ 42):

# Տ. ՊԵՏՐՈՍ ՔԱՀԱՆԱ ԵՁԵԿՅԱՆԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ ԵՐԵՎԱՆԻ Ս. ԶՈՐԱՎՈՐ ԵԿԵՂԵՑՈՒՄ

(13 հոկտեմբերի 2002 թ.)

Սիրելի բարեպաշտ հավատացյալներ ի Քրիստոս.

Աստծո բերկրանքով և Աստծո ողորմությամբ այսօր կանգնելով Սուրբ Խորանին, գոհություն և փառք եմ մատուցում ամենակալ և բարձրյալ Տիրոջը՝ Իր սպասավորը կոչելու և այսօրվան արժանի դարձնելու համար:

40 օրեր առաջ՝ Ս. Աստվածածնի Գոտու գյուտի տոնին, Աստծո կամքով և Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ ու բարձր տնօրինությամբ. Արմավիրի թեմի բարեխնամ առաջնորդ Գերաշնորհ Տ. Սիոն եպս. Ադամյանի ձեռամբ Մայր Աթոռի 8 միաբան սարկավագներս, ծունր դնելով Միածնաէջ Տաճարի Սուրբ Խորանի առջև, արժանացանք քահանայական սրբազան կոչմանը: Օծվելով՝ հանձն առանք մինչև ի մահ ծառայել հայ ժողովրդին, մեր Մայր Եկեղեցուն, ինչպես նաև հավատարիմ մնալ առաքելահաստատ կանոններին և լինել մշակներ «Առանց ամոթոյ» (Բ Տիմ. Բ 15):

Այսօր, 40-օրյա աղոթքի, խոկման շրջանն անցկացնելուց հետո, ահա ցնծում և հրճվում է իմ հոգին «Տիրոջով, որովհետև Նա ինձ փրկության զգեստ և ուրախության պատմուճան հագցրեց» (Եսայի ԿԱ 10):

Եվ ահա այսօր անդրանիկ Ռւխտի Պատարագս եմ մատուցում Ս. Զորավոր հրաշակերտ եկեղեցու խնկաբույր կամարների ներքո, որը նաև իմ հոգու ծննդավայրն է եղել, ուր 8 տարիներ առաջ մկրտվել և սկսել եմ իմ ծառայության առաջին քայլերը:

Այս պատեհ առիթով, որդիական խոնարհությամբ իմ երախտագիտությունն ու շնորհակալությունն եմ հայտնում Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Վեհափառ Հայրապետին, ով 8 տարիներ շարունակ իր հայրական հոգատարության, հոգևոր դաստիարակության ու խնամքի ներքո կրթել ու ոգեշնչել է մեզ:

Ցանկանում եմ երախտագիտության խոսքս հղել Արմավիրի թեմի առաջնորդ Տ. Սիոն եպս. Ադամյանին, որի ձեռամբ և Սրբալույս Մյուռոնի հեղումով Սուրբ Հոգու շնորհները փոխանցվեցին մեզ՝ պարգևելով նոր ծնունդ և նոր կյանք:

Շնորհակալությունս նաև Գևորգյան Հոգևոր Ճեմարանի և Սնանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցի անցյալի և ներկայի տեսչական և դասախոսական կազմերին, որոնք իրենց անխոնջ նվիրումով պատրաստեցին մեզ՝ որպես վաղվա հոգևորականներ:

Շնորհակալությունս Մայր Աթոռի լուսարարապետությանը՝ ի դեմս լուսարարապետի պաշտոնակատար Տ. Արտակ վրդ. Տիգրանյանի, Մայր Աթոռի միաբանությանն ու ողջ ուսանողությանը, որոնց հետ ապրեցինք, ծառայեցինք այս տարիներին:

Երախտագիտությունս նաև Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ եպս. Կճոյանին, որի տնօրինությամբ այսօր իրականացավ 8 տարիների երազանքս, այն է՝ Պատարագ մատուցել այս Սուրբ Խորանում:

Սիրելի՛ բարեպաշտ հավատացյալ քույրեր և եղբայրներ, աղոթեցե՛ք իմ և օծակից եղբայրներիս համար, որպեսզի մեր Տեր Հիսուս Քրիստոսի ճշմարիտ վկաները լինենք և անդադրում նվիրումով ծառայենք մեր ժողովրդին, որպեսզի երբեք չշեղվենք Քրիստոսի արդարության լուսեղեն և սրբազան ճանապարհից:

*«Հոգի Տեառն ի վերայ իմ.*
*վասն որոյ եւ օծ իսկ զիս...»:*
(Ղուկ. Դ 18):

*«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. Ամէն».*

Մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսն Իր քարոզությունն սկսեց Գալիլիայի Նազարեթ քաղաքից, ուր մեծացել և դաստիարակվել էր: Հիսուս մի անգամ, սովորության համաձայն, գնաց ժողովարան և բացելով Եսայու մարգարեությունն՝ ընթերցեց հետևյալ տողերը.

«Տիրոջ Հոգին իմ վրա է, դրա համար իսկ օծեց ինձ, ինձ ուղարկեց աղքատներին ավետարանելու, սրտով բեկյալներին բժշկելու, գերիներին ազատում քարոզելու և կույրերին՝ տեսողություն, կեղեքվածներին ազատ արձակելու, Տիրոջն ընդունելի տարին հռչակելու» (Ղուկ. Դ 18-19, տե՛ս նաև Եսայի ԿԱ 1-2):

Արդարև, անհնար է բացատրել Հիսուսի ավետարանական հաղթանակն ընդդեմ աշխարհի, եթե չընդունենք, որ Տիրոջ Հոգին Իր վրա էր:

Մեծ և անպարփակելի են Աստծո գործերն ու խորն են Նրա խորհուրդները: Մեզանից ոչ ոք չի կարող խորհել կամ լեզվով ճառել Նրա մասին, որովհետև անճառելի է:

Հիսուս Քրիստոս Սուրբ Կույս Մարիամից մարդկային մարմին առավ և բնակվեց մեր մեջ, որպեսզի մենք բոլորս տեսնենք Հոր Միածնի փառքը, Նա, Ով եկել էր քարոզելու, ավետարանելու Աստծո արքայությունը և հատկապես ուղարկվեց բժշկելու հիվանդներին ու փրկելու սրտով բեկյալներին: Ինչպես Ինքն էր ասում. «Առողջներին բժիշկ պետք չէ, այլ հիվանդներին... քանզի ես արդարներին կանչելու չեմ եկել, այլ՝ մեղավորներին» (Մտթ. Թ 12-13):

Նույնն է և այսօր: Շատերն իրենց արդար և առողջ են կարծում և մտածում, թե բնավ Աստծո ու նրա փրկության կարիքը չեն զգում և առհասարակ չեն էլ ցանկանում ճանաչել:

Նա ի լրումն ժամանակի եկավ աշխարհ՝ որպես միջորդ եկավ մեզ, մեր աչքերի տեսության համար, որպեսզի հավատքի լույսով հավատանք Միածին Որդուն և ժառանգենք երկնքի արքայությունը:

Հովհան Ոսկեբերանն ասում է. բժիշկը չի գալիս այն ժամանակ, երբ հիվանդությունը բարդություն է առաջացրել, քանի որ այդ դեպքում անօգուտ է նրա տված դեղը, այլ երբ նոր է սկսում հիվանդությունը՝ բարդությունները կանխելու համար:

Սրանով է արտահայտվում Աստծո մեծագույն սերը՝ Իր իսկ ստեղծած, բայց և անհնազանդ ժողովրդի հանդեպ. «Քանզի Աստված այնքան սիրեց աշխարհը, որ մինչև իսկ Իր Միածին Որդուն տվեց, որպեսզի ով Նրան հավատում է, չկորչի, այլ ընդունի հավիտենական կյանքը» (տե՛ս Հովհ. Գ 16-18):

Սիրելինե՛ր, Հիսուս Քրիստոս, Աստծո ողջ իմաստությունն ու զորությունն ունենալով, ուղարկվեց մեզ փրկելու: Նա շրջում էր մարդկանց մեջ և Իր կատարյալ հրաշագործություններով հաստատում, որ Աստված է գործում երկրի վրա:

«Ես և Իմ Հայրը մի ենք, ով Ինձ տեսավ, տեսավ և Իմ Հորը, որ երկնքում է» (հմմտ. Հովհ. Ժ 30):

Այս խոսքերը վկայում են, որ Նա Տիրոջ Հոգով արդեն իսկ օծված էր և եկել էր մարդկությանը փրկելու հավիտենական մահվանից: Աստված ամենակարող է, և Նրա զորությունը երբեք չի սպառվում և տկարանում, հետևաբար այն միշտ գործում է երկրի վրա:

Մինչ Քրիստոս, մարդիկ բնության երևույթներին (արեգակ, լուսին, աստղեր, քամի և այլն) և իրենց պատրաստած ձեռակերտ կուռքերին էին պաշտում ու երկրպագում, սակայն երբ ճշմարիտ Աստծուն՝ Հիսուս Քրիստոսին տեսան, Նրան սկսեցին երկրպագել:

Մարդիկ զանազան մեղքերով հիվանդացել էին, և ոչ մի մարդ չէր կարող արդարանալ և փրկվել մեղքերից: Քրիստոս էր անմեղ Իր բնությամբ, որ եկավ փրկելու մարդկանց: Աստված միջնորդների (Հրեշտակներ) միջոցով չփրկեց աշխարհը, այլ ինքը՝ Տերը եկավ-սրբեց մեզ մեր մեղքերից և փրկեց հավիտենական կործանումից:

Սաղմոսն ասում է. «Երանի նրան, ում մեղքերին թողություն տրվեց» (հմմտ. Սաղմ. ԼԱ 1):

Նա ցույց տվեց Իր մեծագույն սերը՝ խաչի վրա թափելով Իր Սուրբ Արյունը, մեզ փրկեց մահվան գերությունից: Սերը բոլոր առաքինությունների աղբյուրն է: Այս առաքինության վրա է խարսխված Հիսուսի վարդապետությունը: Սա մեծ զոհաբերություն ու նվիրում էր հանդեպ մարդը, որն իրագործեց մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոս՝ Տիրոջ Սուրբ Հոգով լցված:

Նա Սուրբ Հոգու այս շնորհները հեղեց Իր առաքյալների վրա՝ տալով նրանց իշխանություն՝ ջախջախելու օձերի և կարիճների գլուխները: Ահա այդ շնորհներն էլ դարերի ընթացքում փոխանցվեցին մեզ՝ հոգևորականներիս:

Սիրելի՛ հավատացյալներ, այսօր Տիրոջ Սուրբ Հոգով օծված՝ կանգնած ենք ձեր առջև այս Ս. Խորանին և համարձակվում ենք մոտենալ Քրիստոսի Ս. Մարմնին ու Արյանը:

Այսօր էլ կարծես ավետարանական նույն այդ ժամանակները լինեն: Մարդիկ ուտում, խմում են, հուսահատված են, ո՛չ հավատում և ո՛չ վստահում են մեկմեկու և նույնիսկ չգիտեն, թե ինչ է լինելու իրենց վերջը: Սակայն Քրիստոս Իր գալստյամբ դարման եղավ մարդկության վերքերին, փրկեց գեհենի կրակից: Նա Իր փրկագործ տնօրինությամբ բազում բժշկություններ գործեց և վերացրեց մեզ տրված այն անեծքը, թե «թող անիծյալ լինի երկիրը» (Ծննդ. Գ 17), և մարդկանց հոգին փրկեց դժոխքից:

Մեղքը, որ մտել էր աշխարհ Ադամի միջոցով, Նա Իր Խաչով և Հարությամբ ավերեց դժոխքի դռները և հանեց, ազատեց մարդկանց հոգիներն այնտեղից: Սրանով մահը պարտվեց: Ինչպես Պողոս առաքյալն է ասում Օվսե մարգարեի հետևողությամբ. «Ո՞ւր է մահ, քո հաղթությունը, ո՞ւր է գերեզման, քո խայթոցը» (Ա Կորնթ. ԺԵ 55): Սրանով Հիսուս դատապարտեց աշխարհի իշխանին:

Ավարտելով մեր խոսքը, ասենք, որ Աստծո Որդին, Սուրբ Հոգով օծվելով, իջավ երկիր մեր փրկության համար, դրվեց մսուրի մեջ, խանձարուրով պատվեց: Շրջեց երկրի վրա և

բարոզեց, չարչարվեց, խաչվեց, երրորդ օրը հարություն առավ մեռելներից, իջավ և ավերեց դժոխքը, որով ազատեց մարդկանց սատանայի և մահվան ճիրաններից: Սրանով իսկ հաղթեց աշխարհի իշխանին: Նա լույս էր, որ ծագեց խավարի մեջ: Որպես Արեգակ Սուրբ Հոգու միջոցով մեզ լուսավորեց և առաջնորդեց անհավատությունից դեպի հավատք, տգիտությունից դեպի ճշմարիտ գիտություն, մեղքերից դեպի արդարության լույսը: Հիսուս փրկեց մարդկությանը, սատանայի՝ բանսարկուի բարկությունից ազատեց, աշխարհը փրկեց, բարի գործերի կատարումը պահանջեց. «Բարիք գործեցեք»:

Սաղմոսն ասում է. «Առաքեաց զԲան Իւր եւ բժշկեաց զնոսա, եւ փրկեաց զնոսա յապականութենէ իւրեանց» (Սաղմ. ՃԶ 20):

«Լոյսն ի խաւարի անդ լուսաւոր է եւ խաւար նմա ոչ եղեւ հասու» (Հովհ. Ա 5): Փառք քեզ, Աստված. «Զի տեսին աչք մեր զփառս Քո Տէր եւ փրկութիւն մեր»:

Մենք բոլորս այստեղ ենք եկել Տիրոջ Հոգով առաջնորդված, որովհետև, ըստ Պողոս առաքյալի, ոչ ոք չի խոստովանում Հիսուսին որպես Աստված, եթե Տիրոջ Հոգին նրա վրա չլինի (տե՛ս Հռոմ. Ը 1-10):

Ուրեմն, սիրելի հավատացյալներ, զորացե՛ք Սուրբ Հոգով և քաջությամբ զոտեպնդվեք աշխարհի փորձությունների դեմ, քանզի Նա, Ով Իր Հոգով ուժ տվեց Իր աշակերտներին՝ ասելով, թե այսուհետև մի՛ երկնչեք, որովհետև «Ես ձեզ հետ եմ բոլոր օրերում՝ մինչև աշխարհի վախճանը» (Մտթ. ԻԸ 20): Նա պիտի զորացնի ձեզ Իր Հոգով և առաջնորդի դեպի հավերժություն:

Եկե՛ք՝ հետևենք Պողոս առաքյալի խոսքին, թե Տիրոջ Հոգին ընդունելով մեր սրտերում՝ կլինենք Աստծո Որդիներ: Դրանով իսկ կլինենք ժառանգորդը երկնքի արքայության և ժառանգակից Քրիստոսին և հաղորդ կդառնանք Աստծո Որդու չարչարանքներին ու կարժանանանք Նրա Փառքին, քանի որ Նրանն է իշխանությունը, փառքը և պատիվը, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից:

Ուստի այս անհուն սիրո և գոհաբերության համար, որը պսակեց մեր այս հողեղեն բնությանը, եկե՛ք՝ բոլորս միանանք երկնային զորքերի, այսինքն՝ հրեշտակների և սրբերի դասին, բարեբանություն և փառք մատուցենք Հորը բարձունքներում՝ մարմնացյալ Իր Որդու և գործակից Սուրբ Հոգու հետ այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. Ամեն:

***«Շնորհք Տեառն Մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի եղիցի ընդ ձեզ եւ ընդ ամենեսեանդ. ամէն»:***

# ՊԱՏՄԱ - ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

*ԺՈՐԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ*
*Պատմական գիտությունների թեկնածու*

## ԱՐՏԱՇԱՏԸ ՀԱՅՈՑ ԴԱՐՁԻ ՆԱԽՕՐԵԻՆ ԵՎ ՀԵՏՈ

Արտաշատը հիմնադրվել է մ.թ.ա. 189/8 թթ. Արտաշես I-ի կողմից, որպես վերամիավորված Հայաստանի մայրաքաղաք, Արաքս և Մեծամոր գետերի միախառնման տեղում, Խոր Վիրապի 12 մեծ և փոքր բլուրների վրա, նրանցից հարավ և հարավ-արևելք ընկած հարթավայրում: Գտնվելով միջազգային առևտրական ճանապարհների խաչմերուկում, այն բուռն վերելք ապրեց և շուտով դարձավ Հայաստանի քաղաքական, տնտեսական և մշակութային խոշոր կենտրոնը, հելլենիստական աշխարհի մեծ ու նշանավոր քաղաքներից մեկը:

Արտաշատը, իբրև մայրաքաղաք, նաև կրոնական կենտրոն էր: Դա այդպես էր և՛ նախաքրիստոնեական շրջանում, և՛ քրիստոնեության տարածումից հետո ինչպես Հայաստանում (Վան, Արմավիր, Երվանդաշատ, Արտաշատ, Վաղարշապատ, Դվին և այլն), այնպես էլ մյուս երկրներում (Հռոմ, Անտիոք, Ալեքսանդրիա, Կոստանդնուպոլիս և այլն): Մայրաքաղաքների միջոցով էր իրականացվում պաշտոնական կրոնական քաղաքականությունը: Այն պետության գոյության և կայունության գրավականն էր:

Ըստ Մովսես Խորենացու (II, 49), Արտաշեսը Արտաշատում մեհյան կառուցեց (V) բլուր) և Բագարանից փոխադրեց Լուսին-Անահիտ-Արտեմիսի արձանը և բոլոր հայրենական կուռքերին, իսկ Արեգ-Միհր-Ապոլլոն-Հելիոսի արձանը կանգնեցրեց քաղաքից դուրս՝ ճանապարհին (Արաքսի աջ ափին), իբրև Հերմես: Տրդատ I-ի օրոք Տիրը համադրվեց Ապոլլոն-Հերմեսի հետ և այնտեղ կանգնեցվեց նաև Տիրի արձանը:

Մ.թ. առաջին դարերում Միջերկրականի արևելյան շրջաններում, Փոքր Ասիայում պաշտամունքային ուժեղ պայքար էր տեղի ունենում, որի արդյունքն առաջին հերթին լինում էր մի շարք աստվածների հատկանիշների համադրությունը մեկի մեջ: Որոշ աստվածների վերագրվում էին նոր ֆունկցիաներ, որոնք համընդհանուր դառնալու հակում էին ցուցաբերում: Դրանք բոլորը մեռնող և հառնող աստվածներն էին և նրանց հետ կապված աստվածամայրերը[1] (Կիբելա-Ատտիս, Իշտար-Թամուզ, Իզիդա-Օզիրիս, Աֆրոդիտե-Ադոնիս և այլն): Դա կապված էր բնության զարթոնքի, նրա ցիկլայնության հավատալիքների հետ: Սինկրետիզմը հեթանոսական կրոնի զարգացման տրամաբանական վախճանն էր: Հռոմեական կայսրության կրոնափիլիսոփայական միտքը՝ ստոիկները՝ Պլուտարքոս, նեոպլատոնականները, ավելի ու ավելի հաճախ էին դիմում միաստվածության գաղափարին[2]:

---

[1] Ժ. Դ. Խաչատրյան. Անահիտ դիցուհու պաշտամունքը ու պատկերագրությունը Հայաստանում և նրա առնչությունները հելլենիստական աշխարհի հետ. Պատմա-Բանասիրական Հանդես (ՊԲՀ), 1985, N 1, էջ 132:

[2] М. Н. Кубланов. Возникновение христианства, Эпоха, идеи, искания. Москва, 1974, с. 51; Г. А. Кошеленко. Фридрих Энгельс и проблемы изучения раннего христианства. Вестник древней истории (ВДИ), 1970, N 4, с. 33; Плутарх, Об Исиде и Осирисе. LXVII, ВДИ, 1977, N 4 (пер. Н. Н. Трухановского).

Քրիստոնեական գաղափարները նոր չէին Արևելքում: Աստծո որդու աշխարհ գալու և իր տանջանքներով աշխարհը և մարդկանց մեղքերը քավելու և փրկելու ուսմունքը բնորոշ էր հինարևելյան շատ կրոնների: Այդպիսին էին վերոհիշյալ մեռնող և հառնող աստվածների կրոնները: Քրիստոնեությունը ձևավորվեց արևելյան այդ միջավայրում և դրանց ազդեցության տակ: Մեռնող և հառնող աստվածների դեմ մղած անհաշտ պայքարի ընթացքում քրիստոնեությունը նրանցից շատ բան վերցրեց, որն էլ նպաստեց նրա հաղթանակին: Մեռնող և հառնող աստվածների տառապանքները ու տանջանքները շատ մարդկային էին: Նրանք մեռնում էին, որպեսզի նորից հարություն առնեին, պայծառ, երջանիկ կյանքի համար:

Քրիստոնեությունը, սակայն, ոչ մի կրոնի դեմ այդպիսի համառ ու ծանր պայքար չի մղել, ինչպես Միհրի: Միհրը կապված էր լույսի, երկնքի, արևի հետ, ուստի ամեն ինչի ստեղծողն ու արարիչն էր: Նրա պաշտամունքը տարածված էր Միջին Ասիայից, Հյուսիսային Հնդկաստանից մինչև Ատլանտյան օվկիանոս: Հռոմեացիները Միհրին ծանոթացան կիլիկյան ծովահենների դեմ Պոմպեոսի մղած պատերազմների ժամանակ:

Միհրն Արևմուտքում հայտնվում է, սակայն հռոմեացիների Հայաստան կատարած արշավանքներից հետո[3]: Տրդատը 65 թ. Հռոմում Ներոնին դիմում է. «Եկել եմ ես դեպի քեզ, իմ աստծուն, երկրպագելու քեզ, ինչպես Միթրային...»[4]: Նա Ներոնին մասնակից է դարձնում միհրական հաղորդությանը, քրմերի գաղտնի ճաշին (խորհրդավոր ընթրիք): Միհրի պաշտամունքն Արևմուտքում տարածվեց հատկապես, երբ Վեսպասիանոսի (70-79 թթ.) ժամանակ փոքրասիական, արևելյան (Կապադովկիա, Կոմագինեն, Պոնտոս և այլն) պրովինցիաներից, որտեղ միթրաիզմը շատ տարածված էր, սկսեցին հավաքագրել լեգիոններ[5]:

Հայաստանում համընդհանուր դառնալու հակում էին ցուցաբերում Անահիտն ու Միհրը: Անահիտը Հայաստան աշխարհի և Արտաշատ մայրաքաղաքի, իսկ Միհրը՝ Երվանդունիների, Արտաշեսյանների և Արշակունիների հովանավորն էր: Հայկական հեթանոսական պանթեոնում, որը գլխավորում էր Արամազդը, բացառիկ տեղ էր գրավում Անահիտը: Նրա պաշտամունքը տարածված էր Առաջավոր Ասիայում, Միջին Ասիայում, Իրանում, Փոքր Ասիայում: Սակայն ոչ մի տեղ նրան այդքան ունակություններ չվերագրվեց և այնքան ժողովրդականություն չվայելեց, ինչպես Հայաստանում: Անահիտի պաշտամունքի առջև նսեմանում էր անգամ Արամազդը:

Անահիտի մի շարք բարեմասնություններից ընդգծվել է հատկապես մեծ աստվածամոր, մեծ մոր, մեծ տիկնոջ հատկանիշը՝ պատկերելով նրան մանկան հետ միասին: Դրա մեջ ամփոփվել ու շեշտվել են նրա պտղաբերության, ամենայն հայոց աշխարհի հովանավորի ու պահապանի, արգասավորության հատկանիշները. «... մանաւանդ այսմ մեծի Անահտայ տիկնոջս, որ է փառք ազգիս մերոյ և կեցուցիչ, զոր և թագաւորք ամենայն պատուեն, մանաւանդ թագաւորն Յունաց. որ է մայր ամենայն զգաստութեանց, բարերար ամե-

[3] Н. А. Кун, Предшественники Христианства (восточные культы в Римской империи), Москва, 1922, с. 112-113.

[4] Դիոն Կասիոս, գիրք 63, գլ. 5 (թարգմ. Ս. Մ Կրկաշարյանի), Երևան, 1976:

[5] Н. А. Кун, Там же.

նայն մարդկան բնութեան. և ծնունդ է մեծին արին Արամազդայ»[6]:

Միհրի պաշտամունքը խոր արմատներ է թողել հայ իրականության մեջ[7]: Այդ են վկայում տարբեր վայրերում կառուցված տաճարներն ու սրբավայրերը: Միհրի պաշտամունքն ու առասպելն արտացոլվել է նաև հայկական ժողովրդական էպոսի մեջ, ուր Մհերը Միհրն է[8]: Էպոսում լույսի՝ Մհեր-Միհրի կռիվն է խավարի, վիշապների ու դևերի դեմ, աշխարհի փրկության և արդարության համար: Առյուծ Մհերը Առյուծ արևն է: Մհերը նույնպես ժայռածին Միհրի նման փակվում է վիթխարի քարաժայռի. Ագռավի քարի մեջ[9]:

Ուրարտացիների գլխավոր աստված Խալդեն ևս, Միհրի. Արայի, Արեգի նման. մեռնող և հառնող աստված էր: Ուստի, Վանի ժայռի «Խալդեի դուռը», որտեղից դուրս էր գալիս Խալդեն, հետուրարտական շրջանում դարձավ «Մհերի դուռ», և ժայռի դռնից այժմ դուրս էր գալիս Միհրը և այլն:

Միհրի հետ են կապվում Տիգրան III-ի դրամների B երեսի ոտքը բարձրացրած ձին, Տիգրան IV-ի և Էրատոյի դրամների վրա պատկերված ձիերը, կնիքների և կնքադրոշմների ձիու մեջքին և գլխին կանգնած թռչուններով պատկերները, Արտաշատից հայտնաբերված, տարբեր հորինվածքներով պատկերված Անահիտի և Միհրի կավե և բրոնզե արձանիկները, որոնք, ամենայն հավանականությամբ, նրանց պաշտամունքային պաշտոնական կերպարների, մոնումենտալ քանդակների ազատ ընդօրինակություններն են:

Ըստ ավանդության, I դ. երկրորդ քառորդին Հիսուսի աշակերտներ՝ առաջին առաքյալներ Սուրբ Բարթուղիմեոսը և Սուրբ Թադեոսը Հայաստան գալով հանդիպում են Արտաշատի բլուրներից մեկի վրա, որն իբրև սրբատեղի կոչվում է Օթեաց Խաչ: Ըստ պատմական ավանդության, այս առաքյալների հետ է կապվում Հայոց Եկեղեցու մի շարք նվիրական սրբությունների Հայաստան բերելը[10]:

Քրիստոնեությունը III դարում լայնորեն տարածված էր Եդեսիայում և Հռոմեական կայսրության արևելյան մարզերում, Փոքր Հայքում, Կապադովկիայում, Կիլիկիայում, ըստ որում՝ սոցիալական տարբեր խավերի մեջ: Այն բացահայտ կամ գաղտնի ձևով տարածված էր Փոքր Հայքի զինվորականության (Նիկոպոլսի հայկական լեգիոնների) շրջանում, քաղաքային բնակչության մեջ[11] և այլն: Եվ, ինչպես ճիշտ կերպով ենթադրվում է, եթե հռոմեական կայսրերի հալածանքները չլինեին, քրիստոնությունն այնտեղ կարող էր

---

[6] Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց (Քննական բնագիրը՝ Գ. Տեր-Մկրտչյանի և Ս. Կանայանցի), Երևան, 1983, § 53, էջ 40:

[7] Թ. Ավդալբեգյան, Միհրը հայոց մեջ, «Հայագիտական հետազոտություններ», Երևան, 1969, էջ 13-29:

[8] **И. А. Орбели**, Армянский героический эпос, Ереван, 1956, с. 120-127; **Թ. Ավդալբեգյան**, նշվ. աշխ., էջ 43:

[9] **Կ. Մելիք-Օհանջանյան**, Միթրա-Միհրը Սասնա Ծռերի մեջ. «Գրական-բանասիրական հետախուզումներ», գիրք Ա, Երևան, 1948, էջ 305-306; **Ժ.Դ. Խաչատրյան**, Իրանա-հայկական դիցաբանական աղերսների հարցի շուրջ, ՀՍՍՀ ԳԱ, Լրաբեր Հասարակական Գիտությունների (այսուհետև՝ ԼՀԳ), 1981, N 2, էջ 54-73:

[10] **Մ. Օրմանեան**, Ազգապատում, Կոստանդնուպոլիս, 1913, էջ 20-35:

[11] **Ե. Տեր- Մինասեան**, Հայոց Եկեղեցու յարաբերութիւնները ասորւոց եկեղեցիների հետ, Ս.Էջմիածին, 1908, էջ 1-62; Հրաչ Բարթիկյան, Քրիստոնեությունը Փոքր Հայքում. ազգային կրոնական և սոցիալ քաղաքական իրավիճակը նահանգում III դ. II կեսին (ըստ IV դ. Սրբոց վկայաբանության), ՊԲՀ, 2001, N 2, էջ 3-43:

պաշտոնական կրոն դառնալ նույնիսկ III դ. երկրորդ կեսին[12]:

Միաստվածության գաղափարը տարածված էր նաև Փոքր Հայքում: Դրա կրողներից էր Ս. Եվստրատիոսը՝ արավրակացի Տեր Հուսիկը[13]: Մեծ Հայքի ժողովուրդը դժվար թե անտեղյակ լիներ Փոքր Հայքում կատարվող իրադարձություններին: Բնականաբար այդ երկրները, և հատկապես Փոքր Հայքը, մշտական կապի մեջ էին Մեծ Հայքի հետ: Անկասկած այնտեղից առաքյալներ են եկել Մեծ Հայք քարոզելու: Ուստի III դ. կեսերին քրիստոնեությունը Մեծ Հայքում նույնպես նշանակալից հաջողությունների էր հասել: Դրան նպաստում էր նաև Սասանյան Պարսկաստանի քաղաքականությունը: 261-293 թթ. նրանք փորձում են Հայաստանում զրադաշտականություն տարածել: Արտաշատում փշրում են աստվածների և նախնիների արձանները: Այնտեղ՝ Բագավանում[14] և մյուս սրբավայրերում, ատրուշաններ են կառուցում: Այսինքն, Հայաստանում անուղղելի հարված է հասցվում սինկրետիկ հեթանոսական կրոնին:

Տրդատը 287-293 թթ. Հայաստանի հռոմեական հատվածի թագավորն էր, որի կենտրոնը Երեզայի մոտ գտնվող Չրմես ավանն էր: Նա ծանոթ էր այնտեղ տարածված, բայց դեռ չճանաչված քրիստոնեական կրոնին: Ներսեհը 293 թ. ստանում է Իրանի թագը և Տրդատին թողնում նաև Հայաստանի պարսկական մասի գահը: Մայրաքաղաքը տեղափոխվում է Վաղարշապատ: 298 թ., Մծբինի 40-ամյա հաշտության պայմանագրից հետո, Տրդատ III-ին անհրաժեշտ էր արագորեն վերականգնել երկրի տնտեսական ու ռազմական հզորությունը և ամրապնդել կենտրոնական իշխանությունը՝ հարևանների ակտիվացող ագրեսիվ քաղաքականությանը դիմակայելու համար: Ուստի պետք էր Հայաստանը միավորել նաև կրոնով: Նա մի շարք ռեֆորմներ անցկացրեց, այդ թվում՝ նաև կրոնական:

Զարգացող ֆեոդալիզմի պայմաններում հեթանոսական կրոնն այլևս ի վիճակի չէր միավորող դեր կատարել: Կրոնագաղափարախոսական ուսմունքներից դա կարող էր լինել միայն օրեցօր ուժեղացող, լայն տարածում ստացած քրիստոնեությունը, որի հաղթանակը դարձի նախօրեին արդեն ապահովված էր: «Քրիստոնությունը համամարդկային կրոն, հոգևոր արժեհամակարգ էր, ինչն էլ ընդունելի էր դարձնում ամենատարբեր սոցիալական խավերի և ժողովուրդների համար»[15]:

Որ քրիստոնեության ընդունումից հետո էլ մի որոշ ժամանակ մեծ են եղել հեթանոսական սովորություններն ու հավատալիքները, վկայում են նաև հնագիտական պեղումների արդյունքները: Արտաշատում և Վաղարշապատում հայտնաբերված IV-V դդ. կողքի պառկած, ծնկները ծալած անյուններով թաղումները թեև պակասում են, սակայն տարածում են ստանում մեջքի վրա պառկած դիրքով թաղումները, որոնց ուղղվածությունը միշտ չէ, որ արևմուտք-արևելք է: Դեռևս հանդիպում են ուղեկցող նյութեր: Արտաշատում նույնիսկ, այլ իրերի հետ միասին, հայտնաբերվել է Անահիտին պատկերող ոսկրե արձանիկ:

---

[12] Նույն տեղում, էջ 32:

[13] Նույն տեղում, էջ 38:

[14] Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց (աշխատ.՝ Մ. Աբեղեան եւ Ս. Յարութիւնեան), Տփղիս, 1913, գիրք Բ, ՀԷ, էջ 216:

[15] Կ. Միրումյան, Քրիստոնությունը հայ ժողովրդի պատմական ճակատագրում, «Հայոց Եկեղեցի և պետություն», Միջազգային գիտաժողովի նյութեր, Երևան, 2000, էջ 16:

Ուշագրավ է նաև, որ Արտաշատում և Վաղարշապատում, որոնք անմիջականորեն առնչվում են քրիստոնեության ընդունման հետ, քրիստոնեական և հեթանոսական թաղերը կատարվել են նույն դամբանադաշտում: Անհնարին էր, սակայն, ժողովրդի վերումները կատարվել են նույն դամբանադաշտում: Անհնարին էր, սակայն, ժողովրդի վերադարձը դեպի հետ: Քրիստոնությունը հեթանոսական կրոնների նկատմամբ ուներ մի շարք առավելություններ, և Գրիգոր Լուսավորչին հաջողվեց, աստվածապաշտության խոսքը սերմանելով՝ բոլորին տիրող ճանապարհի վրա կանգնեցնել[16]:

Քրիստոնեությունը պետական կրոն հռչակվելուց հետո, Մարիամ Աստվածածինն ընդունեց Անահիտին վերագրվող գրեթե բոլոր հատկանիշները: Անահիտական տաճարները վերածվեցին Աստվածածնի տաճարների, Անահիտական տոները՝ Աստվածածնի տոների, և այլն: Մարիամ Աստվածածինն ու Քրիստոսը սկսեցին պատկերվել նույն ձևով, ինչպես Արտաշատից հայտնաբերված Անահիտի՝ մոր ու մանկան կավե արձանիկները: Այսինքն, Անահիտի՝ իբրև կանացի բոլոր առաքինությունների մոր պատկերագրությունը միանգամայն համապատասխանում էր ու հարմար էր նոր կրոնի Տիրամոր կերպարին:

Միհրը արդարության, կարգ ու կանոնի երաշխավորն էր, ծագող արևի և փրկարար լույսի աստվածը և այլն: Քրիստոսն այդ բոլոր հատկանիշներով փոխարինեց Միհրին: Հայկական քրիստոնեական շարականները՝ արեգակի, արդարության և լույսի փառաբանման վերաբերյալ, կապված են Միհրի հետ և արտացոլում են նրա պաշտամունքը Հայաստանում: Հիշենք, օրինակ, Ներսես Շնորհալու[17] (1098-1173) «Առավոտ լուսո»-ն:

Միհրը նաև միջնորդ էր աստծո և մարդկանց միջև ու պայքարում էր չարի դեմ: Նույնն էր Միհրական, Ատտիսի, քրիստոնեական հացով և գինով հաղորդվելը (քրմերի սրբազան ճաշն ու Քրիստոսի խորհրդավոր ընթրիքը), որտեղ արտասանվում էր հաստատված աղոթքի բանաձևը և այն ուղեկցվում էր երգերով, մկրտությունը, աստծու հարության ծեսը՝ արյունով ցողվելը (իրենց, աստվածների կուռքերը, հողը) և այլն:

Միհրի ծննդյան օրը, դեկտեմբերի 25-ին Քրիստոսի ծննդյան օրն արևմտյան Եկեղեցում, Հռոմի Պապը կրում է նույն խույրը, ինչ որ Ատտիսի գլխավոր քուրմը (արխիգալլը): Եկեղեցական գործիչ ու մատենագիր Ավգուստինոս Երանելին (IV-V դդ.) հիշատակում է Ատտիսի քրմի խոսքերը, թե «փռյուգիական գլխարկով աստվածը (այն է՝ Ատտիսը) նույնպես քրիստոնյա է»[18]:

Քաղաքական իշխանության թուլացման պայմաններում Եկեղեցին սկսել էր մեծ դեր խաղալ Հայաստանի գաղափարաքաղաքական, հոգևոր ու մշակութային կյանքում: Երկրորդ խնդիրը՝ Եկեղեցու ազգային բնույթը կարող էր ապահովել ժամասացությունը ազգային լեզվով կատարելը: Այդ գիտակցությամբ էլ Կաթողիկոս Սահակ Պարթևի ջանքերով, Վռամշապուհ թագավորի օգնությամբ այդ կարևոր խնդիրը, Աստծո շնորհով, հաջողությամբ իրագործեց Մեսրոպ Մաշտոցը, ում ստեղծած հայերեն Այբուբենը (405 թ.) քրիստոնեության ամենամեծ պարգևն էր հայ ժողովրդին:

---

[16] Ագաթանգեղոս, § 782:

[17] Հին և միջնադարյան բանաստեղծության քրեստոմատիա, Երևան, 1979, էջ 86:

[18] И. А. Кун, Ук. соч., с. 58, 147, 152, А. Б. Ранович. О раннем христианстве. Москва, 1959, с. 72-73; Մ. Ն. Բոտվիննիկ, Մ. Ա. Կոգան, Մ. Բ. Ռաբինովիչ, Բ. Պ. Սելեցկի, Դիցաբանական բառարան, Երևան, 1985, էջ 31; Գր. Ղափանցյան, Արա Գեղեցիկի պաշտամունքը, Երևան, 1945, էջ 61:

Մեսրոպ Մաշտոցը գրերի գյուտից հետո վերադարձավ Հայաստան և մոտեցավ Արտաշատ մայրաքաղաքին, Վռամշապուհ թագավորը, նախարարների հետ միասին, դիմավորեց նրան Արաքսի ափին, Տափերական կամրջի մոտ, ինչպես Տիրանն իր ժամանակին դիմավորել էր Հուսիկ Կաթողիկոսին, որից հետո ուրախության ձայներով, հոգևոր երգերով և օրհնություններով վերադարձան մայրաքաղաք և մեծ տոնախմբություն կազմակերպեցին[19]: Ծավալվեց հսկայական թարգմանչական աշխատանք: Թարգմանվեց Աստվածաշունչը և այլ աստվածաբանական ու փիլիսոփայական գրականություն[20]: Ծիսակատարությունները սկսեցին կատարվել հայերեն:

Գրերի գյուտը խթանեց քրիստոնեության տարածմանն ու վերջնական հաղթանակին, Հայաստանում քրիստոնեության ընդունման վերաբերյալ առաջին գրավոր շարադրանքը պատկանում է Ագաթանգեղոսին, ում պատմությունում Գրիգոր Լուսավորիչը Քրիստոսի, այսինքն մեռնող (տանջվող) և հառնող աստուծո հերոսի հատկանիշներ ունի[21]:

«Զի և ձեր իսկ արկեալ զիս ի խոր վիրապն, յանհնարին տեղին մահուան, և եղեալ անտի ողջանդամ կամօքն Աստուծոյ»: «Վասնզի զիս ապրեցոյց ի մահուանէ, որ յաչս ձեր մեռեալ համարեալ էի, որպէս և դուք իսկ ձեզէն վկայէք ինձ. և դուք զի մեռեալ էիք ի մեղս ձեր՝ ահաւադիկ մեռեալքդ ի ձեռն մեռելոյս կենդանանայք»[22]:

Գրիգոր-Գրիգորիուս հունարեն նշանակում է արթուն, այսինքն արթնացող, հարություն առնող[23]: Քանի որ Ս. Գրիգորն անարգել էր Անահիտ աստվածուհուն (կրոնական հանցագործ էր), ուստի նրան ուղարկում են Արտաշատ մայրաքաղաք, Անահիտի տաճարի տարածքում գտնվող ժայռի մեջ եղած հորը (բանտը) գցելու, սոսկալի «Խոր Վիրապ»[24] (= մահը), որտեղ նրան շրջապատում են օձերը և կարիճները:

Երկրում սկսվում են դժբախտություններն ու հիվանդությունները: Նրա հակառակորդ Տրդատ արքան ստանում է խոզի (Վարազի) կերպարանք: Արքայաքույր Խոսրովիդուխտը և Գրիգորին հաց տվող պառավ կինը փրկում են Գրիգորին: Վերջինս բուժում է արքային, դժբախտությունները ավարտվում են: Հենց Խոր Վիրապի ժայռափոսից պիտի դուրս գար Գրիգորը, ինչպես Միհրը, և քրիստոնության տարածման միջոցով լուսավորեր աշխարհը, որը խորհրդանշելու էր նոր կրոնի հաղթանակը հեթանոսության նկատմամբ:

Ըստ Ագաթանգեղոսի[25], Գրիգոր Լուսավորիչն Արտաշատում և ավերված մյուս տաճարների տեղում խաչեր է կանգնեցնում, որին պետք է պաշտեին կուռքերի փոխարեն[26] և այդ վայրերում կառուցեին եկեղեցիներ:

IV դարում Արտաշատը դեռևս մնում էր իբրև պաշտոնական մայրաքաղաք և կրոնա-

---

[19] Կորյուն, Վարք Մեսրոպ Մաշտոցի, աշխատասիրությամբ Ա. Ա. Մաթևոսյանի, Երևան, 1994, էջ 91-92:

[20] Ն. Ադոնց. Հայացած Աստվածաշունչը և անոր պատմական տարողությունը, ՊԲՀ, 2002, N 3, էջ 4:

[21] Գր. Ղափանցյան, Նշվ.աշխ., էջ 61-62: Ն. Ադոնց. Հին հայոց աշխարհայացքը. «Պատմական ուսումնասիրություններ», Փարիզ, 1948, էջ 223-293:

[22] Ագաթանգեղոս, § 251, էջ 138:

[23] Գր. Ղափանցյան, նույն տեղում:

[24] Ագաթանգեղոս, § 136, VI բլրի վրա:

[25] Ագաթանգեղոս, § 841:

[26] Մովսես Խորենացի, գիրք Բ, գլ. ՁԶ :

կան կենտրոն: Այդ մասին վկայում է Փավստոսը[27]՝ նշելով, որ Տիրան թագավորը «...ընդ առաջ ելանէր նմա ի դաշտն յայն կոյս գետոյն Տափերն կամրջի. ամենայն բանակօքն բազմութեամբք: Ապա ողջոյն տուեալք զցանկալի ողջոյնն միմեանց. անցեալ ընդ կամուրջն Տափերայ. մտեալ ի քաղաքն մեծ յԱրտաշատ. յեկեղեցին դառնային և նստուցանէին զցանկալի մանուկն Յուսիկ յաթոռ հայրապետական»:

Այս կարծիքին են նաև Գիլցերը[28] և Լինչը[29]: Դա հաստատում է նաև Ագաթանգեղոսի վերոհիշյալ վկայությունը՝ Գրիգոր Լուսավորչի կողմից Արտաշատում, Խոր Վիրապում, Անահիտի տաճարի տեղում խաչ կանգնեցնելու և եկեղեցի կառուցելու մասին: Շապուհ II-ը 368 թ. երբ Հայաստանի մյուս քաղաքների թվում ավերում է նաև Արտաշատը, քանդում է Խոր Վիրապի (VI բլուր) եկեղեցին և այնտեղ կառուցում ատրուշան: Վերջինս, ըստ Փավստոսի, ավերում է սպարապետ Մուշեղ Մամիկոնյանը[30]: Դրանից հետո Արտաշատն աստիճանաբար լքվում է: Կյանքը շարունակվում է VI բլրի վրա (կրոնական կենտրոն) և նրանից հարավ և արևելք ընկած հարթավայրում: Վերականգնվում են VI բլրի պարիսպները, որոնք թեև մտնում էին քաղաքի պաշտպանական ընդհանուր համակարգի մեջ, սակայն մյուս բլուրների նման իրենցից ներկայացնում էին առանձին ամրոց[31]: Այդ են վկայում նաև 1999 թ. VI բլրի վրա կատարված պեղումների արդյունքները:

Մուշեղ Մամիկոնյանը և Ներսես I Կաթողիկոսը զորքի հետ միասին 369 թ. մտան Հայաստանի անկախության և հզորության խորհրդանիշ Արտաշատ մայրաքաղաք և Պապին հռչակեցին Մեծ Հայքի թագավոր[32]:

Հայտնի է, որ պաշտամունքային վայրերը չեն փոխվում: Քրիստոնեությունը պետական կրոն հռչակելուց հետո, համաձայն Ագաթանգեղոսի, Գրիգոր Լուսավորիչն ու Տրդատը զորքերի հետ միասին, առաջինն ուղևորվում են Արտաշատ՝ ավերելու Անահիտի և Ապոլլոն-Տիրի տաճարը[33]: Եկեղեցիները կառուցվեցին առաջին հերթին թագավորական պաշտամունքի ութ տաճարների տեղերում, առաջիններից մեկը՝ Արտաշատում[34]:

Ինչո՞վ փոխարինվեցին Գրիգոր Լուսավորչի կողմից կործանված հեթանոսական աստվածների փայտե, քարե, պղնձե, արծաթե և ոսկե՝ ճարտար ձեռքերով կերտված արձանները[35]: Ենթադրվում է, որ Քրիստոսի խաչված պատկերը կրող խաչն անհասկանալի կլիներ նորադարձ հավատացյալներին[36], իբրև փաստ վկայակոչվում է վաղ միջնադար-

---

[27] Փավստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց, Երևան, 1987, Երրորդ դպրություն, գլ. ԺԲ, էջ 50:

[28] Երվ. Տեր-Մինասյան, նշվ. աշխ., էջ 25, ծան. 1:

[29] Հ. Ֆ. Լինչ, Հայաստան. Ուղևորություններ և ուսումնասիրություններ, Թիֆլիս, 1913, էջ 189-250: Վրթանեսի մահից հետո Հուսիկը բարձրացավ հայրապետական գահ, և արարողությունը կատարվեց Արտաշատում:

[30] Փավստոս Բուզանդ, Հինգերորդ դպրություն, գլ. Ա:

[31] Ժ. Դ. Խաչատրյան, Հայաստանի անտիկ շրջանի պաշտպանական կառույցները, ՊԲՀ, 1987, N 4, էջ 167-168:

[32] Հայ ժողովրդի պատմություն, հ. II, էջ 102:

[33] Ագաթանգեղոս, § 78:

[34] Նույն տեղում, § 841:

[35] Նույն տեղում, § 71:

[36] Հ. Պետրոսյան, Խաչելության ազգային ընկալումն ու պատկերագրությունը վաղմիջնադարյան Հայաստանում, «Հայաստանը և Քրիստոնյա Արևելքը», Երևան, 2000, էջ 189:

յան (IV-VII դդ.) քարձրաքանդակներում խաչելության տեսարանի բացակայությունը: Նշվում է, որ այն փոխարինվել է «Աբրահամի զոհաբերության տեսարանով, Քրիստոսի դիմապատկերը կրող խաչով կամ էլ խաչավոր լուսապսակ ունեցող դիմապատկերով»[37]: Քրիստոսի խաչի նշանը նույնպես չի ընդունվել, ժողովուրդն ասել է, որ «տաշած փայտ է, ոչ ճարտար ձեռքի գործ»[38], թե այդպիսի փայտով անտառը լիքն է:

Մինչդեռ, ինչպես վերը նշեցինք, հեթանոս մեռնող և հառնող աստվածների տաճարները ու տանջանքները վաղուց էին հայտնի մարդկանց, և ըստ այդ ընկալման նրանց համար Քրիստոսը նման մի աստված էր, որը մոռացության էր մատնելու մեռնող և հառնող հեթանոս աստվածներին: Այս առումով մի հետաքրքիր վկայություն ունի Բուզանդը. «Սա երթեալ կատարէր անդ, ըստ հանապազ սովորութեանն, զՏեառնն զխաչական զփրկութեանն զպատարագն գոհութեան, զհաղորդութիւն չարչարանաց յիշատակի, զկենդանարարն և զազատիչն զմարմին և զարիւն Աստուածորդոյն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Քանզի այնպէս իսկ սովոր էին եպիսկոպոսապետքն Հայոց, հանդերձ թագաւորօքն և մեծամեծօքն, նախարարօքն և աշխարհախումբ բազմութեամբք պատուել զնոյն տեղիս, որ յառաջ էին տեղիք պատկերաց կռոցն, և ապա յանուն աստուածութեանն սրբեցան, և եղեն տուն աղօթից և տեղի ուխտից ամենայն ումեք: Մանաւանդ յայն ի գլխաւոր տեղին յեկեղեցին ժողովել ի յիշատակ սրբոցն՝ որ էին անդ, կատարել անդ ամի ամի եւթն անգամ. որք զնոյն ունէին սովորութիւն առաւել ևս ի մեծի մարգարէարան մատրանն Յովհաննու: Սոյնպէս և յառաքելարանս տեառնաշակերտացն, սոյնպէս և ի վկայարանս մարտիրոսացն ամի ամի ժողովեալք, զօր տօնին յիշատակի նոցա վարուց գործոց կենաց քաջութեան խմբեալ՝ ցնծային»[39]:

Ուշագրավ են նաև Ագաթանգեղոսի վկայությունները. «որ վասն զի սիրեցին մարդիկ պաշտել զպատկերս մարդադէմս փայտագործս ճարտարագործս հիւսանց՝ եղև ինքն պատկեր մարդկան, զի զպատկերագործսն և զպատկերասէրսն և զպատկերապաշտսն յիւր պատկեր աստուածութեանն հնազանդեցուսցէ»[40]:

Այսպիսով, ըստ Բուզանդի, թագավորը, Հայոց եպիսկոպոսապետը, մեծամեծների, նախարարների և ժողովրդի հետ միասին, այցելում էին արքունական պաշտամունքի հեթանոսական գլխավոր վայրերը (տաճարները), որտեղ կանգնեցված են եղել հեթանոսական աստվածների կուռքերը, և կատարում են այժմ արդեն Քրիստոսին նվիրված այն նույն ծեսերը, որոնք քնորոշ էին մեռնող և հառնող աստվածներին: Այսինքն պաշտամունքային վայրերը չեն փոխվել, փոխվել են պաշտվող անունները:

Համաձայն Ագաթանգեղոսի, խաչերը խորհրդանշել են մարդկության համար Քրիստոսի և նահատակների չարչարանքները: Խաչը նույնացվել է Քրիստոսի հետ, դարձել նրա խորհրդանիշը, խաչը ներկայացվել է որպես փրկիչ: Խաչը ձեռք բերեց կենաց ծառի

---

[37] Նույն տեղում:

[38] Մովսես Խորենացի. գիրք Բ, գլ. ՁԶ:

[39] Փավստոս Բուզանդ, 3-րդ դպրություն, գլ. Գ, էջ 51:

[40] Ագաթանգեղոս, § 80, էջ 54, տե՛ս նաև §§ 82, 83, 747, 749, 751, 769:

հատկանիշներ: Այն հարստացվեց բուսական, ազգային զարդերով[41]: Տաճարներում զոհասեղանները փոխարինվել են խաչերով, որոնց արդեն կուռքերի փոխարեն պետք է պաշտեին:

Այսինքն, ինչպես հեթանոսական տաճարներում, աստվածների արձանները կանգնեցվում էին ամենատեսանելի ու մատչելի տեղերում, որպեսզի հավատացյալը կարողանար հեշտությամբ մոտենալ, երկրպագել ու աղոթել, նույն սկզբունքով եկեղեցիներում կանգնեցվել են խաչերը: Գրիգոր Լուսավորիչը, օրինակ, Էջմիածնի տաճարի կենտրոնում կանգնեցրեց խաչը «... ի տեղին ցուցեալ հրեղէն սեանն ոսկիակալ խարսխին, և անդէն կանգնեցրեց բարձր քաղաքորմով փակեալ զտեղին ի պատիւ, և դրամբք և դռնափակօք ամրացուցեալ, և կանգնեալ և անդ զնշան փրկական խաչին. զի առհասարակ հասեալ ամենայն որք յայն տեղի՝ ամենազօր Արարչին Աստուծոյ երկրպագեալ ծունր կրկնեսցեն»[42]: Կամ Մցխեթայի Ջվարիի եկեղեցու կենտրոնում բարձրացող խաչը, որը վրացական քրիստոնեական Եկեղեցու ամենամեծ սրբությունն[43] էր:

V դարը շրջադարձային եղավ Հայոց Եկեղեցու և ժողովրդի կյանքում: Դարասկզբին ստեղծվեց հայոց Այբուբենը, ծավալվեց թարգմանչական և ուսումնական լայն գործունեություն, Հայոց Եկեղեցին անկախացավ, դարձավ ազգային, Եկեղեցին ստանձնեց երկու մասի բաժանված երկրի հայության միավորողի, համազգային շահերի արտահայտչի ու պաշտպանի դերը, հավատի համար մղվող պայքարը նույնացվեց քաղաքական անկախության համար մղվող պայքարի հետ:

Կրոնափիլիսոփայական միտքը հասունացավ, մշակեց ու կանոնակարգեց հավատի խորհրդանշանները, եկեղեցական ողջ արարողակարգը, տաճարների կառուցման սկզբունքները, քրիստոնյայի թաղման ձևն ու ծեսը, խաչակնքելու կարգը և այլն: Ծաղկեց, նոր վերելք ապրեց հելլենիստական մշակույթը, հայերը թարգմանությունները կատարում էին հունարենից, գնում էին սովորելու Փոքր Ասիա, Սիրիա, Ալեքսանդրիա, Հունաստան: Մեսրոպ Մաշտոցն ինքն էլ հելլենական կրթություն ուներ: Փայտաշեն եկեղեցիները քարաշեն դարձան, տաճարները վերակառուցվեցին, Հայաստանում կառուցվեցին հրաշակերտ նոր եկեղեցիներ ու կոթողներ, ուստի V դարն իրավամբ անվանվեց «Ոսկեդար»:

V դ. կեսերին, հատկապես Հազկերտ II-ի օրոք (439-457 թթ.), կրկին սաստկացան քաղաքական և կրոնական ճնշումները Հայաստանի վրա, ժողովրդի հալածանքները: Պարսիկները գրավել էին Հայաստանը, Արտաշատում նորից ատրուշան է կառուցվում: Ապստամբած ժողովուրդն ավերում է պարսիկների գրաված բերդերն ու ավանները, նախ մեծ Արտաշատը՝ իր ավաններով, հրկիզում է «կրակի պաշտամունքի տեղերը», գրավում են ատրուշանների սարք ու կարգը, բերում-դնում են եկեղեցում և սուրբ քահանաների միջոցով նվիրում ի ծառայություն տերունական սեղանի:

Արտաշատում և մյուս վայրերում ատրուշանների տեղում կանգնեցնում էին նորից

[41] Н. М. Токарский, Джрвеж, II, Вохджаберд, Ереван, 1964, рис. 16, 24; Դաւթի Անյաղթ փիլիսոփայի Ներբողեան ի Սուրբ Խաչն Աստուածընկալ՝ «Դաւթի Անյաղթ փիլիսոփայի մատենագրութիւնք եւ թուղթ Գիւտայ Կաթողիկոսի առ Դաւթի», Վենետիկ, 1932, էջ 18; Հ. Պետրոսյան, նշվ. աշխ., էջ 190-192:

[42] Ագաթանգեղոս, § 770, էջ 432:

[43] Ս. Խ. Մնացականյան, Ջվարթնոցը և նույնատիպ հուշարձանները, Երևան, 1971, էջ 18:

«Քրիստոսի փրկական խաչը»[44]: Դրանից հետո Արտաշատն ավերում է Վասակը: Հազկերտ II-ին պատասխան գրելու համար (449 թ.), հոգևորականները, նախարարները ու ժողովուրդը, ինչպես նաև պարսկական զորքերին ընդառաջ գնալու համար (դեպի Ավարայր), հայկական զորքերը հավաքվում են «թագավորանիստ վայր Արտաշատում»[45]:

Ըստ Վարդան Արևելցու, Վահան Մամիկոնյանը մարզպան դառնալուց (485 թ.) հետո կառուցել է Շապուհ II-ի կողմից 360-ական թվականներին ավերված Արտաշատի եկեղեցիները[46]: Դրանք, ըստ երևույթին, կրկին ավերվել էին 532-572 թթ. ընթացքում, երբ Հայաստանին տիրելու համար մղվող պարսկաբյուզանդական մրցակցության պայմաններում երկիրը ոտնատակ էր արվում և՛ մեկի, և՛ մյուսի զորքերի կողմից: Ըստ որում, երկու երկրներն էլ կրոնական անհանդուրժողականություն էին ցուցաբերում հայերի նկատմամբ:

Ասողիկի վկայությունից երևում է, որ պարսիկները Դվինում, հավանաբար նաև Արտաշատում (Խոր Վիրապում) և այլ վայրերում ատրուշաններ են կառուցել: Այս քաղաքականությունն էլ պատճառ է դառնում, որ հայերը 572 թ. կրկին ոտքի կանգնեն պարսիկների դեմ՝ Վարդան Մամիկոնյանի գլխավորությամբ[47]: 577 թ. Բյուզանդիային հաղթելուց հետո, պարսիկները նորից գրավում են Հայաստանը, բայց խոստանում են այլևս ատրուշաններ չկառուցել: Արտաշատը VII դ. կաթողիկոսարանի դաստակերտներից մեկն էր[48]:

Ասողիկը[49] հաղորդում է, որ Ներսես III Շինարար Կաթողիկոսը (641-661 թթ.) Խոր Վիրապում եկեղեցի է կառուցել, որը տեսել (985 թ.) և նկարագրել է արաբ մատենագիր Ալ-Մուկադասին: Ըստ նրա՝ դա եղել է «... սպիտակ տաշված քարերից շինած, ութ սյուների վրա (նստած) գմբեթաձև գլխարկի նմանվող մի եկեղեցի, որի մեջ գտնվում է Մարիամ կույսի նկարը... որ դռնից էլ (ներս) մտնես (եկեղեցի), դու կտեսնես Մարիամ կույսի պատկերը»[50]:

Այս վկայության համաձայն, եկեղեցին կառուցված է եղել սպիտակ քարից, այսինքն՝ կրաքարից, որը անտիկ դարաշրջանին բնորոշ շինաքարն է (Արտաշատ, Գառնի, Դվին, Բենիամին, Հողմիկ, Ջեռնակի թեփե, Սիսիանի իշխանական դամբարան և այլն): Կրաքարը լայնորեն օգտագործվել է Արտաշատի պարիսպների, պալատական, տաճարական, կոմունալ և այլ հասարակական շինությունների կառուցման համար: Շատ հնարավոր է,

---

[44] Եղիշե, էջ 64, 73, 117:

[45] Նույն տեղում:

[46] Հ. Շահխաթունեան, Ստորագրութիւն կաթողիկէ Ս. Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, հ. II, Էջմիածին, 1842, էջ 278; Մ. Հասրաթյան, Հայոց դարձի նախակիրք սրբավայր Խոր Վիրապի վանքը. «Հայոց սրբերը և սրբավայրերը», Երևան, 2001, էջ 184:

[47] Վարք եւ վկայաբանութիւնք սրբոց. հատընտիր քաղեալք ի ճառընտրաց. հ. I-II, Վենետիկ, 1874, էջ 125; Ստեփաննոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական, Ս.Պետերբուրգ, 1885, էջ 84; ՀԺՊ, հտ. II, էջ 250-257:

[48] ՀԺՊ, հտ. II, էջ 322:

[49] Ասողիկ, նշվ.աշխ., էջ 80:

[50] **Караулов**, Сведения арабских писателей, Сборник материалов по описанию местностей и племен Кавказа, вып. XXXVIII, Тифлис, 1908, էջ 16: Հայերեն թարգմանությունը վերցված է Ս. Խ. Մնացականյան, Զվարթնոցը և նույնատիպ հուշարձանները, Երևան. 1971, էջ 18-19:

որ եկեղեցու կառուցման ժամանակ օգտագործվել են Արտաշատի ավերված շինությունների մշակված քարերը: Տուֆի հետ միասին, կրաքար է շարվել նաև XVII դ. վերակառուցված Խոր Վիրապի եկեղեցու պատերի մեջ:

Ս. Խ. Մնացականյանը գտնում է, որ Ալ-Մուկադասու նկարագրած եկեղեցին «ութ սյուների վրա բարձրացող կենտրոնագմբեթ կառուցվածք է, որի արևելյան աբսիդում եղել է Աստվածածնի ... խճանկարը», որ այն ունեցել է բազմանիստ միասնական ծավալներ[51]: Նա, Ալ-Մուկադասու նկարագրության հիման վրա, կատարել է Խոր Վիրապի եկեղեցու վերակազմությունը, և նշում է, որ այն նախորդել է Զվարթնոցի տաճարին[52]:

Խոր Վիրապի Ներսեսաշեն եկեղեցու մասին հիշատակում են նաև Հովհաննես Դրասխանակերտցին (կթղ. 898-929 թթ.)՝ «շինէ տաճար սրբութեան և ի վերայ վիրապի սրբոյն Գրիգորի...»[53], և Կիրակոս Գանձակեցին (մահացել է 1271 թ.): Վերջինս նշում է նաև, որ տաճարն ավերել են տաճիկները. «շինեաց և զՎիրապն՝ գտեղիս Սրբոյն Գրիգորի. շինեաց և զուրբն Գրիգոր, զզարմացուցիչն տեսողաց, որ յետոյ աւերեցաւ ի տաճկաց»[54]:

920-ական թվականներին Խոր Վիրապը դառնում է պատերազմի թատերաբեմ, որտեղ Աբաս թագավորը և Վասպուրականի Գագիկ Արծրունին փայլուն հաղթանակ տարան արաբների[55] դեմ: Բյուզանդական բանակը 1074 թ. հաղթեց Դվինի ամիրա Աբու-ալ-Ասվարին և գրավեց Սուրմառիի, Ամբերդի, Խոր Վիրապի ամրոցները[56]: Նշանակում է՝ Խոր Վիրապի պարիսպները դեռևս կանգուն են եղել:

Կիրակոս Գանձակեցու վերոհիշյալ վկայության համաձայն, Խոր Վիրապի եկեղեցին և պարիսպները ավերվել են տաճիկների կողմից: Դա կարող էր տեղի ունենալ 1050-ական թվականներից մինչև XII դ. վերջը ընկած ժամանակահատվածում, որովհետև XII դարի վերջին և XIII դարի սկզբին հայ-վրացական միացյալ զորքերը Հայաստանն ազատագրեցին թուրք-սելջուկներից, որից հետո այն անցավ Իվանե Զաքարյանի իշխանության տակ:

Վերջինիս հրամանով Արարատյան նահանգի առաջնորդ տեր Դավիթը[57], որի օրոք թեմի կենտրոնը նշանավոր սրբավայր Խոր Վիրապն էր, Իվանեի աթաբեկության տարիներին (1212-1227 թթ.) Խոր Վիրապում կառուցում է Կաթողիկե եկեղեցին և վանական համալիրի պարիսպները. «Ըստ հրամանի Ա(ստծո)յ ժամանակի Աթապակ Իվանէի ես մեղապարտս Դաւիթ, առաջնորդ Արարատեան նահանգի, շինեցի զսուրբ Կաթողիկէն ի Վիրապին եւ շրջանակի պարսպեցի...»[58]:

Խոր Վիրապի ամենավառ շրջանը կապված է ուսուցչապետ Վարդան Արևելցու (մահացել է 1271 թ.) գործունեության հետ, որն այստեղ հիմնում է բարձր տիպի դպրոց՝ վար-

---

[51] Նույն տեղում, էջ 20:

[52] Նույն տեղում, էջ 110, 222, գծ. 52:

[53] Յովհաննու Կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմութիւն Հայոց, Երևան, 1996, էջ 86:

[54] Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Երևան, 1961, էջ 61:

[55] Թովմայի վրդ. Արծրունւոյ Պատմութիւն տանն Արծրունեաց, Տփղիս, 1917, էջ 299-302: ՀԺՊ, հտ. III, Երևան, 1976, էջ 63:

[56] Georgius Cedrenus, Historiarum compendium, Bonnae, II, 1839, p. 561; ՀԺՊ, հտ. III, էջ 430:

[57] Տեր Դավիթը Վանստանի վանքի հիմնադիրն էր և վանահայրը:

[58] Ashk. Kalantar, The Mediaeval Inscriptions of Vanstan, Armenia, Neuchatel- Paris, 1999, p. 12-13.

դասախոսարան: Նա Կայենաբերդից Խոր Վիրապ է տեղափոխվում 1257-1258 թթ. և կրթական աշխատանքի հետ ծավալում նաև մատենագրական բուռն գործունեություն[59]: Մեծ հայրենասեր, մտածող պատմիչին Գրիգոր Բալուեցին կոչում է «հռչակաւոր իմաստասէր վարդապետն Հայոց Վարդան»: Դպրոցը 1260 թ. արդեն մեծ համբավ էր վայելում և համարվում էր «տիեզերահռչակ», որտեղ դասավանդում էին ոչ միայն աստվածաբանություն, այլև հունական անտիկ փիլիսոփայություն, տրամաբանություն, ճարտասանություն, քերականություն: Խոր Վիրապ սովորելու էին գալիս Հայաստանի և Կիլիկիայի տարբեր գավառներից:

Այստեղ ուսանել են շուրջ 40 աշակերտներ[60], այդ թվում՝ Գլաձորի համալսարանի հիմնադիր, ուսուցչապետ Ներսես Մշեցին, որը Վարդան Արևելցու մահից հետո փոխարինեց նրան և դպրոցը բարձրացրեց նոր աստիճանի, Հովհաննես Երզնկացին (Պլուզ), Գևորգ Սկևռացին (Լամբրոնացի), Գրիգոր Բալուեցին, Սարգիսը, Տիրացուն և այլոք: Վարդան Արևելցին 1267 թ. այստեղ ավարտել է իր նշանավոր «Պատմութիւն տիեզերական» կամ «Հաւաքումն պատմութեան» աշխատանքը, Խոր Վիրապում է գրվել նաև նրա «Աշխարհացոյց»-ը (1268-1270 թթ.) և Դանիելի մարգարեության «Մեկնութիւն»-ը[61]: Թեև Վարդան Արևելցու մահից հետո Խոր Վիրապի դպրոցի հետագա գործունեության վերաբերյալ տեղեկություններ չկան, սակայն մեզ հայտնի է տարբեր ժամանակներում (XIII, XIV, XVI-XVIII դարեր) այնտեղ գրված 12 ձեռագիր[62]:

Հետևաբար, չնայած ժամանակ առ ժամանակ ծայրաստիճան վատթարացող քաղաքական ու տնտեսական իրավիճակին, մշակութային կյանքը շարունակվել է, և Խոր Վիրապը պահպանել է իր խոշոր կրոնական ու մշակութային կենտրոնի դերը: Վարդան Արևելցուն փոխարինում է նրա եղբայր Գրիգորը: Վերջինս մի արձանագրություն է թողել Վանստանում 1283 թ. եկեղեցին սալարկելու մասին[63]: Ուշագրավ է, որ 1441 թ. Հայոց կաթողիկոս է ընտրվում Խոր Վիրապի վարդապետ Կիրակոս Վիրապեցին: Նա այնտեղ էր տեղափոխվել 1409 թ.: Այդ ժողովին մասնակցել է նաև Խոր Վիրապի վանահայր Անտոնը[64]:

Զաքարիա Ագուլեցու (1630-1691 թթ.) օրագրության համաձայն, Գրիգոր Լուսավորչի նետված վիրապի հորը լցված, իսկ դրա վրայի եկեղեցին ավերված ու անբնակ է եղել: Դավիթ Վիրապեցի վարդապետի հրամանով Զաքարիայի եղբայր Շմավոնը 1669 թ. մաքրում է հորը, որի մեջ բացվում է երկու գերեզման, որոնց տապանաքարերից մեկի վրա գրված է լինում Ներսես վարդապետ, մյուսինը՝ Վարդան վարդապետ: Նշվում է, որ

---

[59] Փ. Անթաբյան, Վարդան Արևելցի, Ն. Ա., Երևան, 1987, էջ 40-41; Կ. Մաթևոսյան, Խոր Վիրապի վանքը և նրա գրչության կենտրոնը, «Էջմիածին», 1997, հմր. Բ-Գ, էջ 175:

[60] Հ. Մանանդյան, Հ. Աճառյան, Հայոց նոր վկաներ, Վաղարշապատ, 1903, էջ 105:

[61] Փ. Անթաբյան, նշվ. աշխ., էջ 40-41:

[62] Այդ մասին մեզ հայտնել է Մատենադարանի ճանաչված ձեռագրագետ Արտաշես Մաթևոսյանը: Տե՛ս նաև Կ. Մաթևոսյան, նշվ.աշխ., էջ 174-178:

[63] **Ashk. Kalantar**, նշվ. աշխ., էջ 20-21; Է. Ա. Մելքոնյան, Գ. Գ. Սարգսյան, Վանստանի վանքը, Հայագիտական հանդես, N 2, Երևան, 1999, էջ 123:

[64] Թովմա Մեծոփեցու Հիշատակարանը, հրատարակեց իր առաջաբանով Կ. Կոստանյանց, Թիֆլիս, 1892, էջ 52,54; Կ. Մաթևոսյան, նշվ. աշխ., էջ 177:

նրանք 10 տարի տարբերությամբ են մահացել, և մարմինները դեռևս լավ պահպանված են. «Ամենևին մարմինն փտած չէր»[65]:

Դժվար թե դրանք Վարդան Արևելցունը և Ներսես Տարոնացունը լինեն: Հորը XIII դ. 70-ական թվականներին լցված չէր, և սրբացված հորում դժվար թե համարձակվեին թաղումներ կատարել: Դա հավանաբար եղել է ավելի ուշ, երբ հորը լցված էր և եկեղեցին ավերված:

Ս. Գրիգոր եկեղեցին ուղղանկյուն, միանավ, թաղածածկ հորինվածք ունի[66]: Հյուսիսային մուտքի (միակ) վերևում թողնված շինարարական արձանագրության համաձայն, վերաշխատանքները ավարտվել են 1669 թ.: Եկեղեցու օծումը տեղի է ունեցել 1670 թ.[67]: Վերոհիշյալ անձինները 1672 թ. վերաթաղվում են եկեղեցու արևմտյան հատվածում, ստորերկրյա դամբարանում[68]:

10 տարի անց, 1679 թ. հունիսի 4-ի ուժեղ երկրաշարժի ժամանակ, որի էպիկենտրոնը Գառնիում էր, այլ հուշարձանների թվում ավերվում է նաև Խոր Վիրապի Ս. Աստվածածին եկեղեցին, պարիսպները և նրան հարող շինությունները[69]: Դրանց վերականգնմանը նորից ձեռնամուխ է լինում Դավիթ Վիրապեցին, որը 1695 թ. մահանում է և չի հասցնում ավարտել շինարարությունը: Նա թաղվում է Ս. Աստվածածին եկեղեցու հյուսիսային կողմում, որտեղ պատին կա չափածո մի արձանագրություն (23 տող), ուր Դավիթ Վիրապեցու գործունեությունը շատ բարձր է գնահատվում: Նրա մահից հետո կառույցները, XVIII դ. սկզբին[70], իր ավարտին է հասցնում նոր վանահայր Վարդապետը[71]:

Ս. Աստվածածին եկեղեցին դրսից ուղղանկյուն, ներսից երկու որմնամույթով գմբեթավոր սրահ է, արևելյան միակ մուտքի դիմաց կառուցված զանգակատնով: Արևելյան պատին, լուսամուտից վերև, պատկերված է Հայոց դարձը ներկայացնող հարթաքանդակը: Հորինվածքի աջ կողմում կանգնած է Գրիգոր Լուսավորիչը, ձախ կողմում գրված է նրա անունը: Վերջինս մի քանի անգամ խոշոր է պատկերված, քան Տրդատը և մյուս ֆիգուրաները: Դրանով ընդգծվում է կերպարի տարբերությունը սովորական մահկանացուներից:

Լուսավորիչը, Սուրբ Գիրքը ձախ ձեռքին բռնած, աջով օրհնում է և դիվահարությունից բուժում գետնատարած աղերսող Տրդատ թագավորին: Ս. Գրիգորի երկու կողքերին մեկական հրեշտակ է պատկերված: Հորինվածքի ձախ կողմում երկու ֆիգուրներ են կանգնած, որոնցից մեկը Դավիթ Վիրապեցին է: Նրանց ոտքերից ներքև երեք տողանոց արձանագրություն է գրված. «Տր Դաւիթ շինող եւ սպասաւոր Սբ Վիրապիս յաղաւթ յիշ»: Հարթաքանդակի աջ եզրին վերից վար գալարվող օձ է, որը խորհրդանշում է ստորերկրյա աշխարհը, որտեղ նետվել է Գրիգոր Լուսավորիչը, և օձերի ու կարիճների հարևանությամբ սրբի՝ վիրապում անցկացրած 13-15 տարիները:

---

[65] Զաքարիա Ագուլեցու Օրագրությունը, Երևան, 1938, § 42, էջ 81:

[66] Ստ. Խ. Մնացականյան, նշվ.աշխ., էջ 20:

[67] Զաքարիա Ագուլեցու Օրագրությունը, էջ 81-83:

[68] Նույն տեղում; Մ. Հասրաթյան, նշվ.աշխ., էջ 188:

[69] Զաքարիա Սարկավագի Պատմութիւն, Վաղարշապատ, հտ. II, 1870, էջ 104:

[70] Մ. Հասրաթյան, նշվ. աշխ., էջ 189:

[71] Կ. Մաթևոսյան, նշվ. աշխ., էջ 178:

Կյանքը Խոր Վիրապում աշխուժանում է նորից Սիմեոն Երևանցի Կաթողիկոսի օրոք, որը թվարկում է Խոր Վիրապի թեմին հարկատու գյուղերը[72]: Հայտնի է Խոր Վիրապում XVIII դ. գրված մի քանի ձեռագիր, որ նշանակում է՝ մշակութային կյանքը շարունակվում էր այնտեղ[73]:

Խոր Վիրապի նշանավոր ուխտատեղին ինչպես միջին դարերում, այնպես էլ այսօր չի դադարել դեպի իրեն ձգել աշխարհի տարբեր կողմերից եկող ուխտավորներին ու ճանապարհորդներին: XVII-XVIII դդ. Խոր Վիրապ ուխտի են եկել և վանքին նվիրատվություն կատարել ոչ միայն հայերը, այլև շրջակա բնակավայրերի թուրքերն ու քրդերը[74]:

Այսպիսով, քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու նախօրեին և դրանից հետո Արտաշատ մայրաքաղաքն ապրում էր քաղաքական, տնտեսական ու մշակութային աշխույժ կյանքով: Մայրաքաղաքը թեև 484 թ. Արտաշատից տեղափոխվեց Դվին, սակայն Խոր Վիրապը դարձավ Արարատյան թեմի կենտրոնը, և՛ իբրև նշանավոր սրբավայր, և՛ ուխտատեղի շարունակում է իր գործունեությունը:

Քրիստոնեությունը պետական կրոն հռչակելը շրջադարձային, դարակազմիկ նշանակություն ունեցավ ոչ միայն հայ ժողովրդի կյանքում, այլև համաշխարհային պատմության համար: Քրիստոնեության հումանիստական բարձր գաղափարներն առաջինն ընդունվեց ու խրախուսվեց հայկական թագավորության կողմից: Դրանով իսկ Հայաստանում սկիզբ դրվեց նոր հոգևոր զարթոնքի: Միշտ ընկալվեց գիտության ու մշակույթի դերն ու նշանակությունը ազգային ոգու ինքնության հաստատման կարևոր գործում: Եկեղեցիները դարձան նաև դպրության ու գրչության կենտրոններ: Հոգևոր անձնախադեղ վերելքը նպաստեց կրոնի, կրթության, արվեստի, գիտության, գրականության բնագավառում անանց արժեքների երևան գալուն: Ստեղծվեցին ճարտարապետական, պատմագրական, փիլիսոփայական և այլ անմահ ստեղծագործություններ, որոնք հարստացրեցին համաքրիստոնեական մշակույթի գանձարանը: Պետականության բացակայության պայմաններում ժողովուրդն ապավինեց Եկեղեցուն, որը դարձավ համազգային շահերի արտահայտողն ու պաշտպանը:

---

[72] Սիմեոն Երևանցի, Ջամբռ, Վաղարշապատ, 1873, էջ 280:

[73] Կ. Մաթևոսյան, Նշվ. աշխ., էջ 178:

[74] Հ. Ս. Էփրիկեան, Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. II, գիրք Ա., Վենետիկ, Ս. Ղազար, 1904, էջ 205-206:

*ԳԱՌՆԻԿ ԱՆԱՆՅԱՆ*
*Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր*

# ԱՂԱՆԴԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ V ԴԱՐՈՒՄ

Հայ միջնադարին հայտնի մի քանի տասնյակ աղանդներ տարբերվում են ոչ միայն իրենց ծագման հանգամանքներով, այլև հետապնդած նպատակներով, որոնք հիմնականում ունեցել են քաղաքական և սոցիալական բնույթ: Եթե Պավլիկյան և Թոնդրակյան աղանդներն ընդգծված սոցիալական ուղղվածություն ունեին և ներկայանում էին իբրև անհավասարության ու զանգվածային թշվառության դեմ ժողովրդական զանգվածների դժգոհություն, ապա նեստորականությունը, ավելի ուշ ունիթոռությունը և համանման ուրիշներ, պարզապես ժամանակի հզոր պետությունների որդեգրած ու պարտադրած հերձվածներ և դավանական շարժումներ են՝ այլ ժողովուրդների նկատմամբ նվաճողական քաղաքականությունը քողարկված իրականացնելու հեռահար նպատակներով:

Եթե նույնը չեն նրանց բոլորի առաջ գալու պատճառներն ու նպատակները, տարբեր պետք է լինեն մոտեցումներն ու գնահատումները ևս:

Ըստ երևույթին ուշադրության պետք է առնել նաև այն կոնկրետ ժամանակահատվածը, որում գործել է տվյալ աղանդը: Ժողովրդի և պետության համար ճակատագրական պահերին, երբ փրկության հեռանկարը բոլոր ուժերի հավաքական միասնություն է ենթադրել, ցանկացած բնույթի երկպառակություն ենթակա է դատապարտության:

V դարի առաջին կեսը, որին, ըստ մատենագիրների, հատուկ է մի քանի աղանդների ներթափանցում հայկական իրականություն, բնութագրվում է հայոց կործանվող պետականությունը փրկելու գերագույն ճիգերով, և ցանկացած բնույթի աղանդ ու երկպառակություն, անկախ հետապնդած նպատակներից, ջլատում էր միասնությունը՝ բարենպաստ պայմաններ ստեղծելով կործանարար զարգացումների համար:

Աղանդների ձևավորման և նրանց դեմ պայքարը արձանագրված է արդեն իսկ Աստվածաշնչում:

Համընդհանուր ճանաչման ճանապարհը քրիստոնեությունն անցնում էր ոչ միայն գոյություն ունեցող կրոնների հաղթահարմամբ, այլև իր իսկ ներսում ծնունդ առնող՝ աստվածաշնչյան զանազան այլընթերցումները մերժելու նույնքան դժվարին պայքարում: Նոր Կտակարանում քրիստոնեական տարբեր համայնքներում առաջ եկող որոշ խմորումների մասին եղած հիշատակումները հաստատում են այն իրողության, որ վերջիններս առաջացել են նոր վարդապետության ձևավորմանը զուգահեռ: Փոքր թիվ չեն կազմել նրանք, ովքեր «ողջմտութեան վարդապետութեանն ոչ անսայցեն» (Բ Տիմոթ. Դ 3): Մի ուրիշ խումբ են սուտ մարգարեները, որոնք աշխարհը բացատրում են «ոչ ըստ Յիսուսի Քրիստոսի» (Կողոս. Բ 8): Սա ուղված էր նաև անտիկ աշխարհի ու հեթանոսության դեմ, որոնք աշխարհը ճանաչում են «ըստ մարդկան աւանդութեան և ըստ տարրոց աշխարհիս»:

Հիսուս ասում էր, որ հայտնվելու են սուտ քրիստոսներ, որոնք մոլորեցնելու են շատերին. «Բազումք եկեսցեն յանուն Իմ, և ասիցեն թէ ես եմ Քրիստոսն, և զբազումս մոլորեցուսցեն» (Մարկ. ԺԳ 5-6): Հերձվածողների մեծաքանակ լինելու վերաբերյալ ևս վկայված է Աստվածաշնչում: Քրիստոսի հավաստումը, թե իբրև քրիստոսներ ներկայացողները բազում մոլորյալ հետևորդներ կունենան, այլ վկայություններով ևս հաստատվում է. «Եւ բանք նոցա իբրև զքաղցկեղ ճարակ գտանեն» (Բ Տիմոթ. Բ 17):

Աստծո Որդին աշակերտներին ու հավատացյալներին զգուշացնում է ոչ միայն հերձվածներից, այլև նրանցից, ովքեր «սիրեն ողջոյնս ի հրապարակս», «զքարձերէցս յընթրիս» և «պատնառանօք յերկարեն զաղօթս» (Ղուկ. Ի 46-47): Այս փարիսեցիների կողքին, որոնց պատիժն առավել խիստ է լինելու, հիշվում են նաև նրանք, ովքեր «կամին լինել վարդապետք օրինաց, ինքեանք ոչ իմանան զինչ խօսին, և ոչ վասն որոց պնդեալն են» (Ա Տիմոթ. Ա 7): Այդպիսիները եթե չմոլորեցնեն էլ, կվանեն հավատացյալներին:

Աստվածաշունչը պատկերացում է տալիս աղանդների դեմ պայքարելու եղանակների մասին ևս: Տիտոսին հղած թղթում Պողոս առաքյալը հայտարարում է. «Յառնէ հերձուածողէ, յետ միանգամ եւ երկիցս խրատելոյ, հրաժարեսջիր» (Տիտոս Գ 10): Նույն թղթում այդպիսիների համար ավելի ծանր պատիժներ էլ է սահմանում «ըմբերանել» (Ա 11): Արդեն իսկ առաքյալների գործունեության շրջանում մեծ թիվ են կազմել սուտ մարգարեները, որոնք զգալի թվով էլ հետևորդներ են ունեցել, այլապես Պետրոսն իր երկրորդ թղթում չէր գրի. «Լինէին և սուտ մարգարէք ի ժողովրդեանն, որպէս և այժմ ի ձեզ լինիցին սուտ վարդապետք» (Բ 1): Նույն տեղում հայտնի է դառնում նաև, որ «բազումք անկեալ երթիցեն զհետ նոցա անառակութեանցն» (Բ 2):

Ինչ՞ում են արտահայտվել հերձվածները, Աստվածաշունչը չի մանրամասնում, տեղեկությունները կցկտուր են: Հուդա առաքյալի թղթում, օրինակ, ընդհանուր հիշվում է, թե «զԱստուծոյ մերոյ շնորհսն դարձուցին յանկարգութիւն» և ուրանում են «զՏէր մեր Յիսուս Քրիստոս» (4): Որոշ մանրամասներ, առաջին հերձվածների առաջնորդների անուններ, այնուամենայնիվ, Սուրբ Գիրքը հասցնում է մեզ: Իր ունկնդիրներին հորդորելով հրաժարվել «ի պղծոց և ի սնոտի խօսից», Պողոս առաքյալը Տիմոթեոսին հղած երկրորդ թղթում հիշում է սնոտի խոսքերի հեղինակներից երկուսին՝ Հիմենոսին և Փիլետոսին, որոնք մերժում են հարության ճշմարիտ վարդապետությունը: Սրանք «վրիպեցան ի ճշմարտութենէն, և ասեն եթէ յարութիւն մեռելոց արդէն իսկ եղեալ է» (Բ 18):

Այս հերձվածողները տեղի չեն տվել, հենց սկզբից անհաշտ պայքար է եղել ճշմարիտ և սուտ մարգարեների միջև: Նույն թղթում Պողոսը խոստովանում է. «Աղէքսանդրոս բազում չարչարանս եցոյց ինձ» (Դ 14): «Դիվական վարդապետությունների» անունները չեն տրվում, պարզապես հիշվում են դրանց պահանջները: Ահա մի նմուշ. «Որ արգելուցուն յամուսնանալոյ, եւ մեկնիցեն ի կերակրոց զոր Աստուած հաստատեաց ի վայելել հաւատացելոց» (Ա Տիմոթ. Դ 3):

Ոչ պակաս կարևոր են հիշատակումները այն միջոցների, որոնցով մոլորեցնում են հավատացյալներին: Դա արվում է պերճախոսությամբ, որն անհրաժեշտ էր դարձնում նոր վարդապետության քարոզիչների կողմից ճարտասանության յուրացումը, կեղծավորությամբ, ստախոսությամբ, «քաղցրաբանութեամբ եւ օրհնութեամբ պատրեն զսիրտս անմե-

ղաց» (Հռոմ. ԺԶ 18): Չարի արմատներից է նաև «արծաթսիրութիւնը»՝ «որում ոմանց ցանկացեալ՝ վրիպեցան ի հաւատոցն» (Ա Տիմոթ. Զ 10):

Աստվածաշունչը նաև ուսուցանում է փորձություններից խուսափելու ուղին. «Յամենայն ճանապարհս քո ծանիր զնա. զի ուղիղ արասցէ զճանապարհս քո. եւ ոտն քո մի՛ գայթակղեսցի» (Առակք Գ 6):

Ողջ միջնադարում շարունակ հնչելու էր պատվիրը՝ չմոլորվելու աստվածաշնչյան «Մի լքանիր ի խրատու Տեառն» (Առակք Գ 11):

Հայ քրիստոնեական իրականությունը չէր կարող բացառություն լինել:

*

* *

Աղանդների պատմությունը հայտնաբերում է մի ուշագրավ օրինաչափություն. դրանք ծնվում են, աճհետանում, մինչդեռ առաքելական վարդապետությունը կա, մնում է, և վերջինիս երկհազարամյա պատմությունը իրավունք է տալիս ասել՝ լինելու է: Ընդհանուրը պատմության գիրկն անցած մի քանի տասնյակ հերձվածների համար Քրիստոսի վարդապետությունը կամ առանձին դոգմաներ նորովի մեկնաբանելու «փորձն» է, որը, իբրև կանոն, փորձանք է դառնում բոլոր նրանց համար, ովքեր հետևում են «նոր» «փրկիչներին»: Պատմությունը հաստատում է նաև, որ աղանդները բուռն ծաղկում են ապրում մեծ հեղաբեկումների շրջանում, երբ իշխող գաղափարախոսությունը հայտնվում է ճգնաժամում (եթե նույնիսկ չի փլուզվում)՝ տեղ բացելով զանազան «մեկնությունների» համար:

Անցած ճանապարհի հետևություններից մեկն էլ այն է, որ հաճախ սոցիալական թշվառությունն է դուռ բացում մարդորսների գործունեության առաջ. հավատացյալները «նորերի» ետևից գնում են ոչ այնքան «նոր» վարդապետության կասկածելի ճշմարտության, որքան մի կտոր հաց վաստակելու պարտադրանքով:

Մեր կյանքի վերջին տասնամյակն ասվածի լավագույն վկայությունն է:

Հայտնի է, որ Հայաստանը տարածաշրջանի համար քրիստոնեական գաղափարախոսության հզոր կենտրոն էր: Դա պայմանավորված էր ոչ միայն քրիստոնեության պետական ճանաչման առաջնայնությամբ, այլև այն մտավոր, հոգևոր-մշակութային ներուժով, որ ձևավորվեց մեզանում Գրիգոր Լուսավորչի եռանդուն գործունեությամբ, որը նոր թափ ստացավ գրերի գյուտից հետո: Մտավոր և հեռավոր հարևանները զինակցության էին կոչում հայերին:

Ագաթանգեղոսին անվերապահ ընդունելու դեպքում պետք է հավատանք, թե քրիստոնեությունը պետական կրոն հռչակելը, նրա հետագա ծավալումն ընթացել են զարմանալի դյուրությամբ, առանց ցնցումների ու բախումների: Ագաթանգեղոսի մոտ խոսք չկա աղանդների ու հերձվածների մասին:

Իրականում վարդապետության տարածումը Հայաստանում լուրջ դիմադրության է հանդիպել, վկան Փավստոս Բուզանդն է (մյուս պատմիչները ևս): Ոչ միայն այս. մեզանում նույնպես մուտք են գործել աղանդներ, որոնց դեմ, համենայն դեպս, V դարում Եկեղեցին նպատակային պայքար է կազմակերպել:

Հեշտ չէր այդ պայքարը: Աղանդները հաճախ հենչեղ անունների էին աղերսվում, ունեին մեծ թվով հետևորդներ. «...Մի՛ խաբեսցեն զձեզ բանք սնոտիք, մի՛ նայիք ընդ պատուականս պատուականութեան մարդկան, և մի՛ ընդ բազմութիւն որ միաբանիցին լինել ընդդէմ իւրեանց կենարարին Քրիստոսի և ճշմարիտ հաւատոյ...»[1]: Առաջին երեք տիեզերական ժողովները, որոնց ընդունած կանոնների վրա է բարձրանում Հայ Առաքելական Եկեղեցու դավանանքը, անբեկանելի վճիռներ են կայացրել աղանդների վերաբերյալ:

Աղանդների, նույնիսկ որևէ աղանդի տեսական հիմունքների վերաբերյալ ոչ մի գիրք չի պահպանվել: Հիմնական սկզբունքները (հարազատության աստիճանը Աստծուն է հայտնի), առանձին հատվածներ և սկզբունքներ հասել են մեզ մերժողների թղթերում, եղծերում, քարոզներում... Հերձվածողների հետ միասին հալածվել են նաև նրանց գրքերը: Վերջիններս հավաքելու և այրելու վերաբերյալ տիեզերական ժողովների որոշումները իրագործվել են օրինակելի հետևողությամբ. «Որ խոտորեցան ի փառացն սրբութեանէ և յուղիղն հաւատոց, նզովեցան նոքա յամենայն ժողովրդոց և այրեցան որ վատի խորհրդոց գիրք էին նոցա»[2]: Նույնպիսի որոշում Եփեսոսի ժողովն էլ է ընդունել. «Ի մի վայր ժողովել զնոա գրեանն և այրել»[3]: Անկակը հայերին ևս հորդորում էր՝ «զգրեայսն Դիոդորի կապեցէք կնքեցէք»[4]:

Տարակույս չի կարող լինել, որ Հայ Եկեղեցու հայրերը կատարել են այս պատվիրանները: Պրոկղին պատասխան թղթում Սահակ Պարթևն ու Մեսրոպ Մաշտոցը հավաստում են. «Եւ յամենայն տեղիս որ շուրջ զմեզ բնակեալ էին, յղեցաք մեծ և պատուհասալից պատուիրանաւ մի՛ լսել բնաւ ամենևին զայդպիսի բարբարոսս, մի՛ ընդունել ամենևին զվնասաբեր կորստական մոլորական հերձուածեանն վարդապետութիւնն»[5]: «Պատուհասալից պատուիրանս» էլ նույն ժամանակում պարզվում է. ով նման բաներ խորհի կամ խոսի «ոչ միայն չընդունիմք կամ հալածեմք, այլ բազում և մեծամեծ պատիժ պատուհասի առնել ոչ դանդաղիմք»[6]:

Պրոկղի թղթից կարելի է կռահել, որ այլադավանությունը նոր-նոր էր մուտք գործում Հայաստան. «զի լու եղեւ մեզ եթէ արք ոմանք ժանդախաւսք գնորախաւսք, անկան ի յաշխարհն այդր, և կամին ժանդաժոտ իմն գրովք, հակառակութեամբ, ստաբան խստախորհուրդ գիտութեամբ, խոտորել զպարզամտութիւն, զանպաճոյճ, զանմեքենայ, զուղղափառ գեղն հաւատոյն», և պատվիրում է՝ «զգոյշ լինիջիք»[7]:

Դժվար է պատկերացնել, թե քրիստոնեությունը պետական կրոն հռչակած երկրում աղանդավորներ չեն եղել: Եվ, իսկապես, Պրոկղի թղթի սկիզբն արիոսականության մասին է: Եվ քանի որ սա քրիստոնեական աշխարհին անհանգստություն պատճառած առաջին, թեև ոչ միակ աղանդն է, թերևս ենթադրելի է, թե հերձվածները միայն V դարի սկզբներին

---

[1] «Թուղթ յԱնկակիայ եպիսկոպոսէ ի Հայս», Գիրք թղթոց, Թիֆլիս, 1901, էջ 20:

[2] Նույն տեղում, էջ 8:

[3] Նույն տեղում, էջ 15:

[4] Նույն տեղում , էջ 21:

[5] Նույն տեղում , էջ 10:

[6] Նույն տեղում, էջ 12:

[7] Նույն տեղում, էջ 7:

են թափանցել Հայաստան: Չմոռանանք, որ V դարի պատմիչները առանձնապես անհանգստացած չեն աղանդների գոյությամբ. նրանց պատմություններից այն տպավորությունն ես ստանում, թե հերձվածները սոսկ լոկալ երևույթներ են: Նույնիսկ Փավստոս Բուզանդը, որ մանրամասնորեն ներկայացնում է արիոսական «անիծեալ աղանդի» նկատմամբ Վաղես կայսեր հովանավորչական քաղաքականությունը, միևնույն է, չունի այն տագնապները, որոնք պատում են նրան հեթանոսական սովորույթներին հայերի հավատարմության մասին գրելիս:

Նույնը տեսնում ենք Հովհան Մանդակունու ճառերում ու կանոններում: Հեթանոսական սովորույթների դեմ քարոզչության մեջ և կանոններում աղանդավորության մասին հիշատակումները հազվադեպ են, ավելին՝ «Վասն աղօթից» և այլ ճառերում բազմիցս թվարկում է այն մեղքերը, որոնց ենթարկվում են մարդիկ, և դրանց մեջ հավատից շեղվելու մեղքի մասին դարձյալ խոսք չկա. «Զի՞նչ գործեսցուք յորժամ արտաքս ելեալ ի ծով մեղացն մտանիցեմք, ի հրապարակս, ի վաճառս. յերդմունս, ի հայհոյութիւնս, ի գրկանս, ի բամբասանս. ի նախանձ, ի բարկութիւնս, ի զօշաքաղութիւնս. յարբեցութիւնս, յորկորստութիւնս, ի հպարտութիւնս՝ ի յամենայն ախտից բազմութիւնս»[8]:

Չմոռանանք նաև, որ Հայաստանում նոր վարդապետությունը հասկանալի պետք է լիներ հիմնականում արքունիքի, նախարարական տների, մի խոսքով՝ կրթված, ասել է, թե՝ հունարենին, ասորերենին տիրապետող վերնախավի համար: Ժողովուրդն անհաղորդ էր մնում նոր վարդապետությանը հենց լեզվական անջրպետի պատճառով: Կորյունը, Փավստոս Բուզանդը սրանով ավելի են մտահոգված, քանի որ հեթանոսական մտածողությունը, սովորույթները շարունակում են տիրապետող մնալ: Եվ, իսկապես, V դարի համար դեռևս հեթանոսության և այլ կրոնների հաղթահարումն է խնդիրների խնդիրը և ոչ քրիստոնեության այլազան ընկալումների դեմ պայքարը: «Եղծ աղանդոցն» էլ դրա վկայություններից է: Դարի հրամայականով գրված գիրքը հիմնականում ամփոփում է հեթանոսության, պարսից կրոնի և հունական փիլիսոփայության ու կրոնների հերքումը: Մարկիոնի աղանդի ժխտմանը նվիրված էջերը գրքի շուրջ մեկ վեցերորդ մասն են կազմում: Ուշագրավ փաստ է և այն, որ հենց մարկիոնականությունն է հերքվում, V դարի առաջին կեսում տարածված ուսմունքը, իսկ մյուսները, ասենք՝ արիոսականությունը, նեստորի եղծը և մյուսները, միայն պատմիչներից ոմանց մոտ են հիշվում, այն էլ ոչ այնպիսի հետևողականությամբ ու ամբողջական նկարագրով, ինչպես այդ տեսնում ենք Եզնիկ Կողբացու «Եղծ»-ում: Թե ինչու հատկապես մարկիոնականության դեմ է մարտնչում, հավանաբար իր բացատրությունը գտնում է նրանում, որ Մարկիոնը, փաստորեն, բազմաստվածություն էր ընդունում աղերսվելով հեթանոսությանը:

Այսպես, ուրեմն, դարի պահանջը, առաջնահերթ խնդիրը մերժումն է այլ կրոնների, որոնք աշխարհը բացատրում են «ըստ մարդկան աւանդութեան և ըստ տարերց աշխարհիս», ասել է, թե՝ «ոչ ըստ Յիսուսի Քրիստոսի»:

Ասվածը բնավ էլ չի նշանակում, թե աղանդների դեմ պայքարը անտեսվել կամ երկրորդական պլան է մղվել: Քրիստոնեական աշխարհը վրդոված առաջին աղանդի՝ ա-

---

[8] Տեառն Յովհաննու Մանդակունւոյ Հայոց Հայրապետի Ճառք, 1836, Վենետիկ, էջ 33:

րիոսականության մասին հիշում է Փավստոս Բուզանդը և՝ մանրամասնորեն ներկայացնելով Վաղես կայսեր քայլերն այս «անիծեալ աղանդը» Հայաստանում ևս տարածելու ուղղությամբ[9]: Հետաքրքիր մի դիտարկում է անում պատմիչը. արիոսականության հովանավոր կայսեր գործադրած բռնի միջոցների պատճառով կյանքն ավելի անկանոն դարձավ, քան նույնիսկ մեհենասեր թագավորների վարած պատերազմների ժամանակ[10]:

Աղանդի բնութագիրը, սեղմ ու հակիրճ, Խորենացու գրչին է պատկանում. «Ընդ այն ժամանակս երևեցաւ Արիոս Աղեքսանդրացի, որ ուսոյց չարաչար ամբարշտել, ոչ գոլ զՈրդի հաւասար Հօր, և ոչ ի բնութենէ և յէութենէ Հօր. և ոչ ծնեալ ի Հօրէ յառաջ քան զյաւիտեանս, այլ օտար զոմն և արարած և կրտսեր, և յետ ժամանակի գոյացեալ»[11]:

Արիոսը, ըստ Մովսես Խորենացու, մերժում էր Ս. Երրորդությունը՝ ժխտելով Որդու աստվածային բնույթը: Եթե վերջինս չի ծնվել Հորից և ընդամենը «արարած» է, ապա մերժվում է Ս. Հոգու գոյությունը ևս: Որդին ժամանակով էլ տարբեր է Հորից՝ «յետ ժամանակի գոյացեալ»: Հայերը մերժեցին արիոսականությունը՝ որդեգրելով Նիկիո հանգանակը:

Հաջորդը բարբարիանոս աղանդն է: Հետաքրքիր է, որ Մեսրոպ Մաշտոցը Թեոդոս կայսրից է հրաման ստանում «վասն ժանտագործ ազգին բարբարիանոսաց»: Այնքան անհանգստացնող մի բան չէր սա հայերի համար, որ կրթության գործը կազմակերպելուց և հունի մեջ գցելուց հետո միայն («ապա եւ այնորիկ») ձեռնարկում է «զժպատեհ և զկամակոր բարբարիանոս աղանդն քննելոյ»: Հորդորների, քարոզների, համոզելու միջոցները սպառելով հարկադրված դիմում է խիստ միջոցների. «առեալ ի գործ արկանէր զթշուառացուցիչ զաւազանն, ծանրագոյն պատուհասիւք ի բանդս, ի տանջանս, ի գեղարանս: Իսկ յորժամ այնու եւս պակասեալք ի փրկութենէն գտանէին, խորտակեալս, ապա խանձեալս, մրեալս և զունակ զունակ խայտառակեալս, և յաշխարհէն կորզէին»[12]:

Ընդարձակ այս մեջբերումից կարելի է կռահել, որ բարբարիանոս կոչվող այս աղանդի հետևորդները բավականին համառել են իրենց մոլորության մեջ, մեծաթիվ չեն եղել, այլապես հնարավոր չէր լինի երկրից դուրս քշել նրանց: Այս աղանդի մասին ստույգ ոչինչ հայտնի չէ. ենթադրություններ կան, թե դա բորբորիտոն աղանդի աղավաղված անվանումն է:

Այս աղանդը հիշում է Խորենացին և՝ բորբորիտոններ հնչմամբ[13]:

Սահակ Պարթևը հանձնարարում է Մեսրոպ Մաշտոցին «քննել զժանդագործ բորբորիտոնսն և եթէ ոչ հեզութեամբ և ոչ սաստիւ գայցեն յուղղութիւն՝ չարչարանօք հալածել.

---

[9] Փավստոս Բուզանդ. Պատմութիւն Հայոց, էջ 127-143:

[10] Նույն տեղում, էջ 142:

[11] Մովսէս Խորենացի. Պատմութիւն Հայոց, էջ 292:

[12] Կորյուն, Վարք Մաշտոցի, Երևան, 1980, էջ 116:

[13] Բորբորիտոն - բառարանները թարգմանում են փափաշոտ, ցանկասեր, անառակ, գարշ, պիղծ, Ստ. Մալխասյանն ավելացնում է՝ կեղտ, ցեխ, աղբ: Բորբորիտ բառն այս իմաստներով օգտագործում է Խորենացին, հետագա մատենագիրները ևս:

Հիմնվելով այն փաստի վրա, որ Կորյունը մի տեղ հիշում է նաև «ժանտագործ ազգին բարբարոսաց», իսկ Խորենացին՝ «աղանդն հեթանոսական», Ստ. Մալխասյանը ենթադրում է, թե «այստեղ խոսքը վերաբերում է Հայաստանում դեռ տեղ-տեղ մնացած հեթանոսական պաշտամունքին, երբ տեղի էին ունենում պղծություններ», Մովսես Խորենացի. Հայոց պատմություն, Երևան, 1981, էջ 526:

զի որպէս թշնամիք ի թշնամեաց վրէժ առնուցուն, և խայտառակեսցի իրաւացի մահուամբ անիրաւ մահ հոցւոց»[14]:

Վկայությունը հետաքրքիր է նրանով, որ Խորենացին էլ հավաստում է աղանդների նկատմամբ ամենախիստ միջոցներ ձեռնարկելու պարագան: Երկրորդ՝ այս բորբորիտոնե-րը բավականին տարածված են եղել, քանի որ Մեսրոպ Մաշտոցը հիմնականում դարձի է բերում, մասամբ էլ հալածում աղանդավորներին Գողթնում, Բաղասական կողմերում, Գարդմանա ձորի կողմերում, Գուգարքում, Տաշիր գավառում: Երրորդ՝ պարզվում է, որ իշխանները ևս հետևել են աղանդներին. Գարդմանի իշխանին էլ դարձի է բերում, «որում անուն էր Խուրս»[15]: Կարևոր է նաև Մովսես Խորենացու ընդհանրացումը, թե աղանդները բուռն զարգանում են «ի ժամանակի անիշխանութեանն»:

Մեր պատմիչները ժխտական դիրքորոշում են դրսևորել նեստորականության հանդեպ: Խորենացին շատ դիպուկ նկատում է, որ նեստորականությունն էլ հենամուտ է Ս. Երրորդության դավանությունը փլուզելուն: Աղանդի հետևորդները ընդունում էին իրարից տարբեր երկու որդի՝ ծնված Մարիամից և Հորից, «որով Երրորդութիւնն չորրորդութիւն լինի»[16]: Մերժվում էր, այսպիսով, Սուրբ Երրորդության ուսմունքը, Մարիամը դադարում էր աստվածածին լինելուց: Ահա թե ինչու Խորենացու անունով մեզ հասած դավանաբանական թուղթը նվիրված է մեկ բնության խնդրի քննությանը՝ ըստ «աստուածային գրոց»:

Եփեսոսի ժողովում մերժվում է նեստորականությունը, սա էլ հայտնի է Խորենացուն, նաև այն, որ Սահակն ու Մեսրոպը չեն մասնակցել այդ ժողովին: Նրանց աշակերտներն են մասնակցել և ժողովի ընդունած վեց կանոնները բերել Հայաստան: Նեստորականներն իրենց գրքերով նոր էին հայտնվել Հայաստանում: Մովսես Խորենացին գիտի, որ այդ մասին Սահակ Պարթևին ու Մեսրոպ Մաշտոցին հայտնում են Կյուրեղ Ալեքսանդրացին, Կ. Պոլսի Պատրիարք Պրոկղը, Մելիտինեի եպիսկոպոս Ակակը (վերջին երկուսի թղթերը պահպանվել են): Համաձայն Խորենացու վկայության, հիշյալ հայրերը թղթեր գրեցին Սահակ Պարթևին ու Մեսրոպ Մաշտոցին, «քանզի լուան, եթէ ոմանք ի չարափառացն աշակերտաց առեալ զգիրսն Թէոդորոսի Մամուեստացւոյ, զվարդապետին Նեստորի, և զաշակերտին Թէոդորի՝ գնացին յաշխարհն Հայոց»[17]:

Ծառունակությունը հայտնի է «Գիրք թղթոց»-ից:

Աղանդների դեմ պայքարը բուռն դրսևորումներ պետք է ստանար հետագա դարերում:

[14] Նույն տեղում, էջ 420:

[15] Նույն տեղում, էջ 422:

[16] Նույն տեղում, էջ 424:

[17] Նույն տեղում, էջ 426:

*ՍԱՌԱ ՂԱԶԱՐՅԱՆ*

# ՈՍԿԵԲԵՐԱՆԸ ԵՎ 5-ՐԴ ԴԱՐԻ ՀԱՅ ԲԱՐՈՅԱԲԱՆԱԿԱՆ ՄԻՏՔԸ

(Հովհան Մանդակունի)

Հայ միջնադարյան եկեղեցական մատենագրությունը չի կարելի պատկերացնել առանց Տիեզերական Եկեղեցու մեծանուն հայրերի՝ Ս. Աթանաս Ալեքսանդրացու, Ս. Բարսեղ Կեսարացու, Ս. Գրիգոր Նազիանզացու, Ս. Գրիգոր Նյուսացու և Ս. Հովհան Ոսկեբերանի ժառանգության: Նրանցից հայ հավատացյալի համար իր կերպարով թերևս ամենահոգեհարազատը Հովհան Ոսկեբերանն է:

Տիեզերական Եկեղեցու հայրերից թերևս ոչ մեկը չի թողել այնքան մեծ ու բազմաբովանդակ մատենագրական ժառանգություն, որքան Հովհան Ոսկեբերանը: Կալիստոս պատմիչը վկայում է, որ ինքը կարդացել է Ոսկեբերանի հազար ճառերը: Վերապահությամբ ընդունելով պատմիչի այս վկայությունը՝ պետք է նշել, որ մեծանուն հայրապետի անունով այսօր հայտնի ճառերից ոչ բոլորն են իրապես նրա գրչին պատկանում: Արդեն 9-րդ դ. Փոտ Պատրիարքը նկատում է, թե որոշ ճառեր Ոսկեբերանինը չեն: Սակայն մի բան աներկբա է. իրապես Ոսկեբերանին պատկանող ճառերի թիվը ժամանակին անհամեմատ մեծ է եղել: Այդ են վկայում Փոտի ձեռքի տակ եղած այն մեծաթիվ ճառերը, որոնք այսօր անհայտ են[1]:

Ինչպես առհասարակ Տիեզերական, այնպես էլ Հայ Եկեղեցու համար Ոսկեբերանը եղել է և կա մեծագույն հեղինակություններից մեկը: Նրա երկերն իրենց բովանդակությամբ և ձևով ողջ միջնադարում եղել են հռետորական խոսքի և ոճի, եկեղեցական քնքշասացության դասական չափորինակ, ինչն իրավունք է վերապահել արդեն 6-րդ դարում նրան մեծարել «Ոսկեբերան» պատվանունով: Նրա երկերի մի զգալի մասը հայացվել է 5-րդ դարում: Վկայություններ կան, որ Մատթեոսի Ավետարանի մեկնությունը, լատիներեն և ասորերեն թարգմանությունների նման, հայերեն է թարգմանվել տակավին հեղինակի կենդանության օրոք՝ 405-407 թթ.:

Այս շրջանում են թարգմանվել և Ոսկեբերանի Հին Կտակարանյան և Պողոսյան թղթերի մեկնությունները: Հայերեն թարգմանությամբ հատվածաբար հասել են Ծննդոց գրքի, Հոբի, Երեմիայի, Դանիելի, Թագավորությանց գրքերի մեկնությունները: Միայն հայերեն թարգմանությամբ պահպանվել են Եսայու մարգարեության մեկնությունը (հունարեն բնագրով հասել է այս գրքի առաջին ութ գլուխների մեկնությունը), Եզեկիելի մեկնության առանձին հատվածներ, ինչպես նաև Ղուկասու Ավետարանի մեկնության հատվածներ:

5-րդ դ. է կատարվել նաև Պատարագամատույցի և Հովհաննու Ավետարանի թարգմանությունն ասորերենից, որի մի մասը ժամանակի ընթացքում կորստյան է մատնվել, ուստի

---

[1] Այդ մասին՝ **Филарет арх. Гумилевский**, Историческое учение об отцах церкви, М., 1996, том 2, стр. 230.

11-12-րդ դդ. այդ մասը վերստին թարգմանում են (այս անգամ արդեն հունարենից) և այդ-պիսով ամբողջացնում այդ երկի հայերենը: 11-12-րդ դդ. է հայացվել նաև Գործք Առաքելոցի մեկնությունը[2]:

Ոսկեբերանն իր կյանքի և մատենագրական վաստակի մի շարք կողմերով կապված է եղել հայ իրականությանը: Այսպես, ի շարս այլոց, նրա գրչին են պատկանում երկու ներբողներ՝ նվիրված Ս. Գրիգոր Լուսավորչին: Դրանք շարադրված են աքսորավայրում՝ Կոկիսոնում եղած ժամանակ՝ տեղի հայերի խնդրանքով:

Թարգմանված երկերի և դրանց ընդօրինակությունների պատկառելի քանակն ինքնին վկայում է այն մեծ սիրո և հարգանքի մասին, որ հայ մարդը տածել է Ոսկեբերանի անձի և վաստակի նկատմամբ: Պակաս կարևոր չեն նաև Եզեկիելի մարգարեության, Մարկոսի և Ղուկասու Ավետարանների հատվածական մեկնությունների հայերեն թարգմանությունները, որոնց բնագրերի մասին շատ քիչ բան է հայտնի: Բնագրագիտական, աղբյուրագիտական կարևոր նշանակություն ունեն նաև Ոսկեբերանի՝ մեզ չհասած երկերի հատվածները, որոնք, ժամանակին խմբագրվելով, բանաքաղաբար զետեղվել են հայ մեկնողական գրականության մեջ:

Ոսկեբերանի մատենագրական վաստակն իր ազդեցությունն է թողել նաև հայ դավանաբանական մտքի վրա. «Թերևս չկա այնպիսի մի դավանաբանական աշխատություն, ուր վկայաբերված չլինեն հատվածներ Ոսկեբերանի ժառանգությունից կամ գոնե հիշատակված չլինի Ոսկեբերանի անունը: Նրա երկերից բազում քաղվածքներ տեղ են գտել խմբագիր մեկնությունների մեջ: Դրանցից շատերն ունեն ոչ միայն բնագրագիտական, այլև շատ հաճախ աղբյուրագիտական բացառիկ նշանակություն, քանզի դրանք ոչ հազվադեպ թանկագին բեկորներ են ներկայացնում հունարեն բնագրով մեզ չհասած կամ միայն մասամբ հասած երկերի...»[3]:

Հայ իրականության մեջ Ոսկեբերանի ազդեցությունը հատկապես մեծ է եղել Հովհան Մանդակունի Կաթողիկոսի բարոյագիտական հայացքների ձևավորման վրա: Ոսկեբերանի և Մանդակունու հայացքների միջև շատ ընդհանրություններ կան: Սա հիմք է ծառայել, որ հայագիտության մեջ Մանդակունու անունով մեզ հասած ճառաշարի հեղինակային պատկանելության խնդիրը բազմակողմանիորեն և հանգամանալից քննության ենթարկվի:

Հիշյալ ճառաշարը տարբեր ձեռագրերում հանդիպում է ոչ միայն Մանդակունու, այլև Հովհան Մայրագոմեցու, Եփրեմ Ասորու, Հովհան Ոսկեբերանի անուններով: Սակայն Բարսեղ Սարգիսյանը, որը հիշյալ խնդրին մանրամասնորեն անդրադարձել է իր «Քննադատութիւն Մանդակունւոյ եւ իւր երկասիրութեանց վրա» աշխատության մեջ, աղբյուրագիտական, ձեռագրագիտական համոզիչ և հանգամանալից փաստերի հիման վրա ապացուցում է, որ այդ ճառաշարի հեղինակը Հովհան Մանդակունին է:

Վերջինիս կոչելով «Հայոց Ոսկեբերան»՝ Բ. Սարգիսյանը կարծիք է հայտնում, թե Մանդակունու ճառերը Ոսկեբերանին են վերագրվել այն պատճառով, որ հայոց կաթողի-

---

[2] Այս մասին տե՛ս՝ Վարդան Այգեկցի, Արմատ հաւատոյ, աշխատասիրությամբ՝ Տ. Շահե քահանա Հայրապետյանի, ներածությունը՝ Հ. Քյոսեյանի, Եր., 1998, էջ 42:

[3] Նույն տեղում, էջ 43:

կոսն իր պերճախոսությամբ և բեմբասացությամբ չէր զիջում հունաց ուսուցչապետին: Նաև, ինչպես նշում է Բ. Սարգիսյանը, հունարեն և ասորերեն լեզուներով պահպանված հսկայածավալ գրական ժառանգության մեջ նշված ճառերը բացակայում են: Իսկ հայ հեղինակի ճառերը նրան վերագրելու համար հիմք է ծառայել, ըստ երևույթին, այն իրողությունը, որ Ոսկեբերանը ևս ունի նույն խնդիրներին նվիրված և երբեմն նույն խորագրերը կրող գործեր: Չնայած Մանդակունին ժամանակակիցը չէ Ոսկեբերանի[4], բայց այս երկու մեծանուն հայրերը ոճով և լեզվով միևնույն դպրոցն են ներկայացնում:

Այլաբանական ոճը, որը հոգեհարազատ էր Փիլոն Եբրայեցուն, Որիգինեսին կամ Օգոստինոսին, Ոսկեբերանի և Մանդակունու համար երկրորդական նշանակություն ունեն, քանզի նրանք բառի բուն նշանակությամբ ավետարանական բարոյականության քարոզիչներ են:

Հովհան Մանդակունի Կաթողիկոսը (478-484 թթ.) թողել է բազմաժանր մատենագրական ժառանգություն՝ կանոններ, աղոթքներ, քարոզներ: Սակայն նա ավելի հայտնի է իր ճառերով, որոնք առանձնացնում են Մանդակունուն՝ որպես հայ քրիստոնեական բարոյագիտական մտքի նախակարապետներից մեկի: Հեղինակը, կիրառելով ճարտասանական բազմապիսի հնարներ, ձգտել է ազդել ունկնդիրների մտքի և հատկապես զգացմունքների վրա, փորձել իր խրատներով և հորդորներով նպաստել հավատացյալների բարոյական նկարագրի կերտմանը:

Մանդակունի և Ոսկեբերան բարոյագետների հայացքների ընդհանրության մասին խոսում է և այն, որ շատ զուգահեռներ կան Եկեղեցու այդ մեծանուն հեղինակների բարոյագիտական հայացքներում: Ոսկեբերանի պես, Մանդակունին ևս կարևորություն է տալիս պահեցողության խստությանն ու ժուժկալությանը: Նա այն միտքն է հայտնում, որ խիստ պահեցողությամբ է միայն, որ Դանիելը փրկվեց առյուծների ժանիքներից, քանզի գազաններն իսկ պատկառում էին մոտենալ պահեցողի սրբակենցաղ մարմնին. «Նույն ձևով է, որ Մովսեսը ստացավ Աստվածադիր օրենքները, վասնզի քառասնօրյա պահքի մաքրությամբ արժանի համարվեց մերձենալու սրբությանն ու խոսել Տիրոջ հետ»[5], Ոսկեբերան՝ «Մովսեսը ծոմապահության շնորհիվ է, որ Աստծուց տասնաբանյան ստացավ, և Դանիելը ևս պահքի շնորհիվ փրկվեց առյուծներից»[6]:

Ճառերում Մանդակունին կարևորում է նաև աղոթքը. «Որովհետև շատ-շատերն աղոթքի միջոցով բարիքների արժանացան և աստվածահաճո եղան «ինչպես Աննան աղաչանք-պաղատանքով ու ցավագին արտասուքով ստացավ Սամվելին..., իսկ Եզեկիելն իր արտասվագին աղոթքներով իր կյանքը տասնհինգ տարով երկարացրեց: Աղոթողի շատախոսությունն ոչ մի օգուտ չունի: Մաքսավորը միայն մի խոսք ասաց, և լսելի եղավ նրա աղոթքը, և նա թեթևացավ իր բազմաքանքար մեղքերի բեռից»[7]: Ոսկեբերանի մոտ ևս հոգևոր կենցաղավարությունում կարևորվում է աղոթքի դերը. «Աղոթքն ամենազոր է: Ո՛չ

---

[4] Բ. Սարգիսեան, Քննադատութիւն Մանդակունւոյ և իւր երկասիրութեանց վրայ, Վենետիկ, 1895, էջ 226:

[5] Հմմտ. Հովհան Մանդակունի, Ճառեր, Գրաբարէ աշխարհաբարի թարգմանեց Եզնիկ վարդապետ Բալյեան, Անթիլիաս, 1966, էջ 29:

[6] Հմմտ. Иоанн Златоуст, Беседы на книгу Бытия // Избранные Творения. М., 1993, т. 1, стр. 17.

[7] Հմմտ. Հովհան Մանդակունի, Ճառեր, էջ 36-37:

զազանը, ո՛չ կրքերը չեն կարող ընդդիմանալ նրան: Մի՞թե աղոթքի ուժը չէր, որ Աննային զավակ պարգևեց՝ ի պատասխան թախանձագին խնդրանքների»[8]:

Խոսելով ողորմածության մասին՝ Մանդակունին ևս, Օսկեբերանի նման, այն համարում է յուրաքանչյուր քրիստոնյայի պարտքը, որի համար նշանակություն չունեն ո՛չ հարուստները և ո՛չ աղքատները. «Առակաց գրքի» հետևողությամբ (Գ 9) ասում է. «Պատվի՛ր քո Տիրոջը քո արդար վաստակներից և տուր նրան քո արդարության պտուղներից: Նմանվի՛ր այրի կնոջը, որն իր ունեցած երկու լուման նվիրաբերեց եկեղեցուն, բայց դա Տիրոջն ավելի հաճո եղավ, քանզի նա տվեց իր վերջինը՝ հույսը դնելով Տիրոջ ողորմածությանն ու բարեսրտությանը: Նմանվի՛ր նրան, եղի՛ր աղքատասեր, մի՛ մտածիր վաղվա մասին, այլ ապավինիր Բարձրյալին»[9]: Օսկեբերան՝ «Ձեռքերդ մեկնիր ոչ թե դեպի երկինք, այլ դեպի աղքատների ձեռքերը: Պետք չէ ևս օրվա համար փող ետ գցել և աղքատներին այդ պատճառով ոչինչ չտալ: Վաղվա վերաբերյալ հոգսը Բարձրյալը կհոգա, իսկ դու հոգ տար կարիքի մեջ գտնվողների համար»[10]:

Առանձնահատուկ ուշադրության են արժանի սիրո մասին Մանդակունու հայտնած մտքերը. «Սիրո համար չկա ոչ մի նոր բացատրության կարիք, քանզի ունենք սիրո վարդապետին՝ Քրիստոսին...: Սերն անցյալի մեջ ևս քարոզվում էր, բայց Քրիստոս եկավ պատվիրելու, որ պետք է թե՛ սիրելիներին, թե՛ թշնամիներին սիրել և նույնիսկ անձը զոհել սիրելիի հանդեպ ունեցած սիրո վրա»[11]: Օսկեբերան՝ «Հրաշքն ինքը չի կարող պարգևել մեզ մի այնպիսի բարիք, որ Սերն է: Սիրո պարգևն ավելին է, քան պարգևը հրաշքի: Սերն ազատ է թերություններից: Առաքինի կյանքն առանց սիրո ոչ մի զորություն չունի իր մեջ: Պողոս առաքյալն ասում է, որ եթե անգամ մեր մարմինները մատնենք կրակին, ոչ մի օգուտ չենք ստանա դրանից, եթե մենք չենք սիրում մեր մերձավորներին»[12]:

Օսկեբերանին հետևելով՝ Մանդակունին առանձնահատուկ ուժով հանդես է գալիս ընդդեմ այն ժամանակվա թատրոնի՝ իբրև մի շինության, որը պահպանում է հեթանոսության գործնական սկզբունքները և աշխարհայեցողությունը. «Վասն անօրէն թատերաց դիւականաց» ճառը լավագույնս ներկայացնում է Մանդակունի բարոյախոսին: Մի կողմից նա հանդես է գալիս ընդդեմ թատերական ներկայացումների, մյուս կողմից էլ, ջանալով մեղմել իրեն համակած բարկությունը, բացատրում է դրանց ոչ քրիստոնեական հիմունքները:

Օսկեբերանը ևս խստագույն անհանդուրժողականություն է ցուցաբերում թատերախաղերի դեմ և դրանք դիվամոլություն կոչում: «Թատրոնները ուսուցանում են ամբարտավանություն, նախանձ, հայհոյություն, նենգություն, բամբասանք»[13]: Այս ճառի մեջ երևան է գալիս Օսկեբերանն իբրև նախագաղափար Մանդակունու, քանզի, Մատթեոսի Ավետա-

---

[8] Հովհան Օսկեբերան, Ասույթներ Աստծո և հավատքի մասին, Երևան, 1998, էջ 14-15:
[9] Հովհան Մանդակունի, Ճառեր, էջ 71:
[10] Հղումն ըստ՝ **И. Златоуст**, նշվ. աշխ., էջ 246:
[11] Հովհան Մանդակունի, Ճառեր, էջ 90:
[12] Հովհան Օսկեբերան, Ասույթներ, էջ 15-16:
[13] Հղումն ըստ՝ Բ. Սարգիսեան, նշվ. աշխ., էջ 226:

բանի 12-րդ ճառը համեմատելով Մանդակունու վերոհիշյալ ճառի հետ, նմանությունն աչքի է զարնում:

Ոսկեբերանն ամեն սեռի և հասակի համար վտանգավոր է համարում թատերական տեսարանները՝ ասելով. «Ապա ուրեմն որ ի թատերսն երթայ, նա է որ զամենայն կարգս հոգևորս եղծանէ»[14], իսկ Մանդակունին, ընդհակառակը, «զթեթևամիտ և զշուաղաբարոյ ազգն կանանց» մասնավոր կերպով ջանում է պատսպարել «սատանայածին նետերից», քանզի տղամարդկանցից ավելի «նրազալուր, դիւրահաւան եւ վաղապատիր»[15] են: Եթե Ոսկեբերանն իր ունկնդիրներին «բուժելու» համար ուղարկում է նրանց «ի բուրաստանս, ի ծովալիճս եւ ի հանգրուանս մարտիրոսաց»[16], ապա Մանդակունին նրանց առջև բացում է մի կողմից «զգիշերն այն ահեղ եւ սոսկալի», որում շրջում է «ուրուականակերպ մահն սուրը ձեռքին», մյուս կողմից՝ «զօրն լուսաւոր ապաշխարութեան» անլույս տարտարոսից և անշիջանելի գեհենից ազատելու համար[17]:

Ոսկեբերանի նման Մանդակունին անսքող զայրույթով է խոսում ընդդեմ նրանց, ովքեր մտնում են եկեղեցի որպես քրիստոնյա, սակայն նրանց աղոթքը փոխանակ առ Աստված բարձրանալու, «մխրճվում է երկրի մեջ»[18]: Ոսկեբերանի նման Մանդակունին ևս բերում է Ղուկասու Ավետարանի՝ Աղքատ Ղազարոսի պատմությունը՝ ցույց տալով, թե որքան վաղանցուկ են երկրային բարիքները. «Իսկ դու ինչո՞ւ ես դողում հարստությանդ վրա, քանի որ և՛ նեղությունը, և՛ հեշտությունը մարդու համար են: Ինչո՞ւ ես անպտուղ արծաթ ժողովում՝ առիթ տալով հավիտենական գեհենին: Աչքիդ առաջ ունեցիր Քրիստոսի դատաստանը, որպեսզի անանց հավիտենական բարիքը ժառանգես»[19]: Նույն միտքը գտնում ենք և Ոսկեբերանի մոտ. «Ինչո՞ւ ես հոգ տանում քո ունեցվածքի մասին՝ դառնալով անշունչ առարկայի գերին: Ավելի լավ է հոգ տար հոգուդ փրկության համար, որպեսզի Վերջին Դատաստանի ժամանակ Տիրոջ բարեհաճությունը շահես»[20]:

Ուշագրավ է «Ընդդէմ անասնամոլաց եւ իգացելոց եւ արուագիտաց» ճառը: Մանդակունու համոզմամբ՝ այս ախտերը մարդկության մեջ գործված բոլոր մեղքերից և անբարոյականություններից ամենազազրելին են, քանզի ոչ միայն մարդկային արժանապատվության, այլև ամեն բնության արարածներին հակառակ է: Անասնամոլն այլևս «մարդ չէ և չէ իսկ ամենևին», քանզի նրանով լինում է մի անասունի մարմին, սպանում է իր հոգին և մարմինը՝ հավիտենական օրենքներին և վճիռներին համեմատ, քանզի «ոչ տեսանեմք, ասէ, զանասունս ի մարդոյ բնութիւնն ախորժեալ»[21]: Ոսկեբերանը ևս Հռոմեացվոց թղթի մեկնության 3-րդ ճառում զայրացած ահավոր շանթեր է թափում նմանների գլխին իրեն հատուկ կորովով և ճարտասանությամբ, իսկ Մանդակունին իր ողջ արվեստն է գործի

---

[14] Մեկնութիւն Աւետարանին Մատթէի, Վենետիկ, 1826, էջ 586:

[15] Հղումն ըստ՝ Բ. Սարգիսեան, նշվ. աշխ., էջ 226:

[16] Մեկնութիւն Աւետարանին Մատթէի, էջ 568:

[17] Հղումն ըստ՝ Բ. Սարգիսեան, նշվ. աշխ., էջ 227:

[18] Նույն տեղում, էջ 228:

[19] Հղումն ըստ՝ Բ. Սարգիսեան, նշվ. աշխ., էջ 214:

[20] «Слово второе к неверующему отцу». //«Беседы избранные святого отца нашего Иоанна Златоуста»; кн. 1, часть 2, М., 1819, стр. 63.

[21] Հղումն ըստ՝ Բ. Սարգիսեան, նշվ. աշխ., էջ 215:

դնում այդ թշվառականներին համոզելու և դարձյալ իրենց նախատիպ պատկերին բերելու համար:

Մեկ այլ տեղ Ոսկեբերանն այն միտքն է արտահայտում. թե «բոլոր մարդիկ էլ մեղավոր բնույթ ունեն. բոլոր մեղքերն էլ կարելի է ներել, եթե միայն մեղավորը խորը զղջմամբ և աղոթքներով հայցի Տիրոջ ողորմածությունն ու ներողամտությունը»[22]:

Ոսկեբերանի այս միտքը զարգացնելով՝ Մանդակունին նման ախտերով տառապող մարդկությանը բուժելու համար առաջ է քաշում ամենազորեղ մի դեղ, ամենահարմար մի միջոց, որը կարող է «մոտեցնել երկիրը երկնքին և մարդուն՝ Աստծուն»[21]: Իբրև այդպիսի ճանապարհ՝ նա ցույց է տալիս աղոթքը, որին նվիրել է իր ճառերից մեկը՝ «Վասն ընդունելի և անընդունելի աղօթից» խորագրի ներքո: Այս նյութը նոր չէ, քանզի Ոսկեբերանն իսկ մեկը մյուսից գեղեցիկ ճառեր է գրել այդ մասին: Բայց, ի տարբերություն Ոսկեբերանի, որը միայն խոսում է աղոթքի հզոր նշանակության մասին, Մանդակունին նաև սովորեցնում է, թե ինչպես պետք է աղոթել. «զի աղօթք անապատք, արտասուօք եւ ողորմութեամբ, ընդ աղօթիցն աղօթականին՝ բանան դրունք երկնից եւ ի լսելիս Աստուծոյ ելանեն»:

Այսպիսով, Հայ Եկեղեցու համար ընդհանրապես առանձնահատուկ նշանակություն ունի Ոսկեբերանի կերպարն իբրև չափորինակ: Նա Ընդհանրական Եկեղեցու այն մի քանի հայրերից է, որոնց հեղինակությունն անվերապահորեն ընդունվել է Հայ Եկեղեցու կողմից: Ոսկեբերանի նկատմամբ Հայ Եկեղեցու յուրահատուկ վերաբերմունքի մասին է վկայում նաև այն իրողությունը, որ եկեղեցական օրացույցի տոներից մեկը նվիրված է մեծանուն ուսուցչապետին:

Ընդհանրապես Ոսկեբերանը եղել է բոլոր ժամանակների հայ ընթերցողի սիրելի հեղինակներից մեկը: Այդ իսկ պատճառով Ոսկեբերանի մատենագրական ժառանգության հետ հայ եկեղեցական մտքի աղերսների ուսումնասիրությունը չի կարող ամբողջական լինել, եթե այն սահմանափակվում է լոկ Հայ Եկեղեցու առաջին հայրերից մեկի՝ Հովհան Մանդակունու քարոզագիտական հայացքների վրա նրա թողած ազդեցությամբ: Այն չի թույլացել հայ աստվածաբանական մտքի զարգացման պատմության ողջ ընթացքում, և Հայ Եկեղեցու կյանքում Ոսկեբերանի ունեցած նշանակությունն ավելի լավ հասկանալու համար անհրաժեշտ է առավել խորը մատենագրական և աղբյուրագիտական քննություն, որը կընդգծեր ու կլուսաբաներ մեծ վարդապետի հետ հաջորդող դարերի հայ մյուս հեղինակների ունեցած ներքին խորը կապը:

---

[22] «Беседы…» «Теодору падшему». Увещание 1-ое, стр. 38.

[21] Հղումն ըստ՝ Բ. Սարգիսեան, նշվ. աշխ., էջ 229:

*ԱՐՄԵՆ ԲԱՑԱԴՅԱՆ*

# ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԸ ՊԱՀՈՑ ԿԱՄ ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԻ ՀԵՂԻՆԱԿ

Հայ բանաստեղծության սկզբնավորման ու հետագա զարգացման մեջ մեծ արժեք ունեն հայոց շարականները, որոնք իրենց սկզբնավորման շրջանից մինչև 12-րդ դարը կոչվել են «Հոգևոր երգ»[1]: Հոգևոր երգերը հայ իրականության մեջ ծագել են 5-րդ դարում, աստիճանաբար զարգացել ու տարածվել այն աստիճան, որ դարձել են մեր ժողովրդի մաքառման միջոցներից մեկը: Այն դարեր շարունակ ոչ միայն նպաստել է հայապահպանման դժվարին գործին, այլև հզորացրել է հավատացյալների մեջ կրոնական ջերմեռանդությունը և պատշաճ հանդիսավորություն հաղորդել եկեղեցական-ազգային տոներին ու պաշտամունքային ժամերին:

Ինչպես մյուս քրիստոնյա ազգերի, այնպես էլ մեզ մոտ քրիստոնեության սկզբնական շրջանում հոգևոր պաշտամունքների համար առանձին հոգևոր երգեր չկային: Հայտնի է, որ դրանց նախորդել են հրեական սաղմոսների կանոնները, որոնք, հավանաբար մի փոքր ավելի ուշ, հետզհետե հարմարեցվում էին հայկական երաժշտական հնչողությանը և, ինչու չէ՝ նաև մտածողությանը: Հետագայում սաղմոսները, իհարկե, պահպանվեցին մեր ժամերգությունների մեջ, բայց դրանք զիջեցին իրենց առաջնային տեղը մեր անզուգական, չերկրորդված «Շարական պատուականաց»-ներին՝ ազնիվ քարերի շարաններին:

Կորյունը գրում է. «Անդ էր այնուհետեւ չարբենալ գինւով, այլ առաւելով հոգւով եւ պատրաստել զսիրտս երգովք հոգեւորօք ի փառս եւ ի գովութիւն Աստուծոյ...»[2]: Այս վկայակոչած երգերը, որոնք հարստացնում էին հոգիները և պատրաստում սրտերը, անկասկած նոր որակի երգեր էին և անպայման՝ հայախոս: Չի բացառվում նաև, որ դրանք մասամբ թարգմանված լինեին հունական կամ որևէ այլ քրիստոնեական ժամասացությունից: Սակայն այդ թարգմանված երգերը պետք է որ խմբագրված լինեին և ունենային հայադրոշմ նկարագիր: Մեր ասածի վառ ապացույցները պահպանվել են առ այսօր: Դրանցից է, օրինակ, Կիրակնամտից ժամերգության մեջ երգվող «Լոյս զուարթ»-ը, որը հասարակ թարգմանություն չէ, այլ մեր թարգմանիչ վարդապետները ապրել են դրանք, մոտեցրել մեր ներքին ընկալմանն ու էությանը՝ դարձնելով մեր ժողովրդի, մեր Եկեղեցու արարողակարգի սիրված ու անբաժան մեկ մասնիկը:

5-րդ դարի հայ շարականագրության մասին մեր բանասիրության մեջ արտահայտվել են տարբեր կարծիքներ: Հետազոտողների մի զգալի մասը չի ընդունում, որ այդ երգերը 5-րդ դարում են գրվել, որով և կասկածի տակ են դնում նրանց հեղինակային պատկանելության հարցը, թեև Հայոց եկեղեցական ավանդությունն ու հատկապես մեզ հասած մի

[1] V դարում այսօրվա կանոնի ընկալումը չկար: Կանոն ասելով նկատի ունենք այսօրվա կանոնի ընդունված չափանիշը:

[2] Կորյուն, ԻԳ:

քանի խմբագրություններ հավաստում են, թե մեր առաջին շարականագիրները եղել են 5-րդ դարի նշանավոր անձինք՝ Ս. Սահակ Պարթևը, Ս. Մեսրոպ Մաշտոցն ու նրանց տաղանդավոր, ընտրյալ աշակերտները:

Ինչպես «Շարակնոցի» առաջաբանում է ասվում. «Եւ սուրբն Մեսրովբ զկարգն Ապաշխարութեան...»[3]:

Նույն կերպ 13-րդ դարում «Շարակնոց»-ի Սարգիս Երեցի խմբագրությունում է. «ԶԱպաշխարութեան հարցներն եւ զտէր յերկնցերն Մեսրապայ վարդապետն ասաց»[4] (Հետաքրքիր է, որ նույն Սարգիս Երեցը Ապաշխարության ողորմյաների հեղինակ է համարում Բենիկ վարդապետին):

Գրիգոր Տաթևացու խմբագրություն (14-րդ դար).

«Նախ մեծն Մեսրովբ՝ զկարգն Ապաշխարութեան...»[5]:

Անանուն խմբագրություն (18 կամ 19-րդ դար).

«Նախ՝ Սուրբն Իսահակ եւ Սուրբն Մեսրոպ ասացին զութն եղանակատր ձայնսն եւ զերկու ձայն ստեղիս», սրան ավելացնում է նաև «Եւ Սուրբն Մեսրոպ՝ զկարգն Ապաշխարութեան...»[6]: Այսինքն՝ Անանուն խմբագրությունը, բացի Ապաշխարության կարգից, Մաշտոցին է վերագրում նաև ձայների 8 սկսվածքներն ու 2 ստեղիները, որոնք Մաշտոցն ստեղծել է Սահակ Պարթևի հետ: Ձայների ստեղծման մասին նույնն է հաստատում նաև «Ձայնքաղ» շարականի առաջաբանը. «...Սուրբն Սահակ եւ Սուրբն Մեսրովբ՝ ասացին զութն եղանակատր ձայնսն, եւ զերկու ձայն ստեղիս»[7]: Այս ձայների սկսվածքների հիման վրա էլ հետագայում ստեղծվեցին մեր բոլոր շարականները:

Առաքել Սյունեցին մի չքնաղ բանաստեղծություն է գրել՝ նվիրված շարականների հեղինակներին, ուր պերճախոսորեն գովերգվում են ոչ միայն շարականները, այլև նրանց հեղինակները: Այս բանաստեղծության 5-րդ տան մեջ առաջինը հիշվում է Մաշտոցը.

«Անուանք սրբոցն, որ ասացին
Ըզշարականս հոգով շնորհին,
Րաբունն այն քաջ եւ բաղձալին
Մեծըն Մեսրոպ զարմանալին»[8]:

Շարականների հեղինակներին նվիրված նման մի գեղեցիկ բանաստեղծություն է գրել նաև Ստեփանոս Ջիք Ջուղայեցին, ուր և հենց առաջին տան մեջ հիշում է Մաշտոցին՝ որպես Ապաշխարության կարգի հեղինակ.

«Որք ըզծորանս հոգոյն արփին,
Ըզշարականսն ոգեալ գրեցին.

---

[3] Ձայնքաղ շարական, Վաղարշապատ 1888 (այսուհետ՝ Շարակնոց), էջ 3:

[4] Հ. Անասյան, Հայկական մատենագիտություն, հտ. Ա, Երևան, 1968, էջ LXVI:

[5] Նույնը, էջ LXVII:

[6] Նույնը, էջ LXVIII:

[7] Շարակնոց, էջ 3:

[8] Հ. Անասյան, նշվ. աշխատություն, էջ LXIX:

Նախ մեծ Մեսրոպ Տարօնեցին
Ըզկարգ Աղցիցն ամենից...»[9]:

Հայր Գաբրիել Ավետիքյանը «Բացատրութիւն շարականաց» արժեքավոր աշխատությունում գրում է, թե «Ցայսմ վկայէ աւանդութիւն բովանդակ ազգիս մերոյ, զոր եւ գրով արձանացուցին Ցայսմաւուրքս ի 17 սեպտեմբերի ի Պատմութեան վարուց Սրբոց Թարգմանչացն ասելով. «Արարին երգս շարականաց եւ կարգեցին եղանակս ամենայն ձայնից... Մեծն Մեսրոպ ասաց զկարգ Ապաշխարութեան »[10]:

Սահակ Ամատունին 20-րդ դարի սկզբին ուսումնասիրելով Ս. Էջմիածնի մատենադարանում և ուրիշ տեղերում պահվող 73 ձեռագրեր, որոնցում գրված են եղել հայկական շարականների և շարականագիրների մասին, խոսքը մասնավորելով Մաշտոցին վերաբերող վկայություններին, գրում է. «Շարականների հեղինակների գրական գործերին քաջածանոթ գրիչները Ապաշխարության շարականները միաձայն ընծայում են Մեսրովբ թարգմանչին: Թարգմանչիս այս գրական վաստակի մասին Կարապետ եպիսկոպոս Սասնեցին 12-րդ դարում գրում է իր «Ցաղագս վարուց եւ մահուան սուրբ եւ երջանիկ վարդապետին Մեսրոպայ թարգմանչի եւ ուսուցչի» երկի մեջ. «Եւ շարաքան եղանակ Ապաշխարութեան ըստ թուոյ աւուրց պահոցն, զորս ընկալեալ երգէ զեկեղեցի սուրբ»[11]:

Կարծում ենք, որ վերոհիշյալ գրավոր տվյալները ու մեզ հասած Հայոց եկեղեցական-մատենագրական ավանդությունը, որոնք անվերապահորեն հաստատում են, թե Ապաշխարության ամբողջ կանոնը գրել է Մաշտոցը, այլևս անհիմն է ժխտել ՝ հատկապես, որ այդ շարականների անաղարտ լեզուն չափազանց պարզ է ու պատկերավոր և հարազատ ոսկեդարյան շրջանին:

Մաշտոցյան երգերն իրենց պարզությամբ, զգացմունքների անկեղծությամբ և պատկերների հարստությամբ համարվում են Շարակնոցի անզուգական գոհարները:

Նրանց շարքում առանձնանում են նաև մի շարք երգեր, որոնք մուտք են գործել Ծիսարան, Մայր Մաշտոց և Ժամագիրք, որոնց մեջ կատարելագույնները Ժամագրքի Ապաշխարության «Թագաւոր յաւիտեան»-ներն են, որոնք, ըստ Գրիգոր Տաթևացու, վերագրվում են Մաշտոցի հեղինակությանը: Սրանք ունեն մեղեդային սքանչելի հագեցվածություն, որով խոսքի ու մեղեդու ներդաշնակությունը հասնում է իր բարձրակետին:

«Թագաւոր յաւիտեան»-ները Գիշերային ժամերգության մեջ հաջորդում են անմիջապես գիշերային աղոթքին և կազմված են 3 մասից.

Ա. Թագաւոր (Թ), Բ. Սաղմոս (սղմ), Գ. Փոխ (փ):

Մաշտոցը գրել է վերոհիշյալ 3 մասերից առաջինը և երրորդը, իսկ երկրորդ տունը՝ Սաղմոսը, վերցված է Սուրբ Գրքից: Սրանք հորինվել են շաբաթվա հինգ օրերի համար՝ բացառությամբ շաբաթ և կիրակի օրերի, որոնց ժամանակ սովորաբար լինում են հատուկ տոներ:

Ապաշխարության «Թագաւոր յաւիտեան»-ները բաղկացած են հինգական տներից. այսպես՝ 3 Թագաւոր, 3 Սաղմոս, 3 Փոխ: Բացառություն է կազմում ուրբաթ օրվա «Թագաւոր

[9] Նույնը, էջ LXX:

[10] Գ. Աւետիքեան, Բացատրութիւն շարականաց, էջ 6:

[11] Ս. Վ. Ամատունի, Հին և նոր պարականոն շարականներ, Վաղարշապատ, 1911, էջ 81:

յալիտեան»-ը, որն ունի նաև մեկ ավելի Փոխ՝ ննջեցելոց համար. քանի որ Մեծ պահքի ընթացքում ննջեցելոց կարգ չի կատարվում և փաստորեն երգվում է «Որ լուսատու ես տիեզերաց...» Փոխը: Այս «Թագավոր յալիտեան»-ներն ունեն լեզվի և ոճի վսեմություն: Սրանք իրենց բառապաշարով ու հորինվածքով ավելի նման են մաշտոցյան Ողորմեա-ներին և աչքի են ընկնում անկեղծ զղջումի, անձնական մեղքի գիտակցումով՝ լինելով հոգեցունց աղոթքներ ու պաղատանքներ:

Հետաքրքիր է նաև, որ այս հոգեզմայլ երգերի որոշ տներ, բացի իրենց բանաստեղծական յուրահատկություններից, ունեն նաև մեղեդային առանձնահատկություններ, որոնք տարբերվում են ինչպես մարտիրոսաց «Թագավոր յալիտեան»-ներից, այնպես էլ ընդհանրապես մյուս շարականներից: Այդ տներն են՝ Երկուշաբթի օրվա «Թագավոր յալիտեան»-ի վերջին «Երկինք եւ երկիր հանապազ զքեզ գովեն...» Փոխը, ուր մեղեդին ավելի սրտամորմոք է դառնում նախավերջին 2 «սուրբ» բառերի երգեցողության ժամանակ, որոնք, ինչպես նաև մյուս օրերի «Թագավոր յալիտեան»-ների յուրահատուկ մասերը, ըստ Ս. Էջմիածնի Մայրավանքի սովորության, երգվում են միայնակ:

Երեքշաբթի օրվա նույնպես վերջին «Մեղա քեզ, Տէր ...» Փոխը:

Չորեքշաբթի օրվա 6-րդ տունը, որը նաև 2-րդ Փոխն է. « Անոխակալ եւ անյիշաչար Տէր...»:

Հինգշաբթի օրվա «Թագավոր յալիտեան»-ը թեև չունի վերոհիշյալ տների նման մեղեդային յուրահատկություն, սակայն այն էլ աչքի է ընկնում իր լեզվական առանձնահատկությունով ու հոգեհույզ շարադրանքով:

Ուրբաթ օրվա վերջին Թագավորը՝ «Զմոլորեալ ծառայս խնդրեա Տէր...» և վերջին Փոխը՝ «Որ մոլորեցայ ի հօտէ քումմէ, հովիւ բարի...»: Այս երգերի ինքնատիպ ու չգերազանցված մեղեդիները, այնպես, ինչպես մաշտոցյան մյուս շարականները, մեզ են հասել դարերի հոլովույթներով և հոգևոր սպասավորների կողմից դրանք պահպանվում են սրբությամբ ու երկյուղածությամբ, որպեսզի երբեք որևէ մեկը չհանդգնի աղավաղել նրանց անապական անաղարտությունը:

Մաշտոցի գրչին պատկանող շարականների մեծ մասը բաղկացած է I պատկերից, որոնք էլ իրենց հերթին ունեն 3 տուն՝ խորհրդանշելով Ս. Երրորդությունը՝ Մի Աստվածության մեջ: Ստեղծագործական այս ձևը ևս բնորոշ է հաջորդող դարերի մեր շարականագիրներին:

Այժմ ներկայացնենք մաշտոցյան երգերի ընդհանուր թիվն ու միավորների քանակն ըստ 8 ձայների:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ մաշտոցյան Ապաշխարության շարականներում առկա են կանոնի մաս կազմող 8 միավորներից միայն 5-ը՝ Հարցը, Ողորմեան, Տէր յերկնիցը. Մանկունքն ու Համբարձին: Բացակայում են Օրհնությունը, Մեծացուսցեն և Ճաշու շարականը:

Բայց դեռևս միջին դարերում շարակնոցը վերադասավորելու ժամանակ մեր Եկեղեցու հայրերը՝ հատկապես Ներսես Շնորհալին, մաշտոցյան Ողորմեա-ներից ստեղծել է ապաշխարության քաղվածոց օրհնություններ՝ ըստ օրվա ձայնի, որոնք կազմվել են 4-6 Ողորմեա-ներից, որտեղ պակասող Ողորմեա-ները լրացվել են Տէր յերկնից-ներով: Հետաքրքիր է նաև, որ տնօրինականների պահոց օրհնությունների մեջ դրվում են մեկական

տուն, որոնց երկու տները, այսինքն Փառքն ու Այժմ եւ Միշտ-ը Աստվածածնի ու խաչի են: Իսկ առաջինը վերցվում է ընդհանրապես Մեծի պահոց կիրակիների օրհնություններից:

Ապաշխարության կամ Պահոց օրհնությունները երգվում են առանց սկսվածքի, որոնք հանգստյան քաղվածոց օրհնությունների հետ բացառություն են կազմում մեր ժամերգություններում: Ահա պահոց օրհնությունները ըստ 8 ձայնի, համաձայն 1888 թվականի Վաղարշապատում հրատարակված Շարակնոցի.

| | | |
|---|---|---|
| ԱՁ | «Հայր բազումողորմ...» | 6 պատկեր |
| ԱԿ | «Սով կենցաղոյս....» | 7 պատկեր |
| ԲՁ | «Դարձո զցասումն քո....» | 5 պատկեր |
| ԲԿ | «Ցամենայն ժամ...» | 8 պատկեր[12] |
| ԳՁ | «Ձեռն զիս յորոգայթէ...» | 7 պատկեր |
| ԳԿ | «Քրիստոս Աստուած աստուծոց...» | 7 պատկեր |
| ԴՁ | «Համբառնամ առ քեզ Տէր...» | 8 պատկեր |
| ԴԿ | «Քրիստոս Աստուած յոյս...» | 7 պատկեր |

Այս բոլորը միասին կազմում են 55 պատկերներ: Հետաքրքիր է, որ ինչպես այս շարականները, այնպես էլ մյուս օրերում երգվող հոգևոր երգերն ունեցել են նաև իրենց երգեցողության հատուկ կարգը, որի մասին Խորեն Պալյանը գրում է. «Հնում յուրաքանչյուր շարականի տուն կրկնվել է մյուս դասից, բացի հարցի շարականից, որի տները կրկնվել են 3 անգամ, իսկ գործատունը՝ 2 անգամ: Սրա լավագույն ապացույցն է այն, որ հին Ջայնքաղ շարակնոցները տնօրինական պատկերներից հետո Փառք-ի և Միշտ-ի համար դնում են միայն մեկ տուն:

Այժմ այդ սովորությունը գրեթե վերացել է: Մինչև վաթսունական թվականների վերջը Ս. Էջմիածնի մայրավանքում սովորություն էր կրկնել շարականի առաջին տունը, եթե այն ուներ կենտ տներ՝ երեք կամ հինգ, մանավանդ Մեծացուսցէ, Ողորմեա. Տէր յերկնից, Մանկունք և Համբարձի շարականների երգեցողության ժամանակ, բացի Ստեղի շարականներից:

Այժմ Ս. Էջմիածնում վերացել է վերոհիշյալ հնավանդ սովորությունը»[13]:

Ապաշխարության քաղվածոց օրհնությունները Շարակնոցում գտնվում են 89-ից 98-րդ էջերում:

Այժմ անցնենք Ապաշխարության հարցերին, որոնք ընդհանուր թվով 43-ն են, որոնցից 13-ը աղցմի[14] են և երկուսն էլ՝ ստեղիներ: Ահա այդ հարցերն ըստ ձայների և պատկերների.

| | | |
|---|---|---|
| ԱՁ | «Որ հայիս քաղցրութեամբ...» | 6 հարց (մեկն աղցմի) |
| ԱԿ | «Ջանուն քո Քրիստոս...» | 6 հարց (մեկն աղցմի) |
| ԲՁ | «Օրհնեալ Տէր Աստուած...» | 4 հարց (երկուսն աղցմի) |

[12] Ի դեպ, այս օրհնությունը, սկսված 6-րդ պատկերից՝ «Եկեսցէ Տէր ի վերայ մեր ...», երգվում է Հանգստյան ժամերգության ընթացքում:

[13] Խ. Պալյան, Ժամակարգություն, անտիպ, էջ 21-22:

[14] Աղցմի նշանակում է «աղուհացից մի ասէր»:

| | | |
|---|---|---|
| ԲԿ | «Հարցըն Մերոց օրհնեալ ես...» | 5 հարց (երեքն աղցմի, իսկ վերջինը ստեղի է) |
| ԳՁ | «Փառաւորեալ անուն քո...» | 6 հարց (մեկն աղցմի) |
| ԳԿ | «Սուրբ Աստուած ...» | 2 հարց (մեկն աղցմի) |
| ԴՁ | «Հարցըն մերոց Աստուած...» | 7 հարց (երկուսն աղցմի) |
| ԴԿ | «Աստուած հարցն մերոց...» | 7 հարց (երկուսն աղցմի, իսկ մեկն էլ ստեղի է) |

Ապաշխարության հարցերը իրենց կառուցվածքով օրինակ և հիմք են ծառայել հետագա շարականագիրներին, որոնք պահպանել և կիրառել են մաշտոցյան օրինակը: Յուրաքանչյուր հարց բաղկացած է 3 փոքրիկ տնից՝ բուն հարցից (հ) և գործատնից (գ): Հարցերն սկսվում են երգվել ըստ օրվա ձայնի «Օրհնեալ ես, Տէր, Աստուած հարցն մերոց, օրհնեալ փառաւորեալ անուն քո յաւիտեան» սկսվածքով:

Մեծ պահքի ընթացքում 43 հարցերից երգվում են 30 հարցեր՝ 6 շաբաթների ընթացքում սկսվելով ԱՁ-ից մինչև ԴԿ հերթականությամբ: Մնացած 13 հարցերը, որոնք աղցմի են, չեն երգվում Մեծ պահքի ընթացքում: Սրանք երգվում են նաև Հոգեգալստյան տոնից հետո սկսվող չորեքշաբթի օրվանից, որը պահոց օր է, այդ թվում նաև բոլոր չորեքշաբթի պահոց օրերին և շաբաթապահքերի այն օրերին, երբ հատուկ տոն չի լինում: Ապաշխարության հարցերը չեն երգվում Ապաշխարության մանկունքների հետ պահոց ուրբաթ օրերին, որովհետև այդ օրերին երգվում են հանգստյան հարցեր և Խաչի մանկունք-ներ:

Թեպետ մենք խոսել ենք այս շարականների երգեցողության մասին քաղվածոց օրհնությունների հատվածում, որը Ս. Էջմիածնի, ցավոք, չպահպանված հնավանդ սովորությունն էր, այնուամենայնիվ հարկ ենք համարում բերել նաև Ապաշխարության հարցերի հետ կապված Տոնացույցի հրահանգը. «Զկարգ Ապաշխարութեան հարցիցն այսպէս պահեա: Ի յայս չորեքշաբթէս սկսեալ ի յամենայն չորեքշաբթէս եւ ի շաբաթապահոց, յորս ոչ իցեն տօնք, ասա կարգաւ զամենայն ապաշխարութեան հարցն, բացի յերկուց, ԲԿ եւ ԴԿ ստեղացն (Այսինքն՝ բացի յԱստուած եւ ի յԱնուն քոյ յաւիտեան հարցիցս): Եւ ի վերջացուցանել, վերստին սկսեա զաղցմիսն միայն ասել մինչեւ հասանիցիս ի Սուրբ Սարգսի կիւրակէն: Զայս եւ տարեգիրն ցուցանէ քեզ»:

Հարցերի մեծ մասի նյութը վերցված է Դանիելի մարգարեությունից՝ Աբեղոնի «Երից Մանկանց» պատմությունից: Բուն հարցը գլխավորապես ունի օրհնաբանական և ապաշխարական բնույթ, իսկ գործատունը՝ ներբողական և փառաբանական: Այս հարցերի մեջ միաշաղախված են և՛ աղոթք, և՛ պաղատանք, և՛ խնդրանք, և՛ ցանկություն, ուր շարականագիրը, հուզված, Աստծու ուշադրությունն է ցանկանում բևեռել մեզ վրա՝ ասելով, «Որ յոչնչէ գոյացուցեր զերկինս եւ զերկիր, յիշեա զմեզ Տէր մարդասիրութեամբդ քո...»[15]:

Այնուհետև հեղինակը, դիմելով երեք մանկաց հնոցում հրաշքով պահող Փրկչին, ասում է. «Որ երգեցողացն աղօթիւք՝ հրաշացուցեր ի մէջ հնոցին զՔո զանչափ զօրութիւնդ, ուսո մեզ անդադար օրհնել զահաւոր անուն Քո սուրբ»:

Շարականագիրը գիտի մարդու բազում անօրենությունները, բայց գիտի նաև Աստծու զորությունը, որն օգնության է հասնում նրանց, ովքեր ունեն այդ օգնության կարիքը. «Մի

[15] Շարակնոց, էջ 98 (ԱՁ):

մատներ զմեզ իսպառ ըստ անօրէնութեան մերում. վասն Աբրահամու սիրելւոյ Քո, օրհնեալ ես յաւիտեան:

Էջ հրեշտակն յերկնից եւ զբոց հրոյն շիջոյց. եւ փրկեաց զօրհնաբանսն ի ձեռաց մահու, օրհնեալ ես յաւիտեան»:

Ինչպես նշել ենք, Մեսրոպ Մաշտոցն իր շարականներում անդրադարձել է նաև որոշ դավանաբանական խնդիրների՝ փորձելով ամենամատչելի ձևով հավատացյալներին բացատրել Սուրբ Երրորդությունը: Մաշտոցն իր պարզությամբ, և պարզության մեջ՝ անսպական գեղեցկությամբ, հասնում է ընկալելի խոսքի կատարելության, որը դարձյալ չի դադարում աղոթք և խնդրանք լինելուց.

«Միասնական Սուրբ Երրորդութիւն որ յամենայնի ես բարեբանեալ. ընկալ զմեր օրհներգութիւնս. Աստուած հարցն մերոց»[16]:

Ապաշխարության հարցերը, ինչպես նաև մնացյալ Ապաշխարության բաղադրիչները շարակնոցում զբաղեցնում են 98-ից մինչև 167-րդ էջերը: Ընդ որում այս էջերում են գտնըվում նաև Քառասնորդական պահոց շաբաթ և կիրակի օրերի կանոնները:

Մեսրոպ Մաշտոցի գրչին պատկանող շարականների հաջորդ խումբը «Ողորմեա»-ներն են, որոնք հորինվել են՝ իբրև բնաբան ունենալով Դավթի Ծ սաղմոսը. «Ողորմեա ինձ Աստուած, քաւեա զանօրէնութիւնս իմ», որի մեջ, ինչպես և մյուս վերոհիշյալ շարականներում ուժեղ են հնչում ապաշխարության և զղջման մոտիվները: Վերջին հաշվով սրանք անկեղծ, սրտաբուխ, լալահառաչ և հոգեհույզ երգեր են, ուր նկարագրվում են անհատի ներքին հոգեկան աշխարհն ու ապրումները: Այս Ապաշխարության ողորմեա-ներն իրենց քնարականությամբ առաջնային տեղ են զբաղեցնում հայոց շարականների մեջ: Եվ պատահական չէ, որ Ներսես Շնորհալին, ողորմեա-ներին կցելով տնօրինական պատկերներ, կազմել էր վերը նշված ապաշխարության օրհնությունները:

Ընդհանրապես ողորմեա-ները, հնագույն սովորության համաձայն, նախկինում հետևել են հարցին: Այսօրվա սովորության համաձայն, ողորմեա-ն սովորական օրերին հաջորդում է «Մեծացուսցէ» շարականին, իսկ կիրակի օրերին՝ Յուղաբերից կարգին՝ կազմելով կանոնի 4-րդ միավորը: Ապաշխարության ողորմեա-ներն ընդհանուր 48 պատկերներ են և ունեն ձայների և պատկերների հետևյալ դասավորությունը.

| | | |
|---|---|---|
| ԱՁ | «Հայր բազումողորմ...» | 6 պատկեր |
| ԱԿ | «Ծով կենցաղոյս...» | 6 պատկեր |
| ԲՁ | «Դարձո զցասումն...» | 4 պատկեր |
| ԲԿ | «Յամենայն ժամ...» | 7 պատկեր |
| ԳՁ | «Ձերծո զիս...» | 6 պատկեր |
| ԳԿ | «Քրիստոս Աստուած...» | 6 պատկեր |
| ԴՁ | «Համբառնամ առ քեզ...» | 7 պատկեր |
| ԴԿ | «Քրիստոս Աստուած յոյս...» | 8 պատկեր |

Անհրաժեշտ է նշել, որ Ապաշխարության ԴՁ «Անկանիմ առաջի քո...» ողորմեա-ում Մաշտոցը երաժշտական հնչողության առումով շատ է մոտենում «Թագաւոր յաւիտեան»-

[16] Շարակնոց, էջ 119 (ԲՁ):

ների վերոհիշյալ տների յուրահատուկ երաժշտությանը, որը մի տեսակ վսեմություն է հաղորդում այս լալահառաչ ու արտաշարժ շարականին:

Ապաշխարության «Տէր յերկնից» շարականները, որոնց հեղինակը նույնպես Մեսրոպ Մաշտոցն է, հիմնականում ունի փառաբանական իմաստ և ստեղծված է Դավթի ՃԽԸ սաղմոսի հիման վրա. «Օրհնեցէք զՏէր յերկնից, օրհնեցէք զՆա յաւիտեանն», որն էլ արդեն մեզ հուշում է, թե մոտավորապես ինչպիսին պետք է լինի նրա բովանդակությունը:

Սրանք նույնպես բաղկացած են երեքական տներից, բայց կան նաև 4 կամ 5 տներից բաղկացած «Տէր յերկնից»-ներ, այդ թվում՝ նաև մեկից ավելի պատկեր ունեցողներ: Այդպիսի կառուցվածք ունեն «Տուք զփառս Աստուծոյ...», «Որ ի վերդ ես քան զամենայն ըղձիտս...» և «Մի Աստուածութիւն՝ Երրորդութիւն անբաժանելի...» «Տէր յերկնից» շարականները:

Ապաշխարության «Տէր յերկնից»-ները շարակնոցում թվով 45-ն են և ունեն հետևյալ հերթականությունը՝ ըստ ձայների և պատկերների.

| | |
|---|---|
| ԱՁ «Տէր որ ի վերայ...» | 6 պատկեր |
| ԱԿ «Ի համբառնալ իմում...» | 6 պատկեր |
| ԲՁ «Որ ի վերդ ես քան...» | 4 պատկեր |
| ԲԿ «Միաբանութեամբ տուք փառս...» | 7 պատկեր |
| ԳՁ «ԶՀայրն երկնաւոր...» | 6 պատկեր |
| ԳԿ «Զանսկիզբն Աստուած...» | 2 պատկեր |
| ԴՁ «Տէր երկնի և երկրի...» | 7 պատկեր |
| ԴԿ «Ցիշեա զմեզ Տէր...» | 7 պատկեր |

Քանի որ «Տէր յերկնից»-ների մեծ մասը փառաբանություններ են, բնական է, որ այստեղ հեղինակը չէր կարող չշոշափել նաև դավանաբանական որոշ հարցեր, ինչպես, օրինակ, Կանոնի 1-ին օրվա (ԱՁ) Տէր յերկնից-ում, ուր բանաստեղծ շարականագիրը հուզված բացականչում է. «Քեզ վայելէ Աստուած օրհնութիւն զօրհանապազ...», որից հետո Ս. Մեսրոպը կարծես փորձում է բացատրել, թե մշտապես ո՞ւմ է վայել օրհնությունը, և կամ ի՞նչ ենք հասկանում Աստված ասելով. «ԶՀայր և զՈրդի և զՍուրբ զՀոգիդ՝ գոհութեամբ բարեբանեսցուք...», որից հետո Մաշտոցը՝ իբրև տաղանդավոր ուսուցիչ, կարծես թե ցանկանում է սովորեցնել, որ Հայրը, Որդին և Սուրբ Հոգին նույն Ս. Երրորդությունն է, որին մենք մեկ բառով Աստված ենք ասում. «ԶԵրրորդութիւն միասնական գովեմք. և զմի Աստուածութիւն ...»[17]:

Նշենք նաև, որ «Տէր յերկնից»-ների մասին մի շատ գեղեցիկ մեկնություն է գրել Խոսրով Անձևացին՝ «Վասն օրհնութեան զկնի Տէր յերկնիցն» վերտառությամբ[18]:

Ապաշխարության «Մանկունքներ»-ը, որոնք ստեղծվել են ՃԺԲ սաղմոսի հիման վրա. «Օրհնեցէք մանկունք զՏեր և օրհնեցէք զանուն Տեառն» շարակնոցում թվով 10-ն են և ունեն հետևյալ դասավորությունը.

[17] Շարակնոց, էջ 99 (ԱՁ)

[18] Տե՛ս Խոսրով Անձևացի, Վասն օրհնութեան զկնի Տէր յերկնիցն, էջ 152:

| | |
|---|---|
| ԱՁ «Զառաւօտու զօրհներգութիւնս...» | 1 պատկեր |
| ԱԿ «Լոյս փառաց...» | 1 պատկեր |
| ԲՁ «Մանկունք եկեղեցւոյ...» | 2 պատկեր |
| | (մեկն ստեղի է «Զանուն Տեառն...») |
| ԲԿ «Արթունք և պատրաստ...» | 1 պատկեր |
| ԳՁ «Զքեզ բարեբանեմք...» | 1 պատկեր |
| ԳԿ «Օրհնեցէք զՏէր...» | 1 պատկեր |
| ԴՁ «Մանկունք զՏէր...» | 1 պատկեր |
| ԴԿ «Է անուն Տեառն...» | 2 պատկեր |
| | (մեկն ստեղի է «Յոյս իմ...») |

Մանկունքները նույնպես մի տեսակ օրհներգություններ են, ուր սրբազան շարականագիրը ցանկանում է, որ օրհնենք, գովենք, բարեբանենք Տիրոջը և դրա հետ միասին օրեօր ավետարանենք Նրա փրկությունը[19]: Շարականագիրը պատրաստ է նաև միշտ արթուն երգել ու սաղմոս ասել Տիրոջը. «Զի նա է Տէր Աստուած մեր. փրկէ զմեզ և կեցուցանէ»[20]:

Ապաշխարության «Մանկունք»-ներում հիմնականում քիչ են արծարծված դավանաբանական խնդիրներ, որովհետև ըստ էության դրանք թվով էլ են քիչ՝ համեմատած կանոնի մյուս բաղադրիչների հետ: Ամենահագեցվածը ԲՁ ձայնեղանակով գրված «Մանկունք եկեղեցւոյ» շարականն է:

Կանոնի վերջին՝ 8-րդ բաղադրիչը՝ «Համբարձի»-ն, երեկոյան ժամերգության հիմնական շարականն է, որոնցից Ապաշխարության «Համբարձի»-ները պատկանում են նույնպես Մաշտոցի հանճարեղ գրչին: Սրանց սկսվածքը Դավթի ՃԻ սաղմոսն է. «Համբարձի զաչս իմ ի լերինս, ուստի եկեսցէ ինձ օգնութիւն» և ունեն հետևյալ դասավորությունը.

| | |
|---|---|
| ԱՁ «Ինձ օգնութիւն... և Համբարձի...» | 2 պատկեր |
| ԱԿ «Օգնական մեր լեր, Տէր...» | 1 պատկեր |
| ԲՁ «Համբառնալով զաչս մեր...» | 1 պատկեր |
| ԲԿ «Յօգնութիւն մեզ ժամանեա...» | 1 պատկեր |
| ԳՁ «Զօրհներգութիւնս... և Պահապան...» | 2 պատկեր |
| ԳԿ «Տուր մեզ, Տէր... և Հովանի աջոյ...» | 2 պատկեր |
| ԴՁ «Ըզքեզ կարդամք...» | 1 պատկեր |
| ԴԿ «Մտցեն աղօթք իմ...» | 1 պատկեր |

Այսպիսով, Ապաշխարության «Համբարձի»-ները կազմելով 11 պատկեր, նույնպես աղերսական ու աղաչական բնույթի շարականներ են, որոնց մեջ ավելի շատ հիշատակվում է Քրիստոս: Տիրոջից է բանաստեղծը օգնություն հայցում, որ Իր Աջի հովանու ներքո պահպանի մեզ Բարեգութը[21], քանի որ Ինքն է մեր ապավենը, Փրկիչը և Հզոր Թագավորը: Եվ մենք էլ մեր հերթին միանում ենք բանաստեղծին՝ խնդրելով, որ Իր հաղթության

[19] Տե՛ս Շարակնոց, էջ 139 (ԳԿ):

[20] Շարակնոց, էջ 126 (ԲԿ):

[21] Տե՛ս Շարակնոց, էջ122 (ԲՁ):

նշանով պահպանի մեզ. «Պահապան խնդրեմք ի ՔԷՆ Քրիստոս՝ մի անտես առներ. այլ շնորհեա խնդրողացս ի ՔԷՆ զամենայաղթ զօրութիւն սուրբ խաչի Քո յօգնութիւն անձանց մերոց»[22]:

Ընդհանրապես համբարձի շարականներն ունեցել են իրենց երգեցողության հատուկ կարգը, որի մասին տեղեկություններ կան պահպանված Մաքենոցաց խրատում, ուր ասվում է, թե համբարձի շարականը եթե 4 տուն լինի, ապա պետք է միջին տները կրկնել: Եթե 5 տուն է, պետք է կրկնել 5-րդ՝ վերջին տունը, իսկ եթե 6 տուն է՝ կրկնելու կարիք չկա: Այս շարականների երգեցողության հետ կապված ավանդական սովորություն է եղել նաև Սուրբ Էջմիածնի մայրավանքում, որի մասին Խ. Պալյանը հայտնում է. «Երբ Համբարձի շարականը երեք կամ հինգ տուն է, ապա պետք է կրկնել առաջին տունը, որպեսզի փառքի տունը մնա ավագ դասին, այսինքն նրան, ում պատկանում է սկսվածքը: Վեց տուն լինելու դեպքում Համբարձին երգվում է առանց կրկնության»[23]:

Այսպիսով, Մաշտոցը մեր ազգային և՛ շարականի, և՛ բանաստեղծության անդրանիկ հիմնադիրներից մեկն է, որի գրած ամբողջ կանոնների թիվը շուրջ 158 միավոր է: Այն գրելու ժամանակ նա ուշադրություն է դարձրել Աստվածաշնչյան թեմաներին, նրանց աղոթքին հատուկ բովանդակությանը և իհարկե այդ ժամանակ դեռ նոր-նոր ձևավորվող տաղաչափությանը: Որովհետև նրա գրչին պատկանող շարականներում հանդիպում ենք յամբական պարզոտնյա ազատ բանաստեղծական չափին, որն առաջին անգամ հայոց մեջ, փաստորեն, օգտագործել է Մաշտոցը.

Մեղք իմ բազում են յոյժ,
Նման են քան զաւազ ծովու.
Քանզի Քեզ միայնոյ մեղա
Ողորմեա ինձ Աստուած[24]:

Նմանատիպ շարականները սովորաբար հավասար տողերից են կազմված լինում, իսկ երբեմն էլ 1-ին տողը կարող է մի տող ավելի ունենալ: Իսկ կոնկրետ այս շարականի դարձերն անփոփոխ 2 տողից են կազմված:

Մաշտոցի ողորմեա-ներում հանդիպում ենք նաև 5 վանկանի իշխող անդամներով խառը բանաստեղծության, որոնց մեջ հինգվանկ անդամների հետ լինում են նաև ավելի վանկերով անդամներ: Այս ձևով է գրված «Յոյս իմես դու ...» ողորմյան.

Յոյս իմ ես դու Տէր քաւիչ յանցանաց իմոց.
Մի անտես առներ զբղխումն արտասուաց իմոց.
Ողորմեա ինձ Աստուած...[25]:

Բայց մեր շարականագիտության արվեստի ու տաղաչափության տեսանկյունից իր չներկրորդված բարձրության վրա է գտնվում «Ալիք յանցանաց...» ողորմյան: Այն գրված է

[22] Շարակնոց, էջ 137 (ԳՔ):
[23] Խ. Պալյան, Ժամակարգություն, անտիպ, էջ 101:
[24] Շարակնոց, էջ 125 (ԲԿ):
[25] Շարակնոց, էջ 124 /ԲԿ:

յամբ-անապեստյան բարդ ոտքերով՝ երկանդամ 10 վանկանի բանաստեղծության ձևով: Այս շարականը մեզ հասած հնագույն, գեղեցիկ ու հուզիչ բանաստեղծություններից մեկն է, որը քնարականությամբ, քնքշությամբ և իմաստային առումով չի կորցրել իր արդիականությունը, դարերի հոլովույթում սրբորեն թրծվելով՝ հասել է մեզ և շարունակվում է ու պիտի շարունակվի երգվել մեր եկեղեցիներում.

Ալիք յանցանց / զիս ալէկոծեն.
Եւ մեղք իմ բազում / զիս յանդիմանեն:
Արդ զինչ արարից / մեղուցեալ անձամբս,
Որ չեմ ապրելոց / յահագին հրոյն:
Մեղա Քեզ Քրիստոս / Որդի Աստուծոյ.
Ծնորհեա զթողութիւն / բազում յանցանց իմոց:

Գր. Հակոբյանը, խոսելով այս չքնաղ ողորմյայի տաղաչափության մասին, գրում է. «Սակայն կարևորն այն է, որ այս ձևն իր էությամբ ազգային է և կենսունակ, որովհետև այն հասել է մեր նոր գրականությանը և ապրում է նաև ժողովրդական բանահյուսության մեջ»[26]:

Անգնահատելի է Մաշտոցի ավանդը մեր ժողովրդի դպրության և պատմության մեջ, և պատահական չէ, որ նա սրբացվեց ժողովրդի և Եկեղեցու կողմից: Դարձավ այն երանելի սրբերից մեկը, ում հիշատակին նվիրվեցին բազմաթիվ շարականներ: Օշականի Սուրբը դարերի հեռավորությունից, այսօր էլ իր աչքից՝ լույս, հոգուց՝ շող, սրտից՝ զգացում, և մտքից՝ մտածում է փոխանցում հայ ժողովրդին այն հավատով, որ իր ստեղծած անգնահատելի արժեքները այսօր էլ մնում են այն զենքը, որով հայ մարդը պետք է պաշտպանի իր ազգությունն ու հավատքը: Վկաներն այսօր մենք ենք և հետագա գալիք սերունդները, որովհետև մենք հպարտ ենք և դեռ հպարտանալու ենք մեր ազգային հոգևոր երաժշտությամբ, որը գերում է յուրաքանչյուրին՝ անկախ ազգությունից:

«Յիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի»:

---

[26] Գր. Հակոբյան, նշվ. աշխատություն, էջ 86:

*ՎԱՐԴԱՆ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ*
*Պատմական գիտությունների թեկնածու*

# ՍՅՈՒՆԻՔԻ ԵՊԻՍԿՈՊՈՍՈՒԹՅՈՒՆԸ VI ԴԱՐԻ ԿԵՍԻՆ

VI դարի երկրորդ կեսը Հայաստանում նշանավորվեց քաղաքական և կրոնադավանաբանական մի շարք կարևոր իրադարձություններով: Քաղաքական և կրոնական խնդիրների փոխկապակցվածությունը հանգեցրել էր նրան, որ մեկ ասպարեզում տեղի ունեցող գործընթացները անխուսափելիորեն արձագանք էին գտնում մյուսում:

Նշված երևույթները բնորոշ էին նաև Սյունյաց աշխարհին և արտացոլվել են նրա VI դարի երկրորդ կեսի կրոնաքաղաքական խճանկարում:

Ինչպես հաղորդում է Ստ. Օրբելյանը, Սյունյաց մեծահամբավ եպիսկոպոս Պետրոս Քերթողին (549-558) հաջորդել է Գիգանը՝ աթոռակալելով երեք տարի (559-562)[1]: Պատմիչը նրա գործունեության մասին բացարձակապես ոչ մի տեղեկություն չի հաղորդում[2]: Որոշ օտար աղբյուրներ Գիգանին հիշատակում են նաև Գրիգոր անվամբ[3]: Նկատի ունենալով նրա աթոռակալման ժամանակաշրջանը՝ ենթադրվում է, որ այն հանգիստ և անխռով չի անցել, սակայն խոշոր կրոնադավանաբանական իրադարձությունների հիշատակություններ, այնուամենայնիվ, չկան:

Գիգանից հետո Սյունյաց եպիսկոպոսական Աթոռն անցավ Հայ Եկեղեցու VI դարի նշանավոր գործիչներից մեկին՝ Տեր-Վրթանեսին: Նրա պաշտոնավարման ժամանակաշրջանը հարուստ էր լուրջ քաղաքական և կրոնական իրադարձություններով: Վրթանես եպիսկոպոսի մասին աղբյուրները կենսագրական տեղեկություններ չեն հայտնում: Օրբելյանը հաղորդում է հետևյալ տեղեկությունները Վրթանեսի մասին. Վրթանես Սյունեցին աշակերտել է մեծահռչակ Պետրոս Քերթողին. «Երանելի աշակերտն Պետրոսի՝ Սուրբն Վրթանէս»[4]:

Ելնելով այս վկայությունից՝ կարելի է ենթադրել, որ Վրթանեսը սովորել է Սյունյաց վարդապետարանում VI դարի կեսին, որտեղ և աշակերտել է Պետրոս Սյունեցուն: Այդ հիմամբ, նա հավանաբար ծնվել է 520-530 թթ.: Ուսանած լինելով Սյունյաց դպրոցում

---

[1] Պատմութիւն նահանգին Սիսական, արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց. Թիֆլիս, 1910, գլ. ԻԸ, էջ 91: Ն. Ակինեան, Պետրոս եպիսկոպոս Սիւնեաց. Հանդէս ամսօրեայ, 1903, N 8, էջ 252: Ըստ Ղ. Ալիշանի կազմած գավազանագրի՝ Գիգանը աթոռակալել է 556-558 թթ. (տե՛ս Ղ. Ալիշան. Սիսական, Վենետիկ, 1893, էջ 20):

[2] Ըստ Հ. Աճառյանի՝ Գիգան անվան ծագումն անհայտ է և միակ հիշատակությունն այս է (տե՛ս Հ. Աճառյան. Հայոց անձնանունների բառարան, հ. Ա. Երևան, 1942, էջ 471):

[3] Տե՛ս Հ. Բարթիկյան. Narratio de rebus Armeniae, հունարեն թարգմանությամբ մեզ հասած մի հայ-քաղկեդոնական սկզբնաղբյուր, Բանբեր մատենադարանի. N 6, Երևան, 1962, էջ 466, ծանոթ. 65, հմմտ. Լ. Մելիքսեթ-Բեկ. Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին. հ. Ա, Երևան, 1934, էջ 79:

[4] Ստ. Օրբէլեան. նշվ. աշխ., գլ. ԻԸ, էջ 91: Որոշ ուսումնասիրողներ սխալմամբ Վրթանես Սյունեցուն նույնացնում են Վրթանես Քերթողին, որը 604-607 թթ. եղավ կաթողիկոսական տեղապահ (հմմտ. Գ. Գալեմքեարեան. Սիւնեաց դպրոցը. «Տաճար» շաբաթաթերթ, 1911, N 48, էջ 764-766):

Վրթանեսը, եթե ոչ կատարելապես, բայց և պատշաճ չափով, պետք է տիրապետած լինի քերթողական արվեստին, սակայն աղբյուրներում չկա որևէ հիշատակություն նրա հեղինակած գործերի մասին:

Սյունյաց դպրոցի աշակերտ լինելն է հենց հիմք տվել որոշ ուսումնասիրողների նրան ևս մեծարել Քերթող պատվատիտղոսով: Նրա մասին Ալիշանը գրում է. «Նշանաւոր եղեւ և Վրթանէս եպիսկոպոս՝ նոյնպէս Քերթող կոչեցեալ՝ յնս կոյս Զ դարու»[5]:

Վրթանեսը Սյունյաց եպիսկոպոս է ձեռնադրվել 562 թ.: Նրա ձեռնադրման պարագաների մասին հիշատակություններ ունի Մովսես Կաղանկատվացին: Ըստ Աղվանից պատմության հեղինակի՝ այդ արարողությունը տեղի է ունեցել Աղվանքի եկեղեցում, Զաքարիա Կաթողիկոսի կողմից[6]: Այս վկայությունը պատմիչը բացատրում և հիմնավորում է նրանով, որ Պետրոս Սյունեցին իր հաջորդներին պատգամել էր ձեռնադրություն և մյուռոն ստանալ Աղվանքի Եկեղեցուց: Սակայն նրա շարադրանքում նկատելի են ժամանակագրական անհամաձայնություններ և փաստերի որոշ աղավաղում: Այնտեղ համադրված են տարբեր ժամանակներում տեղի ունեցած և իրար հետ շփոթած անցքեր[7]:

Ըստ VI-VII դարերի Աղվանից Եկեղեցու նվիրապետության գավազանագրքի՝ Սյունյաց Վրթանես եպիսկոպոսին ժամանակակից է Աղվանքի ոչ թե Զաքարիա, այլ Աբաս կաթողիկոսը (551-595): Իսկ Զաքարիա Բ-ն կաթողիկոս է եղել Վիրոյից (596-630) հետո՝ 630-644 թթ.[8]: Հետևաբար, VI դարի 60-ական թվականներին եպիսկոպոսական աթոռին նստած Վրթանեսը չէր կարող ձեռնադրություն ստանալ ավելի քան կես դար հետո աթոռակալած Զաքարիա Կաթողիկոսի կողմից: Ուստի ենթադրում ենք, որ Վրթանեսը եպիսկոպոս է ձեռնադրվել Հայոց Կաթողիկոս Հովհաննես Բ Գաբեղենեցու (557-574) կողմից: Այս ենթադրության օգտին է խոսում նաև վերջինիս՝ հետագա բարեհաճ վերաբերվելու փաստը Սյունյաց թեմի և Վրթանեսի նկատմամբ:

Վրթանես եպիսկոպոսի կենսագրությանը վերաբերող Ստ. Օրբելյանի հաղորդած հաջորդ կարևոր տեղեկությունը նրա առնչությունն է Հայոց տոմարի բարեփոխության հարցով հրավիրված եկեղեցական ժողովին: Նա հայտնում է, որ Վրթանեսը Սյունյաց եպիսկոպոս էր, երբ Դվինում մեծ ժողով գումարեցին և սահմանեցին Հայոց թվականը: Սյունյաց հոգևոր և աշխարհիկ առաջնորդները միակամ օժանդակել են այդ գործին՝ Դվին ուղարկելով համապատասխան գիտելիքներով մարդկանց. «Արդ՝ ի կարգել թուականին մեծաւ ժողովով ի Դվին քաղաքի, էր եպիսկոպոս Սիւնեաց Տէր Վրդանէս, և իշխան՝ Տէր Միհր-Արտաշիր, որք եւ միաբանեալ ժողովոյն յղարկեցին գիմաստուն վարդապետս և

[5] Ղ. Ալիշան. Սիսական, էջ 23:

[6] Տե՛ս Մովսէս Կաղանկատուացի. Պատմութիւն Աղուանից աշխարհի, Երևան, 1983, գիրք Բ, գլ. ԽԸ, էջ 274: Ստ. Օրբէլեան. Նշվ. աշխ., գլ. ԻԲ, էջ 91: Ուխտանէս եպիսկոպոս. Պատմութիւն Հայոց. Վաղարշապատ, 1871, գիրք Բ, էջ 119-120: Թուխտ երանելոյն Մաշտոցի. «Արարատ», 1902, N 7-8, էջ 751:

[7] Տե՛ս Э. Даниелян, Армяно-византийские отношения в период заключения Армяно-Арабского договора, Вестник общественных наук, АН Арм. ССР, 1988, N 4, стр. 27, прим. 27:

[8] Տե՛ս Ն. Ակինեան. Մովսէս Դասխուրանցի (կոչուած Կաղանկատուացի) եւ իր պատմութիւնն Աղուանից, «Հանդէս ամսօրեայ», 1953, N 7-9, էջ 572:

զկատարեալ գիտնականս իւրեանց, որք էին նախաթոռ ի վարդապետսն Հայոց և ուղղեցին զայն տարակուսելի տումարն»[9]:

Այս ժողովը, որին մասնակցում էին «փիլիսոփայք և գիտունք արուեստին», 584 թ. հրավիրել էր Հայոց Մովսես Բ Եղիվարդեցի կաթողիկոսը (574-604): Այնտեղ պաշտոնապես ընդունվեց Հայոց տոմարի բարեփոխությունը: Առաջին հայացքից պատմիչի այս վկայությունը հակասում է պատմության ԿԹ գլխում հիշատակված այն փաստին, թե տոմարի նորոգության ժողովին մասնակցում էր Պետրոսը[10]: Սակայն Պետրոս Սյունեցին մասնակցել է Դվինի 554 թ. եկեղեցական ժողովին[11], եղել նրա նախաձեռնողներից և նշանավոր անդամներից մեկը[12]: Որպես քերթող և գիտուն նա զբաղվել է նաև իր ժամանակ արդեն հրատապ դարձած տոմարի կարգավորման խնդրով, որը քննարկվել է 554 թ. Դվինի ժողովում, սակայն վերջնական լուծում չի ստացել[13]: Այդ առումով նրան իրավացիորեն կարելի է համարել Հայոց տոմարի նորոգման մասնակից և տոմարագետ[14]: Ինչ վերաբերում է 584 թ. ժողովին Պետրոս Սյունեցու ներկայությանը, ապա դա հնարավոր չէր, քանի որ նա վաղուց վախճանվել էր[15]:

Ցավոք, 584 թ. ժողովին մասնակցած սյունեցի վարդապետների և գիտնականների անունները մեզ չեն հասել, բայց, անտարակույս, նրանք եղել են նշանավոր մտածողներ: Հավանական ենք համարում, որ այդ գիտնականներից մեկը նույնպես ունեցած լինի Պետրոս անունը, ինչն էլ կարող էր լինել շփոթության պատճառ՝ վերագրելու մասնակցությունը հայտնի Պետրոս Սյունեցուն:

Վրթանես եպիսկոպոսի մասին երրորդ տեղեկությունը վերաբերում է նրա պաշտոնավարման ժամկետին, որը տևել է քսաներեք տարի՝ 562-584 թթ. «Եւ այնպէս ճշմարիտ վարդապետութեամբ և առաքինի վարուք կացեալ յԱթոռն մետրապօլտութեան զամս քսաներեք՝ փոխի յաստեացս»,- գրում է Ստ. Օրբելյանը:

---

[9] Ստ. Օրբէլեան, նշվ. աշխ., գլ. ԻԴ, էջ 97:

[10] Նույն տեղում, գլ. ԿԹ, էջ 454:

[11] Դվինի երկրորդ եկեղեցական ժողովը հրավիրվել է Հայոց Կաթողիկոս Ներսես Բ Բագրևանդցու (կթղ. 548-557 թթ.) կողմից: Ժողովի գլխավոր խնդիրը նեստորականների գործունեության սահմանափակումն ու արգելումն էր Հայաստանում (տե՛ս Մ. Օրմանեան, Ազգապատում, մասն Ա, Կ. Պոլիս, 1912, էջ 546-547, Համտ. Ն. Մելիք-Թանգյան, Հայոց եկեղեցական իրավունքը, գիրք Ա, Շուշի, 1903, էջ 366-368):

[12] Տե՛ս Գիրք թղթոց, Թիֆլիս, 1901, էջ 72, 76, 222: Ստեփաննոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885, գիրք Բ, գլ. Բ, էջ 82-83: Լ. Մելիքսեթ-Բեկ, նշվ. աշխ., հ. Ա, էջ 40: Թուղթ Մխիթար վարդապետին, որ Գոշն կոչիւր, «Արարատ», 1900, N 10, էջ 502:

[13] Տե՛ս Մ. Օրմանեան, նշվ. աշխ., էջ 553-554: Հ. Բադալյան, Օրացույցի պատմություն, Երևան , 1970, էջ 65: Նույնի՝ Հայոց տոմարի պատմություն, Երևան, 1976, էջ 28:

[14] Համտ. Ղ. Ինճիճեան, Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց, հ. Գ, Վենետիկ, 1835, էջ 131: Գ. Զարբհանալեան, Հայկական հին դպրութեան պատմութիւն (Դ-ԺԳ դդ.), Վենետիկ, 1897, էջ 412-413:

[15] Թե՛ Ասողիկը և թե՛ Վարդան Արևելցին միաբան են Հայոց տոմարի նորոգության գործում Պետրոսի մասնակցության հարցում, սակայն Վարդան Արևելցին սխալմամբ, բացի Դվինի երկրորդ ազգային եկեղեցական ժողովից, Պետրոսին մասնակից է նկատում նաև 584 թ. Դվինի ժողովին, ինչն էլ նույնությամբ կրկնել է Ստ. Օրբելյանը (տե՛ս Ասողիկ, գիրք Բ, գլ. Բ, էջ 82-83: Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի, էջ 57-58):

Այժմ անդրադառնանք այն կացությանը, որը ստեղծվել էր Սյունյաց թեմում Վրթանեսի եպիսկոպոսության շրջանում: Պետք է նկատել, որ նրան վիճակված էր հովվել Սյունիքի համար շատ բարդ ժամանակաշրջանում: Այդ ընթացքում Սյունյաց Աթոռը գտնվում էր փորձությունների, դիմակայման և մաքառման գործընթացում, երբ հարևան պետություններն անթաքույց խրախուսում և օժանդակում էին իրենց երկրներից տարբեր կրոնական խմբերի անցումը Հայաստան: Նրանք հաստատվում էին ծայրամասային նահանգներում, ուր ավելի հեշտ և արդյունավետ էր գործունեություն ծավալելը:

Աշխարհագրական դիրքի բերումով Սյունիքը զգայուն էր նման անցուդարձերի նկատմամբ: VI դարի երկրորդ կեսին Սյունիքում որոշ տարածում էին գտել նեստորականությունը և քաղկեդոնականությունը[16]: Այս մասին Սյունյաց պատմիչը գրում է. «Յաւուրս Տեառն Վրդանիսի՝ Սիւնեաց եպիսկոպոսի, եկին ոմանք նեստորականք և քաղկեդոնիկք, և խարկանօք բնակեցան յաշխարհս Սիսական և յԱղվանս»[17]:

Ծավալելով իրենց քարոզչությունը Սյունիքում՝ որոշ կրոնական խմբեր անցնում էին նաև կենտրոնական Հայաստան: Այդ փաստի լավագույն վկայությունը Հիզտբուզիտի ընդարձակ և վավերական վկայաբանության հետևյալ հատվածն է, ուր ներկայացված է, թե ինչպես նեստորականները Սյունիքով ներթափանցում են Հայաստանի կենտրոն և հաստատվում այնտեղ. «Սա (Հիզտբուզիտը - Վ. Ա.) ի դիպուածոյ իմնքէ ի բանակս թագաւորին հասանէր և պատահէր չարչարանաց սուրբ վկայի ուրումն, որում անուն էր Գրիգորիս: Հրաչացեալ ընդ համարձակութիւն նահատակին... յայնմհետէ զղջմամբ ունէր զմոգութիւնն: Գայր անտի յաշխարհն Սիւնեաց, պարապելով յունկնդրութիւն գրոց սրբոց և լեալ անդ սակաւ ամիսս՝ հասանէ ի Հայս. և եկեալ յԱրարատ գաւառ՝ բնակէր յոստանին Հայոց ի Դուին»[18]:

Փաստորեն, Դվինի 554 թ. ժողովից հետո Հայաստանում նեստորականության և քաղկեդոնականության ուժը ոչ միայն վերջնականապես կոտրված չէր, այլև նրա մի կարևոր հատվածում, ինչպիսին Սյունիքն էր, նրանք տակավին կենսունակ էին: Թեև երևույթը կրոնական բնույթ ունի, սակայն անկասկած թերի կլինի հարցին մոտենալ միայն այդ տեսանկյունից: Այն պետք է ուսումնասիրել կրոնական և քաղաքական խնդիրների համատեքստում: Կարծում ենք, որ դա գերազանցապես պայմանավորված էր նոր քաղաքական կացությամբ, որ ձևավորվել էր Սյունիքում VI դարի 70-ական թվականներին:

572 թ. հայոց հակապարսկական ապստամբության նախօրյակին կարևոր ռազմավարական դիրք գրավող և ռազմական մեծ ուժի տիրապետող Սյունիք նահանգը վարչականորեն դուրս եկավ Դվինում նստող պարսիկ մարզպանի ենթակայությունից: Սյունյաց իշխան Վահանը 571 թ. նահանգի դիվանը Հայաստանի մայրաքաղաք Դվինից տեղափո-

---

[16] Նեստորականությունը և քաղկեդոնականությունն այս շրջանում շատ հաճախ նույնացվել են և փաստաթղթերում գործածվել միմյանց փոխարեն (տե՛ս Ե. Տէր-Մինասեանց, Հայոց Եկեղեցու յարաբերութիւնները ասորւոց եկեղեցիների հետ, Էջմիածին, 1908, էջ 107: Մ. Օրմանեան, նշվ. աշխ., էջ 560):

[17] Ստ. Օրբէլեան, նշվ. աշխ., գլ. ԻԵ, էջ 98:

[18] Վարք և վկայաբանութիւնք սրբոց, հատընտիր քաղեալ ի ճառընտրաց, Վենետիկ, 1874, հ. Բ, էջ 124-125:

խեց Փայտակարան[19]: Սրանով Սյունիքը հեռու էր պահվում հասունացող հակապարսկա-կան շարժումներից. հետևաբար Հայաստանի ուժը զգալիորեն պակասում էր:

Հայտնի է, որ այս շրջանում Սյունի իշխանները բարձր դիրքեր էին զբաղեցնում Սասանյանների արքունիքում՝ ընդհուպ զբաղվելով Պարսկաստանի սահմանների անվտանգության հարցերով[20]: Ուստի Վահան իշխանի դիմումը Խոսրովին՝ դուրս բերել Սյունյաց նահանգը Ատրպատականի հրամանատարությանը ենթակա Դվինի մարզպանի դիվանից և ենթարկել Ատրպատականի շահրմարին, կարելի է ասել, որ համընկնում էր Պարսկաստանի շահերին: Հավանական է, որ այն հրահրված էր հենց պարսիկների կողմից[21]: Մինչ այդ պահը Սյունիքը հպատակ էր Դվինի հայոց մարզպանին, որն էլ իր հերթին կախված էր Ատրպատականի սպայապետից: Այդուհետ Սյունիքն ուղիղ կախում ունեցավ Ատրպատականի սպայապետից և դադարեց մարզպանության մաս լինելուց: Եթե մինչ այդ հարկը վճարում էր Դվինին, ապա դրանից հետո պետք է վճարեր Ատրպատականին և պատերազմի ժամանակ էլ իր զորագնդերը դներ Ատրպատականի սպայապետի հրամանատարության տակ:

Այդ ժամանակվանից Արցախի «Մեծ Հարանդ» գավառը դարձավ Սյունյաց նախարարության կենտրոն, կոչվում էր նաև Սիսական ի Ոստան կամ Սիսական ի Կոտակ[22]: Մարզպանությունից Սյունիքի անջատ գոյությունը տևեց գրեթե 70 տարի (571-640), մինչև Սասանյանների վայրէջքի ժամանակները: Սյունիքի նոր քաղաքական կարգավիճակը պարարտ հող ստեղծեց նեստորականների և օտարամուտ այլ հոսանքների ներթափանցման և գործունեության համար:

Ահա այսպիսի տագնապահարույց իրավիճակը եղավ դրդապատճառը, որ սեփական հոտի ճանապարհով մտահոգ Հայոց Կաթողիկոս Հովհաննես Գաբեղենեցին (կթղ. 557-574) հանդես եկավ Սյունյաց հոգևոր և աշխարհիկ իշխանություններին ուղղված պաշտոնական թղթով[23]: Նրա խնդիրն էր կանխել չարիքը՝ դրանից բխող բոլոր վտանգավոր հետևանքներով: Այս գրությունը շատ կարևոր մի փաստաթուղթ է, ուր արտացոլված են Հայ Եկեղեցու ընդհանուր վիճակը, կաթողիկոսական կենտրոնի և Սյունյաց Աթոռի փոխհարաբերությունները: Այն հավանաբար գրվել է 570-ական թվականների սկզբին:

---

[19] Տե՛ս Պատմութիւն Սեբէոսի.Աշխատասիրությամբ Գ. Աբգարյանի, Երևան, 1979, գլ. Ը, էջ 67-68:

[20] Դերբենդի անցումի (Ճորա պահակ) և Դարիալի կիրճի պաշտպանությունը քոչվոր ցեղերի ասպատակություններից V-VI դդ. դրված էր Սյունիքի նախարարների վրա (տե՛ս С. Еремян, Сюния и оборона сасанидами кавказских проходов, АН СССР, Армянский филиал, Известия, N 7, Ереван, 1941, стр. 33-40):

[21] 572 թ. հակապարսկական ապստամբությունը գլխավորում էին Մամիկոնյանները: Ելնելով այս փաստից, Ն. Ակինյանը Սյունիքի վարչական անջատումը բխեցնում է Սյունիների և Մամիկոնյանների ունեցած ավանդական տարբեր քաղաքական կողմնորոշումներից (տե՛ս Ն. Ակինեան, Թուղթ Մակարայ Ա Երուսաղեմի Հայրապետի առ Վրթանէս եպիսկոպոսապետ Սիւնեաց, յաղագս կարգաց Եկեղեցւոյ, Վիեննա, 1930, էջ 52, նույնի՝ Դվնոյ 572 թ. ապստամբութիւնը եւ յաջորդ տասնամեայ շրջանը, «Հանդէս ամսօրեայ», 1913, N 1, էջ 67 և 76, ծանոթ. 9): Է. Դանիելյանը գտնում է, որ Վահան Սյունեցու այդ քայլն ուղղված էր պարսից մարզպան Սուրենի դեմ (տե՛ս Է. Դանիելյան, Արևելյան Հայաստանի վարչատարածքային բաժանումը (591-629), Լրաբեր հասարակական գիտությունների, 1986, N 8, էջ 58):

[22] Տե՛ս Ս. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 1963, էջ 70:

[23] Տե՛ս Գիրք թղթոց, էջ 78-80: Ստ. Օրբէլեան, նշվ. աշխ., գլ. ԻԳ, էջ 92-96:

Հովհաննես Բ կաթողիկոսի հետ միասին ստորագրված է նաև «Աբրահամայ Տարաւնոյ և Մամիկոնենցից, Ներսայ Բասենոյ և Մարդաղւոյ, Մաշդոցէ Խոռխոռունեաց, Գտայ Վանանդեայ, Աբդիսոյ Ասորեաց և Բաբ Ամատունեաց» եպիսկոպոսների կողմից: Կաթողիկոսական թուղթը նախապես հռչակում է Հայոց Աթոռի առաքելականությունը:

Հիմք ընդունելով երեք տիեզերական ժողովների՝ Նիկիայի (325 թ.), Կոստանդնուպոլիսի (381 թ.) և Եփեսոսի (431 թ.) դավանաբանական որոշումները, կաթողիկոսը հերքում է նեստորականների ուսմունքը: Ընդգծում է Խուժիստանից նրանց մուտք գործելը Հայաստան և այդ պատճառով 554 թ. Դվինի եկեղեցական ժողովի գումարումը, «ընդ որս էր և երանելին Պետրոս եպիսկոպոսն Ձեր»[24]:

Այս անհրաժեշտ նախաբանից հետո կաթողիկոսն անցնում է բուն նյութին՝ փաստելով, որ «պեղծ նեստորականք բազումք ի ձեր աշխարհիդ բնակեալ են, և դուք զդոսա ի սուրբ եկեղեցիս ընդունիք և ընդ դոսա հաղորդիք»[25]: Նա նաև հիշեցնում է Գրիգոր Լուսավորչի մեծ վաստակը լուսավոր և ճշմարիտ հավատը Սյունիքում սերմանելու գործում Սյունյաց ու Հայրապետական Աթոռների սերտ կապվածությունը, փոխադարձ հոգևոր սերը:

Կաթողիկոսն իր պարտքն է համարում զգուշացնել և ազդարարել, որ, ինչպես մինչև այժմ հավատարիմ են մնացել Գրիգոր Լուսավորչից և այլ հոգեկիր սուրբ հայրերից ընդունած ճշմարիտ հավատին, այսուհետ էլ նույնը հաստատ ու անփոփոխ պահեն: Հորդորում է մերժել և չընդունել նեստորականներին, չլսել «հրապուրող և չարաթոյն բանից նոցա մահաբերաց… ոչ ընդունել զնոսա ի տունս, ոչ ողջունել բանիւ, այլ հեռանալ ամենևին ի նոցանէ որպէս ի թշնամեաց խաչին Քրիստոսի»[26]: Գրությունն ավարտվում է նրանով, որ թույլ է տրվում հերձվածողներին վերստին ընդունել Հայ Եկեղեցու գիրկը ապաշխարությամբ, եթե միայն նրանք կամովին արտահայտում են իրենց զղջումը և գրավոր նզովում Նեստորին ու բոլոր հերձվածողներին, ինչպես նաև Քաղկեդոնի ժողովը:

Խնդրո առարկա փաստաթուղթն ամբողջությամբ ներծծված է Սյունյաց՝ ի վերուստ ունեցած ուղղադավանության խորհրդով. «Որպէս ցայժմ լեալ էք ազգ սուրբ, ժողովուրդ սեպհական Տեառն Աստուծոյ, նոյնպէս և այժմ էք և մինչև յաւիտեան, դուք և զաւակք ձեր»[27]: Այս պարտավորեցնող հիշեցումը նաև միտված էր ապագա կրոնական շեղումների հնարավորինս կանխմանը:

Սյունյաց աշխարհում կատարվող անցուդարձին և իրենց թղթի գործած ազդեցությանը հավաստիորեն տեղեկանալու համար՝ հատուկ «զհաւատարիմ այր» և երևելի ուսմամբ ճոխացած գիտակ պատգամավորի՝ Մատթեոս քահանայի միջոցով նրանք գրությունն ուղարկում են Սյունիք[28]: Մատթեոս քահանան պետք է տար նաև լրացուցիչ բացատրություններ, եթե պահանջվեին:

---

[24] Գիրք թղթոց, էջ 79:

[25] Նույն տեղում:

[26] Նույն տեղում, էջ 80:

[27] Նույն տեղում, էջ 79:

[28] Տե՛ս Գիրք թղթոց, էջ 79: Ե. Տեր-Մինասյան, Պատմաբանասիրական հետազոտություններ, Երևան, 1971, էջ 377: Մատթեոս երեցը նույն պաշտոնով հիշատակված է նաև Աղվանից կաթողիկոս Աբասին ուղղված թղթում (տե՛ս Մովսէս Կաղանկատուացի, գիրք Բ, գլ. Է, էջ 125):

Հայոց Կաթողիկոսի գիրը լավ ընդունելություն է գտել Սյունիքի Միհր-Արտաշիր իշխանի և Վրթանես եպիսկոպոսի կողմից: Այն ծառայել է իր նպատակին՝ զգաստացնելով և անհրաժեշտ գործողությունների մղելով տեղի հոգևոր հովիվներին: Դրանից հետո լուրջ խոչընդոտներ և արգելքներ ստեղծվեցին Սյունիքում նեստորականների և այլ աղանդների գործունեության համար. «Թորմէ (Հովհաննես Բ-ի գրությունից – Վ. Ա.) զարհուրեալ Տեառն Վրդանիսի՝ հալածական արար ի վիճակէ իւրմէ և մեծաւ նզովիւք փակեաց զի մի իշխեսցեն թողացուցանել ի սահմանս իւրեանց»,- գրում է Ստ. Օրբելյանը: Իհարկե, այս խոսքերը չեն նշանակում, թե այդուհետ Սյունիքում նեստորականներ չկային, այնուամենայնիվ զգացվում է, որ հոգևոր պատասխանատուները զգացել են իրավիճակի լրջությունը և դիմել վճռական քայլերի:

Վկայակոչելով Դվինի մարզպանի հպատակությունից վարչականորեն Սյունիքի դուրս գալու փաստը և Հովհաննես Բ Գաբեղենեցի Կաթողիկոսի հիշյալ թուղթը՝ որոշ ուսումնասիրողներ արձանագրում են նաև Սյունիքի եկեղեցական անջատումը Հայոց Կաթողիկոսությունից[29]: Դատելով ժամանակի զարգացումների բարդ ընթացքից՝ կարելի է ենթադրել, որ քաղաքական անջատումը նաև հոգևոր թեմի հեռացման վտանգ է պարունակել: Հենց այդ ազգավնաս երևույթը կանխելուն էր միտված կաթողիկոսի քայլը: Պետք է ասել, որ Հայոց Հայրապետին հաջողվել է դիվանագիտորեն մեղմել այդ խնդիրը[30]:

Մեր այս կարծիքը խարսխված է նաև որոշ օտար սկզբնաղբյուրների բովանդակած փաստերի վրա: Ասորի հեղինակ Զաքարիա Հռետորն իր «Ժամանակագրության» մեջ, ուր արտացոլված են VI դարի երկրորդ կեսի իրողությունները, հիշատակում է հյուսիսային երկրամասում ապրող հինգ հավատացյալ ժողովուրդներ, որոնք ունեն քսանչորս եպիսկոպոս, և նրանց կաթողիկոսը նստում է Դվինում՝ Արևելյան Հայաստանի մայրաքաղաքում: Թվարկելով այդ երկրները՝ երրորդը նշում է Սիսականը. «Ապա Սիսական երկիրը իր լեզվով, հավատացյալ մի ժողովուրդ, բայց այնտեղ ապրում են նաև հեթանոսներ»[31]: Ամենայն հավանականությամբ, Զաքարիա Հռետորի վկայությունը վերաբերում է VI դարի 60-

---

[29] Այս տեսակետը զարգացնում է Հ. Ն. Ակինյանը, ըստ որի՝ Դվինից Սյունիքի քաղաքական հեռացումից հետո, 557-558 թթ., նաև Աթոռը խզեց հարաբերությունները Հայոց Կաթողիկոսության հետ: Նրա կարծիքով, Սյունյաց Աթոռն այնքան անկախ էր և ինքնուրույն, որ հարաբերություններ հաստատեց Երուսաղեմի Հայրապետի հետ՝ վերջինիս օգնությամբ լուծելու նոր պայմաններում առաջացած խնդիրները: Վրթանես եպիսկոպոսը թղթակցում է Երուսաղեմի Մակար Բ Հայրապետի հետ և նրանից ստանում համապատասխան հրահանգներ, քանզի ծագել էին նոր դավանաբանական և աշխարհայացքային հարցեր (տե՛ս Ն. Ակինեան, Թուղթ Մակարայ Բ ..., էջ 55, 59-69, նույնի, Մովսէս Դասխուրանցի ..., «Հանդէս ամսօրեայ» N 10-12, էջ 585, հմմտ. Պ. Անանեան, Պատմական յիշատակարան մը Դուինի Բ ժողովքի մասին, «Բազմավէպ», 1958, N 3-5, էջ 70-72, Ս. Կոգյան, Հայոց Եկեղեցին մինչև Փլորենտյան ժողովը, Բեյրութ, 1961, էջ 202-203): Մեր կարծիքով, անընդունելի է Սյունյաց քաղաքական ակտին անմիջապես տալ նույնանման եկեղեցական շարունակություն, իսկ Երուսաղեմի հետ ինքնուրույն կապեր հաստատելու և Հայոց Կաթողիկոսության հետ դավանաբանական տարաձայնություններ ունենալու տեսակետն ընդհանրապես մերժելի է: Սյունիքը կարող էր քաղաքական պատճառներով բաժանվել Դվինից, նույնիսկ առանձին լինել հոգևոր կենտրոնից, բայց ոչ հրաժարվել Հայ Եկեղեցու ավանդական դավանանքից:

[30] Հմմտ. Ե. Տեր-Մինասեանց, Հայոց Եկեղեցու յարաբերութիւնները ..., էջ 136:

[31] Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. 8, Ասորական աղբյուրներ, Ա, թարգմանություն բնագրից, առաջաբանը և ծանոթագրությունները Հ. Մելքոնյանի, Երևան, 1976, էջ 313-314:

70-ական թվականներին: Տեղեկությունն ուշագրավ է հետևյալ առումով. Սյունիքում վաղուց արմատավորված էր քրիստոնեությունը, իսկ եկեղեցին ենթարկվում էր Դվինի Կաթողիկոսարանին:

VIII դարի սկզբի հայ-քաղկեդոնական մի սկզբնաղբյուր լիարժեք պատկերացում է տալիս նաև Սյունյաց հոգևորականության դավանանքային համոզմունքների մասին, վկայում, որ դավանաբանական խնդիրներ կաթողիկոսական կենտրոնի հետ չեն եղել: Խոսելով քաղկեդոնականություն ընդունած եպիսկոպոսների կողմից Սյունյաց Վրթանես եպիսկոպոսին ուղարկած թղթի մասին՝ անանուն հեղինակը գրում է. «Նույնպես և Սյունյաց եպիսկոպոս Վրթանեսին, սակայն նա ևս չէր համաձայնվում՝ ասելով, որ ինձնից առաջ եղած երանելագույն եպիսկոպոսներ Պետրոսն ու Գրիգորը (Գիգան – Վ. Ա.) այդպես էին ասում «սուրբ Աստվածը», իսկ ես ո՛չ կավելացնեմ, ո՛չ էլ կպակասեցնեմ»[32]: Այս խոսքերից ակնհայտ երևում է, որ Վրթանեսը դավանական հարցերում շարունակել է Պետրոս Սյունեցու գիծը: Վերջինս համոզված միաբնակ էր և հակաքաղկեդոնական, Հայ Եկեղեցու միասնության ջատագով:

Այսպիսով, կարելի է փաստել, որ թեև 571 թ. Սյունիքը վարչականորեն դուրս եկավ Դվինի մարզպանի հպատակությունից, սակայն նրա եկեղեցական թեմը շարունակեց նույնությամբ գործել Հայ Եկեղեցու նվիրապետական կառուցվածքում:

Վրթանես եպիսկոպոսին հաջորդեց Գրիգոր Ա-ն, որն աթոռակալեց տասնհինգ տարի՝ 584-599 թթ.[33]: Սյունյաց պատմիչը հայտնում է, որ նա ձեռնադրվել է Աղվանից Եկեղեցում՝ այս անգամ ձեռնպահ մնալով կաթողիկոսի անունը հիշատակելուց: Հետևելով իրադարձությունների զարգացման տրամաբանությանը՝ կարելի է նկատել, որ Վրթանեսի մահով չվերացավ Հայ Եկեղեցու միասնությանը սպառնացող վտանգը և չհարթվեցին դավանաբանական ոլորտում գոյություն ունեցող կնճիռները: Ընդհակառակը՝ ավելի ակտիվացան հարևան պետությունների միջամտությունները Հայ Եկեղեցու գործերի մ, ինչը Հայաստանի նկատմամբ նրանց վարած քաղաքականության մի բաղադրիչն էր[34]:

591 թ. պարսկաբյուզանդական պայմանագրով Հայաստանի քաղաքական բաժանումը հետևեց նրա արևմտյան մասում՝ Ավանում, երկրորդ կաթողիկոսական Աթոռի ստեղծումը, որը բխում էր Հայաստանն անդարձ բռնազավթելու Մավրիկիոս կայսեր (582-602) ծրագրի դրույթներից: Այս առթիվ Սեբեոսը գրում է. «Հրաման ելանէ դարձեալ ի կայսերէն վերստին այլ՝ քարոզել զժողովն Քաղկեդոնի յամենայն Եկեղեցիս Հայաստան երկրի, եւ միաւորել հաղորդութեամբ ընդ զաւր իւր: Իսկ մանկունք ուխտի եկեղեցեացն Հայոց փախստական գնացեալ յատար երկիր վարէին: Եւ բազմաց առ ոչինչ համարեալ զհրամանն՝ զտեղի կալան եւ անշարժ մնացին: Եւ բազումք հաւանեալ փառասիրութեամբ հա-

[32] Հ. Բարթիկյան, նշվ. աշխ., «Բանբեր մատենադարանի»,1962, N 6, էջ 465-466, հմմտ. Լ. Մելիքսեթ-Բեկ, նշվ. աշխ., հ. Ա, էջ 79, Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. 8, Ասորական աղբյուրներ, էջ 391-392:

[33] Տե՛ս Ստ. Օրբելեան, նշվ. աշխ., գլ. ԻԵ, էջ 98: Ըստ Ղ. Ալիշանի՝ Գրիգոր Ա-ն աթոռակալել է 580-595 թթ. (տե՛ս Նույնի, Սիսական, էջ 20): Բրոսսեն գտնում է, որ Գրիգոր Ա-ն մահացել է 621 թ. (տե՛ս Սյունիքի պատմություն, ներած., թարգմ. և ծանոթ. Ա. Աբրահամյանի, Երևան, 1986, էջ 437, ծանոթ. 263):

[34] Տե՛ս Է. Դանիելյան, Հայաստանի քաղաքական պատմությունը և Հայ Առաքելական Եկեղեցին (VI-VII դարեր), Երևան, 2000, էջ 57:

ղորդեալ միաւորեցան առինաւք: Բաժանեցաւ ապա եւ Աթոռ կաթողիկոսութեանն յերկուս. անուն միոյն Մովսէս, եւ միւսոյն՝ Յովհան: Մովսէս ի Պարսից կողմանէ, եւ Յովհանն՝ Յունաց: Եւ Յովհան ընդ նոսա հաղորդեալ միաւորեցաւ, բայց Մովսէս ամենեւին ոչ լինէր ի նոսա հուպ»[35]:

Հակաթոռ կաթողիկոսության ստեղծումը որոշ չափով նվազեցրեց Հայոց Կաթողիկոսության կենտրոնաձիգ ուժը՝ առաջացնելով նվիրապետական կառուցվածքի նկատելի խաթարում: Կայսրության կողմից պարտադրվող դավանանքային շեղումները լի էին հայոց հոգևոր և քաղաքական ուժերը ջլատելու վտանգով[36]: Որպես հետևանք՝ Գրիգոր Բ եպիսկոպոսի պաշտոնավարման ընթացքում ժամանակավորապես ընդհատվեցին Հայոց կաթողիկոսության և Սյունյաց Աթոռի փոխհարաբերությունները: «Ջերկուանալն Հայրապետութեանն խոտեցին տեարքն Սիւնեաց, եւ ոչ հաւանեցան ընդ մի ոք յերկուցն»,- արձանագրում է Կաղանկատվացին[37]:

Խառնաշփոթ և վտանգներով հղի իրավիճակը ստիպեց Սյունյաց առաջնորդներին ժամանակավորապես մեկուսանալ և ակտիվ շփումներ չունենալ Հայոց Կաթողիկոսության հետ: Այդ բանը տեղի է ունեցել 591 կամ 592 թվականներին: Ընդունելով Սյունյաց և Հայրապետական Աթոռների միջև փոխհարաբերությունների ժամանակավոր ընդհատման փաստը՝ Օրմանյանը գրում է. «Արդ եթէ ոչ Վրթանէս, գոնէ անկէ ետքը եկող Սիւնեաց եպիսկոպոսներ սկսան ձեռնադրութիւն և միւռոն ընդունիլ Աղուանից կաթողիկոսէն... և այսպէս ըրած պիտի ըլլային գոնէ Գրիգոր և Քրիստափոր»[38]:

Ստ. Օրբելյանը տեղյակ լինելով այդ փաստին՝ եզրակացրել է, որ եպիսկոպոս Գրիգոր Բ-ն ձեռնադրվել է Աղվանից Եկեղեցում: Սակայն վերջինս աթոռակալել է մինչև 590-591 թթ., հետևաբար նա ձեռնադրություն ստացել է ոչ թե Աղվանից, այլ Հայոց Կաթողիկոս Մովսես Բ Եղիվարդեցու (574-604) կողմից:

590-ական թվականների կեսից սերտացան հարաբերությունները Սյունիքի և Աղվանքի Եկեղեցիների միջև: Իրավիճակի թելադրմամբ վերջիններս հավանաբար որդեգրել էին միասնական գործելակերպ: Խոսելով VI դարի վերջի և VII դարի սկզբի կրոնական անցուդարձերի մասին՝ վրաց պատմական աղբյուրները ևս հաստատում են այդ բանը. «Իսկ աղվանները /հերացիք/ ու սյունեցիք միաժամանակ հեռացան և կրկին հարեցան Ներսեսին»[39]:

VI դարի վերջին ստեղծված կացությունը հանգեցրեց Սյունյաց եպիսկոպոսության հեղինակության նվազմանը: Սակայն այս իրավիճակը երկարատև չեղավ: 606 թ. Դվինի եկեղեցական ժողովի առաջին նիստում արդեն ներկա էր Սյունյաց Քրիստափոր եպիսկոպոսը: Իսկ 607 թ. նա այն գլխավոր եպիսկոպոսներից մեկն էր, որը կաթողիկոս ձեռնադրեց Աբրահամ Աղբաթանեցուն (607-615):

---

35 Պատմութիւն Սեբէոսի, էջ 91:

36 Է. Դանիելյան, նշվ. աշխ., էջ 58:

37 Մովսէս Կաղանկատուացի, գիրք Բ, գլ. ԽԹ, էջ 274:

38 Մ. Օրմանեան, նշվ. աշխ., էջ 622:

39 Լ. Մելիքսեթ-Բեկ, նշվ. աշխ., հ. Ա, էջ 39:

*ԽԱՉԻԿ ՍԱՄՎԵԼՅԱՆ*
*Բանասիրական գիտությունների թեկնածու*

# ՐԱՖՖՈՒ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽ ԵՎ «ԽԱՄՍԱՅԻ ՄԵԼԻՔՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ» ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ԾՆՈՒՆԴԸ

*(Նվիրվում է հրատարակության 120-ամյակին)*

«Արձագանք» շաբաթաթերթում հրատարակված «Նամակ խմբագրին» վերնագրով հոդվածում Րաֆֆին ունի մի ուշագրավ խորհրդածություն. «Մինչև «Խամսայի մելիքությունների» լույս տեսնելը,- գրում է նա,- մեր նորագույն պատմության մի նշանավոր մասը բաց էր մնացած: Ոչ ոքի մտքին անգամ չէր գալիս, որ ամենամոտ ժամանակներում Ղարաբաղում վերջացել էր մի հայկական իշխանություն, որ յուր անցյալը և յուր պատմությունն ուներ: Թեև այս և այն հրատարակությունների մեջ տպված էին զանազան անկապ, հատուկտոր հոդվածներ, բայց դրանք այնքան աղքատ էին իրենց բովանդակության կողմից, որ մի պարզ գաղափար չէին կարող տալ վերջացած իշխանության մասին: Զանազան խորշերում,- շարունակում է նա,-ընկած էին մոռացված... ձեռագրեր, որոնք դեռ գրականության սեփականությունը չէին դարձել: Իսկ ժողովրդի բերանում մնացել էին կենդանի ավանդություններ, որոնք հավաքելու կարոտ էին»[1]:


ՐԱՖՖԻ

ԽԱՄՍԱՅԻ

ՄԵԼԻՔՈՒԹԻՒՆՆԵՐԸ

[1600—1827]

ՆԻՒԹԵՐ ՀԱՅՈՑ ՆՈՐ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Արտատպած «Մշակ» լրագրից

ԹԻՖԼԻՍ

1882

«Խամսայի մելիքությունների» առաջին հրապարակության փիտղոսաթերթը

Այդ ամենը հավաքելը և Ղարաբաղի մելիքության մասին մի ամբողջական պատմություն կազմելը, ինչպես ցույց են տալիս, տարբեր առիթով կատարված գրառումները մշտապես եղել են Րաֆֆու մտասևեռումի առարկան: Այսուհանդերձ տարիների ընթացքում նրա ամբարած տեղեկությունները, գրի առած փաստերն ու զրույցները չեն բավականացնում այդ նպատակադրումը իրականացնելու համար, սակայն ավելի են բորբոքում նրա այդ աշխատանքը ի կատար ածելու ներքին մղումը: Եվ ահա՛ 1881 թվականին նա «Մշակ» լրագրում հրատարակում է «Իմ ընթերցողներին» խորագրով հոդվածը, որտեղ, խոսելով

[1] Տե՛ս Րաֆֆի, Երկերի ժողովածու, հ. XII, Ե., 1999, էջ 13:

իր առաջ ծառացած դժվարությունների մասին. հրապարակավ դիմում է այն բոլոր «պա-
րոններին. ովքեր մոտ կան թե՛ գրավոր և թե՛ բերանացի տեղեկություններ», խնդրում է
նրանց բարեհաճեն հաղորդել իրեն այդ աշխատությունը իրականացնելու համար[2]:
Րաֆֆու հրատարակած կոչը մեծ արձագանք չի գտնում. ուստի նա որոշում է հետա-
զոտական նպատակով մի ուղևորություն կատարել այն տեղերում, ուր դարեր շարունակ
գոյություն է ունեցել Ղարաբաղի մելիքների իշխանությունը: «Եթե կհաջողվի ինձ,- գրում է
նա,- հավաքել իմ ցանկացած բոլոր տեղեկությունները, ես կկազմեմ Ղարաբաղի մելիքնե-
րի ամբողջ պատմությունը սկսյալ Դավիթ Բեկից մինչև վերջին ժամանակները»[3]:

Որպեսզի գործնականում իրականացնի իր համար նվիրական դարձած նպատակա-
դրումը. 1881 թվականի հուլիսի 25-ին Րաֆֆին «Մշակ» լրագրում կիսատ է թողնում «Դա-
վիթ Բեկի» տպագրությունը և Թիֆլիսից Գանձակ տանող ճանապարհով. փոստային սայ-
լակով ուղևորվում է Արցախ-Ղարաբաղ:

Րաֆֆին Գանձակից մեկնում է Գյուլիստան գավառը, իջևանելով Մելիք-Բեգլարյան Սերգեյ-Բեկ և Ալեքսան-Բեկ եղբայրների տանը: Իր շուրջը հավաքելով Ղարա-Չինար գյուղի ծերերին, նա կարողանում է արժեքավոր տեղեկություններ քաղել այդ գավառի մելիքների մասին: Հոռեկա վանքի մոտ նա հայտնաբերում է Բեգլարյան տոհմի ժառանգների մամռոտած շիրիմները և տապանաքարերի վրայից հմտորեն վերծանում է դրանց արձանագրությունները, որոնք մեծ քանակությամբ ժամանակագրական ու տոհմագրական հարուստ փաստեր են տրամադրում հնախույզ Րաֆֆուն: Անտառի մթին կածանով վեր բարձրանալով՝ Րաֆֆին մտնում ու տեսնում է Գյուլիստանի անհոելի բերդը, որն իր կիսավեր վիճակով մեծ հիացմունք է պատճառում նրան:

Եկեղեցիներում ու առանձին անձանց մոտ նա առիթ է ունենում զննելու մի քանի գրչագիր-նկարազարդ Ավետարաններ և օգտվում է դրանց հիշատակարաններից, ինչպես նաև կարդում ու վերծանում է Մելիք-Բեգլարյանների իշխանական տան հիշատակին նվիրված արձանագրությունները:

Թողնելով Գյուլիստանի մելիքության տարածքը՝ Րաֆֆին անցնում է Ջրաբերդ, ուր և գրի է առնում Մելիք-Իսրայելյանների իշխանական տան մասին պահպանված ավանդությունները, Գետաշեն գյուղի եկեղեցում նա հայտնաբերում է մի արծաթակազմ գրչագիր Ավետարան, որի հիշատակարանում գրի էր առնված Ջրաբերդի մելիքների տոհմագրությունը: Այնուհետև Թարթառ գետի հակառակ ընթացքով վեր բարձրանալով՝ Րաֆֆին մտնում է Եղիշե առաքյալի վանք կոչվող համալիրին, որի կառույցներից մեկի մեջ Րաֆֆին ամփոփված է գտնում Վաչագան թագավորի գերեզմանը: Այդտեղից առաջանալով՝ նա հասնում է Ջրաբերդ կոչվող հռչակավոր ամրոցին: Երիցմանկանց վանքում Րաֆֆին հանդիպում է վանքի միաբան Տոնի ապորը և ամբողջ գիշեր գրի է առնում նրա պատմածները Չալաղան յուզբաշու և Մելիք-Իսրայելյանների մասին:

Մարտակերտ գյուղում Րաֆֆին այցելում է պատմական վերջին անցքերի ականատես, հարյուրամյա ծերունի Միրզա Ասրիին: Նա երկու օր շարունակ գրի է առնում Ղարաբաղի և Շուշիի բերդի մասին ծերունու պատմածները:

---

[2] Տե՛ս Րաֆֆի Երկերի ժողովածու, հ. XI, Ե., 1991, էջ 361:

[3] Նույն տեղում:

Ջրաբերդից Րաֆֆին անցնում է Խաչեն գավառ, Հասան-Ջալալյանների դաստակերտ: Տոհմային գերեզմանատներում նրան հաջողվում է գտնել և հետազոտել մելիքների ու կաթողիկոսների տապանաքարերի վրա եղող արձանագրությունները: Գանձասարի Վանք գյուղի տներից մեկում Րաֆֆուն հաջողվում է գտնել Բաղդասար միտրոպոլիտի ձեռքով գրված մի հնամաշ տետր, ուր կային արժեքավոր տեղեկություններ Ղարաբաղի մելիքների, Պետրոս Մեծի ու վրաց Վախթանգ իշխանի փոխհարաբերությունների մասին:

Խաչենում Րաֆֆին տեսնում է նաև Հասան-Ջալալյանների բերդը: Խաչեն գետի ընթացքով իջնելով ցած և թեքվելով դեպի Խնգիրստան գյուղ՝ Րաֆֆին տեղեկություններ է հավաքում Մելիք-Միրզախանյանների մասին: Խաչենում նա հանդիպում է անախորժության մելիքության ժառանգորդների կողմից: «Ինձ առհասարակ,- գրում է Րաֆֆին,- չէր հաջողվում այն տեղերում, ուր գտնվում էին մելիքների ժառանգները, երբ նրանց տոհմի պատմության մեջ կային արատավոր կետեր»[4]: Այստեղ Րաֆֆին երկար չի մնում և անցնում է Վարանդայի գավառ:

Հասնելով Վարանդայի սահմանագծին՝ Րաֆֆին ուղղությունն է վերցնում դեպի Շուշի: Նրա առաջին գործն է լինում հետազոտել հոգևոր կոնսիստորիայի արխիվը, ուր գրեթե ոչինչ չի հայտնաբերում: Շուշիում նա ծանոթանում է զառամյալ ծերունի Հաթամի հետ և գրի է առնում նրա հաղորդած շատ արժեքավոր տեղեկությունները Ղարաբաղի մելիքությունների մասին: Հոգևոր առաջնորդի հանձնարարությամբ նրան ուղեկից է կարգվում Ղարաբաղի պատմությանը լավատեղյակ, Շուշու կոնսիստորիայի անդամ տեր-Գարեգին քահանան, որը շուրջ երկու շաբաթ ուղեկցում է Րաֆֆուն՝ օգնելով նրան հետազոտական աշխատանքներում[5]:

Ուղեցույց ունենալով տեր-Գարեգին Հովհաննիսյանին, Րաֆֆին Վարանդայից անցնում է Դիզակի գավառ: Հետազոտության առարկա դարձնելով Մելիք-Ավանյանների իշխանական տան պատմությունը, ուսումնասիրում է նրանց տոհմային գերեզմանատունը:

Տող գյուղում Րաֆֆին ծանոթանում է Գտիչ վանքի վանահայր Առաքել վարդապետ Կոստանյանի հետ: Վերջինս Րաֆֆու տրամադրության տակ է դնում պատմական նյութերի երկու հատորից բաղկացած մի ստվարածավալ ժողովածու, որի մեջ ամբարված նյութերը փաստական հարուստ տեղեկություններ են տալիս հետազոտող Րաֆֆուն Դիզակի մելիքների պատմության վերաբերյալ և այդ կողմերում Ցիցիանովի արշավանքի մասին:

Րաֆֆին այդ ձեռագրի մեջ հայտնաբերում է հետաքրքրական ու արժեքավոր տեղեկություններ ռուս գեներալների դեպի Ղարաբաղ կատարած արշավանքների մասին: Նրան առանձնապես հետաքրքրում է իշխան Մադաթովի ճակատամարտը Շամքոր գետի և Գանձակի բերդի մոտ, ինչպես նաև գեներալ Կոտլյարևսկու՝ Լենքորանի ու Սուլդուզի կռիվների մանրամասները: Այստեղից Րաֆֆին մեկնում է Ամարաս, ապա կրկին վերա-

---

[4] Տե՛ս Րաֆֆի, Երկերի ժողովածու, հ. IX, Ե., 1987, էջ 607:

[5] Տարիներ առաջ, երբ մի առիթով խոսում էինք Ղարաբաղում Րաֆֆու կատարած ուղևորության մասին, ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանը մի առանձին խանդաղատանքով պատմեց, որ տեր-Գարեգին քահանան եղել է իր հայրը: Նա նաև ավելացրեց, որ Րաֆֆին շուրջ մեկ շաբաթ հյուրընկալվել է իրենց տանը՝ Գարեգին քահանայի նահապետական օջախում:

դառնում է Շուշի և ավարտում է իր հետազոտական ուղևորությունը Ղարաբաղի հինգ մելիքություններում:

Երկու ամսվա ընթացքում Րաֆֆին կարողանում է հրովարտակներից, կոնդակներից, պաշտոնական այլևայլ թղթերից, արձանագրություններից ու գրչագիր մատյաններից, ինչպես նաև ժողովրդի մեջ պահպանված ավանդություններից ու իրապատում զրույցներից մեծ քանակությամբ արժեքավոր տեղեկություններ քաղել Ղարաբաղի տերերի՝ իշխանական տների պատմության վերաբերյալ: Սակայն սա դեռ բոլորը չէ, շարունակելով շրջագայությունները, Րաֆֆին մեկնում է Զանգեզուր, Սիսիան, Բարգյուշատ, Ձավանդուր, Ղափան, Մեղրի և Օրդուբադ, ապա մտնում է Ագուլիս՝ Թովմա Առաքյալի վանքում ամբարված ձեռագրերը ուսումնասիրելու համար:

1881 թվականի սեպտեմբերի 28-ին, թողնելով Ագուլիսը, Րաֆֆին մեկնում է Պարսկաստան՝ իր հարազատներին և ընտանիքի անդամներին տեսնելու:

Վերադարձին շեղվելով ճանապարհից՝ Րաֆֆին այցելում է Էջմիածին, հույս ունենալով Մայր Աթոռի դիվանատան արխիվներում գտնելու վավերաթղթեր, որոնք կարող էին արժեքավոր տեղեկություններ հաղորդել Ղարաբաղի պատմության վերաբերյալ, սակայն բարեկամ եպիսկոպոսները Րաֆֆուն հավաստիացնում են, որ ինչպես արխիվում, այնպես էլ մատենադարանում այս մասին և ոչ մի փաստաթուղթ չկա:

Էջմիածնից Րաֆֆին վերադառնում է Թիֆլիս: Համադրելով հետազոտությունների ընթացքում ձեռք բերած նյութերը, նա նկատում է, որ եղած տեղեկությունները չեն բավարարում իր նպատակադրումը իրականացնելու համար, ուստի Րաֆֆին ուսումնասիրության առարկա է դարձնում մի շարք ձեռագիր աշխատություններ, սակայն դրանք ևս չեն բավարարում նրան և «անցքերը, գործողությունները ու գործողները ճիշտ ձևի մեջ դասավորելու համար» սկսում է ուսումնասիրել նաև այդ մասին եղած տպագիր աշխատությունները:

Վերջապես, բազմակողմանի ուսումնասիրությունից հետո, սրանից ուղիղ 120 տարի առաջ Րաֆֆին սկսում և վեց ամիս անց ավարտում է «Խամսայի մելիքությունների» գրությունը: 1882 թվականի մայիսից Թիֆլիսի «Մշակ» լրագրում սկսվում է տպագրվել այն: Միևնույն շարվածքից այս աշխատությունը զուգահեռաբար տպագրվում է նաև առանձին գրքով: Բարեկամները ու ծանոթները ամեն կողմից շնորհավորում են հեղինակին ու զանազան հարցումներ են ուղղում և բացատրություններ են խնդրում նրանից Ղարաբաղի մելիքությունների վերաբերյալ:

«Մշակ» լրագրում այն տպագրվելու ընթացքում Թիֆլիսի գրաքննչական կոմիտեն հանդես է բերում մի շարք խոչընդոտներ: Ջնջվում են մի շարք հատվածներ և հանվում մի քանի գլուխներ: Այս ամենով հանդերձ, գրաքննիչը նոր խնդիրներ է հարուցում աշխատությունը առանձին գրքով լույսընծայման ժամանակ: Րաֆֆին կրում է մեծ մտահոգություն. «Եթե նորից ջնջելու լինեն,- գրում է նա իր բարեկամներից մեկին,- գիրքը բոլորովին կկորցնի իր նշանակությունը: Րաֆֆին հարկադրված է լինում անձամբ ներկայանալ գրաքննիչին: Երկար բանակցություններից հետո, վերջապես, 1882 թվականի սեպտեմբերին լույս է տեսնում այն:

1884 թվակկանին գալով Թիֆլիս՝ Արփիարյանը հյուրընկալվում է Րաֆֆու բնակարանում: Վերադառնալով Կ. Պոլիս, նա «Մասիս» շաբաթաթերթում հրապարակում է իր ստա-

ցած տպավորությունները։ «Մշակ» օրագրի մեջ հրատարակյալ վիպասանության ձեռագրերը տեսա,- գրում է նա,- արյունաներկ թանաքը շատ սքանչելի տողեր կիսամեռ ծգած էր»[6]։

«Խամսայի մելիքությունների» լույս տեսնելուց կարճ ժամանակ անց Րաֆֆին թարգմանում և տպագրում է ռուս հեղինակ Պլատոն Զուբովի «Ղարաբաղի աստղագետը» վեպը։ «Այդ երկու աշխատությունները,- թարգմանության առաջաբանում գրում է Րաֆֆին,- կապ ունեն միմյանց հետ և լրացնում են մին' մյուսի թերությունները, մեկը' որպես վեպ, մյուսը' որպես պատմություն և այդ մտքով էլ մենք թարգմանեցինք «Ղարաբաղի աստղագետը» համարելով այն իբրև մի օժանդակ կամ լրացուցիչ աղբյուր «Խամսայի մելիքություններ» կոչվող պատմության համար»[7]։

Խոսելով իր այս երկու աշխատությունների մասին' Րաֆֆին «Արձագանք» պարբերականի խմբագրությանը հղած մի նամակում գրում է «... Մենք խավարից ի լույս ածեցինք մի ամբողջ պատմություն, մի կորած, մոռացված իշխանության պատմություն։ Մենք մեր նպատակի համար ծախսեցինք մեր ամենաչնչավոր միջոցները և ո՛չ ոքից շնորհակալություն չէինք սպասում»[8]։

«Խամսայի մելիքությունները,- գրում է Րաֆֆին Մ. Փանյանին,- իմ բոլոր աշխատությունների պսակը պիտի համարել»[9] (ընդգծումը մերն է- Խ. Ս.)։ Այս առիթով նամակի շարունակության մեջ տալիս է մի նշանակալից ու կարևոր բացատրություն, որը սերտորեն կապված է նրա քաղաքական մտասևեռումի հետ. «Ես դրանով կենդանացրի մի վաղուց կորած և մոռացված պատմություն, ես դրանով ապացուցեցի, որ հայկական իշխանությունը շարունակվում էր մինչև ներկա դարը»[10]։

Րաֆֆին չէր կեղծում, նրա խոսքը ունի ենթատեքստային իմաստավորում։ Իբրև ստեղծագործող նա իր առաջ խնդիր էր դրել, և դա նրա մտասևեռումն էր, որ գեղարվեստական ստեղծագործությունների միջոցով զարկ տա ժողովրդի մեջ ընթերցասիրության տարածմանը ու ծավալմանը և ապա, նման գործերով հայության մեջ արմատավորի ինքնուրույն պետականություն ունենալու գաղափարը։

Հաջորդող շրջափուլում նա պետք է իր ծրագրային վեպերի միջոցով հայությանը ուսուցաներ անկախություն ձեռք բերելու ուղիները։ Սա էր Րաֆֆու կողմից մշակված անկախ պետականություն ստեղծելու ընթացակարգը, որի համար էր «Խամսայի մելիքություններ»-ը այսպես բարձր գնահատում։

Վեր հանելով Ղարաբաղի մելիքների պատմությունը' Րաֆֆին միաժամանակ ցանկանում էր ցույց տալ, որ հայոց թագավորության անկումից հետո երկրում պետականությունը չի դադարել գոյություն ունենալուց, այլ տարբեր կառուցվածքի պայմաններում այն շա-

---

[6] Տե՛ս «Մասիս», Կ. Պոլիս, 1884, թիվ 3736, էջ 194։

[7] Տե՛ս Րաֆֆի, Երկերի ժողովածու, հ. XII, Ե., 1999, էջ 285։

[8] «Արձագանք», Թիֆլիս, 1885, No 23, էջ 226։

[9] Տե՛ս Րաֆֆի, Երկերի ժողովածու, հ. XII, Ե., 1999, էջ 219։

[10] Տե՛ս նույն տեղում։

րունակել է պահպանել իր ինքնուրույնությունը, մի դեպքում մարզպանական, մի այլ դեպքում ոստիկանական կառույցի, և վերջում Ղարաբաղում մելիքության շրջանակներում[11]:

Այդ ամենից և հատկապես Բեռլինյան վեհաժողովի տխրահռչակ որոշման հիասթափությունից հետո, Րաֆֆու ծրագրած միջոցառումները չէին կարող ինքնանպատակ լինել: Նա հետապնդում էր մի կարևոր նպատակադրում. արթնացնել ժողովրդի՝ հայ մարդու ինքնաճանաչողության ոգին: «Գրքերը մի ժողովրդի պատմական անցյալը,- մի առիթով գրում է նա,- և մի գիշերվա ընթացքում նրա մեջ կարթնանա ինքնուրույն պետականություն ունենալու ոգին»:

Այս էր Րաֆֆու հետապնդած նպատակադրումը, երբ նա ուժերի լարումով գրում և հրապարակ էր հանում «Խամսայի մելիքությունները» աշխատությունը:

«Խամսայի մելիքությունների» լույս աշխարհ գալը նշանակալից ներգործություն է ունենում հայոց գրական, հասարակական ու քաղաքական կյանքի աշխուժացման վրա:

Ղարաբաղն իր պատմական անցյալով սկսում է նշանակալից տեղ գրավել տարբեր հեղինակների աշխատություններում:

Ցանկանալով գոհացում տալ պոլսահայ մտավորականության հարցասիրությանը Ղարաբաղի և հատկապես Խամսայի մելիքությունների վերաբերյալ, Թիֆլիսից Կ. Պոլիս մեկնող Արփիար Արփիարյանը տեղի «Արևելք» պարբերականում 1884–1885 թթ. 20 թվահամարում հրապարակ է հանում Րաֆֆու «Խամսայի մելիքությունների» կրճատված տարբերակը[12]:

«Րաֆֆին,- գրում է Լեոն իր «Ռուսահայոց գրականությունը» խորագրով աշխատության մեջ,- շատ էր սիրում պատմությունը: Այդ սիրուն ենք պարտական, որ ճանապարհորդելով Ղարաբաղի կողմերում, նա գտավ և լույս հանեց մի ամբողջ անհայտ շրջան մեր նոր պատմությունից՝ «Խամսայի մելիքությունները»: ... Այդ աշխատությունը,- շարունակում է նա,- աչքի ընկնող և գնահատելի մի գործ է մեր պատմագրության մեջ իբրև առաջին փորձ»[13]: Այդ աշխատության մեջ տեղ գտած մի պատումի ազդեցության տակ Լեոն գրում է իր «Մելիքի աղջիկը» պատմվեպը:

«Խամսայի մելիքությունների» մեջ գրի առնված մի ավանդության հիման վրա բանաստեղծ Հարություն Թումանյանը «Լումա» պարբերականում տպագրում է իր պոեմը, որի թեման վերաբերվում է Խամսայի «Մելիք Յուսուֆի»[14] գործունեությանը:

Րաֆֆու այս գրքի արժանիքները այնքան մեծ են ու ծանրակշիռ, որ նրա գրական վաստակի երդվյալ հակառակորդ Հայկունին (Եղիշե քահանա Գեղամյան) հարկադրված է լինում դրվատական գնահատական տալ այս աշխատությանը: Խոսելով Րաֆֆու գրքում տեղ գտած մի աննշան սխալի մասին, նա գրում է. «Մենք այս ծանոթությամբ ո՛չ թե պ. Րաֆֆիի գովելի աշխատության արժեքը վայր ձգել ենք կամենում, քավ լիցի... »[15]:

---

[11] Րաֆֆու աշխատության մեջ Խամսայի մելիքների իշխանապետության սկզբնավորումը ծայր է առնում 1600 և իր ավարտին է հասնում 1827 թվականին:

[12] Տե՛ս «Արևելք», Կ. Պոլիս, 1884, դեկտեմբեր և 1885 հունվար-հուլիս:

[13] Տե՛ս Լեո. Երկերի ժող., հ. IX, Ե., 1989, էջ 243:

[14] Տե՛ս «Լումա», Թիֆլիս, 1900, գիրք Ա, էջ 303-321:

[15] Տե՛ս Հայկունի, Ուղեգնացական ակնարկներ, «Մեղու Հայաստանի», Թիֆլիս, 1885, No 51, 4 հուլիսի:

# ԳՐՈՂԻ, ՄՏԱԾՈՂԻ ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ

(Նվիրվում է Շավարշ Նարդունու ծննդյան 105-ամյակին)

Ֆրանսահայ գրականության այն շրջանը, որ սփյուռքյան գրականության պատմության մեջ ընդունված է անվանել ՄԵՆՔ-ի խմբակցության տարիներ, այսօր այնքան էլ յուսաբանված, արժևորված չէ: Շավարշ Միսակյանի բնորոշմամբ՝ «Փարիզի տղաքը» այնքան էլ հայտնի չեն հանրությանը: Չնայած նրանցից Ն. Սարաֆյանի, Շ. Շահնուրի, Զ. Որբունու, Վ. Շուշանյանի ստեղծած աներկբայորեն մեծարժեք գրական վաստակին (իհարկե ոչ ամբողջությամբ) ընթերցողն արդեն որոշապես ծանոթացել է: Գրվել են նաև գրականագիտական ուսումնասիրություններ, հոդվածներ, մասնահատկվել է հիշյալ գրողների վաստակը:

Շավարշ Նարդունին (Այվազյան, 1898-1968 թթ.) ցայժմ պատշաճ ուշադրության և գնահատանքի չի արժանացել: Մահվանից հետո նրա անվան և գրականության շուրջ պահպանված անտարբերությունը կամ *չիմացական լռությունը* այսօր էլ շարունակվում է: Մի առիթով խոսելով 30-ական թվականների սփյուռքյան գրական վերարթնացման մասին, Ն. Սարաֆյանը նշում է, որ սերնդի գրողներից միակը, որ կարող էր առաջնորդի դեր ստանձնել, Նարդունին էր: ՄԵՆՔ տարեգրքի շուրջ համախմբված գրողների գրական-մտածողական ըմբռնումների սփյուռքյան հասարակության մեջ ընդունելի-անընդունելի լինելու հանգամանքը գիտակցվում էր սերնդի գրողների կողմից, նրանք նոր ժամանակներում իրենց դերակատարության խնդիրն էին առաջադրում: Առանձնացնելով Նարդունուն՝ սերնդի գրողներից Ն. Սարաֆյանի պես հեռաթափանց գրողն ու մտածողը դրանով իսկ բնութագրում էր Նարդունի-մտավորականին՝ հայ մտքի և լեզվի անխոնջ ջատագով հայ մարդուն:

Շ. Նարդունու գրական ժառանգությունը արժևորելիս, ճշմարտության առաջ մեղանչած չլինելու համար կարող ենք արձանագրել, որ նրա ոչ բոլոր ստեղծագործություններն են ենթարկվում ժամանակների անողոք քննությանը, դրանով իսկ այսօր իրենց գեղարվեստական-մտածողական հրատապությամբ կարող են ներկայանալիություն չունենալ: Մասնավորաբար, նկատի ունենք բանաստեղծությունները և որոշ արձակ գրություններ, հեքիաթներ, որոնց գեղարվեստական արժեքն ու մտածումի ինքնատիպությունը նույնական չեն և բավականին զիջում են նրա վաստակի հիմնական և մնայուն մաս կազմող այն ստեղծագործություններին, որոնք ոչ միայն ժամանակային քննություն բռնել են, այլև այսօր էլ ընթերցողի համար ուրույն *ներկայանալիություն*, վստահ ենք, կունենան («Հեքիաթներու ալպոմ», 1927, «Երուսաղեմ, Երուսաղեմ», 1938, «Հանուն Մեսրոպ Մաշտոցի», 1967), վերոհիշյալ ստեղծագործություններում առկա ու տրոփուն է հայ ՄԻՏՔԸ՝ հայոց լեզվի նկարչագեղ ելևէջումներով:

Շ. Միսաքյանի «Օրեր և ժամեր» (Փարիզ, 1958) գրքի առաջաբանում ահա թե ինչ է գրում իր գրչակից ընկերոջ մասին Նարդունին, որն ամենայն առումով կարելի է վերագրել նաև իրեն. «...միակն էր, որ կպաշտպաներ *նոր ժամանակները արտահայտության նոր*

*ձևեր կպահանջեն:* Այս վկայությունը կհաստատե, թե քարացած միտք մը չէր, որքան ճկուն, նույնքան և դյուրընկալ' գիտեր չգայթակղիլ ո՛չ բոլշևիզմեն և ո՛չ ֆաշիզմեն: Մեզ չի հետաքրքրեր այդ վարդապետություններուն ետև պահված քաղաքական գործիչներու պայքարը. իմաստունը այն է, որ սնունդ կգտնե ամեն հողի վրա' ի շահ իր ժողովուրդին»:

«Լույս ու խանդավառություն սփռեց ու պիտի սփռե տակավին, ուրախություն և կյանքի սեր, հավատք ու կորով. այն բոլորը, որոնց պետքն ունի սփյուռքը... Ժողովուրդին զավակն է: Անպետ մը» («Մեկ ժամ Նարդունիին հետ»): Ն. Սարաֆյանի այս բնորոշմանը ավելորդ է որևէ բան հավելել: Այն ավելի քան պարզորոշում է Նարդունու գրողական և մարդկային կերպարը:

Ստորև ներկայացվող Շ. Նարդունու ուշարժան ուսումնասիրություններից մեկը («Վեմ», Փարիզ, 1923), որ նվիրված է Գողթան երգերի և եբրայական բանաստեղծության փորձահամեմատական խնդրին, անշուշտ, ընթերցողին որոշակի պատկերացում կտա Նարդունի-վերլուծաբանի լայն մտահորիզոնի և աշխարհընկալման մասին: Անդրադառնալով հայոց լեզվի կրած հնչաբանական փոփոխություններին, Նարդունին հարկ է համարում ճշտել, որ հելլենական և լատինական տաղաչափական օրենքների ճշգրտումից հետո միայն կարելի է «ճշտել մեր բառերուն արտասանության կշռույթը»: Ի վերջո. «Բաղդատական քննություն մը հայ Գողթան և հին եբրայական բանաստեղծության միջև կրնա շատ բան լուսավորել մեր հին արվեստին մթամած շենքեն ներս»: Նարդունին նախընտրաբար կողմնակից է ուսումնասիրել մեր հին բանաստեղծության արտաքին ձևաբանությունը, քան անդրադառնալ ներքին կազմախոսությանն առնչվող խնդիրներին: Հիրավի, քննական այս մոտեցումը գիտա-համեմատական տեսակետից որքան էլ պայմանավորված է նախորդ հետազոտողների (Հովսեփ Գաթրճյան, Հ. Գաբրիել Զարբհանալյան և այլք) ուսումնասիրությունների փորձով, այնուամենայնիվ, շահեկան է և հետաքրքրահարույց:

*ԱՐԹՈՒՐ ԱՆԴՐԱՆԻԿՅԱՆ*

*ՇԱՎԱՐՇ ՆԱՐԴՈՒՆԻ*

# ՓՈՐՁ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՅ ԳՈՂԹԱՆ ԵՐԳԵՐՈՒ ԵՎ ԵԲՐԱՅԱԿԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ

Եբրայերենի մեջ բանաստեղծություն բառին համազորը բոլորովին տարբեր նշանակություն ունի հելլենական առումեն, զոր յուրացուցած են եվրոպական լեզուները և արդի հայերենը: Ասկից, մեր սխալ հասկացողությունը եբրայական բանաստեղծության մասին:

Ապողոնի արվեստը նշանակող բառը հունարենի մեջ կնշանակե *ստեղծել*, մինչ եբրայերենի մեջ՝

*ա. բաղդատել, խոսիլ նմանություններով.*

*բ. յօտել, կտրել, տաշել, հղկել:*

Այս երկրորդ սահմանումին մասին պիտի խոսինք վերջը, սակայն կուզեի անմիջապես այստեղ դիտել տալ, որ *յօտել, կտրել, տաշել, հղկել*, շատ կհիշեցնեն մեր *քերթել* (և *քերթված*) բառը, (հունարենի մեջ դրամմա – *գրել*՝ կմատնե մագաղաթներու վրա, *քերելով* ու *քերթելով*, մտածումը նշանակելու սովորությունը հիներուն):

Գալով առաջին սահմանումին, ըսել թե եբրայերենի մեջ բանաստեղծություն բառին համազորը կնշանակե բաղդատել, խոսիլ նմանություններով, փոքրիկ այլ թանկագին ծանոթություն մըն է, որ, ինձի կթվի թե, բավական է ներկայացնելու եբրայական արվեստին ամբո՛ղջ նկարագիրը: Հայերեն Աստվածաշունչին մեջ սխալ և շատ գեշ թարգմանված է այդ բառը: Արդարև, ինչ որ *առակ*[1] թարգմանած են մերինները *(Գիրք Յոբա, Գլ. ԻԷ, 1, Սաղմ. Գլ. ԽԸ, 5)*, պետք էր պարզապես թարգմանվեր *բանաստեղծություն* (բաղդատելով ու նմանություններով խոսելու եբրայական արվեստը): Նույնպես, ինչ որ *առակարկու (Գիրք Թվոց, Գլ. ԻԱ, 27)*, թարգմանած են, պետք էր թարգմանվեր պարզապես *բանաստեղծ:* Բացեք րաբբունի Զատոկ Քանի թարգմանությունը, և պիտի տեսնեք այդ բառերուն փոխադրությունը՝ կատարված ինչպես դիտել տվի: Արդարև, Յոբի գրքին մեջ, որ ամբողջ բանաստեղծություն մըն է[2], իմաստ ունի՞ ըսել «...յաւելեալ Յոբայ *յառակի* իւրում»: Կամ ի՞նչ կնշանակե «բացից զառակս օրհնութեան» *(Սաղմ. Գլ. ԽԸ, 5)*: Ո՞վ բան կհասկնա «օրհնութեան առակ» բացատրութենեն: Գրաբար Աստվածաշունչը, ծանոթության մը մեջ, նույն բացատրությունը կթարգմանե «բացից քնարաւ զառեղծուածս իմ»: Ավելի գեշ, միթե առեղծվածնե՞ր կնվագեին քնարով, եբրայեցի բանաստեղծները*: Մեր պատ-

---

[1] Եբրայեցիները բանաստեղծության զանազան ձևեր ունին, *քինա, մաշալ, միքթամ, շիկայոն, մազմիր, միզմոր, թեհիլլիմ*, որոնք առանձինն կնշանակեն նաև բանաստեղծություն:

[2] Շատեր ուզած են վերահաստատել Յոբի գրքին ձևը իբրև բանաստեղծություն: Մեր մեջ Թորգոմ արքեպս. Գուշակյան ևս տաղաչափական ձև տված է Յոբի գրքին:

* *[Առակը որպես բանաստեղծություն ներկայացնելու հեղինակի այս նիգերը հիմնազուրկ են, որը նաև հավաստվում է այս բառը գրաբարյան առակին համարժեքով ներկայացնելը դասական մյուս լեզուներով կատարված թարգմանություններում: Պարզապես առակը գրաբարում իմաստային շատ ավելի մեծ ընդգրկում է ունեցել, քան այսօրվա հայերենում: Նաև անթույլատրելի է գրաբարյան թարգմանության մասին այդպիսի ոճով ար-*

վելիներում աշխարհաբար Աստվածաշունչը ավելի ևս հիմար թարգմանություն մը կկատարե գրելով. «խրթնաբանութիւնս քնարով պիտի բանամ»: Քնար բառին գոյությունն իսկ պետք էր ենթադրել տար թե խոսքը երգի կամ բանաստեղծության մասին է, և ոչ թե *ալակի, առեղծվածի, խրթնաբանության*: Մանավանդ որ անմիջապես հետո տուն մը, երկու տուն երգ մը կհիշվի. (Զատոկ Քան այդ երգերը կթարգմանե բաժնելով հատվածեն): Ուրիշ օրինակ մը. - կարգ մը սաղմոսներ, որ կկոչվին մասքիլ, գրաբար Աստվածաշունչը թարգմանած է *իմաստություն*, աշխարհաբարը՝ *երգ*: Այս *մասքիլը* այնպիսի երգ մը կամ բանաստեղծություն մըն է, որ բանահյուսված է համաձայն եբրայական արվեստին ամենեն մաքուր և ամենեն գեղեցկագիտական օրենքներուն, այսինքն բանաստեղծություն մը, որ լավ *տաշված* է, լավ *կտրված* է, լավ *հղկված* է, և կմատնե բանահյուսողին իմաստությունը այդ արվեստին մեջ:

Այս սխալ թարգմանություններուն պատճառը նախ այն է, որ թարգմանիչները շփոթած են բանաստեղծության եբրայերեն համազորին բառական իմաստեն: Եվ հետո այն՝ որ *բանաստեղծության մասին բոլորովին տարբեր էր ըմբռնումը, ինչպես Եբրայեցիներուն, նույնպես Հին Արևելքի ժողովուրդներուն, որոնք թաթախված էին ասորաբաբելական քաղաքակրթության մեջ*: Հետևաբար, պատմության մշուշին մեջեն լսվող երգերն ու բանաստեղծությունները ուսումնասիրելու ժամանակ, պետք է մեկդի նետել հելլենական ու հռովմեական քաղաքակրթության կշիռներն ու չափերը, և, անցնելով առաջ քան Աթենքի և Հռոմի աշխարհակալության թվականները, մտնել այն տարբեր աշխարհը, թեև հետո պարտված ու կործանած, որ ասորաբաբելական աշխարհակալության շրջաններուն, ժողովուրդներու իրերաթափանցման նույն օրենքներուն տակ, ինչպես կայսերական քաղաքական կաթսաներու մեջ մեկ քաղաքակրթություն և մեկ արվեստ էր շիներ:

Չէ՞ որ, ինչպես կպնդեն բոլորը, շատ հի՛ն են հայ Գողթան երգերը, հնդկական դիցաբանության հետ կապ մը պահելու աստիճան:

Եթե շատ հին են մեր Գողթան երգերու պատառիկները, ապա ուրեմն անոնք հյուսված են համաձայն այդ հին աշխարհին արվեստի օրենքներուն: Ահա թե ինչո՛ւ Էտուար Տ'որմ կպնդե թե ինչ որ հատկանիշը կկազմե եբրայական բանաստեղծության, չէր կրնար սեփական ըլլալ միայն եբրայեցի ժողովուրդին, այլ հասարակաց և ընդհանրական՝ Բաբելացիներուն, Ասորեստանցիներուն, Արաբներուն: Ասորական մշակույթին և եբրայական գրականության հետ մեր խնամության մասին խոսելե առաջ, անհրաժեշտ է ուրեմն ճշտել եբրայական բանաստեղծության նկարագիրները, որ հատուկ էին նաև Ասիո առաջավոր ժողովուրդներուն:

---

*տահայտվելը, վկայակոչելով յոկ ժամանակակից մի թարգմանություն և մեկնաբանություն:*

*Չնայած այս ամենին, նպատակահարմար գտանք մեր ամսագրում վերահրատարակելու ոչ այնքան հայտնի այս հոդվածը իր լայն ընդգրկում ունեցող բանաստեղծական մի շարք յուրօրինակ զուգահեռների և հայ գրականության վաղացույն շերտերը վեր հանելու փորձի համար: ԽՄԲ.՝ Վ. Դևրիկյան]:*

•

• •

Եբրայեցիները բանահյուսության առաջին պայման կհամարեին հիշողության ապահովումը։ Բանաստեղծությունը բերնե բերան էր, որ կավանդվեր, ուստի հարկ էր միջոց մը գտնել բանահյուսությունը *պահելու դարէ դար*։ Որպեսզի երգիչը անսխալ և առանց տող մը մոռնալու կարենար երգել բանաստեղծությունը, օգտագործվեցավ Այբուբենը։ Այսպես քանի մը եբրայերեն բանաստեղծություններ հյուսված կամ հորինված են այբուբենական կարգով։ Բանաստեղծության մեջ ամեն տուն կամ որոշ թիվով տողեր կսկսեին նույնատառ բառով։ Չեմ կրնար այստեղ հիշել եբրայերեն բնագիրը, ուստի օրինակը կուտամ հայերենով։ Ենթադրենք թե երգիչ մը երգեց.

*Երկնէր երկին եւ երկիր։*

Երկրորդ տողը կպարտավորվեր սկսելու Ե տառով կամ *Երկնէր* բառով.

*Երկնէր եւ ծիրանի ծով։*

Կամ թե երգիչը երգեց.

*Ընդ եղեգան փող՝ ծուխ ելանէր։*

Երկրորդ տողը կպարտավորվեր սկսելու Ը տառով կամ *Ընդ* բառով.

*Ընդ եղեգան փող՝ բոց ելանէր։*

Անշուշտ, դժվար էր միշտ հարգել այս օրենքը։ Այս պատճառով, եբրայական բանաստեղծության մեջ, քիչ են նման կտորները։ Հիշենք Սաղմոս ՃԺԸ-ն, ուր, գրաբար Աստվածաշունչին մեջ, գրված է նույն տառով սկսող յուրաքանչյուր տուն մեկը մյուսեն հետու։ Եբրայերեն Այբուբենը կբաղկանա 22 տառե, այդ սաղմոսն ալ ունի 22 տուն, յուրաքանչյուր տուն՝ 8 տող, ուրեմն ամեն տունի մեջ նույն տառը կրկնված է 8 անգամ։ Այբուբենական կարգով գրված է նաև Երեմիայի *Ողբերուն* Դ. գլուխը, ամենը 22 տուն։ Նույն *Ողբերուն* Գ. գլուխը ունի 66 տուն, այստեղ յուրաքանչյուր տուն կբաղկանա *եռյակ*ներե (երեք տողերն ալ նույնատառ սկսած են), և ամեն երեք տուն հաջորդաբար դարձյալ նույնատառ։

Դիտելով որ դժվար է միշտ հարգել այս օրենքը՝ դրված միայն ու միայն հիշողության մեջ պահելու համար բանահյուսական գանձը, եբրայեցի բանաստեղծները փորձեցին *կրկնել ոչ թե միայն տառը* որոշ թիվով անդամներու սկիզբը, այլև *կրկնել իմաստը որոշ թիվով անդամներու մեջ։* Այսպես, երբ երգիչը երգեց.

*Երկնէր երկին եւ երկիր։*

կպատրաստվեր երկրորդ անդամին մեջ ալ կրկնել նույն իմաստը.

*Երկնէր եւ ծիրանի ծով:*

Ուրիշ օրինակ մը.

*Ընդ եղեգական փող՝ ծուխ ելանէր:*

Երկրորդ անդամը կուգար կրկնելու նոյն պատկերը, անշուշտ հառաջացնելով գործողությունը.

*Ընդ եղեգան փող՝ բոց ելանէր:*

Առնենք, հիմա, օրինակ մը եբրայական բանաստեղծութենէն.

*Տէր լոյս իմ եւ կեանք իմ, ես յումմէ՞ երկեայց,*
*Տէր ապաւէն կենաց իմոց, ես յումմէ՞ դողացայց:*

Այստեղ անմիջապես աչքի կզարնե *զուգահեռականությունը*: Արդարև, եբրայական բանաստեղծության գլխավոր հատկանիշներեն մեկն է *զուգահեռական զարգացումը* հուզումին, մտածումին և վերջապես քերթողական արտահայտության: Այդ զուգահեռականությունը կնշմարվի ոչ միայն երկանդամ, այլև երբեմն եռանդամ.

*Խաւարեսցի օրն այն,*
*Եւ մի՛ խնդրեսցէ զնա Տէր ի վերուստ,*
*Մի՛ եկեսցէ ի վերա նորա լոյս:*
*Ընկալցի զնա խաւար եւ ստուեր մահու,*
*Եկեսցէ ի վերայ նորա մէգ,*
*Եւ զարհուրեցուսցեն զնա որ*
*մթացուցանեն զտիւ:*

Այս զուգահեռականության մեջ հատկանշականն այն է, որ զուգահեռ անդամները իրարու կհամապատասխանեն ոչ միայն իմաստով, այլև ձայներով: Ահա, օրինակ մը, որ ցույց կուտա թե յուրաքանչյուր անդամի մեջ բառերը դրված են դեմ դիմաց, կարծես իբրև *մտածման արձագանգ*.

*Տեառն է երկիր լրիւ իւրով,*
*Աշխարհ եւ ամենայն բնակիչք նորա:*
*Նա ինքն ի վերա ծովու հիմունս արկ նմա,*
*Ի վերա գետոց պատրաստեաց զնա:*

Առաջին անդամին մեջ երկիրը կհամապատասխանե երկրորդին *աշխարհ* բառին, երրորդին մեջ *ծով*՝ չորրորդին *գետ* բառին:

Ճիշտ ինչպես մեր *Երկնէր երկին* բանաստեղծության մեջ բառերն ու պատկերները իրարու արձագանք կուտան անդամներուն մեջ.

*Երկնէր երկին եւ երկիր,*
*Երկնէր եւ ծիրանի ծով:*
.....................................................
*Ընդ եղեգան փող՝ ծուխ ելանէր,*
*Ընդ եղեգան փող՝ բոց ելանէր,*

Ուսկի՞ց կծագի այս զուգահեռականությունը: Ըսինք թե ծագում կառնե հիշողության անհրաժեշտ մեկ խաղեն: Այս երևույթը շատեր կբացատրեն նաև այլ ձևերով: Այսպես, *մտածման արձագանքը, պատկերներու զուգահեռականությունը, խոսքերու կրկնությունը,* ըսեք ինչպես կուզեք, հատուկ է բոլոր նախնական ժողովուրդներուն, որոնց իմացականությունը կսիրե գաղափարներու զուգակցությունը: Էտուար Տ'որմ ուշադրությամբ կքննե Ծննդոց գիրքին խմբագրությունը և կնշմարե, որ հեղինակը միշտ զուգորդությամբ կհիշե բույսերը, կենդանիները և գաղափարները, - երկինք և երկիր, լույս և խավար, ցերեկ և գիշեր, ծով և ցամաք, չար և բարի: Հուզումին և մտածման օրորումը կբացատրվի նաև հիշելով, որ, Եբրայեցիներուն և Ասորեստանցիներուն մեջ, երգիչները սովորություն ունեին գիրենք շրջապատողներուն կրկնել տալ իրենց ստեղծագործությունները տող առ տող: Այս ձևով կստեղծվեր կշռույթ մը, որ, արձագանք տալով երգիչը պաշարողներուն հոգվույն մեջ, կօրորեր զանոնք: Երևակայեցեք, որ հովիվներ էին երգիչները, - անոնք կկենային ժողովուրդին մեջտեղը, ճիշտ ինչպես իրենց ոչխարներու հոտին կեդրոնը, կերգեին ինչպես տուն կուտար ներշնչումը: Ու ժողովուրդը կմասնակցեր, կրկնելով փոխասացությամբ: Նկատեցեք որ վաչկատուն կամ խաշնարած ժողովուրդներու մոտ տարօրինակ վարժություն մըն է խմբվիլ առաջնորդին շուրջը, պաշարել զայն, կախվիլ անոր շրթներեն: Այս վարժության հետքը կա անպայման սաղմոսասացության ավանդություններուն մեջ: Ինչպես օվասիսին մեջ, առվի մը եզերքը, ոչխարի հոտին կեդրոնը կանգնած հովիվ մը, այնպես ալ տաճարին մեջ, երգիչներու դասին կեդրոնը կեցած *մոսհելը* (եբրայերեն կնշանակե այն, որ կշռույթ և չափ կուտա ներշնչման, պարզ խոսքով՝ բանաստեղծ), կերգե և ժողովուրդը կձայնակցի փոխն ի փոխ: Երգեցողության այս ձևեն ծագում առավ դասե դաս փոխասացությունը. «Եւ երկոքին դասք երգեցողացն կացին ի տանն Աստուծոյ» (*Գիրք Նէեմ. Գլ. ԺԲ. 40*):

Արդ, պահ մը դիտեցեք նմանությունը, որ գոյություն ունի փոխին (սաղմոսներու տուները) և զուգահեռ անդամներով բանահյուսության միջև:

* * *

Սկիզբները գրեցինք թե եբրայերենի մեջ բանաստեղծություն կնշանակե *հղկել, յօտել* (ինչպես ծառ մը), *տաշել:* Այս բացատրությունները իսկ կմատնեն, որ Եբրայեցիներուն մոտ գոյություն ունեին տաղաչափական մասնավոր օրենքներ, որոնց վրա կձևեին ու

կկտրեին, կկաղապարեին ու կհղկեին իրենց ստեղծագործությունները: Այդ ենթադրությունը ավելի և կզորանա, երբ նկատի առնենք որ Եբրայեցիները բազմաթիվ բառեր ունին բանաստեղծական զանազան ձևերու մասին: Անկից զատ, Սաղմոսներուն մեջ կհիշվին բազմաթիվ բառեր, որոնք կհաստատեն թե շատ որոշ օրենքներ կային երգելու, հետևաբար բանահյուսելու համար: Այսպես, գոյություն ունեին հատածներ, որ կճշտվեին *աթնա* (Աստվածաշունչի մեջ թարգմանված է *հանգիստ*) կոչված շեշտով մը: Դարձյալ կային *թէամիմ* կոչված նշաններ, որոնք կուգային շեշտել ոտանավորին անդամներուն վերջին բառերը, բաժնելով տողը տողեն: Այս մասին երկար չպիտի խոսիմ, որովհետև այնքան բարդ հարց մըն է, որ երկու ճակատի բաժնված են ուսումնասիրողները. մեկ կողմը կընդունի, որ եբրայական բանաստեղծության մեջ գոյություն չունին տաղաչափական օրենքներ, ոչ ալ արտաքին ձևեր, իսկ մյուս կողմը կպնդե թե եբրայական բանահյուսությունը ուներ իր տաղաչափությունը, ինչպես իր արտաքին ձևերը: Մենք ցույց տվինք իր արտաքին ձևերեն մեկ քանին,- այստեղ կուզենք ավելցնել թե եբրայական բանաստեղծությունը ծանոթ էր նաև տուն կազմելու օրենքներուն: Եվ այս՝ եզրակացությունն իսկ է տողերու զուգահեռականության օրենքին: Արդարև, ինչպես տեսանք, երբ պատկեր մը կկրկնվի երկու անգամով, տուն մը կկազմվի: Երբեմն երեք անդամներու կրկնությունով է, որ կկազմվի տունը,- և ահա ստեղծված է եռյակը: Այսպես *եռեակ*ներու գեղեցիկ օրինակ մըն է Երեմիայի Ողբերուն Գ. գլուխը: Քառյակները, կարելի է ըսել, անծանոթ էին եբրայեցիներուն, եթե քառյակը[3] ևս չհամարենք գումար մը երկու երկյակի:

Թե Եբրայեցիները որքան ծանոթ էին եռյակին, տանք քանի մը օրինակներ՝ քաղելով եբրայական ամենահին բանաստեղծություններեն.

*Զարթի՛ր, զարթի՛ր, Դեբորա,*
*Զարթի՛ր, զարթի՛ր, խոսեա՛ երգով,*
*Ցարո՛, Բարա՛կ, գերեա՛ զգերիս:*

Աստվածաշունչին մեջ տարբեր թարգմանված են այս տողերը, բայց ես կհետևիմ ուղղակի բնագրին վրայեն կատարված ֆրանսերեն թարգմանության մը: Հետևյալ հատվածին ոտանավորի ձևը թեև խաթարված է, բայց կմնան հատկանշական կրկնությունները.

*Ոչ ապաքէն գտանին, ո՞չ ապաքէն բաշխեն աւար,*
*Աղջիկ մի, նա աղջկունս երկուս առ այր,*
*Կապուտ երանգոց նկարակերտ վասն Սիսարայ,*
*Կապուտ երանգոց նկարակերտ,*
*Երանգ երկուստեք նկարէն,*
*Նարօտ պէսպէս նկարուց,*
*Պարանոցին նորա կապուտ:*

Եվ հիմա կարդացեք հետևյալը.

---

[3] Մ. Աբեղյան (Հայոց Լեզվի Տաղաչափություն, էջ 449) կդիտե, որ պարսկական Քառյակին մեջ երկու տողը կկազմեն մեկ *բեյթ*, երկու *բեյթը*՝ մեկ քառյակ:

*Եւ թղխեսցէ զաւազան յարմատոյն Յեսսեայ,*
*Եւ ելցէ շառաւիղ յարմատոյ անտի,*
*Եւ հանգիցէ ի վերայ նորա հոգի Աստուծոյ:*
*Հոգի իմաստութեան եւ հանճարոյ,*
*Հոգի խորհրդոյ եւ զօրութեան,*
*Հոգի գիտութեան եւ աստուածապաշտութեան:*
*Եւ բուրեսցէ երկիւղիւ Տեառն,*
*Ոչ ըստ աչաց դատեսցէ,*
*Ոչ ըստ խօսից յանդիմանեսցէ:*

Ի՞նչ կհիշեցնե ձեզի այս բանաստեղծությունը, - *Երկնէր երկի՞ն*: Արդարև, մեր այս ցեղեցիկ պատառիկն ալ կբաժնվի եռյակներու, բանալով նման ու զուգահեռական պատկերներու տեսիլք մը:

Եռյակները այնքան լրիվ են և գեղեցիկ, որ Տոքթ. Սմբատ Գաբրիելյան դիտել կուտա թե առաջին տունը կներկայացնե *երկունքը*, երկրորդը՝ *ծնունդը*, երրորդը՝ *ծնյալը*:

Ոչ մեկ կասկած թե եռյակը շատ ծանոթ ձև մըն էր հայ ժողովրդական բանաստեղծության մեջ: Լեո կկարծե թե հեթանոսական ավանդություններեն մնացած է հետևյալ երգը, զոր կերգեին Վասպուրականի մեջ նորապսակ հարսին ու փեսային առջև.

*Էգ բարև, ա՜յ էգ բարև,*
*Էգն արևուն տանք բարև,*
*Տայ թագաւորին շատ արև,*
*Վահէ՜, Վահէ՜:*
*Էգ բարև, ա՜յ էգ բարև,*
*Էգ արևուն տանք բարև,*
*Տայ թագուհիոյն շատ արև,*
*Վահէ՜, Վահէ[4]:*

Տոքթ. Գաբրիելյան դիտել կուտա, որ եռյակ մը կկազմե նաև Արտաշեսի երգը.

*Ո՜ տայր ինձ զծուխ ծխանի եւ զառաւօտն Նաւասարդի,*
*Զվազելն եղանց եւ զվազելն եղջերուաց,*
*Մեք փող հարուաք եւ թմբկի հարկանէաք:*

Եռյակի ձևն ունի նաև Արտաշեսի անեծքը.

*Դու յորս հեծցիս յԱզատ ի վեր ի Մասիս,*
*Զքեզ կալցին քաջք, տարցին յԱզատ ի վեր ի Մասիս,*
*Անդ կացցես, եւ զլոյս մի՛ տեսցես:*

---

[4] Լեո, Պատմություն Հայոց, էջ 348:

Քանի մը օրինակներ ալ Մկրտիչ Նաղաշէն.

*Թասերըն լինի,*
*Կարմըրուկ գինի,*
*Ձեզ անուշ լինի:*
*Չոր մէզէն համեղ,*
*Գինին է զօրեղ,*
*Դուք անուշ արէք:*

Նաղաշ Հովնաթանեն

*Սեղանըս լի է ծաղիկ,*
*Այսօր քան ըզվաղըն աղէկ,*
*Գինի խմէք, ծիծաղէք:*
*Տէր ողորմեա՛, Տէր յիշեա՛,*
*Կարմիր գինի, սպիտակ շուշայ,*
*Ուրախ կենամք համաշայ:*

Երկու քառյակ ալ Միքայել Սարկավագեն.

*Արեւելք առաջին,*
*Եւ արեւմուտք որ է վերջին,*
*Նստեալ հայիմ դէմ փարչին:*
*Եւ զանազան ի լի փըչին,*
*Բարեխօսեա՛ մեծ կարասին,*
*Որ զանազանէ ի գինին:*

Թե եռյակը անծանոթ չէր հին հայ գրականության, կվկայեն շարականներն ալ: Արդարև Բաբկեն Կաթողիկոս կգրե թե մեր շարականներուն *պատկերները* կազմված են *երեք* տուներով[5]:

Մյուս կողմե Մ. Աբեղյան կհաստատե, որ հայ ժողովրդական երգերը *իրենց հատուկ* եռյակ մը ունին, հետևյալ ձևով.

AAA, BBB, CCC ...

Օրինակ մը.

*Գացի արտը, բոնի յոր,*
*Աղջիկ տեսայ եայլի ձոր,*
*Նման էր կարմիր խնձոր:*

---

[5] Սիոն, Հուլիս-Օգոստոս. 1927:

*Արեւ դիպաւ սարերու,*
*Կաքաւ թռաւ քարերուն,*
*Լորիկ կայնէ վեր դարուն:*

Թե մեր եռյակները բոլորովին տարբեր են այլ ժողովուրդներու եռյակներեն, կհաստատվի նաև քննելով ֆրանսիական եռյակները:

Ֆրանսիացիները ունին քանի մը տեսակ եռյակներ, գլխավորներն են՝

Terza-Rima-Villanelle

Առաջինը, զոր գործածած է Տանթե, հետևյալ ձևն ունի.

ABC,BDB,DED...

Այսինքն, առաջին տունին երկրորդ տողին հետ հանգ կկազմեն հաջորդ տունին առաջին և երրորդ տողերը և հաջորդաբար: Երկրորդը, որ շատ չի գործածվիր, կկազմվի առաջին տունին առաջին և երրորդ տողերը կրկնելով, փոխն ի փոխ, հաջորդ տուներուն երրորդ տողին տեղ: Դիտել կուտանք, որ Մ. Աբեղյան եռյակին AAA, BBB ձևը հայկական կհամարի՝ մեկնելով հանգավորման եղանակեն: Այդ չէ, սակայն, ինչ որ հայկական հատկանիշ մը կուտա եռյակին, որովհետև հանգը կբացակայի, ինչպես մեր անտունիներուն և հայրեններուն, նույնպես մեր բազմաթիվ եռյակներուն մեջ: Արդեն հանգը նոր ձև մըն է, հիները չունեին, - թեև Մյուլլերը կպնդե թե հոմերական բանաստեղծությունը հանգ կգործածեր[6]:

•
• •

Այսպես, հին հայ տաղաչափության մեջ կնկատենք եբրայական ազդեցություն, - նույնիսկ շարականների մեջ: «Երբ դարեր ու դարեր ժողովուրդ մը գիշեր ցերեկ նույն Ս. Գիրքը կորոնա և սիրտն ու միտքը նույն սաղմոսերգությանց բանաստեղծությամբ կհամակվի՝ միթե դժվար է հաստատել անոնց շարականներու բանաստեղծական նույնությունը: Նման եբրայական բանաստեղծության, մեր շարականները նույն տաղաչափական արվեստով կբանահյուսեն: Չենք ալ գիտեր թե ինչո՞ւ այդպես կըլլան, քանի որ Գողթան երգերու բանահյուսությունը հար և նման էր եբրայականին» (Միհրան Հովհաննիսյան): Ուրեմն, ինչպես մեր նախաքրիստոնեական, նույնպես հետքրիստոնեական մեր տաղաչափական արվեստը կաշակերտեր Եբրայեցիներին, Պարսիկներին, Արաբներին, և ոչ թե հունական-լատինական տաղաչափության: Առաջին անգամ, հայ հին տաղաչափության մասին խոսելով, Բագրատունի շեղեց այս հարցին քննության ընթացքը և այնուհետև բոլորը պարծեցան հայկական չափով մը, որ կուգար արևմուտքեն, և ոչ թե արևելքեն: Բագրատունին կծիծաղեր, երբ Գր. Մագիստրոս կպնդեր.

---

[6] L. Mueller. - Métrique grecque et latine, Trad. Francaise, Paris, 1882.

«ի Հայումս առաւել քան ի յունականին գտանեմք զտաղաչափական արուեստն, քանզի թեպետ և Յոյնք զոտանաւորս ստեղծանեն գիտելով զչափն, այլ ոչ կշիռն. քանզի յԱրաբացոց, ի Պարսից և յիսմայելականաց վարժեալ եմք ի չափ եւ ի կշիռ տաղից»:

Արդարև, արաբական տաղաչափության հատկանիշեր պիտի գտնենք մեր շարականներուն մեջ, որոնք երբեմն գրված են իբրև *մյուվաշշահը*, երբեմն իբրև *մեսնեվի*, *հինվ*, *մեոձ*, *դաճըդը*, և այլն: Վերջապես, շնորհիվ արաբական *ուսուլներու* (հիշենք Էվսատ, ֆահտե, չենպեր, պերեվշան, րեմել, սեմա և այլն), «լինի երգն երաժշտորեն երգելի»: Այդ ուսուլները կմնային մինչև Պապա Համբարձում, որուն աշակերտները, սակայն, լքեցին կարգ մը *ուսուլներ*:

Այո՛, մեր եկեղեցական բանաստեղծությունը նա պետք է գտնվեր ազդեցության տակ արաբական *Արուզին* (տաղաչափության), ինչպես մեր նախաքրիստոնեական արվեստը՝ եղոայեցի մոսհելներու օրենքներուն: Ի՞նչ հարկ վանկերուն սուղն ու երկարը բացատրել անպայման լատինական ամանակով, չէ՞ որ սեմական արվեստը մեզի ավանդած էր ճեզմը և մեռոը:

Գ.

Այս ամենին կհետևի, որ հանգիտություն մը կա մեր հին բանաստեղծության և եբրայական բանաստեղծության միջև: Այս պարագան կենթադրե ազդեցություն մը:

Փաստեր այդ ազդեցության. -

Ա. - Եբրայական արվեստը, ինչպես հայկականը հարկատու էին, կամ ժառանգորդ մեծ քաղաքակրթության մը, - ասորաքաքելական մշակույթին: «Ժամանակակից արվեստք և գիտություն նույն դարուն նման ոգին կկրեն և նույն դարուն մեջ ապրող ազգաց հասարակաց են, այնպես որ բանասիրությունը կրնա հայտարարել թե մեր հին տաղաչափությունը հին ազգաց տաղաչափության հետ միևնույն սկզբանց վրա հիմնված էր»[7]:

Բ. - Մեր եկեղացական երգեցողությունը, շարականներու ստեղծագործությունը առաջ, կբաղկանար եբրայական սաղմոսներե[8]:

Դ. - Եղիշե արքեպս. Դուրյան կըսե, լատին հեղինակի մը վկայության վրա հիմնվելով, թե Հայերը մոտիկ հարաբերություն ունեին Երուսաղեմի հետ[9]:

Ե. - վերջապես, ինչպես ցույց տվինք, մեր հին գրականությունը, ինքն ալ կը կհաստատե թե նմանության շատ կետեր ունի եբրայականին հետ:

[7] Միհրան Հովհաննիսեան, Ջնանկան Պատմ. ԺԹ. դարու Դպրութեան, էջ 81:

[8] Բարգէն եպս., Հայոց Եկեղեցին Ե դարուն մէջ. էջ 16-21:

[9] Գ. Մխիթարեանի տեսակցութիւնը Եղիշէ արքեպս. Դուրեանի հետ (Յուսաբեր, 4 օգ. 1927):

## ԳՐԱԽՕՍՈՒԹՅՈՒՆ

# «ՎԱՎԵՐԱԳՐԵՐԻ»՝ ԵՐԿԱԹՅԱ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՏՈՐԸ

Լույս է տեսել Սանդրո Բեհբուդյանի աշխատասիրությամբ հրատարակվող «Վավերագրեր Հայ Եկեղեցու պատմության» շարքի 8-րդ հատորը, որը նվիրված է Մատթեոս Բ Իզմիրլյանին (կթղ. 1908-1910 թթ)[1]: Այն հրատարակվել է հովանավորությամբ Մեսրոպ արքեպիսկոպոս Աշճյանի և բարերարությամբ Արա Մարանկոզյանի, Մերի Նալբանդյանի, Վահան Գարպուշյանի և Արամ Դանիելյանի:

Հատորը բացվում է Մեսրոպ Սրբազանի մուտքի խոսքով, որում Սրբազան Հայրը արժևորելով այս գործը՝ գրում է. «Պր. Բէհբութեան մանրամասն պրպտումներ կատարելով յայտնաբերեր է այն փաստաթղթերը, որոնք ցայտուն և պարզորոշ կերպով ցոյց կուտան իր ապրած բարդ և փոթորկալից ժամանակաշրջանի յուզող հարցերն ու խնդիրները, իր արդարամիտ և խիստ ընթացքը Հայ Եկեղեցւոյ և ժողովուրդի շահերու պաշտպանութեան ի խնդիր: Ժողովածուի մէջ առաջին անգամ հրատարակուող նամակները կ'օգնեն մեզի ճիշտ հասկանալու անոր աշխատասէր, կարգապահ, անձնուէր ոգին, անոր յարաբերութիւնները աշխարհի մեծ պետութիւններու ներկայացուցիչներուն հետ, անոր վայելած խոր յարգանքն ու համակրանքը հայ ժողովուրդի տարբեր խաւերու և յատկապէս մտաւորականութեան կողմէ»:

Արժևորման այս խոսքին հաջորդում է Ս. Բեհբուդյանի «Առաջաբանը»՝ նվիրված Երկաթյա Պատրիարքի ու Մեծ Աքսորականի, ապա և Լուսավորչի գահի 126-րդ գահակալի կյանքին ու եկեղեցական գործունեությանը, ինչպես նաև հատորում տեղ գտած վավերագրերին: Մինչ վերջիններիս հրատարակությունը բերվում են Թումանյանի «Ազնիվ մարդը» հիշատակի խոսքը և Շիրվազադեի գրած Իզմիրլյանի համառոտ կենսագրությունը:

Վավերագրերի շարքը սկսվում է Գևորգ Դ Կաթողիկոսի՝ Իզմիրլյանին 1873 թ. ուղղված օրհնության ու գնահատանքի խոսքով: Հաջորդող տարիների վավերագրերը, որոնց մի մասը ժամանակի Հայոց Հայրապետների և Կ. Պոլսի Պատրիարքների՝ Իզմիրլյանին վերաբերող գրություններ են, որոնք առավել են ամբողջացնում հոգևորականի նրա ճշմարիտ ու նվիրյալ կերպարը՝ ցույց տալով, թե ծանր ու մռայլ այդ ժամանակներում ինչպես էր ձևավորվում ապագա Երկաթյա Պատրիարքը: Իզմիրլյանին եպիսկոպոսական աստիճանի կոչող Գևորգ Դ Կաթողիկոսի կոնդակում և համանուն մի շարք այլ վավերագրերում տրված բնորոշումներում արտացոլվել են նաև հայ հոգևորականի գնահատության ժամանակի չափանիշները:

---

[1] Տե՛ս Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության (1873-1910 թթ.), Գիրք Ը. «Մատթէոս Բ Իզմիրլեան Կաթողիկոս Ամենայն Հայոց», կազմեց և առաջաբանը գրեց՝ Սանդրո Բեհբուդյանը, «Հայաստան» հրատարակչություն, Երևան, 2001, 972 էջ:

Մայր Աթոռին ենթակա բոլոր թեմերի հոգևորականների եպիսկոպոսական ձեռնադրությունը Ս. Էջմիածնի Մայր Տաճարում կատարելը հնարավորություն էր ընձեռում, որ արևմտահայ բարձրաստիճան հոգևորականները, հաղթահարելով սահմանային արգելքները, գային Էջմիածին և ոչ միայն անցյալի մատենագրությամբ, այլև կենդանիորեն հաղորդվեին հայ ժողովրդի հոգևոր կենտրոնին:

Եվ վերադարձող նորաօծ Սրբազաններին Պոլսում և իրենց վիճակներում դիմավորում էին որպես Ս. Էջմիածնից եկած ուխտավորների: Այդպիսի մի դիմավորման գրական արտահայտությունն է Խրիմյան Հայրիկի «Սրբազան Հայր» վերնագրված խոսքը՝ գրված Իզմիրյանի Ս. Էջմիածնում 1876 թ. եպիսկոպոս ձեռնադրվելու և եվ վերադառնալու առիթով:

Նորաօծ Մատթեոս եպիսկոպոսին դիմելով որպես Միածնաէջ Սրբավայրից եկող մի ուխտավորի, Ս. Էջմիածնի ավանդական սրբությունների մասին հեւփկյալ գեղարվեստական պատկերավորությամբ է գրում Խրիմյանը. «Համբուրեցի՞ր այն հողերը, ուր կոխեցին Սանդարամետը սարսող ոտքերը, երկրպագեցի՞ր Տրդատայ բազկօք գլորած քարերով կանգնած տաճարին սեղանին առջև, այլ գիտեմ ես, եռն հառաչ մը թռաւ քերնէդ, անէծք մը շրթունքներէդ և արցունք մը աչքերէդ կաթեցաւ, երբ Հայրենեացդ փառքը յիշեցիր, երբեմն Վաղարշապատի մէջ բարձրացուցած Աթոռը և Աջը: Արդեօք արձակեցի՞ր նայուածքդ Հայաստանի կողմը արտասուելու համար...» (էջ 45):

Հայոց Հայրիկի վառվռուն երևակայությամբ ու հայրենյաց անցյալ փառքի հանդեպ խոր ցավով գրված այս տողերը շնորհիվ Ս. Բեհբուդյանի հրապարակվելով ու գիտագրական շրջանառության մեջ դրվելով՝ գալիս են ևս մի էջ ավելացնելու Ս. Էջմիածնին նվիրված գործերի ընտրանիին:

Հայոց Հայրիկի նման, Իզմիրյանի ևս հայ ժողովրդի բռնադատված իրավունքների պաշտպանը լինելու վկայություններից է 1879 թ. գրված նրա նամակը, որում Պատրիարքարանից խնդրում է իրեն ուղարկել Կարին՝ ուսումնասիրելու տեղի եպայության վիճակը և զեկուցագիր ներկայացնել կատարվող հարստահարությունների մասին:

Այս հատորը մեծապես կարևորվում է նաև Կ. Պոլսի և Մայր Աթոռի հարաբերությունների պատմության ուսումնասիրության տեսանկյունից: Թեև Կ. Պոլսի Պատրիարքները ընտրվում էին Կ. Պոլսի ազգային-կրոնական ժողովի կողմից և հաստատվում թուրքական իշխանությունների հրամանագրերով, սակայն, ինչպես վկայում են Ս. Բեհբուդյանի այս և նախորդ հատորների հրապարակումները և բազմաթիվ այլ գործեր, Հայոց Պատրիարքները զուտ վարչականորեն չնայած այսպես են ընտրվել և հաստատվել, սակայն որպես ճշմարիտ հայ հոգևորականներ միշտ որդիական խոնարհություն են տածել Հայոց Հայրապետների հանդեպ և այդ խոնարհությամբ պայմանավորված դիմումնաձևերով դիմել Ամենայն Հայոց Կաթողիկոսներին:

Նույն ձևով Իզմիրյանը պատրիարքական ընտրությունից անմիջապես հետո, 1876 թ. Հայոց Հայրիկի, որպես Հայոց Հայրապետի, օրհնությունը հայցելով, այսպես է գրում. «Մատչելով ի համբոյր սուրբ Աջոյ Մեծի Օծելոյդ՝ եմ և մնամ Վեհափառ Հայրապետիդ Ամենայն Հայոց խոնարհ որդի Մատթէոս եպիսկոպոս Իզմիրլեան»:

Այս հատորը կարևոր նյութեր է պարունակում նաև Եղիշե Պատրիարք Դուրյանի, Բաբկեն աթոռակից Կաթողիկոս Կյուլեսերյանի, Պերճ Պռոշյանի, Արշակ Չոպանյանի և ժամանակի մի շարք այլ նշանավոր եկեղեցական գործիչների և մտավորականների մասին:

Առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում Կոմիտաս Վարդապետի գրածները, որոնցում արտացոլվել են հայ երաժշտության նրա ըմբռնումները և կարևոր տեղեկություններ կան նաև խազերի վերծանության իր աշխատանքների ընթացքի մասին, ինչպես նաև այն վավերագրերը, որոնք նվիրված են Մայր Տաճարի վերանորոգության շուրջ անցյալ դարասկզբին ծավալված քննարկումներին:

Վավերագրերի գլխավոր մասը, սակայն, վերաբերում են Իզմիրլյանի Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրվելուն, այսինքն՝ Մատթեոս Բ-ի կյանքի վերջին երեք տարիներին:

Թորգոմ արքեպիսկոպոս Գուշակյանը Եղիշե Պատրիարք Դուրյանին նվիրված իր գործում Իզմիրլյանի Երուսաղեմյան աքսորից ետ վերադառնալը համեմատելով Ոսկեբերանի առաջին աքսորից հետո Կոստանդնուպոլսի Պատրիարքական Աթոռին վերստին ետ դառնալու հետ, գրում է, որ Ոսկեբերանից հետո Պոլիսը ոչ ոքի նման հանդիսությամբ չէր ընդունել, ինչպես Իզմիրլյանին:

Այս հատորում բերված են բազմաթիվ շնորհավորականներ թե՛ Պատրիարքական Աթոռին վերահաստատվելու և թե՛ Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրվելու առիթով, որոնցում այնքան կենդանիորեն արտացոլված են ժամանակի ազգային կյանքի խանդավառ հույսերը և դրանց իրականացման գործում Ս. Էջմիածնի Աթոռին վերապահված դերը:

Իզմիրլյանի պատրիարքությունը եթե համընկավ համիդյան ջարդերի շրջանին, ապա կաթողիկոսությունն էլ՝ արևելահայության դեմ ծավալված հալածանքներին, երբ ցարիզմը ստեղծեց «Դաշնակցության գործը», որով ձերբակալվեցին և բանտարկվեցին ժամանակի արևելահայ մի շարք մտավորականներ և հասարակական գործիչներ, այդ թվում՝ Հովհաննես Թումանյանը, Ավետիք Իսահակյանը և Ավետիս Ահարոնյանը:

Վավերագրերի ներկա հատորը հետաքրքիր տեղեկություններ է պարունակում նաև այն մասին, թե Իզմիրլյանը կաթողիկոս ընտրվելուց հետո, սկսած Նիկոլայ Առաջինի հետ հանդիպումից, ինչպես է պաշտպանել հայության իրավունքները, կատարել տարբեր միջնորդություններ՝ ի խնդիր բանտարկվածների ազատ արձակման կամ պատիժների մեղմման:

Այսպիսով, քանի որ ինչպես նախորդ, այնպես էլ այս հատորում ներկայացվող ժամանակահատվածի հայ կյանքի նշանակալից բոլոր իրադարձությունները հարաբերվել են Հայոց Եկեղեցու հետ, ուստի Իզմիրլյանին վերաբերող վավերագրերը սփռում են անհամեմատ լայն ընդգրկում՝ կապվելով հայ ժողովրդի պատմության տվյալ շրջանի ամենաբազմազան հարցերին և դրանց լուծմանը Հայոց Եկեղեցու բերած նպաստին: Սանդրո Բեհբուդյանի իսկ բնորոշմամբ՝ «Սույն հատորում զգալի տեղ են գրավում կաթողիկոսական կարճատև ժամանակաշրջանի մեծամասշտաբ գործունեության վերաբերյալ կոնդակներն ու նամակները, շինարարական և բարենորոգչական ծրագրերը, որոնց միջից վեր են հառնում Մայր Աթոռ Ս. Էջմիածինն ու Հայոց Եկեղեցին՝ իր բազմաբնույթ հոգսերով, ծառացած խնդիրներով, դժվարին գործունեությամբ և ծանր կացությամբ»:

*ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ*




# Ս. ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՏՈՆԸ ՕՇԱԿԱՆՈՒՄ

Հոկտեմբերի 12-ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ, Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում նշվեց Թարգմանիչ վարդապետների տոնը:

Օրվա հանդիսությունները Վեհափառ Հայրապետի օրհնությամբ կազմակերպվել էին Տ. Մեսրոպ արքեպս. Աշճյանի, Տ. Վազգեն վրդ. Միրզախանյանի և ՀՀ Գրողների միության ջանքերով:

Տոնակատարությունն սկսվեց եկեղեցուն կից Ս. Մեսրոպ Մաշտոցի անվան դպրատանը՝ «Մաշտոցյան ընթերցումներ» խորագիրը կրող գիտաժողովով, որին մասնակցում էին Հայաստանի և տարբեր երկրների գրողներ ու գրականագետներ, Գրողների միության ու ՀՀ ԳԱԱ անդամներ:

Այնուհետև եկեղեցում մատուցվեց Սուրբ Պատարագ: Պատարագիչն էր Արագածոտնի թեմի առաջնորդական փոխանորդ Հոգեշնորհ Տ. Վազգեն վրդ. Միրզախանյանը: Ողջ Պատարագի ընթացքում չէր դադարում ուխտավորների հոսքը Ս. Մաշտոցի շիրմին:

Պատարագի ընթացքում իր օրհնության խոսքն ուխտավորներին հղեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետը. «Մենք եկել ենք հաղորդակցվելու Մաշտոցյան խորհրդին, մեր հոգում, սրտում ու մտքում մեկ անգամ ևս հնչեցնելու աստվածապարգև այն ճշմարտությունները, որ հնչեցին Թարգմանչաց վարդապետների շուրթերից...

Դյուրությամբ է, որ մենք կարողացել ենք հաղթահարել պատմության մեջ մեզ բաժին ընկած ամեն տեսակ փորձությունները, որովհետև թրի ուժից ավելի զորեղ էր գիտության զորությունը, գրի ուժը, որ մեր ժողովրդի կյանքում մարմնավորվել է որպես աղոթք, որպես մշակույթ և արվեստի գլուխգործոցներ, որոնցով այսօր մենք հպարտությամբ ներկայանում ենք աշխարհին ու մարդկությանը»:

Ի գնահատումն Տ. Վազգեն վրդ. Միրզախանյանի բազմամյա ծառայության՝ Վեհափառ Հայրապետը Հայր Սուրբին շնորհեց ականակուռ լանջախաչ և ծանուցելով Հայր Սուրբի նոր նշանակման մասին՝ իբրև Վիրահայոց թեմի առաջնորդ, հաջողություն և բարի ընթացք մաղթեց նրան:

Եկեղեցու բակում կազմակերպված ցերեկույթը երախտագիտության ու ողջույնի խոսքով բացեցին Տ. Վազգեն վրդ. Միրզախանյանը և Արագածոտնի մարզպետ Հրայր Կարապետյանը: Շնորհավորանքի խոսք ասաց նաև Գրողների միության նախագահ Լևոն Անանյանը: Արարողությանն ազգագրական երգերի իրենց կատարումներով մասնակցեցին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Հայորդյաց տների սաները:

Այնուհետև տեղի ունեցավ պատանի ստեղծագործողների հանրապետական մրցանակաբաշխությունը, որի ընթացքում մրցանակներ տրվեցին Հայաստանում, Արցախում և Ջավախքում վերջերս անցկացված ստեղծագործական մրցույթի հաղթողներին:

Մաշտոցի անվան դպրոցում անցկացվեց օրվա խորհրդին համահունչ ևս մեկ միջոցառում: ՀՀ Գրողների միության կազմակերպած հանդիսության ընթացքում շնորհվեցին գրական-թարգմանական աշխատանքները գնահատող ու խրախուսող տարբեր մրցանակներ:

«Մաշտոցյան ընթերցումներ» գիտաժողովի ավարտին համերգային ծրագրով հանդես եկավ Գյումրիի «Գոհար» երգչախումբը:

***ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ***
***ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ***

# ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՁԵՌԱՄԲ ՕԾՎԵՑԻՆ ԱՐՏԱՇԱՏԻ ԱՌԱՋԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԻՄՔԵՐԸ

Նոյեմբերի 29-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հոգևոր դասի ուղեկցությամբ մեկնեց Արտաշատ՝ կատարելու քաղաքի նոր կառուցվելիք եկեղեցու հիմնօրհնեքի արարողությունը: Սրբազան արարողությանն իր մասնակցությունն էր բերել ՀՀ Նախագահ Ռոբերտ Քոչարյանը:

Արտաշատում Վեհափառ Հայրապետին դիմավորեցին աղ ու հացով: Այստեղ էին նաև Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ եպս. Կճոյանը՝ թեմի հոգևոր դասի հետ, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների գործունեությունը համակարգող նախարար Հովիկ Աբրահամյանը, Արարատի մարզպետը, Արտաշատի քաղաքապետը, բարձրաստիճան պաշտոնյաներ:

Արտաշատում քաղաքի առաջին այս եկեղեցին, որ կրելու է Ս. Հովհաննես առաքյալի և ավետարանչի անունը, կառուցվում է նախարար Հովիկ Աբրահամյանի նախաձեռնությամբ ու հովանավորությամբ: Այն իր ճարտարապետական կառուցվածքով խաչաձև է, ունենալու է մեկ գմբեթ, զանգակատուն և կարող է տեղավորել շուրջ 500 հավատացյալ: Եկեղեցու շինությունը նախատեսված է ավարտել 2 տարի հետո:

Ձեռամբ Վեհափառ Հայրապետի օծվեցին եկեղեցու 16 վեմ-քարերը, որոնք տեղադրվեցին նորակառույց եկեղեցու հիմքում՝ կոչվելով 12 առաքյալների, 4 ավետարանիչների և Գրիգոր Լուսավորչի ու Հովհաննես Մկրտչի անուններով: Թադեոս առաքյալի անվամբ վեմ-քարը տեղադրվեց ՀՀ Նախագահ Ռոբերտ Քոչարյանի ձեռքով:

Շնորհավորելով ու հայրապետական իր օրհնությունը փոխանցելով Արտաշատի բնակիչներին՝ Վեհափառ Հայրապետը միաժամանակ գնահատանքի խոսքեր ուղղեց նորակառույց եկեղեցու հովանավոր Հովիկ Աբրահամյանին, մարզի ու քաղաքի իշխանություններին և հավատացյալ ժողովրդին:

«Մեր ուրախությունն իր արձագանքն է գտնում երկնքում՝ պայծառ ու գեղեցիկ, արևշող օրվա երևույթով: Աստված, կարծեք թե, նշան է տալիս մեզ, որ օրհնում է եկեղեցաշինության մեր այս նախաձեռնությունը: Որովհետև եկեղեցի կառուցել՝ նշանակում է՝ Աստված ընդունել, նշանակում է՝ ներկայություն դարձնել Աստծուն մեր կյանքի մեջ, մեր հոգիներում և կենցաղում: Նշանակում է՝ միշտ բարու հետևող լինել, սիրով ապրել կյանքը, հավատով գործեր կատարել: Եկեղեցի կառուցել՝ նշանակում է՝ հավատարմություն դրսևորել մեր հայրերի սրբազան հավատքին, մեր անցյալի հոգևոր ժառանգությանը, սիրել մեր հայրենին և նախանձախնդիր լինել նրա վաղվա օրվա նկատմամբ՝ իրականություն դարձնելով բոլոր այն երազները, որոնց համար ապրել ենք, պայքարել ու մաքրինչել, երբեմն էլ մարտիրոսվել ու նահատակվել»,- ասաց Վեհափառ Հայրապետը:

Հիմնարկեքի սրբազան արարողությունից հետո օրվա խորհուրդն ամբողջացվեց տոնախմբությամբ՝ երգ ու պարով, արտասանություններով ու սրտաբուխ խոսքերով:

***ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ***



ՁԵՌԱՄԲ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՆԵՐԿԱՅՈՒԹՅԱՄԲ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀԻ ՍԿՍՎՈՒՄ Է ՀԻՄՆՕՐՀՆԵՔԻ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ



ՄԻ ՊԱՀ ՎԻՄԱՔԱՐԵՐԻ ՕԾՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԻՑ
ԵԿԵՂԵՑՈՒ ՀԻՄՔՈՒՄ ԴՐՎԵԼԻՔ 16 ՎԵՄ-ՔԱՐԵՐԻՑ ՄԵԿԸ ՁԵՌԱՄԲ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ
ՊԱՀԵԼ Է ԵԿԵՂԵՑՈՒ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՂ, ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՆԱԽԱՐԱՐ ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԸ

# ԱՎԱՐՏԱՃԱՌԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Վերստին դիմում ենք գրչի հավերժացնող միջամտությանը՝ արձանագրելու Գևորգյան Հոգևոր Ճեմարանի Կոմիտասի անվան դահլիճում, սույն թվականի հոկտեմբերի 31-ին տեղի ունեցած ավարտաճառերի բանավոր պաշտպանությունը: Քննող հանձնախումբը, գլխավորությամբ Տ. Միքայել եպս. Աջապահյանի, ինչպես միշտ, այսօր ևս ճեմարանավարտ սարկավագներից ակնկալում էր ստանալ հայ հոգևորականին պատշաճող ավարտական թեզեր:

Հուրախություն ամենքիս, պաշտպանությանը ներկայացած բոլոր սարկավագներն էլ քննական հանձնաժողովի դատին հանձնեցին հաջողված, ճեմարանական չափանիշներով գրված ավարտաճառեր, որոնցից մի քանիսը, փոքր-ինչ ճշգրտումներից ու լրացումներից հետո, արժանի են հրապարակության:

Փառք Աստծո, հայ եկեղեցականի արդյունաշատ գրիչն այսօր էլ շարունակում է նոր շունչ ու ոգի հաղորդել հայ հավատացյալին՝ իր խոսքը գրի ճանապարհով հասցնելով ընթերցասեր հանրությանը:

Աղոթենք առ Աստված, որ Մայրավանքում արդեն իսկ իրենց ծառայությանը լծված այս վեց սարկավագները մշտապես հավատարիմ մնան մեր նախնիներից մեզ ժառանգություն հասած գրին ու գրականությանը, որովհետև հայ գրքի շնորհիվ ենք ինքներս մեզ ճանաչում և դրանով իսկ ճանաչվում աշխարհից: Ճիշտ այս գիտակցությամբ էր երանաշնորհ Գարեգին Ա Կաթողիկոսը վեր հանում հայ գրքի արժեքը՝ ասելով. «Կա՛մ աշխարհէն կը ջնջուինք ու կը փարուինք, և կա՛մ աշխարհին մէջ, աշխարհին հետ ըլլալով հանդերձ, կը պահենք մեր հայութեան փիրական ինքնութիւնը հայ գիրքի հսկայազօր ներգործութեամբը, որովհետև անմահ բանաստեղծին՝ Պարույր Սևակին անմահական բառերով.

Եթէ փրկել ենք, լոկ մեր գրքերով»:

Այս պաշտպանությանն իրենց ավարտաճառերը ներկայացրեցին և հանձնաժողովի դրական գնահատականին արժանացան.

Խաչիկ սարկավագ Ավետիսյան, «Հովհաննես Երզնկացի-Ծործորեցի վարդապետ» (ղեկավար՝ Գնել Գրիգորյան).

Արտյոմ սարկավագ Ավետիսյան, «Ղարաքիլիսիայի Սուրբ Աստվածածին եկեղեցին և ծխական դպրոցը» (ղեկավար՝ Վարդան Դևրիկյան).

Նարեկ սարկավագ Հակոբյան, «Նոր Ջուղան և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը» (ղեկավար՝ Հրաչ Միրզոյան).

Հովհաննես սարկավագ Բաղալյան, «Պողոս վարդապետ Տարոնացու «Ընդդէմ Թէոպիստեայ» թղթի աստվածաբանությունը» (ղեկավար՝ Հակոբ Քյոսեյան).

Կարեն սարկավագ Քարամյան, «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը և Շահամիրյանները» (ղեկավար՝ Պողոս Խաչատրյան).

Ծերուն սարկավագ Մկրտչյան, «Հոգեգալստական շարժումը» (ղեկավար՝ Տ. Ղևոնդ քահանա Մայիսյան):

*ԾԵՐՈՒՆ ՍԱՐԿԱՎԱԳ ՄԿՐՏՉՅԱՆ*

## ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄՈՒՄ

# ԽԱՉԳՅՈՒՂՈՒՄ (ԾԱԼԿԱՅԻ ՇՐՋԱՆ) ՎԵՐԱԲԱՑՎԵՑ Ս. ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑԻՆ

Հոկտեմբերի 6-ին մեծ տոնախմբություն էր հեռավոր Ծալկայի շրջանի 13 հայկական գյուղերից Խաչգյուղում, ուր վերաբացվեց տեղի Ս. Գևորգ գեղատես եկեղեցին:

Զարմանալի բնավորություն ունի այս տարածաշրջանի հայը: Ամեն մի դժվարություն հաղթահարելով, դիմագրավելով 70 տարիների աստվածամերժության գաղափարախոսությունը, ցայսօր հարազատ զավակի նման փայփայել և կանգուն ու անվնաս մեր օրերն է հասցրել հարազատ աղոթատունը, թեև եկեղեցական կենդանի կյանքից մտապահել է միայն առանձին արարողություններ և սովորություններ, որոնց շնորհիվ, սակայն, մշտապես վառ է պահել հայկական իր օջախը և նորածին մանկանը շնորհել հայեցի դաստիարակվելու հնարավորություն:

## ՄԻ ՓՈՔՐԻԿ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Խաչգյուղը գտնվում է Վերին Ծալկայի հյուսիսային մասում, Թրիալեթի լեռնաշղթայի հարավային լանջի ստորոտում: Գյուղի հինավուրց Ս. Գևորգ եկեղեցին, ըստ հուշարձանների պահպանության կոմիտեի հաշվառման և ուսումնասիրման, 12-13-րդ դարերի կառույց է: Խաչգյուղի բնակիչները հիմնականում եկել են հարևան Աշկալայից: Հետագայում գյուղը համալրվել է նաև այլ տեղերից վերագաղթածներով:

Գյուղի հյուսիսային կողմի բարձրադիր մասում է գտնվում հինավուրց մատուռը՝ Ս. Կարապետը, որն ունի իր ուխտի օրը: Այն տոնախմբվում է գարնան գալու հետ մեկտեղ: Եվ կենդանանում է Ս. Կարապետ մատուռը, որպեսզի ի կատար ածի մեծաթիվ հավատացյալների նվիրական երազանքը, իղձն ու փափագը:

Մեր հայրենակիցները ուր և բնակություն են հաստատել, պապերից ավանդված սովորության համաձայն, առաջինն սկսել են սեփական աղոթատան կառուցումը: Տեղի Ս. Գևորգ եկեղեցին ասվածի վառ վկայությունն է: Այն սկզբում փայտածածկ էր, իսկ հետո, ժամանակի ընթացքում, ենթարկվել է վերանորոգումների, փոխվել է փայտածածկ տանիքը: Անհավատության 70 տարիներին այս եկեղեցին ևս վերածվել էր պահեստի: Եվ միայն 2002 թ. գյուղացիների ջանքերով մաքրվեց տարիների աղբից ու անհարկի իրերից: Իսկ ծնունդով խաչգյուղցի ռուսաստանաբնակ Խորեն Քուլուղյանի հովանավորությամբ ու ֆինանսական աջակցությամբ վերանորոգվեց և ստացավ նախկին տեսքը՝ դառնալով ավելի գեղեցիկ ու գողտրիկ:

Եկեղեցու վերջին քահանայի՝ Տեր Խորենի ծոռն է բարերարը, որն ի պատիվ և ի հիշատակ նրա կրում է Խորեն անունը: Ինչպես ինքն է ասում, քահանա պապի բարի անունը

վառ պահելու համար էր նաև, որ որոշեց կրկին կյանքի կոչել հարազատ գյուղի այնքան սիրելի եկեղեցին, ուր դարձյալ կլսվի մկրտվող մանկան ճիչը, կինչի նորապսակների «Տեր եմ» խոստովանություն-հանձնառությունը:

## ՎԵՐԱԲԱՑՈՒՄ. ԴՈՒՆԲԱՑԵՔ

Հոկտեմբերի 5-ին, Վիրահայոց թեմի նորանշանակ առաջնորդական փոխանորդ Հոգեշնորհ Տ. Վազգեն վրդ. Միրզախանյանի հրահանգով, Ծալկա մեկնեց Սամցխե-Ջավախքի ընդհանուր առաջնորդական փոխանորդ Հոգեշնորհ Տ. Բաբկեն աբղ. Սալբիյանի գլխավորած պատվիրակությունը՝ Ծալկայի փարածաշրջանի բնակավայրերից Խաչգյուղում կատարելու Դռնբացեքի կարգը: Խմբի հետ էր նաև Ախալքալաք քաղաքի Ս. Խաչ առաջնորդանիստ եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Սամվել քհն. Թորոսյանը:

Հոկտեմբերի 6-ի վաղ առավոտյան Ս. Գևորգ եկեղեցու փարածքը մարդաշատ էր: Այստեղ էին հավաքվել ոչ միայն տեղաբնակները, այլև մեծաթիվ հավատացյալ հայեր մյուս հայկական գյուղերից, քանզի ցանկացած հայկական գյուղում կատարվող տոնախմբությունը համարվում է նաև մյուսների տոնը:

Հանդիսակարգն սկսվեց առավոտյան ժամերգությամբ: Այնուհետև Տ. Բաբկեն աբղ. Սալբիյանի հանդիսապետությամբ ու ձեռամբ կատարվեց Դռնբացեքի արարողություն, որին մասնակցում էին Տ. Սամվել քհն. Թորոսյանը, ինչպես նաև Ծալկայի փարածաշրջանի 13 հայկական գյուղերի միակ հոգևոր սպասավոր Սանասար սրկ. Ղուլիկյանը:

Թափոր կազմած և «Ուրախ լեր» շարականի երգեցողությամբ հոգևորականաց դասը, հավատացյալների ուղեկցությամբ, առաջնորդվեց դեպի եկեղեցու դուռը: Հենց մուտքի մոտ, դրսի կողմից, համաձայն «Մաշտոց» ծիսարանի, ընթերցվեցին Սուրբգրային հատվածներ և համապատասխան սաղմոսներ:

Ապա ինչեց «Բաց մեզ Տէր» հոգեզմայլ շարականը, և, համապատասխան հարց ու պատասխանից հետո, հանդիսավորաբար բացվեցին 1924 թվականից առ այսօր փակված եկեղեցու դռները՝ գրկաբաց ներս հրավիրելով ներկաներին: Աղոթատան ներսում ևս, Հայր Սուրբի գլխավորությամբ, շարունակվեցին Սուրբգրային ընթերցվածները, սաղմոսասացությունն ու շարականների երգեցողությունը:

Ուրախառիթ հանդիսության ավարտից հետո ներկաներին շնորհավորանքի ու բարեմաղթանքի խոսքեր հղեց Սամցխե-Ջավախքի առաջնորդական փոխանորդ Հոգեշնորհ Տ. Բաբկեն աբեղա Սալբիյանը՝ ցանկանալով, որ մշտապես հավատացյալներով լեփ-լեցուն լինի Ս. Գևորգ եկեղեցին, առավել ամուր ընտանիքներ կազմվեն, և մանկական ձայներից զրնգան կամարները:

Հատուկ գնահատանքի խոսք ուղղելով բարերար Խորեն Բուլուղյանին՝ Հայր Բաբկենը նշեց, որ թեև նա աշխատում է հեռավոր Լեռնային Ալթայում, սակայն չի մոռացել հայրենի գյուղը, համագյուղացիներին, նրանց առօրյա հոգս ու ցավը և մշտապես պատրաստ է բաց չի թողնում նրանց սատարելու համար:

Հավարտ խոսքի Հայր Սուրբը հուշանվերներ հանձնեց բարերարին իր, ինչպես նաև Վիրահայոց թեմի առաջնորդական փոխանորդ Հայր Վազգենի կողմից:

Եկեղեցու վերաբացմանը ներկա էին ճաւխանգային, շրջանային և տեղական իշխանությունների ներկայացուցիչներ, պնփական այրեր, մեծաթիվ հյուրեր Հայաստանից և Թբիլիսիից:

Հատուկ հրավիրյալների թվում էին նախանգապետ Լևան Մամալաձեն և շրջանային վարչության նախագահ Էդգար Խրիստիանին, ովքեր իրենց սրտի խոսքն ուղղեցին տեղի բնակչությանը՝ առանձնակի շեշտելով, որ հայ և վրաց ժողովուրդների բարեկամությունը դարաբույր է ու իր ակունքներով դարերի խորքն է գնում:

Դռնբացեքի արարողությունից հետո նորաբաց եկեղեցում կատարվեց անդրանիկ Ս. Մկրտությունը: Մկրտվեցին և Աստծու որդեգիրները դարձան բարերարի երեք երեխաները և մեծաթիվ խաչզյուղցիներ:

Կատարվեց նաև մատաղօրհնություն:

Հոգևոր արարողությունից հետո, սակայն, հանդիսությունը չավարտվեց: Այն իր շարունակությունը գտավ գյուղի հարսանյաց սրահում: Բարերարի կողմից բացված սիրո ճաշի առատ սեղանների շուրջ մինչ ուշ գիշեր շարունակվեցին ուրախ երգն ու պարը՝ վերածվելով իսկական ժողովրդական տոնախմբության:

*ՄԱՐԻԱՄ ՎԱՐԴԱՆՅԱՆ*

## ԱՄՆ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹԵՄՈՒՄ

# ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԵԱՆ 82-ՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ ՊԱՏԳԱՄԱՒՈՐՆԵՐ ՍՈՒՐԲ ՎԱՐԴԱՆ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻՆ ՄԷՋ

Կիրակի, Հոկտեմբեր 27, 2002, Ս. Վարդան Մայր Տաճարին մէջ՝ Ս. Խաչի Գիւտին նուիրուած Ս. Պատարագին ներկայ գտնուեցան ՀԲԸՄ 82-րդ Ընդհանուր Ժողովին մասնակցող պատգամաւորները, որոնք աշխարհի բոլոր կողմերէն Նիւ Եորք համախմբուած էին Միութեան Ընդհանուր Ժողովին բերելու իրենց մասնակցութիւնը:

Ս. Վարդան Մայր Տաճարը տօնական օրուան հանգամանք ստացած էր: Գեղակերտ Տաճարի բոլոր նստարանները գրաւուած էին յոգնախուռն բազմութեամբ: Օրուան պատարագիչն էր Գանատայի թեմի առաջնորդ Գերշ. Տ. Յովնան արքեպս. Տէրտէրեան. երգեցողութիւնը կատարեց Մայր Տաճարի Դպրաց Դասը՝ ղեկավարութեամբ խմբավար Խորէն Մէյխանէճեանի եւ երգեհոնի ընկերակցութեամբ Ֆլորանս Աւագեանի:

Յընթացս Ս. Պատարագի՝ Արցախի թեմի առաջնորդ Գերշ. Տ. Պարգեւ արքեպս. Մարտիրոսեան Խորանէն կարդաց Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ-ի սրբատառ Կոնդակը՝ ՀԲԸՄ 82-րդ Ընդհանուր ժողովին ուղղուած: Ներկաները յոտնկայս ունկնդրեցին Նորին Սրբութեան Պատգամը, որում կ'ըսուէր. *«Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից ջերմ ողջոյն ենք յղում եւ Հայրապետական Մեր օրհնութիւնը բերում ՀԲԸ Միութեան Ընդհանուր Ժողովին՝ Միութեան Մեծարգոյ Նախագահ Տիար Պերճ Սեդրակեանին, Գործադիր Վարչութեան յարգարժան անդամներին, Միութեան անդամ բարեգործ հայորդիներին, տարբեր երկրներում գործող ՀԲԸՄ-ի մասնաճիւղերին եւ հաստատութիւններին: . . . ՀԲԸ Միութեան գործունէութեամբ մեր ժողովրդի կեանքում տեսանելի է ամենուր բարեգործութեան արարող ուժը: Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան անունը քաջածանօթ է ե՛ւ Սփիւռքում, ե՛ւ Հայրենիքում: Բազմաթիւ հայորդիք մայրենի մեր լեզուին, մեսրոպատառ գրին, հնագոյն ու հերոսական մեր պատմութեանն ու հարուստ մշակոյթին հաղորդ են շնորհիւ Բարեգործականի հովանաւորութեամբ գործող հաստատութիւնների..*

*Սիրելիներ, Ընդհանուր Ժողովի գումարման այս հանդիսաւոր առիթով բարձր գնահատանքով ենք նշում Միութեան հաստատակամութիւնը, սէրն ու նուիրումը համայն հայութեան հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հանդէպ եւ կարեւորում այն աւանդը, որ բերում է Բարեգործականը յանուն Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու պայծառութեան ու շինութեան: Աղօթական հոգով ենք յիշում ՀԲԸՄ-ի երկարամեայ Նախագահ հոգելոյս Ալեք Մանուկեանին եւ Մեր առանձնակի գնահատանքը բերում նրա արժանաւոր յաջորդ Տիկին Լուիզ Մանուկեան-Սիմոնին, որոնց ջանքերով Մայր Աթոռի հանդէպ Միութեան սէրն ու ակ-*

*նածանքը արգասաւորուեց նոր նախաձեռնութեամբ ու նոր ձեռնարկներով: Այսօր ուրախ ենք հաւաստիելու, որ բացաձայնօրէն ենք նաեւ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան նոր Նախագահ Տիար Պերճ Սեդրակեանի՝ առ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին ունեցած որդիական խանդավառ սիրոյն ու նուիրումին, եւ միանշանակ է Մեր համոզումը, որ Միութեան գործունէութիւնը նրա նախագահութեան շրջանում պիտի յատկանշուի Մայր Աթոռին զօրակցութեան ու նրա հետ համագործակցելու նոյն ոգով ու եռանդով»* (տես «Էջմիածին», Թ, էջ 5):

Օրուան քարոզիչն էր Ամերիկայի Արեւելեան թեմի առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ արքեպս. Պարսամեան, որ նախ բարի գալուստ մաղթեց Արցախի թեմի առաջնորդ Գերշ. Տ. Պարգեւ արքեպս. Մարտիրոսեանին, Գանադայի թեմի առաջնորդ եւ օրուան պատարագիչ Գերշ. Տ. Յովնան արքեպս. Տէրտէրեանին, Հայաստանի Հանրապետութեան Միացեալ Նահանգաց Դեսպան Տիար Արման Կիրակոսեանին, ՄԱԿ-ի մօտ Հայաստանի Հանրապետութեան մնայուն եւ լիազօր դեսպան Տոքթ. Մովսէս Աբէլեանին, ՀԲԸՄ-ի նորընտիր նախագահ Տիար Պերճ Սեդրակեանին, Առաջնորդարանի Թեմական Խորհուրդի ատենապետ Տիար Հայկ Տատրեանին եւ ներկայ բոլոր պատգամաւորներուն ու հաւատացեալներուն: Իր քարոզի ընթացքին առաջնորդ Սրբազան Հայրը ըսաւ. «...*Խրիմեան Հայրիկ 1906-ին ՀԲԸ Միութեան ծնունդը ողջունող իր սրբատառ Կոնդակին մէջ կը կոչէր բարեգործութիւնը՝ "առվորրութիւն այդ աստուածահաճոյ", որ "եկեալ եհաս ի ժամանակս մեր", եւ կը յայտնէր որ կարդալէ ետք կազմակերպութեան կանոնադրութեան խրախուսիչ յօդուածը՝ շատ գոհ մնացած էր. իր բառերով կ'ըսէր. "բերկրեցայ յոյժ": ... Եկեղեցւոյ եւ ՀԲԸ Միութեան ուղիները եղան միշտ զուգահեռ, եւ կամ նոյնը: ՀԲԸ Միութիւնը միշտ ինքզինք բարեկամ եւ հաւատարիմ նկատեց Եկեղեցւոյ նուիրապետութեան՝ առանց քաղաքական կեցուածք դրսեւորելու: ... Միզի համար մեծ ուրախութիւն է այսօր տեսնել այս սուրբ Տաճարին մէջ ՀԲԸ Միութեան բազմաթիւ մասնաճիւղերու ներկայացուցիչներ, եկած աշխարհի չորս կողմերէն: Եկած են այստեղ միասին պաշտելու զԱստուած եւ Ս. Պատարագ եւ Հոգեհանգստեան Կարգ՝ խնդրելու հոգիներուն համար բոլոր բարերարներուն եւ միութեան հաւատաւոր հանգուցեալ անդամներուն: Որպէս Եկեղեցւոյ գլխաւոր զօրավիգը հանդիսացող կազմակերպութիւն՝ ՀԲԸ Միութիւնը այս պահուն, ինչպէս միշտ, իր իսկական դերին մէջ է Հայց. Եկեղեցւոյ սրբազան կամարներուն ներքեւ, Հայց. Եկեղեցւոյ կողքին եւ Հայց. Եկեղեցւոյ հետ միասին*»:

Այնուհետեւ Հոգեհանգստեան Պաշտօն կատարուեցաւ նորոգ վախճանեալ Տ. Ցարութիւն Քհնյ. Տէկլիի, ՀԲԸ Միութեան մահացած անդամներուն եւ այլոց հոգիներուն համար:

Ցաւարտ եկեղեցական արարողութեան՝ ճոխ եւ հիւրասիրութիւն տեղի ունեցաւ Հայկ եւ Ալիս Գավուքճեան շքեղ հանդիսասրահին մէջ: Խօսք առաւ ՀԲԸ Միութեան Նախագահ Տիար Պերճ Սեդրակեան, որ նախ շնորհակալութիւն յայտնեց ներկայ բարձրաստիճան եկեղեցականներուն, մասնաւորաբար Գերշ. Տ. Խաժակ արքեպս. Պարսամեանի, որ միշտ զօրավիգ կանգնած է ՀԲԸ Միութեան, եւ ապա բարի եւ անվտանգ ճանապարհ մաղթեց Միութեան աշխարհի զանազան կողմերէն եկած պատգամաւորներուն:

Նիւ Եորք,
Հոկտեմբեր 28, 2002 թ.

# ԼՈՒՐԵՐ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻՑ
(Ապրիլ-սեպտեմբեր)

Գերմանահայ գաղութն այս տարի ևս մի շարք արարողություններով ոգեկոչեց հիշատակը Հայոց Մեծ եղեռնի զոհերի:

Ապրիլի 20-ին Նյուրնբերգի հայ համայնքը, Ս. Պատարագից հետո, հոգեհանգստյան հատուկ պաշտոնով ոգեկոչեց հիշատակը հայ նահատակների:

Ապրիլի 24-ին Մյունխենի հայ համայնքը և Բավարիայի հայ հայրենակցական միությունը միասնաբար կազմակերպեցին հիշատակի հանդիսություն: Զեռամբ Գարեգին աբեղա Հարությունյանի և մասնակցությամբ Մյունխենի «Կոմիտաս» երգչախմբի (ղեկավար Էդուարդ Մունցյան) նախ կատարվեց հոգեհանգստյան հատուկ պաշտոն: Բավարիայի հայ հայրենակցական միության կողմից այնուհետև խոսք ասաց փիար Վանի Ավետիսյանը, որին հաջորդեց օրվա խորհրդին պատշաճող գեղարվեստական հայտագիրը, ապա բանախոսությամբ հանդես եկավ շրջանի հոգևոր հովիվ Արմաշ աբղ. Նալբանդյանը:

Բադեն Վիտենբերգում գործող հայկական բոլոր միությունների մասնակցությամբ նույն օրը Շտուտգարդի կենտրոնական գերեզմանատան հայկական բաժնում գտնվող Ապրիլյան նահատակների հուշարձանի մոտ ևս հոգեհանգստյան հատուկ պաշտոն կատարվեց, որին հաջորդած լռության րոպեից հետո խոսք ասաց Հայր Արմաշը:

